

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԳՐԻԳՈՐ ԲԵՔՄԵՉՅԱՆ

ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ԲԵՔՄԵՉՅԱՆ

ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2009

***Երաշխավորված է տպագրության Երևանի պետական
համալսարանի իրավաբանական ֆակուլտետի խորհրդի կողմից***

Խմբագիր՝

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի
վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Տ. Քարսեղյան**

Մենագրության մեջ վերլուծվում է արտապայմանագրային պարտավորությունները կարգավորող ՀՀ օրենսդրությունը: Ուսումնասիրությունն իրականացված է միջազգային իրավակիրառ փորձի հետ համեմատության հիման վրա: Աշխատանքը ներառում է նաև հեղինակի մոտեցումները վնաս պատճառելուց ծագող պարտավորությունների դերի, տեղի և այն կարգավորող օրենսդրության արդյունավետության վերաբերյալ:

Մենագրությունը նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, ինչպես նաև պրակտիկ իրավաբանների համար: Մենագրությունը կարող է օգտագործվել նաև որպես գիտաուսումնական ձեռնարկ:

ԳԼՈՒԽ I

ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի և առողջության իրավունքը քաղաքացիների համար, ինչպես նաև սեփականության իրավունքը քաղաքացիների և իրավաբանական անձանց համար հանդիսանում են հիմնական իրավունքներ: Մարդկության զարգացման ողջ ընթացքում մարդկային գործունեության հիմնական ուղղությունը և նպատակն են հանդիսացել այս արժեքների անվտանգության ապահովումը, դրանց պաշտպանությունը՝ նախատեսելով իրավաբանական պատասխանատվություն դրանց դեմ ոտնձգությունների դեպքում: Անշուշտ, յուրաքանչյուր ժամանակաշրջան այս խնդրի առնչությամբ դրսևորել է յուրովի մոտեցում: Կախված կոնկրետ ժամանակաշրջանում տիրող իրավաբանական կարգից՝ տարբեր է եղել մարդկանց վերաբերմունքը ոչ թե կյանքի, առողջության կամ սեփականության նկատմամբ՝ որպես արժեք, այլ՝ կոնկրետ անձի նկատմամբ՝ որպես հասարակության լիիրավ անդամ, այսինքն, այն, որ նախնադարում կամ միջնադարում շատ հեշտ կարող էին անձին անդամահատել, մահապատժի ենթարկել կամ զրկել սեփականությունից, չի նշանակում, որ տվյալ ժամանակաշրջանում չեն գնահատվել կյանքն ու առողջությունը, սեփականության իրավունքը, այլ, որն ավելի հավանական է, տվյալ ժամանակաշրջանի համար հասարակությունն ունեցել է իր՝ մարդու դերի գնահատման այլ համակարգ. մեկն ավելի բարձր է դասվել մյուսից, տերը՝ ստրուկից և այլն: Սա էլ հանգեցրել է նրան, որ տիրոջ ունեցվածքը ավելի է գնահատվել, քան ստրուկի կյանքը, սակայն հավասարների մեջ, անշուշտ, որպես բարձրագույն պաշտպանվող արժեք հանդես են եկել սեփականությունը, կյանքն ու առողջությունը:

Ներկայումս, երբ հասարակությունը բաղկացած է միայն հավասարներից, երբ սահմանադրությամբ և օրենքներով չկան դասային շերտավորումներ, բոլորն օգտվում են հավասար իրավունքներից և պարտականություններից, նոր և ավելի բարձր աստիճանի է բարձրացել այս արժեքների պաշտպանությունը: Սա են ամրագրում մի-

ջազգային պայմանագրերը, հռչակագրերը, երկրների սահմանադրական օրենքները, այլ իրավական ակտեր, որոնց թվում անհրաժեշտ է նշել 1948թ. դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոնադրությունը և այլն:

Այս առումով ավելի է կարևորվում կյանքի, առողջության և սեփականության դեմ ոտնձգությունների կանխումը, իսկ ոտնձգությունների դեպքում՝ վնասի հատուցման հարցի ուսումնասիրումը: Իրավաբանական գրականության մեջ, կապված այն հանգամանքի հետ, որ այս արժեքները ներկայացնում են առանձնահատուկ կարևորություն, ունեն քաղաքացիաիրավական ինքնուրույն պաշտպանություն, դրանց վնաս պատճառելու հետևանքով ծագող իրավահարաբերությունները կոչվում են արտապայմանագրային պարտավորություններ:

§1. Արտապայմանագրային և պայմանագրային պարտավորություններ

Արտապայմանագրային պարտավորությունների քաղաքացիաիրավական նշանակությունը և կարգավորման առանձնահատկությունները ավելի ճիշտ հասկանալու համար էական են վնաս պատճառելուց ծագող կամ արտապայմանագրային կամ էլ, ինչպես հաճախ գրականության մեջ է արտահայտվում՝ դելիկտային իրավահարաբերությունները պայմանագրային պարտավորություններից սահմանազատելը: Թե՛ տեսության մեջ և թե՛ պրակտիկայում հաճախ դժվարություն է առաջացնում կոնկրետ հարաբերության իրավական գնահատական տալու ժամանակ այն հարցի որոշումը, թե այդ իրավահարաբերությունը ծագել է պայմանագրի հիման վրա, թե՞ վնաս պատճառելուց, իրավական ո՞ր նորմերի կիսումամբ պետք է կարգավորվի այն, որո՞նք են տարբերությունները պայմանագրի և դելիկտի միջև:

Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունն իրավաբանական գրականության մեջ անվանվում է նաև Դելիկտային պարտավորություն (լատիներեն *delictum* – իրավախախտում

բառից), երբեմն էլ «իրավախախտումից բխող պարտավորություն», «անթույլատրելի գործողությունների հետևանքով ծագող պարտավորություն»: Վնաս պատճառելու հետևանքով ծագած այս պարտավորությունը իրենից ներկայացնում է արտապայմանագրային պարտավորություն¹: Վնաս պատճառելու հետևանքով առաջացած պարտավորությունները մտնում են արտապայմանագրային պարտավորությունների խմբի մեջ, քանի որ եթե պարտավորական հարաբերությունների հիմնական մասն առաջանում է իրավաչափ և թույլատրելի այնպիսի գործողություններից, ինչպիսիք են՝ պայմանագրերը, միակողմանի գործարքները և այլն, ապա այս դեպքում ուրիշին վնաս է պատճառվում ոչ իրավաչափ հիմքով, որը և առաջացնում է պարտավորական հարաբերություն: Զննարկվող իրավահարաբերությունները առաջանում են միմյանց նկատմամբ պայմանագրային հարաբերությունների մեջ չգտնվող անձանց միջև և, եթե նույնիսկ անձինք միմյանց նկատմամբ գտնվում են պայմանագրային հարաբերության մեջ, ապա այս դեպքում ևս վնասի առաջացման հիմք է հանդիսանում ոչ թե պայմանագրի խախտումը, այլ անձանցից մեկի հակաիրավական գործողությունը²:

Պայմանագրային պարտավորությունները, ի տարբերություն դելիկտային պարտավորությունների, առաջանում են քաղաքացիների և իրավաբանական անձանց կամային գործողությունների արդյունքում: Դրանք ուղղված են պայմանագրի կողմերի համար քաղաքացիաիրավական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն և դադարեցնելուն:

Պայմանագրային և արտապայմանագրային պարտավորությունների տարբերությանն անդրադառնալը գտնում ենք ոչ ինքնանպատակ: Քաղաքացիական իրավունքի այս երկու ինստիտուտների հստակ տարանջատումը նպատակ ունի ապահովել քաղաքացիաիրավական վեճերի հստակ և արդյունավետ լուծումը, պատճառված վնասի հատուցման չափերի հստակ որոշումը, այս երկու ինստիտուտների հստակ գործունեությունը: Դելիկտի և պայմանագրի տա-

¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, ԵՊՀ հատարակչություն, Երևան, 2001թ., էջ 596:

² Гражданское право, обязательственное право, учебник, Восточный экспресс, М., 1998г., էջ 607:

րանջատումը կարևոր նշանակություն ունի ինչպես պրակտիկ իրավաբանների, այնպես էլ ուսանողների համար: Այն հնարավորություն է ընձեռում պրակտիկ իրավաբաններին ավելի ճիշտ կողմնորոշվել կոնկրետ քաղաքացիաիրավական հարաբերության առանձնահատկությունների մեջ, իսկ իրավաբան ուսանողներին՝ հստակ պատկերացնել և հասկանալ քաղաքացիական իրավունքի այս երկու ինստիտուտները, դրանց տարբերությունները, դրական և բացասական կողմերը, օրենքի հնարավոր բացերը:

Ինչպես նշվեց, վնաս պատճառելուց ծագող իրավահարաբերությունների և պայմանագրային իրավահարաբերությունների տարբերությունը ընկած է նախ և առաջ դրանց առաջացման հիմքում: Այստեղ կցանկանալինք անդրադառնալ արևմտյան իրավաբանական գրականության մեջ շատ ցիտվող Պ. Ուինֆիլդի այն տեսակետին, որ դելիկտային պարտավորությունը ծագում է նախապես օրենքով ամրագրված պարտավորության խախտման հետևանքով, իսկ պայմանագրի դեպքում՝ այդ պարտավորությունը ամրագրված է պայմանագրով³: Հարկ ենք համարում նշել նաև, որ Ուինֆիլդի այս տեսակետը ժամանակի ընթացքում ենթարկվել է քննադատության. մասնավորապես Մարկեսինիսը և Դեակինը առաջ են քաշում այն տեսակետը, որ հնարավոր են դեպքեր, երբ կողմերի միջև ծագի դելիկտ, սակայն դրա հիմքում ընկած լինեն նաև պայմանագրային պարտավորություններ⁴: Ելնելով դրանից՝ վերջիններս առաջ են քաշում այն տեսակետը, որ դելիկտի և պայմանագրի տարբերությունը պետք է դիտարկել այն տեսանկյունից, որ դելիկտի և պայմանագրի կողմից սահմանվում է ոչ թե պարտավորության առկայությունը, այլ դրա բովանդակությունը⁵, այսինքն, ըստ հեղինակների, այս երկու ինստիտուտների տարանջատումը պետք է սկսել դրանց բովանդակությունից: Քննարկելով վերոնշյալը՝ հարկ ենք համարում նշել, որ մեր կարծիքով դելիկտի և պայմանագրի տարբերությունը քննարկելիս պետք չէ կենտրոնանալ միայն մեկ կամ երկու սկզբունքային տարբերությունների վրա: Այս երկու ինստիտուտները ունեն բազմա-

³ Տե՛ս Winfield P.H., *The Province of the Law of Tort* (1931), էջ 32:

⁴ Տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin *“Tort Law”* Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջ 8:

⁵ Տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin, *նշված աշխատությունը*, էջ 9:

թիվ տարբերություններ, որոնց հիմնովին քննարկման արդյունքում միայն հնարավոր կլինի տարանաջատել դրանք միմյանցից: Օրինակ, քննարկելով Մարկեսինիսի և Դեակինի վերոնշյալ տեսակետը այն մասին, որ դելիկտային պարտավորության մեջ գտնվող անձինք կարող են գտնվել նաև պայմանագրային հարաբերությունների մեջ, հարկ ենք համարում նշել, որ այո, հնարավոր է, որ կողմերը գտնվեն պայմանագրային պարտավորությունների մեջ, և նրանց միջև ծագի նաև արտապայմանագրային պարտավորություն, որը շատ հնարավոր է, որ ընդհանրապես առնչություն չունենա պայմանագրի հետ, ինչպես նաև շատ հնարավոր է, որ կողմերի միջև դելիկտային պարտավորությունը ծագի հենց պայմանագրի առնչությամբ: Օրինակ, առուվաճառքի պայմանագրի գնորդը իր մեքենայով պատահաբար հարվածի վաճառողի մեքենային կամ հարվածի դիտավորյալ, քանի որ վաճառողը հանձնել է անորակ ապրանք և հրաժարվում է հետ ընդունել այն: Գտնում ենք, որ դելիկտի և պայմանագրի տարբերակման հիմքերից է նաև այն հանգամանքը, թե օրենսդրության որ նորմերով է կարգավորվում կոնկրետ իրավահարաբերությունը: Քննարկվող դեպքերում պայմանագրային և արտապայմանագրային պարտավորությունների տարբերությունը հասկանալու համար հարկավոր է դիտարկել հետևյալը՝ դելիկտի կանոնները, թե՛ առուվաճառքի պայմանագրի դրույթները պետք է կիրառվեն: Ակնհայտ է, որ թե՛ կողմերի կնքած առուվաճառքի պայմանագրում, թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Քաղ. օր., Օրենսգիրք) 31-րդ գլխի կանոններում անհնար է գտնել դրույթ, որով վաճառողը վթարված մեքենայի վնասի հատուցման իրավունք կունենա: Ակնհայտ է նաև, որ վեճը կարող է և մեր կարծիքով ենթակա է կարգավորման Օրենսգրքի 60-րդ գլխի, այսինքն վնաս պատճառելուց ծագող պարտավորությունները կարգավորող գլխի դրույթներով: Պատճառված վնասի հատուցումը կարգավորող Օրենսգրքի համապատասխան դրույթներն էլ մեզ հնարավորություն կտան տարբերակելու՝ գործ ունենք արտապայմանագրային՞, թե՞ պայմանագրային պարտավորության հետ:

Բացի վերոնշյալից՝ գտնում ենք, որ պայմանագրային և արտապայմանագրային պարտավորությունների միջև կան մի շարք այլ էական տարբերություններ, որոնց կցանկանայինք անդրադառ-

նալ ստորև: Այսպես, համաձայն ՀՀ քաղ. օր-ի 1058 հոդվածի, վնաս պատճառողը պարտավոր է հատուցել պատճառած վնասը լրիվ ծավալով, իսկ պայմանագրային և գործունեության առանձին տեսակների հետ կապված պարտավորությունների համար օրենքով կարող է սահմանվել վնասները ոչ լրիվ ծավալով հատուցելու իրավունքը /օր՝ Քաղ. օր., հոդված 416/⁶: Ինչպես նշվում է արևմտյան իրավաբանական գրականության մեջ, վնասի հատուցման ինստիտուտի հիմնական խնդիրը վնասի ամբողջական հատուցման հասնելն է, որը կարող է հանդես գալ որպես այն հատուցման մեխանիզմները լրացնող միջոց, որոնք տնտեսական արգելքների պատճառով թույլ չեն տալիս լրիվ հատուցելու վնասը⁷:

Միևնույն ժամանակ պայմանագրի միջոցով հնարավոր է սահմանել պատճառված վնասի հատուցման ավելի մեծ չափ և կարելի է համաձայնել նաև արևմտյան գրականության մեջ նշված այն տեսակետի հետ, որ այն դեպքերում, երբ անձը փնտրում է պաշտպանվածության կամ անվտանգության ավելի բարձր աստիճան, քան ամրագրված է դեղիկտային պարտավորությունները կարգավորող օրենսդրությամբ, կարող է հասնել այդ պաշտպանվածությանը պայմանագրի միջոցով⁸:

Մյուս տարբերությունն այն է, որ պայմանագրային պարտավորության կողմը օրենքով կամ պայմանագրով կարող է պատասխանատվություն կրել երրորդ անձանց մեղավոր գործողությունների համար, իսկ վնաս պատճառելուց ծագող պարտավորության համար պատասխանատվության պայման է պատասխանողի մեղքի առկայությունը: Տարբերություն կա նաև տուժողի և պարտատիրոջ մեղքի գնահատման խնդրում: Օրինակ, եթե պայմանագրային հարաբերությունների դեպքում պատասխանատվության համար հաշվի է առնվում պարտատիրոջ հասարակ անզգուշությունը, ապա վնաս պատճառելուց ծագող իրավահարաբերության ժամանակ՝ միայն տուժողի կոպիտ անզգուշությունը, իսկ քաղաքացու կյանքին կամ ա-

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, էջ 598:

⁷ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche “Tort Law”, Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 20:

⁸ Տե՛ս Peter Cane, “The Anatomy of Tort Law” Hart Publishing, Oxford 1997, էջ 186

ռողջությանը պատճառված վնասի այնպիսի դեպքերում, երբ վնասը պատճառվել է գործունեության առավել վտանգի աղբյուրով, տուժողի մեղքը հաշվի չի առնվում: Այս մասին հետաքրքիր տեսակետ է արտահայտել նաև Պ. Կեյնը, համաձայն որի. «Պայմանագրային իրավունքում պարտավորության առաջացման հիմքեր են դիտվում անփութությունը կամ առանց մեղքի պարտավորությունը: Պայմանագրային իրավունքը չի ընդունում դիտավորյալ գործողությունը որպես պարտավորության առաջացման ինքնուրույն հիմք»⁹:

Պայմանագրի և դեյլիկտի տարբերությունը նաև այն է, որ պայմանագրային իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերի առանձնահատկությունը դրանց կամային բնույթն է, իսկ դեյլիկտային հարաբերություններինը՝ իմպերատիվ բնույթը: Համաձայնվելով պայմանագրի և դեյլիկտի տարանջատման այս սկզբունքի հետ՝ Մարկեսինիսն ու Դեակինը նշում են, որ այն ամբողջովին ճշմարիտ չէ, քանի որ օրենսդրությունը շատ դեպքերում պարունակում է պարտադիր նորմեր պայմանագրի կողմերի համար¹⁰: Կցանկանայինք չհամաձայնվել հեղինակների վերոնշյալ տեսակետի հետ, քանի որ կամահայտնություն ասելով, մենք հասկանում ենք, ոչ միայն պայմանագրի դրույթները ընտրելու կողմերի ազատությունը, այլև, նախ և առաջ, պայմանագիր կնքելու կողմերի ազատությունը: Պայմանագրային պարտավորությունները առաջանում են պայմանագրի երկու կողմերի կամային գործողությունների արդյունքում, իսկ արտապայմանագրային պարտավորությունների առաջացման համար բավարար է միայն մեկ կողմի կամային գործողությունը կամ նույնիսկ անգուշությունը:

Քաղաքացիները կամ իրավաբանական անձինք մեխանիկորեն ենթակա են արտապայմանագրային իրավունքի սուբյեկտ դառնալուն, մինչդեռ ոչ ոք չի կարող դառնալ պայմանագրի կողմ՝ առանց իր համաձայնության¹¹:

Մյուս տարբերությունն այն է, որ դեյլիկտային իրավունքը կոչված է պաշտպանելու կյանքն ու սեփականությունը, իսկ պայմա-

⁹ Տե՛ս Peter Cane, նշված աշխատությունը, էջ 183:

¹⁰ Տե՛ս B. S. Markesinis and S. F. Deakin, նույն տեղում:

¹¹ Տե՛ս նաև Clerk & Lindsell on Torts, 15th edition. (London: Sweet and Maxwell, 1982) 1-05:

նագրային իրավունքը նպատակ ունի զարգացնելու անձի հետաքրքրությունների հետագա զարգացումը¹²:

Արևմտյան գրականության մեջ պայմանագրի և դելիկտի տարբերակումը կատարվում է նաև այն տարանջատման հիման վրա, թե ինչ շահեր են պաշտպանում այս երկու ինստիտուտները: Մասնավորապես նշվում է, որ եթե պայմանագրային իրավունքը պաշտպանում է սպասվելիք շահը, այսինքն այն շահը, որը պայմանագրի կողմը պետք է ստանար պայմանագրի արդյունավետ իրականացման արդյունքում, ապա արտապայմանագրային իրավունքը պաշտպանում է տուժողի վստահության շահը, այսինքն այս ինստիտուտը կոչված է վերականգնելու մինչև վնաս պատճառելու պահը առկա վիճակը՝ *Status Quo* – ն¹³:

Հասկանալու համար պայմանագրի և արտապայմանագրային պարտավորության տարբերությունը, որոշ իրավաբան հեղինակներ նպատակահարմար են գտել տարբերակումը դնել կանոնների երկու խմբերի միջև: Կանոնների առաջին խումբը ապահովում է իրավական ակտերում ամրագրված վարքագծի կանոնների իրականացումը և համապատասխան իրավունքների բարձրացումը: Իսկ կանոնների երկրորդ խումբը ապահովում է պարտավորությունների իրականացումը այն դեպքում, երբ առաջին խմբի կանոնները խախտվում են, և խախտված իրավունքների ամենացանկալի վերականգնումը վնասի հատուցումն է: Առաջնային կանոնների մակարդակում պայմանագիրը և դելիկտը տարբերակվում են պաշտպանության տեսանկյունից: Եթե արտապայմանագրային իրավունքում պարտավորությունները հիմնականում ուղղված են բոլորին, ապա պայմանագրային պարտավորությունները հիմնականում ուղղված են պայմանագրի մյուս կողմին¹⁴:

Իրավաբանական գրականության մեջ վնաս պատճառելուց ծագող պարտավորությունները ընդունված է անվանել պաշտպանողական¹⁵: Դելիկտային իրավունքը կոչված է պաշտպանել, իսկ պայ-

¹² Տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin, նշված աշխատությունը, էջ 9:

¹³ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշված աշխատությունը, էջ 33:

¹⁴ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշված աշխատությունը, էջ 32:

¹⁵ Տե՛ս Иоффе О.С. Обязательственное право. М. 1975, էջ 25:

մանագրայինը՝ նպաստել արտադրողականությանը¹⁶: Ինչպես նշում է Ա. Ի. Չագորուկոն, պաշտպանողական պարտավորությունները պարտավորության այնպիսի տեսակ են, որոնք բնութագրվում են նրանով, որ այս հասկացության մեջ մտնող պարտավորությունները ոչ միայն հանդիսանում են արտապայմանագրային պարտավորություններ, այլև, ծագելով օրենքի իմպերատիվ ուժով, ուղղված են խախտված իրավունքների վերականգնմանը¹⁷: Ի տարբերություն սրա՝ պայմանագրային պարտավորությունները առաջանում են կողմերի միջև կոնկրետ իրավահարաբերություններ կարգավորելու նպատակով:

Վնաս պատճառելուց ծագող պարտավորությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության ձև է, որն ունի իր գործառույթները: Այն առաջին հերթին տուժողի գույքային շահերը պաշտպանելու նպատակ է հետապնդում, ուստի և կատարում է վերականգնման գործառույթ¹⁸: Բացի տուժողի գույքային շահերը պաշտպանելուց՝ այս ինստիտուտը ունի նաև կանխարգելիչ, դաստիարակչական դեր: Պատճառված վնասի հատուցման պարտականությունը դնելով վնաս պատճառողի վրա՝ այն նախազգուշացնում է մյուսներին, ուստի այս ինստիտուտը կոչված է կանխելու հետագայում պատճառվելիք վնասը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել (այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք հետագայում), որ ինստիտուտի կանխարգելիչ գործառույթը իսկապես իրականացնելու և իր առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հնարավորինս բազմակողմանի, օբյեկտիվ և ամբողջական դարձնել պատճառված վնասի հատուցումը: Սա, մեր կարծիքով, պոտենցիալ վնաս պատճառողներին հնարավորություն կտա գիտակցել, որ վնաս պատճառելու դեպքում նրանք չեն ազատվի պատասխանատվությունից, ուստի և ավելի զգուշ կլինեն իրենց քայլերում: Արտապայմանագրային պարտավորությունների երրորդ գործառույթն է վնասների բաշխումը, որը տեղի է ունենում վնասի հատուց-

¹⁶ Այս մասին տե՛ս նաև Weir T., *Complex Liabilities*, in *Int. Encl. Comp. L.* xi. Ch. 12 (1976), էջ 5:

¹⁷ Տե՛ս Ա. Ի. Загорулько, *Обязательства по возмещению вреда*, Харьков, 1996 г., էջ 8-9:

¹⁸ Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, էջ 597:

ման մյուս միջոցների՝ հիմնական պարտավորության, ապահովագրության, սոցիալական ապահովագրության հետ համատեղ¹⁹:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը քաղաքացիաիրավական պարտավորություն է, որի ուժով տուժողն իրավունք ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձից պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասը: Այս պարտավորության մեջ տուժողը հանդես է գալիս որպես պարտատեր, իսկ վնաս պատճառողը՝ պարտապան: Պրոֆ. Գ. Ղարախանյանը վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններն արտապայմանագրային պարտավորություններ են, որոնք առաջանում են տուժողի բացարձակ բնույթ կրող գույքային և անձնական ոչ գույքային բնույթ կրող իրավունքների խախտման հետևանքով, և կոչված են ապահովելու այդ իրավունքների առավել լրիվ վերականգնումը վնասը պատճառողի հաշվին կամ այլ անձանց հաշվին, որոնց վրա օրենքով դրված է վնասը հատուցելու պարտականություն»²⁰:

§2. Արտապայմանագրային պարտավորությունների առաջացման հիմքերը

Խոսելով վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունների հասկացության մասին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն պայմաններին, որոնք հանդիսանում են այդպիսի պարտավորությունների առաջացման նախադրյալներ:

Դեռևս հռոմեական իրավունքում դելիկտը իր մեջ ներառում էր հետևյալ երեք տարրերը.

ա) օբյեկտիվ վնասը՝ պատճառված մեկ անձի հակաիրավական գործողությունների հետևանքով մեկ ուրիշին,

¹⁹ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche “Tort Law”, Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 69:

²⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, էջ 601:

բ) վնաս պատճառողի մեղքը, որը հանդես է գալիս դիտավորությամբ կամ անզգուշությամբ,

գ) օբյեկտիվ իրավունքի տեսանկյունից այս գործողության ընկալումը՝ որպես մասնաիրավական դելիկտ²¹:

Ներկայումս իրավաբանական գրականությունը որպես պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմք դիտում է հետևյալ չորս հանգամանքները՝ վնասի առկայությունը, վնաս պատճառողի գործողությունների հակաիրավական բնույթը, վնաս պատճառողի գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապը և վնաս պատճառողի մեղքի առկայությունը: Մրանցից առաջին երեքը ունեն օբյեկտիվ, իսկ վերջինը՝ սուբյեկտիվ բնույթ²²:

§3. Վնասը՝ որպես արտապայմանագրային պարտավորության առաջացման պայման

Պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման առաջին պայմանը վնասի առկայությունն է: Ինչպես նշում է Ա. Ի. Չագորովկոն՝ իրավաբանական գրականության մեջ դեռևս տրված չէ վնասի միասնական բնորոշումը: Համաձայն Պ. Կեյնի՝ վնասը հայցվորի գործողությունների էությունն է, որը, ըստ հեղինակի, նշանակում է, որ մինչև տուժողը չունենա որոշակի ֆինանսական կամ առողջական կորուստ, նա ի վիճակի չի լինի վնասի հատուցում պահանջել պատասխանողից²³: Գ. Ղարախանյանը, Ե.Ա. Ֆլեյշիցը, Ա.Մ. Բեյլակովան վնասը բնորոշում են որպես անբարենպաստ բացասական հետևանք, որ վրա է հասնում օրենքով պահպանվող գույքային իրավունքի կամ ոչ նյութական բարիքի խախտման դեպքում²⁴: Ն.Ս. Մալեինի կարծիքով վնասը սոցիալական հասկացու-

²¹ Տե՛ս Новицкий И.Б., Римское право, Учебник для вузов, М., ИКД ЗЕРКАЛО-М, էջ 220:

²² Տե՛ս Гражданское право, обязательственное право, учебник, էջ 608:

²³ Տե՛ս Peter Cane, նշված աշխատությունը, էջ 89:

²⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, էջ 603, Флейшиц Е.А. Обязательства из причинения вреда и из неосновательного

թյուն է: Իսկ ավելի ընդհանուր առումով, ըստ հեղինակի, վնասը կարող է բնորոշվել որպես օրենքով պահպանվող պետության, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքների ու շահերի ոտնահարման կամ խախտման հետևանք²⁵:

Խոսելով պատճառված վնասի մասին և բացահայտելու համար վնասի էությունը՝ պետք է նշել, որ վնասը լինում է երկու տեսակ՝ նյութական և ոչ նյութական: Նյութական վնասը այն վնասն է, որը կարելի է հաշվել, իսկ ոչ նյութականը հաշվել անհնար է: Նյութական վնասի դեպքում տուժողը կարող է կորցնել աշխատավարձը, աշխատունակությունը, լրացուցիչ ծախսեր կատարել բուժման, դեղեր գնելու, առողջարանային բուժման և այլ նպատակներով, կերակրողին կորցնելու դեպքում առաջանում են թաղման ծախսեր. փոխհատուցվում է կերակրողին կորցնելու հետևանքով ծագած վնասը²⁶: Եթե վնասը պատճառվել է գույքին, ապա տուժողը կարող է պահանջել հատուցել գույքը վերականգնելուն ուղղված վնասները կամ գույքը փոխարինելու համար կատարվող ծախսերը և այլն: Եթե վնասը չի կարող գնահատվել դրամական ձևով, ապա այն դառնում է ոչ նյութական կամ ոչ գույքային վնաս:

Նյութական և ոչ-նյութական վնասների միյանցից տարանջատումը ունի ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ նշանակություն, որը հնարավորություն է տալիս առավելագույնս հստակեցնելու պատճառված վնասը, դրա հատուցման չափը: Անգլիական, գերմանական և ֆրանսիական քաղաքացիական օրենսդրություններում ընդունված է տարանջատել նյութական և ոչ նյութական վնասների հետևյալ տեսակները.

1. Նյութական վնասը իր մեջ ներառում է մարմնական վնասը, սեփականությանը պատճառված վնասը, տնտեսական վնասը, որը կապված է անձին կամ գույքին պատճառված վնասի հետ և վնասը, որը անկախ է անձին կամ սեփականությանը պատճառված վնասից, չի ուղեկցում այդ վնասը և առաջանում է դրա հետևանքով

обогащения. М. 1951г. тз 20, Белякова А.М. Имущественная ответственность за причинение вреда. М. Юрид. Лит., 1979, тз 7.

²⁵ St'u Мален Н.С. Возмещение вреда, причиненного личности. М. 1965, тз 5:

²⁶ St'u ՀՀ Բաղ. օր., հոդվածներ 1078, 1079, 1080, 1081, 1082, 1083, 1084, 1087:

(այսպես կոչված «գուտ կամ միջնորդավորված տնտեսական վնաս» /Pure Economic Loss/),

2. Ոչ նյութական վնասը իր մեջ ներառում է ցավի և տանջանքի արդյունքում կրած վնասը (բարոյական վնաս), ինչպես նաև գեղեցկության կամ տեսքի կորուստը (loss of amenity)²⁷:

Չնայած այս երկրներում նյութական և ոչ նյութական վնասների տեսական ընդհանրությանը՝ Գերմանիայի և Ֆրանսիայի քաղաքացիական օրենսդրությունների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այս երկրները ունեն հետաքրքիր և հիմնարար տարբերություններ դեղիկտային պարտավորություններում վնասի հասկացության, ինչպես նաև «վնաս» հասկացության տակ մտնող հետևանքների բացահայտման խնդրում: Ընդ որում ՀՀ քաղաքացիական օրենսդրության համեմատական վերլուծությունը այս երկրների օրենսդրությունների հետ թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ Քաղ. օր.-ի «վնաս» հասկացության տակ մտնող հետևանքները իրենց հերթին որոշակի ընդհանրություններ ունեն թվարկված երկրներում ընդունված վնասների հետ: Այստեղ խնդրի ամբողջական բացահայտումն ընկած է ավելի շուտ դատական պրակտիկայի և դատական որոշումների հիմքում, քան օրենսդրության կամ տեսության մեջ: Մասնավորապես, այս կամ այն հետևանքը որպես վնաս դիտելու համար նշված երկրներում հիմնական ուշադրությունը դարձվում է ոչ միայն օրենսդրությանը, այլև օրենսդրության դատական մեկնաբանություններին: Ասվածը ավելի հստակ պատկերացնելու և հիմնավորելու համար բերենք մի քանի օրինակներ Գերմանիայի և Ֆրանսիայի դատական ակտերից, որոնց հիման վրա կտեսնենք, թե ինչպես են նույնատիպ գործերով կայացված դատական վճիռները տարբերվում միմյանցից: Այսպես. և՛ գերմանական, և՛ ֆրանսիական դատարանները քննել են տարբեր, սակայն նմանատիպ երկու գործեր՝ կապված գազի խողովարաշարի և հաղորդալարի վնասման հանգամանքների հետ, որոնց էությունը հետևյալն է. շինարարական աշխատանքներ կատարող ընկերության տրակտորավարը փոս փորելիս պատահաբար վնասում է գազի խողովակը՝ մի գործով և էլեկտրական հաղորդալարը՝ մյուսով, որի արդյունքում

²⁷ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշված աշխատությունը, էջ 140:

խողովակից և հաղորդալարից սնուցվող ընկերությունները ստիպված են լինում դադարեցնել իրենց աշխատանքը մինչև դրանց վերականգնումը: Ելնելով այն հանգամանքից, որ այդ դադարը ընկերություններին պատճառում է տնտեսական կորուստներ, վերջիններս դիմում են դատարան վնասը պատճառած ընկերությունից այդ կորուստները վերականգնելու հայցով: Եվ եթե գերմանական դատարանը մերժում է վնասների հատուցումը՝ հիմնավորելով, որ այդ միջոցների վնասումը և արտադրության դադարը չունի ոչ մի ընդհանրություն *Recht am Gewerbebetrieb* սկզբունքի հետ²⁸, ապա ֆրանսիականը բավարարում է՝ հիմնավորելով, որ էլեկտրական հոսանքալարի վնասումը անմիջապես ազդել է արտադրության ծավալների վրա, արդյունքում ընկերությունը ստիպված է եղել դադարեցնել արտադրությունը, կրել է տնտեսական վնաս²⁹: Ֆրանսիայում՝ հոսանքալարի գործի նկատմամբ հետաքրքրությունը մեզ համար նաև այն է, որ հոսանքազրկված ընկերությունը, չնայած էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման պայմանագիր է ունեցել էներգամատակարար ընկերության հետ և ըստ էության հնարավորություն է ունեցել վնասների հատուցման պահանջով դիմել այդ ընկերությանը, սակայն նախընտրել է դեղիկտային պարտավորությունների կանոններով վերականգնել իր խախտված իրավունքները, և այդ պահանջը ֆրանսական դատարանը բավարարել է: Դեռ ավելին՝ քննելով վնասի հատուցման ինստիտուտի՝ ֆրանսիական դատական պրակտիկան՝ մենք կարող ենք տեսնել, որ ֆրանսիական դատարանները հիմնականում միտված են բավարարել վնասի հատուցման այն հայցապահանջները, որոնք թեև անմիջական կապ չունեն պատճառված վնասի հետ, սակայն ծագած իրավահարաբերության հետևանք են հանդիսանում: Օրինակ, ֆրանսիական դատարանը վնասի հատուցման իրավունք է տվել ավտոբուսային ծառայություններ մատուցող ընկերությանը ընդդեմ քաղաքացու, որի մեքենայի՝ փողոցում վթարվելու արդյունքում խախտվել է ճանապարհատրանսպորտային

²⁸ *Recht am Gewerbebetrieb* սկզբունքի էությունը ձեռնարկատիրական գործունեության հետ կապված իրավունքների պաշտպանությունն է:

²⁹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս *Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջեր 187-200:*

երթևեկությունը, ընկերության ավտոբուսները ժամանակին չեն հասել կանգառներ, որի արդյունքում ուղևորները չեն սպասել ավտոբուսներին, հեռացել են, և ընկերությունը վնասներ է կրել: Մեր կարծիքով, ֆրանսիական դատական պրակտիկայից հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Forge de Chirico» գործը: Այս գործի էությունը հետևյալն է. հայցվորը, երրորդ անձից գնելով կտավը, համոզված է եղել, որ այն բնօրինակ է, քանի որ կտավի հետին մասում եղել է հեղինակի ստորագրությունը: Սակայն հետագայում կտավի ուսումնասիրությունը ապացուցում է, որ նկարը բնօրինակը չէ, իսկ հեղինակի կողմից ստորագրվել է թյուրիմացությամբ: Գնորդը հայց է հարուցում դատարան դեղիկտի կանոններով ընդդեմ նկարչի՝ նշելով, որ վերջինիս սխալ ստորագրության հետևանքով ինքը կրել է տնտեսական վնասներ՝ շատ վճարելով կտավի համար: Չնայած ֆրանսիայի վերաքննիչ դատարանը մերժել է հայցը, սակայն վճարեկ դատարանը բավարարել է այն՝ նշելով, որ նկարչի անփութության և սխալ ստորագրության արդյունքում գնորդը կրել է տնտեսական վնասներ, որի համար պատասխանատու է նկարիչը³⁰:

Այսպիսով, ինչպես նկատեցինք, չնայած թե՛ ֆրանսիական, և թե՛ գերմանական քաղաքացիական օրենսդրություններն ընդունում են, որ վնասի հասկացության տակ պետք է մտցվի նաև տնտեսական վնասը, սակայն այս երկու երկրների դատական պրակտիկան հարցի նկատմամբ դրսևորում է տարբերակված մոտեցում: Նույնը կարելի է ասել նաև ՀՀ օրենսդրության վերաբերյալ: Յավոք, մեր դատական պրակտիկան հարուստ չէ վնասի հատուցման գործերով, և դժվար է գտնել մի դեպք, երբ որպես արտապայմանագրային պարտավորության վնաս է դիտվել նաև տնտեսական վնասը, սակայն ՀՀ Քաղ. օր. հոդված 17-ի այն ձևակերպման ուսումնասիրությունից, համաձայն որի «վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որը նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնասվածք/, ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիաիրավական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտ-

³⁰ Տե՛ս www.rechten.unimaas.nl/casebook, ինչպես նաև Walter van Gerven, նշված աշխատությունը, նույն տեղում:

վեր», ըստ էության կարող ենք հանգել այն եզրակացության, որ մեր օրենսդրությունը, տարբերակում դնելով իրական վնասի և հետագայում ստացվելիք վնասների միջև, նույնպես ընդունում է տնտեսական վնասի հատուցման անհրաժեշտությունը: Ուստի ակնհայտ է, որ մեր օրենսդրությամբ տնտեսական վնասը նույնպես կարող է և պետք է դիտվի որպես արտապայմանագրային պարտավորության արդյունքում պատճառված վնաս:

Հիմք ընդունելով վնասի վերոնշյալ բնորոշումները՝ կարող ենք եզրակացնել, որ «վնաս» ասելով՝ պետք է ենթադրել իրավախախտման այնպիսի հետևանքներ, որոնց արդյունքում վնասվում է քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող գույքը, քաղաքացու կյանքը կամ առողջությունը, ինչպես նաև առաջանում են այլ բացասական հետևանքներ: Կարծում ենք, որ այլ բացասական հետևանքների թվում կարելի է նշել նաև տնտեսական վնասը:

Պատճառված վնասի դեպքում բարոյական վնասի հատուցման հարցը կարևորվում է հատկապես քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման դեպքում: Սա կարելի է բացատրել հետևյալ կերպ. եթե ուրիշի հակաիրավական գործողությունների հետևանքով վնաս է պատճառվում գույքին կամ քաղաքացու կյանքին կամ առողջությանը, ապա այդ վնասի չափը կարելի է հաշվել՝ հաշվելով գույքի վերականգնմանը ուղղված կամ էլ առողջության քաղաքայման հետևանքով առաջացած ծախսերը, մահացածին կորցնելու հետևանքով առաջացած ծախսերը, և հատուցել դրանք: Սակայն արդյոք այս դեպքերում մարդը կրում է միայն նյութական կորուստներ: Իհարկե՝ ոչ: Անձի առողջությանը վնաս պատճառելիս, հատկապես, երբ այդ վնասը թողնում է նաև իր հետքերը սպիի, հաշմվածության կամ այլ տեսքով, և կամ, ասենք, անձի հարազատի կորստյան դեպքում, առաջին հերթին անձը կրում է բարոյական վնաս, հոգեկան ցնցումներ, որոնք իրենց չափերով անհնար է համեմատել կրած նյութական վնասի հետ: Դիշտ է, հատուցելով բարոյական վնասը, անհնար է վերականգնել խախտված առողջությունը, վերակենդանացնել մահացածին, սակայն բարոյական վնասի հատուցումը կարող է մխիթարանք և սփոփիչ հանգամանք հանդիսանալ տուժողի համար՝ տալով նրան ապրելու լրացուցիչ ներուժ: Ընդ որում, կարևոր ենք համարում ավելացնել նաև, որ բարոյական

վնասի հարցը կարող է ծագել միայն քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում: Գույքային վնասի դեպքում բարոյական վնասի մասին խոսելը գտնում ենք անցանկալի, քանի որ ինքնին բարոյական վնասի չափի և առկայության ապացուցումը իրենից մեծ դժվարություն է ներկայացնում, բացի այդ դատական համակարգի անկատարության պայմաններում այս վնասի չափերի սահմանումը դատարանների կողմից կարող է տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ և շատ դեպքերում օբյեկտիվ չլինել, իսկ հնարավորություն տալ նմանատիպ գործերի առաջացմանը գույքային վնասի դեպքում նշանակում է թե՛ բավականին ծանրաբեռնել դատարանների աշխատանքը, թե՛ հնարավորություն տալ բազմաթիվ կամայականությունների, թե՛ վնասել ընդհանրապես հասարակության ներդաշնակությանը: Նույնիսկ, եթե նայենք բարոյական վնասի հատուցման համաշխարհային պրակտիկային, ապա կտեսնենք, որ այն ընթանում է հիմնականում կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում բարոյական վնասի հատուցման հարցի բարձրացման ուղղությամբ³¹, չնայած մի շարք երկրների քաղաքացիական օրենսդրություններ, այդ թվում նաև ֆրանսիականը, ընդունում են, որ բարոյական վնասի հատուցումը պետք է տեղի ունենա պատճառված վնասի բոլոր հիմնական տեսակների դեպքում, ներառյալ բնական դժբախտությունը (natural grief)³²: Ֆրանսիական օրենսդրությամբ վնասի հատուցման պարտավորություն է առաջանում նաև, այսպես կոչված, երկրորդական տուժողների նկատմամբ, օրինակ, մոտիկ ազգականներ, որոնք տուժողի հետ մույնպես կրում են գրկանքներ³³:

Հիմնվելով համաշխարհային իրավական պրակտիկայի վրա և նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրները իրենց օրենսդրություններում կիրառում են բարոյական վնասի հատուցումը, ինչպես նաև գիտակցելով, որ առանց բարոյական վնասի հատուցման անհնար է հասնել քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համարժեք հա-

³¹ Տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin, նշված աշխատությունը, էջ 719:

³² Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 138 - 139:

³³ Տե՛ս նույն տեղում:

տուցման, գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ կարևոր են բարոյական վնասի հատուցման համապատասխան նորմերը: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բարոյական վնասը հաշվելը բավականին բարդություններ է ենթադրում, գտնում ենք, որ օրենսդրությունը պետք է պարունակի նաև այդպիսի վնասը հաշվելու հստակ մեխանիզմներ, որը կոչված կլինի ոչ միայն ապահովելու տուժողների՝ վնասի լրիվ հատուցում ստանալու իրավունքը, այլև կբացառի բարոյական վնասի չափի հաշվման ժամանակ տարբեր չարաշահումները:

Ինչպես քաղաքացիական օրենսդրությունը, այնպես էլ իրավաբանական գրականությունը վնասի առկայությունն ըստ էության համարում է այն նախապայմանը, որն անհրաժեշտ է առանց բացառության վնաս պատճառելուց բխող բոլոր պարտավորությունների առաջացման համար³⁴:

§4. Հակաիրավական արարք (գործողություն կամ անգործություն)

Վնասի համար պատասխանատվության առաջացման երկրորդ պայմանը վնաս պատճառողի գործողությունների հակաիրավությունն է: Հակաիրավական է համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը խախտում է իրավական ակտը, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը:

Գործողությունը անձի նպատակադրված և կամային արարքն է, որի արդյունքում կարող է խախտվել սեփականության, ինչպես նաև կյանքի կամ առողջության իրավունքը: Կան գործողություններ, որոնք ունեն հակաիրավական հատկանիշներ, բայց պատասխանատվություն չեն առաջացնում: Օրինակ, պատասխանատվություն չի առաջացնի, եթե վնասը պատճառվել է անհրաժեշտ պաշտպանության սահմաններում (ՀՀ Քաղ. օր. հ 1060), եթե վնաս է պատճառվել տուժողի խնդրանքով (ՀՀ Քաղ. օր. հ 1058 մաս 4): Սակայն պետք է նշել, որ եթե վնաս պատճառելու ժամանակ անձը անցել է անհրա-

³⁴ Ст'я Абашин Э., Возмещение вреда, М., Белые Альвы, 2000г., тэ 4, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, էջ 605:

Ժեշտ պաշտպանության սահմանները, ապա վնասի հատուցումը չի կարող մերժվել (այս հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ):

Վնասը կարող է պատճառվել նաև անգործությամբ: Անգործությունը համարվում է հակաիրավական այն դեպքում, երբ գործողություն կատարելը եղել է անձի պարտականությունը, սակայն անձը չի կատարել այն:

Քաղաքացի Ա.-ն, զբոսնելով փողոցում, նկատում է մայթին պառկած Բ.-ին, սակայն կարծելով, թե Բ.-ն ուղղակի հարբած է՝ հեռանում է: Իրականում Բ.-ն սրտի կաթված էր ստացել և կարիք ուներ շտապ բուժօգնության, բայց քանի որ կաթվածի հետևանքով չէր կարող խոսել, չի կարողացել օգնության կանչել: Արդյունքում Ա.-ի անգործության պատճառով Բ.-ն ժամանակին բուժօգնություն չի ստանում և մահանում է: Երկրորդ դեպքը. Ա.-ն մոտենում է Բ.-ին և տեղեկանում, որ Բ.-ն ունի շտապ օգնության կարիք, սակայն Ա.-ն չի կարողանում կանչել բժիշկներին, քանի որ շտապում է երեխային մանկապարտեզից տուն տանելու: Արդյո՞ք երկու դեպքում էլ կարելի է Ա.-ի նկատմամբ ներկայացնել պահանջներ, թե ոչ: Արդյո՞ք կարելի է արդարացնել Ա.-ին: Ո՞վ կարող է պատասխանել՝ որն է Ա.-ի համար ավելի կարևոր՝ Բ.-ի առողջությունը, թե՞ իր երեխայի անվտանգությունը:

Այսպիսի օրինակները շատ են, և թե՛ իրավաբանական տեսությունը, թե՛ պրակտիկան միանշանակ պատասխան չեն տվել դրանց. պատասխանատվություն՝ սահմանել այն քաղաքացիների համար, որոնց անգործության արդյունքում վնաս է պատճառվել այլ անձանց, թե՞ ազատել այդ քաղաքացիներին պատասխանատվությունից, քանի որ քաղաքացիական օրենսդրությամբ վերջիններիս վրա պարտականություն դրված չէ փրկել բոլորին: Սակայն միևնույն ժամանակ, ելնելով օրենքի նշանակությունից և դրա կարգավորման առարկայի առանձնահատկությունից, գտնում ենք, որ օրենսդրությունը կարող է և պետք է կարգավորի նմանատիպ հարաբերություններից առաջացող վնասի համար պատասխանատվության հարցերը: Կարևորելով անգործությամբ պատճառված վնասի հատուցումը՝ ստորև մենք կփորձենք ներկայացնել և հիմնավորել խնդրի կարգավորման մեր տարբերակները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Այսպիսով, ինչպես ակնհայտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածից, որպեսզի քաղաքացու մոտ առաջանա պատասխանատվություն պատճառված վնասի համար, անհրաժեշտ է, որ վնասը պատճառված լինի այդ անձի կողմից: Այսինքն անհրաժեշտ է պատճառական կապ քաղաքացու գործողությունների և առաջացած վնասի միջև: Անշուշտ, տարակարծությունների տեղիք չի տալիս այն հանգամանքը, երբ քաղաքացին պատասխանատվություն է կրում իր գործողությունների արդյունքում պատճառված վնասի համար, օրինակ, մեքենան վարելիս հարվածում է մեկ այլ մեքենայի: Սակայն, մեր կարծիքով, վիճելի է այն հարցը, թե արդյո՞ք քաղաքացին ենթակա է պատասխանատվության, երբ վնասը պատճառվել է վերջինիս անգործության արդյունքում՝ օրինակ, տեսնելով, որ անձը խեղդվում է լճում, ափում գտնվող քաղաքացին չի փորձում օգնել վերջինիս, չի կանչում օգնության, և խեղդվողը մահանում է: Արդյո՞ք մահացածի իրավահաջորդները իրավունք կունենան վնասի հատուցում պահանջելու այն անձից, ով, գտնվելով լճափին, կարող էր կատարել գործողություններ, որոնք կփրկեին խեղդվողին, սակայն չի կատարել: Ընդհանրապես, հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական գրականության մեջ առկա է կարծիք, ըստ որի գործողություն ասելով պետք է հասկանալ նաև անգործություն, ուստի անիմաստ է լրացուցիչ ուսումնասիրել գործողության և անգործության տարբերությունը կամ անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցումը³⁵: Չենք կարող համաձայնվել նման կարծիքի հետ. մեր համոզմամբ քաղաքացիաիրավական պատասխանատվության մասին խոսելիս անհրաժեշտ է տարանջատել գործողությունը անգործությունից, քանի որ, ինչպես կտեսնենք ստորև, անգործության ոչ բոլոր դեպքերում է, որ անձը, չնայած պատասխանատվության ծագման հիմքերի առկայությանը, կարող է ենթարկվել պատասխանատվության: Միևնույն ժամանակ կտեսնենք, որ որոշ դեպքերում տարբերություն կա անգործության ու գործողության և պատ-

³⁵ St'u Peter Cane "The Anatomy of Tort Law" Hart Publishing, Oxford 1997, էջ 63:

ճառված վնասի միջև պատճառական կապի բացահայտման խնդրում: Բացի այդ՝ գործողության և անգործության արդյունքում առաջացած վնասի հատուցման հարցի քննարկման ժամանակ որոշակի առանձնահատկություններ ունի նաև մեղքի ինստիտուտը:

Խնդիրը ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրելու և արդյունավետ քննարկելու համար կցանկանալինք անգործության հետևանքով առաջացած վնասի համար պատասխանատվության հարցը քննարկել սուբյեկտային որոշակի խմբերի դասակարգման հիման վրա: Մասնավորապես, մեր կարծիքով, պատասխանատվության առկայության կամ բացակայության տարբեր սկզբունքներ պետք է հաշվի առնվեն հետևյալ խումբ սուբյեկտների պատասխանատվության հարցերը ուսումնասիրելիս.

1. Անձինք, ովքեր ի պաշտոնն կամ աշխատանքային բնույթից ելնելով պարտավոր են կատարել գործողություններ՝ ուղղված վնասի կանխմանը:

2. Անձինք, ովքեր իրենց գործողություններով վնասի առաջացման սպառնալիք են ստեղծել երրորդ անձանց համար և ձեռնպահ են մնացել վերջիններիս օգնելուց:

3. Անձինք, ովքեր իրենց կյանքին, առողջությանը և գույքին վտանգ չսպառնացող գործողություններով կարող էին կանխել վնասի պատճառումը երրորդ անձին: Անձինք, ովքեր կարող էին կանխել վնասի պատճառումը միայն օգնություն կանչելու միջոցով:

4. Անձինք, ովքեր կարող էին կանխել վնասի պատճառումը երրորդ անձին, սակայն իրենց կամ երրորդ անձանց կյանքին, առողջությանը և գույքին վտանգ սպառնացող գործողություններով:

5. Անձինք, ովքեր ֆիզիկական կամ մտավոր ունակությունների պատճառով ի վիճակի չեն եղել օգնել տուժողին:

Քանի որ այս խմբերի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը սերտորեն կապված է դրանցում ընդգրկված անձանց անգործության և առաջացած վնասի միջև պատճառական կապի առկայությունից կամ բացակայությունից, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ վերը մեր կողմից կարևորվել է անգործության և վնասի միջև առկա պատճառական կապի առանձնահատկությունը, կցանկանալինք անդրադառնալ պատճառական կապին՝ որպես անգործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության

անհրաժեշտ պայմանի: Իրավաբանական գրականության մեջ անգործության հետևանքով առաջացած վնասի և անգործության ու վնասի միջև առկա պատճառական կապի վերաբերյալ արտահայտվել են տարատեսակ կարծիքներ: Հեղինակների մի մասի կարծիքով մեկի կողմից մյուսին չօգնելը ինքնին վնասի առաջացում է, առկա է պատճառական կապ, ուստի անգործության հետևանքով պատճառված վնասի համար պատասխանատվության առանձնահատուկ ուսումնասիրության կարիք չկա, քանզի սա ուղղակի վնասի պատճառման ինքնուրույն տարատեսակ է: Իրավաբան գիտնականների մեկ այլ խմբի կարծիքով անգործության հետևանքով առաջացած վնասը ինքնին չի ենթադրում, որ այն պատճառվել է անգործության արդյունքում, և նույնիսկ եթե անձի պարտականությունն է հանդիսանում մեկ ուրիշին փրկելը, և նա ձախողում է դա, սա դեռ չի նշանակում, որ այդ անձը պետք է ենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության³⁶:

Ի հակադրություն վերոնշյալ երկու տեսակետների՝ գտնում ենք, որ ամեն դեպքում անգործության հետևանքով առաջացած վնասի համար պատասխանատվության հարցը պետք է ուսումնասիրվի պատճառական կապի համատեքստում, քանզի մեր կարծիքով քննարկվող հարաբերությունների ժամանակ հենց պատճառական կապն է այն անհրաժեշտ պայմանը, որը կարող է պատասխանատվության հիմք հանդիսանալ անգործություն դրսևորած քաղաքացու համար: Նշված ենթատեքստում պատճառական կապի ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ անգործության և վնասի միջև պատճառական կապի հիմնավորումը ավելի մեծ դժվարություն է ներկայացնում, քան գործողության և վնասի միջև այդ կապի առկայության հիմնավորումը: Իսկ իրավաբանական գրականությունը և դատական պրակտիկան ընդունում են, որ վնասի և արարքի միջև պատճառական կապը պետք է լինի ուղղակի և հաստատված, հակառակ դեպքում անուղղակի պատճառական կապը չի կարող պա-

³⁶ Այս մասին մասնավորապես տես Michael D. Bayles and Bruce Charman “Justice, Rights and Tort Law” D. Reidel Publishing Company Dordrecht/Boston 1983, էջ 216-217, H.L.A.Hart and A.M. Honore, Causation in the Law (Oxford, Clarendon Press, 1959), էջ 61-62:

տասխանատվության պայման դառնալ³⁷: Այսպիսով, ակնհայտ է, որ, որպեսզի անգործություն դրսևորած անձը ենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության, անհրաժեշտ է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին վնասը պատճառված լինի անմիջապես վնաս պատճառողի անգործության արդյունքում³⁸:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մեր կարծիքով միայն անգործության և պատճառական կապի անհրաժեշտ առկայության ուսումնասիրությունը բավարար չէ անգործության հետևանքով ծագած վնասի հատուցման պարտավորությունների առաջացման համար: Քննարկվող հարաբերություններում, ինչպես ցանկացած արտապայմանագրային պարտավորության առաջացման դեպքում, կարևորվում է նաև մեղքի առկայությունը: Այսինքն, որքանով է վնաս պատճառողը գիտակցել, որ իր անգործության արդյունքում դիմացինին կարող է վնաս պատճառվել: Գիտակցելով հանդերձ՝ արդյո՞ք նա հնարավորություն է ունեցել իր գործողություններով կանխել վնասի պատճառումը: Վերոնշյալ խմբերի քաղաքացիաիրավական պատասխանատվության հարցի՝ մեղքի համատեքստում ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ ի տարբերություն դելիկտային պարտավորությունների մյուս դեպքերի՝ անգործությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման դեպքում հնարավոր է, որ մեղքի, անգործության և պատճառական կապի առկայությունը բավարար չլինի անձին քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու համար:

Խնդիրը դիտարկենք վերը բերված օրինակի հիման վրա: Ակնհայտ է, որ Բ.-ի մահը վրա է հասել նաև Ա.-ի անգործության արդյունքում, սակայն ակնհայտ է նաև, որ առաջին դեպքում Ա.-ի մոտ բացակայում է մեղքը, քանի որ վերջինս տեղյակ չէ Բ.-ի հիվանդության մասին, իսկ երկրորդում՝ Ա.-ն շտապում է՝ իր երեխային մանկապարտեզից վերցնելու. Ա.-ն գիտի՝ բուժօգնություն չկանչելու դեպքում Բ.-ն կմահանա, սակայն միևնույն ժամանակ նա մտածում է, որ

³⁷ Տե՛ս Գայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, ԵՊՀ հատարակչություն, Երևան, 2001թ., էջ 608, նաև՝ Гражданское право, обязательственное право, учебник, էջ 613:

³⁸ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin "Tort Law" Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջեր 163-192:

եթե զբաղվի շտապօգնությամբ, ապա իր երեխան կմնա մենակ մանկապարտեզի դռների առջև: Ինչպե՞ս վարվել: Անշուշտ, հարցի լուծումը միանշանակ այլ կլիներ, եթե Ա.-ն չունենար ոչ մի զբաղմունք, դուրս եկած լիներ ուղղակի զբոսնելու, հանդիպել Բ.-ին և իմանալով, որ վերջինս մահանում է՝ չկանչեր շտապօգնություն: Սակայն քաղաքացիական հարաբերությունների առանձնահատկությունը և հետաքրքրությունն այն է, որ դրանք անկանխատեսելի են և ոչ նմանօրինակ:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ հարցի ուսումնասիրությունը պետք է կատարվի նաև բարոյականության նորմերի պահպանման և հասարակության անդամների միջև փոխօգնության սկզբունքի համատեքստում:

Եվ այսպես, վերոնշյալ առաջին խումբ անձանց թվին կարելի է դասել մասնագիտական այնպիսի աշխատանք կատարողներին, ինչպիսիք են ոստիկանները, հրշեջները, փրկարարները, բժիշկները և այլք: Թվարկված անձանց աշխատանքը այն է, որ վերջիններս կոչված են իրենց գործողություններով պաշտպանել քաղաքացիների կյանքը և առողջությունը, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը: Ոստիկանական մարմինները, հրշեջ կամ փրկարար ծառայությունները ֆինանսավորվում են հարկատուների հաշվին, այսինքն՝ քաղաքացիները վճարում են վերջիններիս իրենց անվտանգ զգալու համար, այս մարմինների աշխատակիցները, ընդունվելով աշխատանքի, գիտակցում են դրա վտանգավորությունը, ուստի նրանց կողմից անգործությունը, այսինքն իրենց առջև դրված պարտականությունների չկատարումը, անշուշտ, պետք է դիտել որպես վնաս առաջացնող գործոն և վնասի հատուցման պարտականությունը դնել այդ մարմինների վրա: Հատկանշական է, որ նմանատիպ կարծիք արտահայտվել է նաև արևմտաեվրոպական իրավաբանական գրականության մեջ³⁹: ՀՀ Քաղ. օր.-ը նախատեսում է պատասխանատվություն պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողություններով կամ անգործությամբ պատճառված վնասի համար /1063 հոդված/: Անշուշտ, ոստիկանությունը,

³⁹ Տե՛ս Michael D. Bayles and Bruce Charman, նշված աշխատությունը, էջ 214:

հրշեջ մարմինները, համաձայն ՀՀ օրենսդրության, դասվում են պետական մարմինների թվին, ուստի հողվածը կարգավորում է այս անձանց անգործության արդյունքում քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի պատասխանատվության հարցը, որը պետք է կրի Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը: Սակայն, մեր կարծիքով, բաց է մնում փրկարարների և բուժ- հիմնարկների պատասխանատվության հարցը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կան բազմաթիվ մասնավոր բուժօգնականներ, իսկ նախկինում պետական համարվող բուժօգնականները այժմ հանդիսանում են բաժնետիրական ընկերություններ, ուստի և իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ: Անշուշտ, կարելի է պնդել, որ Հայաստանի Հանրապետությունում փրկարարական ծառայությունները նույնպես գտնվում են պետական համակարգում, ուստի այս մարմինների աշխատակիցների անգործության արդյունքում պատճառված վնասը ենթակա է հատուցման Զաղ. օր. 1063 հողվածի կանոններով: Սակայն չկարգավորված է մնում մասնավոր փրկարարական կազմակերպությունների /որպես օրինակ կարելի է նշել Սևանի ավազանում, Ջրաշխարհում և այլուր գործող փրկարարների/ մարմինների անգործության արդյունքում պատճառված վնասի հատուցումը:

Մենք առաջարկում ենք խնդրի լուծման երկու տարբերակ.

1. Նախ և առաջ ակնհայտ է, որ մասնավոր փրկարարական կազմակերպությունները հիմնականում գործում են հասարակությանը ծառայություններ մատուցող զվարճանքի վայրերում: Այս կազմակերպությունների գործունեությունը հանդիսանում է քաղաքացիներին առաջարկվող ծառայությունների մի մասը, ուստի, մեր կարծիքով, այստեղ առկա են պայմանագրային հարաբերություններ: Այսինքն, ակնհայտ է, որ քաղաքացին, գնալով Ջրաշխարհի և գնելով մուտքի տոմս, մտնում է Ջրաշխարհի հետ քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերությունների մեջ, և ծառայություն մատուցող կազմակերպության պարտականությունն է հանդիսանում ապահովել քաղաքացու անվտանգությունը: Ուստի, եթե փրկարարի անգործության պատճառով քաղաքացուն վնաս պատճառվի, կարող են կիրառվել պայմանագրի չկատարման արդյունքում պատասխա-

նատվության քաղաքացիաիրավական նորմերը: Նույնը կարելի է ասել նաև բուժօգնությունների մասին:

Ելնելով վերոգրյալից՝ պետք է նշենք, որ քննարկվող սուբյեկտներից՝ պետական մարմիններ, պետք է առանձնացնել պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող անձանց, որոնց անգործության արդյունքում վնաս է պատճառվում պայմանագրի կոնտրագենտին:

2. Հարցի լուծման երկրորդ տարբերակը քաղաքացիական օրենսգրքում համապատասխան հոդվածի ավելացումն է, որով կամրագրվի, որ. **«Փրկարարական կամ բժշկական կազմակերպությունները պարտավոր են օգնել իրենց դիմած քաղաքացիներին կամ այն քաղաքացիներին, որոնք թեև չեն դիմել այդ կազմակերպություններին, սակայն քաղաքացու պահվածքից կամ վերջինիս գտնվելու իրավիճակից ակնհայտ է, որ քաղաքացին ունի փրկարարի կամ բժշկի օգնության կարիք:**

Փրկարարական կամ բժշկական կազմակերպությունների կամ դրանց աշխատակիցների անգործության պատճառով քաղաքացուն պատճառված վնասը ենթակա է հատուցման սույն օրենսգրքի 1062 հոդվածի կանոններին համապատասխան»:

Հարկ ենք համարում նշել, որ ելնելով այն հանգամանքից, որ վերը մեր կողմից արդեն նշվել է պայմանագրային պատասխանատվության և արտապայմանագրային պատասխանատվության հետևանքների տարբերության մասին այն առումով, որ արտապայմանագրային պատասխանատվության դեպքում վնաս պատճառողը պարտավոր է հատուցել պատճառած վնասը լրիվ ծավալով, իսկ պայմանագրային և գործունեության առանձին տեսակների հետ կապված պարտավորությունների հետ կապված պարտավորությունների համար օրենքով կարող է սահմանվել վնասները ոչ լրիվ ծավալով հատուցելու իրավունքը⁴⁰, ուստի ավելի նպատակահարմար ենք գտնում քաղաքացիական օրենսգրքում համապատասխան լրացման կատարումը, որը հնարավորություն կտա ավելի հեշտորեն կանոնակարգել քննարկվող խնդիրը և առավել արդյունավետ դարձնել պատճառված վնասի հատուցումը:

⁴⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս, էջ 598:

Երկրորդ խումբ անձինք այն անձինք են, որոնք իրենց գործողություններով նախադրյալներ են ստեղծում վնասի առաջացման համար, իսկ անգործությամբ անմիջապես նապաստում են դրա առաջացմանը: Այսինքն, առաջացած վնասի հետ անմիջական պատճառական կապի մեջ է գտնվում այս խումբ անձանց անգործությունը: Ասվածը ավելի հստակ պատկերացնելու համար բերենք հետևյալ օրինակը. Գ.-ն, ցանկանալով կողոպտել գետի ափով զբոսնող Ա.-ին, սկսում է հետապնդել վերջինիս: Նկատելով Գ.-ին՝ Ա.-ն փորձում է փախչել, սակայն վերջինիս ոտքը սայթաքում է, և Ա.-ն ընկնում է գետը: Գ.-ն չի օգնում Ա.-ին, հեռանում է դեպքի վայրից, և Ա.-ն խեղդվում է: Անշուշտ, քննարկվող դեպքում Գ.-ի գործողությունները ուղղված չեն եղել Ա.-ին սպանելուն, Գ.-ն կարող էր և վստահ լիներ, որ Ա.-ն կփրկվի, կարող էր վստահ չլինել, այսինքն, նա կարող էր չգիտակցել, որ հնարավոր է՝ գետում հայտնված Ա.-ն մահանա: Արդյո՞ք կարող ենք Գ.-ին պատասխանատվության կանչել Ա.-ին սպանելու համար: Գտնում ենք, որ ոչ, սակայն, քննարկվող խնդրի տեսանկյունից նայելով՝ տեսնում ենք, որ եթե Գ.-ն անգործության փոխարեն օգներ Ա.-ին, ապա վերջինս կփրկվեր: Փաստորեն, Ա.-ն մահացել է Գ.-ի / որը, հետապնդելով Ա.-ին, նախադրյալ է ստեղծել վերջինիս գետն ընկնելու համար/ անգործության հետևանքով:

Ինչպես վարվել, ենթակա՞ է Գ.-ն քաղաքացիաիրավական պատասխանատվության Ա.-ի մահվան համար, թե՞ ոչ: Ինչպես նշեցինք վերը, մենք խնդիրը ուսումնասիրելու ենք նաև բարոյականության և հասարակության շահերի պաշտպանության համատեքստում: Ուստի, ելնելով հենց այդ սկզբունքներից, ինչպես նաև այն հանգամանքից, որ ակնհայտ է Ա.-ի մահվան հիմքում Գ.-ի անգործությունը և դերակատարումը, գտնում ենք, որ քննարկվող դեպքերի համար Գ.-ն /Գ.-ի պայմանական անվան տակ նկատի ունենք այն անձանց, ովքեր իրենց գործողություններով նախադրյալ են ստեղծել վնասի համար, իսկ անգործության հետևանքով առաջացել է վնասը/ ենթակա է քաղաքացիական պատասխանատվության Ա.-ի մահվան համար, որը արդյունք է Գ.-ի անգործության:

Քննարկվող խումբ անձանց պատասխանատվության քննարկման հետ համատեղ կցանկանալինք անդրադառնալ հաջորդ խմբին՝ անձինք, ովքեր իրենց կյանքին, առողջությանը և գույքին

վտանգ չսպառնացող գործողություններով կարող էին կանխել վնասի պատճառումը երրորդ անձին, և անձինք, ովքեր կարող էին կանխել վնասի պատճառումը միայն օգնության կանչելու միջոցով: Գտնում ենք, որ այս խումբ անձանց անգործության արդյունքում առաջացած վնասի համար պատասխանատվության հարցը քննարկելիս պետք է բացահայտվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք թվարկվող անձանց անգործության և առաջացած վնասի միջև առկա է պատճառական կապ,

2. արդյո՞ք թվարկված անձինք գիտակցել են, որ իրենց անգործության արդյունքում օգնության կարիք ունեցող անձին կարող է պատճառվել վնաս,

3. արդյո՞ք այդ անձինք ի վիճակի են եղել առանց իրենց, կամ երրորդ անձանց վնաս պատճառելու օգնել տուժողին,

4. արդյո՞ք նշված անձինք կարող էին միայն զանգելու կամ օգնության կանչելու միջոցով օգնել տուժողին:

Վերոնշյալ հարցերի դրական պատասխանի արդյունքում միայն, մեր կարծիքով, հնարավոր կլինի պատասխանատվության կանչել այդ խումբ անձանց:

Հարցի քննարկումը, անշուշտ, պետք է կատարել նաև հասարակության շահերի պաշտպանության և բարոյականության տեսանկյունից: Այս կապակցությամբ ակնհայտ է, որ անձի պաշտպանությունը, հանդիսանալով կարևորագույն նպատակ, պետք է իրականացվի ոչ միայն պետության, այլև այն անձանց կողմից, ովքեր կարող են դա անել՝ առանց իրենց կամ երրորդ անձանց վնաս պատճառելու: Գտնում ենք, որ ոչ միայն հասարակության, այլև պետության համար արդյունավետ է այնպիսի համակարգի ստեղծումը, որ կնպաստի օգնության կարիք ունեցողին ժամանակին և արդյունավետ օգնության տրամադրումը, համակարգ, որը կնպաստի հասարակության մեջ փոխօգնության մթնոլորտի ստեղծմանը, բարոյականության նորմերի պաշտպանությանը, իսկ այն անձինք, ովքեր կխուսափեն դիմացինին օգնելուց, ոչ միայն կպատժվեն քրեորեն, այլև պարտավոր կլինեն հատուցել նաև տուժողի կրած վնասները⁴¹:

⁴¹ Առաջարկում ենք 33 քաղաքացիական օրենսգրքում կատարել հետևյալ լրացումը. *«Այն անձինք ովքեր իրենց գործողություններով նախադրյալ են ստեղծել վնասի առաջացման համար, իսկ անգործությամբ պատճառ հանդիսացել վնասի*

Անգործությամբ պատճառված վնասի հատուցման հարցի ուսումնասիրությունը իրենից կարևորություն է ներկայացնում նաև այն դեպքում, երբ վնասը պատճառվում է իրավաբանական անձի աշխատակցի կողմից: Սակայն քանի որ հետագա գլուխներում մենք մանրամասն անդրադառնալու ենք իրավաբանական անձանց կամ քաղաքացիների պատասխանատվությանը վերջիններիս աշխատակիցների կողմից պատճառված վնասի համար, նպատակահարմար ենք գտնում սույն հարցին անդրադառնալ այդ ժամանակ:

Կարծում ենք, վերոնշյալ խումբ անձանց պատասխանատվության համեմատ այլ կարգ պետք է սահմանվի այն անձանց համար, որոնք չեն օգնել տուժողին, քանի որ այդպիսի օգնությունը կվնասեր վերջիններիս կամ երրորդ անձանց, կամ այդպիսի օգնությունը վեր է եղել իրենց ուժերից: Օրինակ, քաղաքացին, տեսնելով խեղդվողին, չի օգնել, քանի որ ինքը չգիտի լողալ: Կամ խնդիրը կարող ենք քննարկել վերը մեր կողմից բերված Ա.-ի և Բ.-ի օրինակի վրա, երբ Ա.-ն, մոտենալով Բ.-ին, տեղեկանում է, որ Բ.-ն ունի շտապ օգնության կարիք, սակայն չի կարողանում կանչել բժիշկներին, քանի որ շտապում է՝ երեխային մանկապարտեզից տուն տանելու: Ակնհայտ է, որ քննարկվող օրինակում Ա.-ի անգործության և Բ.-ի մահվան մեջ կա պատճառական կապ, Ա.-ն գիտակցում է կամ կարող է գիտակցել, որ իր անգործությունը կարող է հանգեցնել Բ.-ի մահվան, սակայն կարող ենք Ա.-ին մեղադրել այն բանում, որ նա ավելի է կարևորում իր մանկահասակ երեխայի անվտանգությունը, քան Բ.-ի կյանքը: Անշուշտ, հարցը վիճելի է, սակայն, ինչպես արդեն նշել ենք, յուրաքանչյուր խմբի պատասխանատվության հարցը մեր կողմից քննարկվելու է նաև բարոյականության տեսանկյունից: Իսկ այս դեպքում արդյո՞ք մենք, այսինքն՝ հասարակությունը, բարոյական իրավունք ունի մեղադրելու Ա.-ին իր մանկահասակ երեխային ավելի շատ սիրելու, քան Բ.-ի կյանքը գնահատելու մեջ: Կարծում ենք, որ ոչ: Յուրաքանչյուրս ունենք արժեքներ, որոնք վեր են ցանկացած պատասխանատվությունից, ուստի համոզված ենք, որ նույնիսկ Ա.-

առաջացմանը, ինչպես նաև նրանք, ովքեր հնարավորություն են ունեցել առանց իրենց, իրենց մերժավորների կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով երրորդ անձին պատճառվող վնասի կանխմանը, սակայն չեն արել՝ պարտավոր են հատուցել իրենց անգործության արդյունքում պատճառված վնասը»:

ին պատասխանատվության ենթարկելու դեպքում Ա.-ն կվարվի նույն կերպ, և նրան մեղադրելու ոչ մի բարոյական իրավունք մենք չունենք:

Վերը թվարկված հինգերորդ խումբ անձանց /ովքեր ֆիզիկական կամ մտավոր ունակությունների պատճառով ի վիճակի չեն եղել օգնել տուժողին/ պատասխանատվության մասին իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է հակառակ կարծիք⁴², սակայն, մեր կարծիքով, չենք կարող անգործության հետևանքով պատճառված վնասի համար մեղադրել այն անձանց, ովքեր ֆիզիկապես ի վիճակի չեն եղել օգնել տուժողին/ օրինակ, անդամալույծը չի կարողացել օգնել խեղդվողին/, ինչպես նաև այն անձանց, ովքեր մտավոր ունակությունների պատճառով չէին կարող օգնություն ցույց տալ: Այս վերջին խմբի հետ համատեղ կցանկանալիք քննարկել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1067, 1068 և 1069 հոդվածների դիսպոզիցիաներում նշված անձանց պատասխանատվության հարցը, քանի որ համաձայն վերոնշյալ հոդվածերի՝ ծնողները, դաստիարակչական հիմնարկները կամ խնամակալները պատասխանատվություն են կրում իրենց խնամքի տակ գտնվող անչափահասների կամ անգործունակների կողմից պատճառված վնասի համար: Ուստի կարևորվում է նաև այդ սուբյեկտների պատասխանատվության հարցի քննարկումը այն դեպքում, երբ վնասը պատճառվել է վերջիններիս խնամարկյալների անգործության արդյունքում: Ինչպես նշվեց, քաղաքացիական օրենսգիրքը անգործունակ անձանց, ինչպես նաև մինչև տասնչորս տարեկան անչափահասներին ազատել է պատճառված վնասի համար պատասխանատվությունից՝ պատասխանատվություն սահմանելով նրանց ծնողների կամ խնամակալների համար⁴³ (այս սուբյեկտների պատասխանատվության հարցին, սույն գլխի նպատակներից ելնելով, կանդրադառնանք ոչ հիմնովին: Դրանց պատասխանատվության հարցը ավելի խորությամբ մեր կողմից կուսումնասիրվի հետագա գլուխներում): Փոքրահասակների

⁴² Տե՛ս Peter Cane նշված ախատությունը “The Anatomy of Tort Law” Hart Publishing, Oxford 1997, էջ 31 / Պ. Քեյնը արտահայտել է մի տեսակետ, ըստ որի անձը չի կարող ազատվել պատճառված վնասի համար պատասխանատվությունից այն պատճառով, որ վերջինս չի կարողացել գործողություններ կատարել, քանի որ այդ գործողության կատարումը վեր է եղել նրա մտավոր և ֆիզիկական հնարավորություններից/:

⁴³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1067, 1069, 1071 հոդվածներ:

կամ անգործունակների անգործությունը չի կարելի դիտել որպես վատ դաստիարակության կամ հսկողության արդյունք, քանի որ այդ անձանց խնամակալության տակ գտնվելը արդեն իսկ ենթադրում է, որ նրանց մտավոր ունակությունները չեն գտնվում այն մակարդակի վրա, որ կարողանան գիտակցել օգնություն ցույց տալու կամ որոշակի գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, իսկ գիտակցելու դեպքում՝ օգնություն ցույց տալ: Այդպիսի անգործությունը չի կարող ծնողների կամ խնամակալների համար պատասխանատվության հիմք հանդիսանալ: Ուստի քննարկվող դեպքում գտնում ենք, որ անհնար է ծնողներին կամ խնամակալներին ենթարկել պատասխանատվության, քանի որ համոզված ենք, որ այդ անձանց գործողությունը չի կարող հանգեցնել անգործունակի անգործությանը:

Ելնելով վերոգրյալից՝ համոզված ենք, որ անգործության հետևանքով այլ անձանց վնաս պատճառած անձինք քաղաքացիաիրավական պատասխանատվությունից պետք է ազատվեն այն դեպքում, եթե վերջիններս չեն կատարել այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում կվնասեին իրենց կամ երրորդ անձանց, ի վիճակի չեն եղել նման գործողություններ կատարելու ֆիզիկական կամ մտավոր ունակությունների պատճառով:

Խոսելով հակաօրինական գործողության կամ անգործության մասին՝ որպես պատասխանատվություն առաջացնող հիմքի, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև քաղաքացիաիրավական պատասխանատվության քննարկմանը այն դեպքում, երբ վնասը պատճառվել է օրինական գործողություններով, մասնավորապես ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

§5. Ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի հատուցումը

ՀՀ Քաղ. օր.-ի 1061 հոդվածը սահմանում է, որ ծայրահեղ անհրաժեշտության, այսինքն՝ վնաս պատճառողին կամ այլ անձանց սպառնացող վտանգի վերացման պայմաններում պատճառված վնասը, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարող վե-

րացվել այլ միջոցներով, պետք է հատուցի վնաս պատճառած անձր: Այնուհետև հողվածը ավելացնում է, որ հաշվի առնելով նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքները՝ դատարանը կարող է այն հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա՝ ի շահ որի գործել է վնաս պատճառողը կամ վնաս հատուցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես այդ երրորդ անձին, այնպես էլ վնասը պատճառողին:

Այսպիսով, հողվածից ակնհայտ է դառնում, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի դեպքում քաղաքացիաիրավական հարաբերություններ են առաջանում վնաս պատճառողի և տուժողի կամ այն երրորդ անձի համար, ում շահերը պաշտպանվել են: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, ծայրահեղ անհրաժեշտության վիճակը իրենից ներկայացնում է կայուն և կրկնվող իրավաբանական հարաբերություն, որը առաջանում է որոշակի հատկանիշների ամբողջությամբ, որոնց թվում առկա է ոչ միայն մեծ վնաս պատճառելու ռիսկը, այլև տարբեր վնասների պարտադիր պատճառման հնարավորությունը⁴⁴: Ընդ որում, ինչպես նշում են հեղինակները, պատճառված վնասը պետք է ավելի նվազ լինի կանխվող վնասից: Քանի որ իրավական պրակտիկայում ծայրահեղ անհրաժեշտությամբ պատճառված վնասի դրույթը շատ քիչ է կիրառվում, ուստի դժվարանում է պրակտիկ օրինակներ բերելը: Սա դժվարացնում է նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչ կարգով պետք է որոշվի՝ արդյոք կոնկրետ անձը գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, ո՞րն է պարտադիր ռիսկի աստիճանը⁴⁵:

Այս հարցին, կարծում ենք, կարող է պատասխանել կոնկրետ իրավական ակտը, որը կարգավորում է այս կամ այն աշխատողի, պաշտոնատար անձի գործունեությունը: Որպես օրինակ կարելի է նշել առողջապահության մասին, զինձառայության մասին, ոստիկանության մասին օրենսդրությունները և այլն: Այս նորմատիվ ակտերի հիման վրա տարբեր մասնագիտության ներկայացուցիչները պարտավորվում են իրականացնել որոշակի ռիսկի հետ կապված գործողություններ: Ինչպես նշում են իրավագետները. «Սա հնարավորու-

⁴⁴ Տե՛ս նաև С.Е. Донцов, В.В. Глянцев, նշված աշխատությունը, էջ 258:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

թյուն կտար պնդելու, որ զինձառայողները, միլիցիայի, հակահրդեհային պաշտպանության և մի շարք այլ կատեգորիայի աշխատողները, որոնք իրենց վրա դրված կամ կամավոր ընդունած ծառայողական, հասարակական պարտականությունների կամ հասարակական օգտակար պարտավորությամբ չեն կարող խուսափել իրենց առողջությունը կամ կյանքը վտանգելուց՝ պաշտպանելու համար կարևորագույն հասարակական հարաբերությունները և շահերը, չեն կարող հղում կատարել ծայրահեղ անհրաժեշտությանը: Իրենց պարտականությունները կատարելուց խուսափելու դեպքում այս անձինք պետք է կրեն կարգապահական, հասարակական կամ քրեական պատասխանատվություն»⁴⁶:

Այսպիսով, այն անձանց համար, ում աշխատանքում առկա է ռիսկի գործոնը, համաձայն վերոնշյալ տեսակետի, ծայրահեղ անհրաժեշտության վիճակ չի կարող առաջանալ աշխատանքային պարտականությունները իրականացնելիս: Օրինակ, հրշեջները չեն կարող զերծ մնալ կրակը մարելուց և դրանով իսկ փրկելուց որոշակի գույք՝ հղում կատարելով այն բանին, որ իրենք վտանգում են իրենց կյանքը: Կարծում ենք, որ վերոնշյալ տեսակետը վիճելի է: Ճիշտ է, այս կատեգորիայի աշխատողները պարտավոր են աշխատել իրենց կյանքի համար ռիսկային պայմաններում, բայց, կարծում ենք, անհրաժեշտ են կոնկրետ նորմատիվ ակտեր, որոնք կապահովեն նաև նրանց կյանքի և առողջության պաշտպանությունը, ինչպես նաև կտարանջատեն պահանջվող ռիսկի աստիճանները:

Եթե վնասը պատճառվում է առավել վտանգի աղբյուրի տիրոջ կողմից ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, ապա առաջանում է վիճելի մի իրավիճակ՝ սահմանել պատասխանատվություն և վնասի հատուցում Քաղ. օր. 1072 հոդվածով, ուստի և պատասխանատվություն՝ առանց մեղքի⁴⁶, թե՞ 1061 հոդվածի հիմքերով, որը թույլ է տալիս վնասի հատուցման պարտականությունը դնել երրորդ անձի վրա, ում շահերից ելնելով՝ գործել է վնաս պատճառողը, կամ էլ լրիվ կամ մասնակիորեն ազատել վնաս հասցնողին և երրորդ անձին վնասի հատուցման պարտականությունից: Դատական պրակտիկան այս հարցում կողմնորոշվում է հարցի լուծման հետևյալ երկու տարբերակներով.

⁴⁶ Տե՛ս С.Е. Донцов, В.В. Глянецев, նշված աշխատությունը, էջ 259:

ա) առավել վտանգի աղբյուրով ծայրահեղ անհրաժեշտության վիճակում հասցված վնասի դեպքում անհրաժեշտ է կիրառել Քաղ. օր.-ի այն հոդվածը, որը պատասխանատվություն է սահմանում առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար, քանի որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի համար պատասխանատվություն սահմանող հոդվածը նկատի ունի իրավաչափ վնասը,

բ) առավել վտանգի աղբյուրով դիտավորյալ իրավաչափ վնաս հասցնելու ժամանակ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն սահմանող հոդվածը չի կարող կիրառվել, քանի որ դիտավորյալ վնաս պատճառելու հասկացությունը չի կարող համատեղվել առավել վտանգի աղբյուրի տիրոջ գործունեության հետ⁴⁷:

Առավել վտանգի աղբյուրի տիրոջ՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարած գործողությունների համար պատասխանատվությունը չպետք է արմատապես ազդի ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում կատարված իրավախախտման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի վրա: Առավել վտանգի աղբյուրի տերը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործում է իրավաչափ, և նրա այս կարգավիճակը չի տարբերվում մյուս վնաս պատճառողների կարգավիճակից: Այս պատճառով դատարանները կարիք չունեն պարզելու, թե արդյոք ծայրահեղ անհրաժեշտության վիճակի ծագումը հանդիսացել է կոնկրետ իրի վնասակար հատկությունների հետևանք, թե՞ բավարար է միայն հաստատել այն հանգամանքը, որ վնասը տուժողին պատճառվել է առավել վտանգի աղբյուրով և ոչ այլ օբյեկտով:

Առավել վտանգի աղբյուրի՝ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում գործող տիրոջ պատասխանատվության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերի առանձնահատկությունը պետք է արտահայտվի նրանում (ներառելով նաև պատասխանատվությունից լրիվ կամ մասնակիորեն ազատելու հնարավորությունը), որ դատարանը, նկատի ունենալով կամ տուժողի մեղքը (եթե վերջինս առկա է), կամ էլ այն անձի մեղքը, ում շահերից ելնելով գործել է վնաս պատճառողը,

⁴⁷ Ст'ю, С.Е. Донцов, М.Я. Маринина, Имущественная ответственность за вред причиненный личности. М., 1986г., т. 46:

իրավունք ունի հաշվի առնելու միայն այս անձանց կոպիտ անզգուշությունը կամ դիտավորությունը: Ինչպես նշում են հեղինակները, անհաղթահարելի ուժը ինքնին բացառում է ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակի առկայությունը, քանի որ անհաղթահարելի ուժի պայմաններում բացառվում է ցանկացած գիտակցված վնասի պատճառում⁴⁸: Թերևս կարելի է չհամաձայնվել հեղինակների վերոնշյալ կարծիքի հետ, քանի որ կյանքում հնարավոր են դեպքեր, երբ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում անհրաժեշտություն առաջանա վնաս հասցնելու մեկին կամ մի քանիսին՝ ավելի մեծ թվով անձանց կյանքը փրկելու համար: Օրինակ, եթե անտեսանելիության պայմաններում թույլատրվի ինքնաթիռի վայրէջքը մայրուղու վրա՝ դրանով իսկ վտանգելով մայրուղում երթևեկող ավտոմեքենաների ուղևորների առողջությունը:

Առավել վտանգի աղբյուրով ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի պատասխանատվության վերաբերյալ այլ կարծիք են հայտնում Լ.Ա. Մայդանիկը և Ն. Յու. Սերգեևան: Հեղինակները գտնում են, որ ելնելով այն հանգամանքից, որ առավել վտանգի աղբյուրը տիրապետողի համար օրենսդրությամբ սահմանված է խիստ պատասխանատվության կարգ, իսկ այն հանգամանքների ուսումնասիրությունը, երբ տրանսպորտի տերը վնաս է պատճառում երրորդ անձանց՝ ելնելով ծայրահեղ անհրաժեշտությունից, ցույց է տալիս, որ ծայրահեղ անհրաժեշտություն ծագում է հատկապես տրանսպորտային միջոցի անկառավարելի հատկությունների դրսևորման հետևանքում, ուստի, քանի որ ԽՍՀՄ քաղաքացիական օրենսդրության հիմունքների 454 հոդվածը (ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդված) ավտոտրանսպորտի տիրոջ վրա վնասի հատուցման պարտականություն է դնում, ապա հենց այդ հիմքերով էլ դատարանը իրավունք ունի, ԽՍՀՄ Քաղ. օր.-ի 449 հոդվածի 2-րդ մասի (ՀՀ Քաղ. օր. 1061 հոդված 1-ին մասի) համաձայն, պատասխանատվություն սահմանել և պարտավորեցնել վերջինիս հատուցել պատճառված վնասը, չնայած այն պատճառվել է երրորդ անձի շահերից ելնելով⁴⁹:

⁴⁸ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նույն տեղում:

⁴⁹ Տե՛ս Л.А. Майданик, Н.Ю. Сергеева, Материальная ответственность за повреждение здоровья. М., 1968г. էջ 87-88:

Խոսելով ծայրահեղ անհրաժեշտության մասին՝ նշենք, որ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում հասցված կարող է դիտվել միայն այն վնասը, որի պատճառմամբ կանխվել է մեկ այլ՝ շատ ավելի մեծ վնաս, օրինակ, մեկ անձի կյանքի կամ առողջության վնասման շնորհիվ կանխվել է մի քանի անձանց կյանքին կամ առողջությանը հասցվելիք վնասը կամ, որ ավելի հավանական է, գույքին վնաս պատճառվելով՝ կանխվել է առողջությանը պատճառվող վնասը: Շատ կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ պետք է ուշադրություն դարձնել, թե արդյոք հնարավոր՞ է եղել վնասը կանխել այլ միջոցներով: Եթե այդպիսի հնարավորություն եղել է, ապա հասցված վնասը, կարծում ենք, չի կարող դիտվել որպես ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված:

Ինչպես նշվեց վերը, Քաղ. օր.-ը սահմանում է, որ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում պատճառված վնասը ենթակա է հատուցման վնաս պատճառած անձի կողմից: Օրենսգիրքը նաև նշում է, որ, հաշվի առնելով նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքները, դատարանը կարող է այն հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա, ի շահ որի գործել է վնաս պատճառողը, կամ վնասը հատուցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատել ինչպես այդ երրորդ անձին, այնպես էլ վնաս պատճառողին:

Կարծում ենք, այս դեպքում հողվածի ձևակերպումը թերի է: Նախ հստակ ձևակերպված չեն, և չկա ոչ մի հղում Քաղ. օր.-ի մյուս հոդվածներին, որոնց հիման վրա վնաս պատճառողը կարող է ազատվել քաղաքացիաիրավական պատասխանատվությունից: Բացի այդ, գտնում ենք, որ հողվածում պետք է հստակ սահմանվեն այն սկզբունքները կամ հիմքերը, որոնք հնարավորություն կտան դատարաններին պարզել, թե երբ պետք է պատասխանատվությունը դնել վնաս պատճառողի և երբ՝ երրորդ անձի վրա, ում շահերից ելնելով՝ գործել է վնաս պատճառողը:

Ենթադրվում է, որ տվյալ դեպքում օրենսդիրը նկատի ունի երրորդ անձի մոտ ծայրահեղ անհրաժեշտության վիճակի առաջացման համար մեղքի առկայությունը կամ բացակայությունը, իսկ եթե առկա է մեղքը, ապա՝ դրա աստիճանը: Կարծում ենք, այս սուբյեկտիվ հանգամանքների կողքին դեր պետք է ունենան նաև մի շարք

օբյեկտիվ հանգամանքներ, ինչպիսիք են՝ կողմերի նյութական դրու-
թյունը, վնասի պատճառման ձևը և այլն:

Կցանկանայինք նշել մի կարևոր փաստ ևս. ծայրահեղ անհ-
րաժեշտության պայմաններում հասցված վնասի դեպքում վնաս է
հասցվում ոչ թե վտանգավոր իրավիճակ ստեղծող անձին, այլ այն
սուբյեկտներին, որոնք անմիջական կապ չունեն վտանգավոր իրա-
վիճակի ստեղծման հետ: Եթե վնաս հասցվի վտանգավոր իրավիճակ
ստեղծող սուբյեկտին, ապա մենք գործ կունենանք անհրաժեշտ
պաշտպանության ինստիտուտի հետ:

Անդրադառնալով ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի
կիրառման միջազգային փորձին՝ կցանկանայինք նշել, որ, օրինակ,
Ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ ընդունվում է,
որ ոչ քրեական և ոչ էլ քաղաքացիական իրավախախտում է հանդի-
սանում մեկ անձի վնաս հասցնող գործողությունը, որը միակ միջոցն
է կանխելու ավելի մեծ վնասի ծագումը այն անձի համար, ով կատա-
րել է այդ գործողությունը: Ընդհանուր սկզբունքից ելնելով՝ այս դեպ-
քում դատական պրակտիկան խոսում է անհաղթահարելի ուժի մա-
սին, սակայն իրականում, ինչպես գտնում է Լ. Շյուլիո դե լա Մո-
րանդյերը, այստեղ չկա անհաղթահարելի ուժ⁵⁰: Ընդհակառակը,
գտնում է հեղինակը, ծայրահեղ անհրաժեշտությունը ենթադրում է
երկու որոշումներից մեկի ազատ ընտրություն՝ վնաս պատճառե՞լ ու-
րիշին, թե՞ ենթարկվել անխուսափելի վտանգին: Այնուամենայնիվ,
Ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ նույնպես
նշվում է, որ ուրիշին վնասի պատճառումը ծայրահեղ անհրաժեշտու-
թյան դեպքում պետք է հանդիսանա առավել մեծ վտանգից խուսա-
փելու միակ միջոցը⁵¹:

Խոսելով ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառ-
ված վնասի հատուցման մասին՝ կարևորում ենք այն հանգամանքնե-
րի պարզաբանումը, որոնք կարող են պատասխանատվությունից ա-
զատման հիմք հանդիսանալ: 1061 հոդվածը նշում է, որ ծայրահեղ
անհրաժեշտությունից ելնելով վնաս պատճառած անձը կարող է ա-
զատվել պատասխանատվությունից, և այն կարող է դրվել երրորդ

⁵⁰ Տե՛ս Լ. Жюллио Де Ла Морандьер, Гражданское право Франции, М., 1960г., էջ
421:

⁵¹ Տե՛ս Լ. Жюллио Де Ла Морандьер, նույն տեղում:

անձի վրա, ի շահ որի գործել է վնաս պատճառողը, դատարանի կողմից: Միևնույն ժամանակ հողվածը ամրագրում է, որ դատարանը կարող է փոքրացնել նաև պատասխանատվության չափը ինչպես վնաս պատճառողի, այնպես էլ երրորդ անձի համար: Հողվածը կոնկրետ չի նշում, թե որոնք են այն հանգամանքները, որ ազատում են ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառած վնասի հատուցումից: Օրենսգիրքը խոսում է միայն նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքների մասին՝ առանց կոնկրետացնելու այդ հանգամանքները: Կարծում ենք, այս հանգամանքների տակ պետք է հասկանալ ինչպես ծայրահեղ անհրաժեշտության վիճակին նախորդող հանգամանքները, այն կողմի գործողությունները, որոնք վնաս պատճառողի գործողությունների պատճառ են հանդիսացել, այնպես էլ փրկվող արժեքը, այն անձանց և արժեքների շրջանակը, որոնց վնաս է հասցվել և այլն:

§6. Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասի հատուցումը

ՀՀ Քաղ. օր.-ի 1060 հոդվածը սահմանում է, որ անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները:

Անհրաժեշտ պաշտպանության պայմաններում պատճառած վնասը հատուցելուց ազատվելու կարևորագույն պայման է անհրաժեշտ պաշտպանության սահմանների պահպանումը: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ և ինչպես ամրագրված է քաղաքացիական օրենսդրությամբ, անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցմամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման⁵²: Այսպիսով, պարզելու համար, թե որոնք են անհրաժեշտ պաշտպանության հատկանիշները և սահմանները, անհրաժեշտ է անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքին:

Ինչպես ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 42 հոդվածում. «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը

⁵² Տե՛ս Մ.А. Майданик, Н.Ю. Сергеева, նշված աշխատությունը, էջ 86, ինչպես նաև ԳԳ քաղ. օր.-ի 1060 հոդվածը:

կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը»:

Այսպիսով, անհրաժեշտ պաշտպանության վիճակի պայմաններից մեկը հակաօրինական կամ հանցավոր այն արարքի կանխումն է, երբ անձի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև գույքին սպառնացող ռեալ վտանգ է առաջացել: Պրակտիկայում մեծ դժվարություն է առաջացնում անհրաժեշտ պաշտպանության սահմաններում գործած կոնկրետ անձին քաղաքացիաիրավական կամ քրեաիրավական պատասխանատվությունից ազատելու հարցի լուծումը, քանի որ արդեն ինքնին իրենից դժվարություն է ներկայացնում այն հանգամանքների լրիվ և բազմակողմանի բացահայտումը, որոնք կապացուցեն, որ տվյալ անձը գործել է անհրաժեշտ պաշտպանության պայմաններում: Դժբախտաբար, դատարանները հաճախ, գտնվելով տուժողների բարոյական ճնշման տակ, խուսափում են անհրաժեշտ պաշտպանության վիճակի ընդունումից և կիրառումից, որը հանգեցնում է նրան, որ հակաօրինական ոտնձգությունից իր կյանքը կամ առողջությունը պաշտպանող անձը, այդ ընթացքում վնաս պատճառելով ոտնձգողի առողջությանը, ստիպված է լինում փոխհատուցել այդ վնասները և նույնիսկ կրել նաև քրեական պատիժ: Սա, մեր կարծիքով, չի բխում արդարադատության շահերից և նպատակներից: Դատարանների կողմից հստակ պետք է բացահայտվի՝ արդյոք կոնկրետ անձը գործել է անհրաժեշտ պաշտպանությամբ՝ սահմաններում, թե՞ ոչ, և եթե՝ այո, ապա անձը անմիջապես պետք է ազատվի քաղաքացիաիրավական և քրեաիրավական պատասխանատվությունից:

Մյուս կողմից էլ անձը կարող է գործել իր կարծիքով անհրաժեշտ պաշտպանության սահմաններում, սակայն իրականում նրա գործողությունները ոչ միայն գերազանցեն անհրաժեշտ պաշտպանության սահմանները, այլև ընդհանրապես դուրս լինեն անհրաժեշտ պաշտպանությունից: Այս կապակցությամբ հարկ ենք համարում մեկ անգամ ևս նշել, որ անհրաժեշտ պաշտպանության հարցը քննարկելիս պետք է մեծ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե արդյոք կանխվելիք վնասը եղել է ռեալ կամ, ինչպես նշում են Ս.Ե. Դոնցովն ու Վ.Վ. Գլյանցևը, այդ գործողությունները էական վնաս են հասցրել պաշտպանվողի իրավունքներին և շահերին կամ էլ այդպիսի վնասի վտանգ են ստեղծել⁵³: Դատական պրակտիկան և իրավունքի տեսությունը առանձնացնում են նաև անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության հարցը: Սա, ինչպես նշում են հեղինակները, բխում է ոստճգության հասարակական վտանգավորության բնույթից: Միևնույն ժամանակ Ս.Ե. Դոնցովն ու Վ.Վ. Գլյանցևը իրավացիտրեն եզրակացնում են, որ քաղաքացիական օրենսդրությունը չի տալիս անհրաժեշտ պաշտպանության վիճակի քաղաքացիաիրավական բնորոշումը, որը պետք է տարբերվեր քրեաիրավականից նրանով, որ քաղաքացիական իրավունքում ոստճգողի գործողություններում հասարակական վտանգի առկայությունը պարտադիր չէ, և բավական է միայն այդ գործողությունների հակաիրավական բնույթը⁵⁴:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ինչպես ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, այնպես էլ անհրաժեշտ պաշտպանության դեպքում վնասը պետք է պատճառվի կանխելու համար ավելի մեծ վնասի առաջացումը: Սակայն ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության տարբերությունն այն է, (որը և բացատրում է առաջինի դեպքում վնասի հատուցման պարտականությունը այն պատճառողի վրա դնելը, իսկ երկրորդի դեպքում՝ ոչ), որ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում վնաս է պատճառվում հակաիրավական արարքի հետ կապ չունեցող անձին, իսկ անհրաժեշտ պաշտպանության դեպքում՝ այն անձին, ով կատարում է հակաիրավական արարքը: Վերջին դեպքում շատ կարևոր է, որ վնաս պատճառվի

⁵³ Տե՛ս նաև С.Е. Донцов, В.В. Глянцев, նշված աշխատությունը, էջ 243:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում:

միայն հարձակվողին և ոչ՝ շրջապատի անձանց: Փաստորեն, օրենքը պաշտպանվողին տալիս է իրավունք վնասելու հարձակվողին՝ պաշտպանվողի գործողությունները դարձնելով իրավաչափ:

Պրակտիկայում դատարանների կողմից կարևոր է նաև այն արժեքների օբյեկտիվ գնահատումը, որոնց պահպանմանն է ուղղված եղել անհրաժեշտ պաշտպանությունը: Ամեն դեպքում քաղաքացու կյանքը և առողջությունը, հանդիսանալով բարձրագույն արժեքներ, որոնք պահպանվում են Սահմանադրությամբ, չեն կարող այս հարցում տարակարծությունների տեղիք տալ: Այլ բան է, երբ առողջությանը հասցվող վնասից խուսափելու համար մահացու վնասվածք է հասցվել ոտնձգողին: Այս դեպքում պետք է ուշադրության առնվեն մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են՝ ոտնձգության բնույթը, պաշտպանվողի և հարձակվողի ֆիզիկական տվյալները, դեպքի նախապատմությունը և այլն: Այս կապակցությամբ անհրաժեշտ պաշտպանության համար կարևոր նախապայման է անհրաժեշտ պաշտպանության սահմանների պահպանումը: Սա նշանակում է, որ հարձակվողին հասցված վնասը չպետք է լինի ավելին, քան այն վնասը, որը ձգտում էր հասցնել հակաիրավական արարք կատարողը: Անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության հարց կարող է ծագել նաև այն դեպքում, երբ գույքը փրկելիս վնաս է պատճառվել հարձակվողի կյանքին կամ առողջությանը: Արդյո՞ք քաղաքացին ենթակա է պատասխանատվության, երբ իր սեփականությունը պաշտպանելու համար վնաս է պատճառել հարձակվողի առողջությանը կամ կյանքին: Գտնում ենք, որ, քննարկելով վերոնշյալը քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համատեքստում, կարող ենք ասել, որ վնաս պատճառողը ենթակա չէ քաղաքացիաիրավական պատասխանատվության պատճառված վնասի համար նույնիսկ այն դեպքում, երբ վնասը պատճառվել է հարձակվողին, իսկ հարձակման թիրախ է հանդիսացել վնաս պատճառողի գույքը, քանի որ, ինչպես նշված է քրեական օրենսգրքում, հանցագործություն չի կարող համարվել այն գործողությունը, որը թեև համընկնում է քրեական օրենքով նախատեսված արարքի հատկանիշներին, սակայն կատարվել է Հայաստանի Հանրապետության շահերը, հանրային շահերը, պաշտպանվողի կամ մի այլ անձի անձնավորությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակով: Ակնհայտ է, որ սեփականու-

թյան իրավունքը, հանդիսանալով բացառիկ իրավունք, նույնպես ենթակա է պաշտպանության սույն կանոնի համաձայն:

Պետք է նշել նաև, որ անհրաժեշտ պաշտպանության դիմում են հիմնականում իրավապահ մարմինները, որոնք իրենց պաշտոնական պարտականությունների բերումով առնչվում են հանրորեն վտանգավոր արարքների և այդ արարքներն իրականացնողների հետ: Այս մարմինները, փաստորեն, կոչված լինելով ապահովելու հասարակության անվտանգությունը և պետական կարգը, իրենց գործունեության ընթացքում ստիպված են լինում դիմել անհրաժեշտ պաշտպանության՝ կանխելու համար այս կամ այն հակաիրավական արարքը:

Ինչպես նշվեց վերը, հատուցման է ենթակա այն վնասը, որը պատճառվել է անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով: Նման դեպքում պատասխանի կարիք ունեն հետևյալ հարցերը. ո՞վ պետք է հատուցի անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով պատճառված վնասը, ի՞նչ կարգով պետք է որոշվի հատուցման ենթակա վնասի հատուցման հարցը: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ ամեն դեպքում, չնայած վնաս է պատճառվել ոտնձգողին, սակայն այն պատճառվել է կանխելու համար մոտալուտ վտանգը, ուստի և պետք է տարանջատել և որոշել, թե վնասի որ մասն է ենթակա հատուցման, կամ արդյոք ենթակա՞ է հատուցման ողջ պատճառված վնասը: Լ.Ա. Մայդանիկի և Ն.Յու. Սերգեևայի կարծիքով անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով պատճառված վնասի ծավալը պետք է նվազեցվի՝ հաշվի առնելով տուժողի մեղավորության աստիճանը, որը իր ագրեսիվ գործողություններով սադրել է վնաս պատճառողին դիմելու պատասխան գործողությունների⁵⁵: Համաձայն ենք հեղինակների այս տեսակետի հետ և գտնում ենք, որ ճիշտ չի լինի, ինչպես նաև չի բխի արդարադատության շահերից անհրաժեշտ պաշտպանության սահմաններից դուրս գալով պատճառված վնասի հատուցումը ամբողջ ծավալով այն պատճառողի վրա դնելը: Այստեղ դատարանները պետք է ուշադրություն դարձնեն և վնասի հատուցման չափը որոշելիս հաշվի

⁵⁵ Տե՛ս Լ.Ա. Майданик, Н.Ю. Сергеева, նշված աշխատությունը, էջ 86:

առնեն նաև հակաիրավական արարք գործող անձի գործողությունների բնույթը:

§7. Պատճառական կապ և վնաս պատճառողի մեղք

Դելիկտային պարտավորությունների առաջացման մյուս պայմանը հակաիրավական գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապն է: Այստեղ շատ կարևոր է նշել, որ իրավաբանական գրականությունը և դատական պրակտիկան ընդունում են, որ վնասի և հակաիրավական արարքի միջև պատճառական կապը պետք է լինի ուղղակի և հաստատված, հակառակ դեպքում անուղղակի պատճառական կապը չի կարող պատասխանատվության պայման դառնալ⁵⁶:

Մյուս պայմանը վնաս պատճառողի մեղքն է: Մեղքը անձի սուբյեկտիվ հոգեբանական վերաբերմունքն է իր հակաիրավական գործողությունների նկատմամբ: Այն հանդես է գալիս երկու տարատեսակներով՝ դիտավորությամբ և անզգուշությամբ: Քաղաքացիական օրենսդրությունը չի մեկնաբանում մեղքի այս երկու ձևերի առանձնահատկությունները, այդ պատճառով օգտագործվում են քրեական իրավունքի կանոնները:

Քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման համար մեղքի տեսակները նշանակություն չունեն: Վնաս պատճառողը պատասխանատվություն է կրում և՛ այն ժամանակ, երբ նա վնաս է պատճառել դիտավորությամբ, և՛ այն դեպքում, երբ վնասը նրա անզգուշության հետևանքով է եղել: Քաղաքացիական իրավունքում գործում է մեղքի կանխավարկածի սկզբունքը, որով ենթադրվում է, որ վնաս պատճառողն ինքը պետք է ապացուցի իր անմեղությունը, հակառակ դեպքում նա կենթարկվի քաղաքացիաիրավական պատասխանատվության, և հակառակը. տուժողը ինքը պետք է ապացուցի իրեն վնաս պատճառելու փաստը, հակառակ դեպքում կմնա առանց վնասի հատուցման: Այս պատճառով է, որ ոչ միայն ՀՀ քաղ. օր-ի, այլև այլ երկրների համանման օրենսդրական նորմերը սահմանում են, որ անձը կարող է ազատվել պատասխանատվություն-

⁵⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, էջ 608, նաև՝ Гражданское право, обязательственное право, учебник, էջ 613:

նից, եթե ապացուցի իր գործողություններում մեղքի բացակայությունը:

Մեղքի աստիճանը հաշվի է առնվում միայն այն ժամանակ, երբ վնասը պատճառելիս առկա է եղել նաև տուժողի մեղավորությունը: Այս դեպքում ուշադրություն է դարձվում միայն տուժողի կոպիտ անզգուշության և դիտավորության ձևով արտահայտված մեղքի վրա (այս խնդրին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլուխներում):

Այստեղ կցանկանայինք նշել, որ իրավաբանական գրականության մեջ վերոնշյալ չորս պայմանները դիտվում են որպես վնասի հատուցման համար պատասխանատվության ծագման համալիր ամբողջություն, և դրանցից որևէ մեկի բացակայությունը կարող է բացառել վնաս պատճառողին պատասխանատվության ենթարկելը: Սակայն տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք կարող է անձը ենթարկվել քաղաքացիաիրավական պատասխանատվության, եթե նրա գործողություններում բացակայում է մեղքը:

Ինչպես նշում է Ս.Ս. Ալեքսեևը. «Իրավախախտման ավարտված հանցակազմի բացակայության դեպքում անձը չի կարող ենթարկվել քաղաքացիաիրավական պատասխանատվության»⁵⁷: Մի շարք հեղինակներ, պաշտպանելով այս տեսակետը, պնդում են, որ եթե օրենսդիրը պատասխանատվության պարտականությունը դնում է անմեղի վրա, ապա նա օգտագործում է միայն «Պատասխանատվության մոդելը»: Ն.Ս. Մալեինը նշում է, որ չկա ոչ մի անհրաժեշտություն և հիմնավորում լցնել այս մոդելը՝ վերջինիս համար խրթին բովանդակությամբ⁵⁸:

Չհամաձայնվելով այս տեսակետի հետ՝ կարող ենք նշել, որ օրենքով նախատեսված են դեպքեր, երբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է առաջանալ մեղքից անկախ, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է գործունեության առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքում առաջացող պա-

⁵⁷ Ст'и Алексеев С.С. О составе гражданского правонарушения. Правоведение. 1958, No 1, էջ 48:

⁵⁸ Ст'и Малейн Н.С. Имущественная ответственность в хозяйственных отношениях. М.1968, էջ 27:

տասխանատվությանը (ՀՀ Քաղ. օր. հոդված 1072): Այս կապակցությամբ մի շարք իրավաբաններ առաջ են քաշել ռիսկի համար պատասխանատվության տեսությունը, որը, սակայն, տարբեր հեղինակների մոտ արտահայտվում է տարբեր դրսևորումներով: Այսպես, եթե Օ.Ա. Կրասավչիկովը գտնում է, որ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցումը իրականացվում է ոչ թե պատասխանատվության շրջանակներում, այլ տուժողի խախտված նյութական դրությունը վերականգնելու իրավական նորմի շրջանակներում, ապա Վ.Ա. Օյգենզիխտը նշում է, որ հենց ռիսկի հասկացության մեջ արդեն առկա է սուբյեկտիվ պահը՝ վնաս պատճառողի գիտակցությունը և կամքը, որի արդյունքում էլ վերջինիս մոտ առաջանում է վնաս հատուցելու պարտականություն: Այսպես է ձևակերպվել առանց մեղքի պատասխանատվության սուբյեկտիվ հիմնավորման տեսությունը, որի կողմնակիցներից է նաև Ս.Ն. Բրատուսը⁵⁹:

Խոսելով գործունեության առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի մասին՝ կցանկանալինք նշել, որ այս իրավահարաբերությունների ժամանակ պատասխանատվության հիմնական նախապայման է վնասի առկայությունը: Ինչպես նշում է Ա.Ի. Ջագորովկոն, եթե առավել վտանգի աղբյուրը միայն սպառնալիք է ստեղծում անձանց կյանքին կամ առողջությանը, ապա պատճառված վնասի հետևանքով առաջացող պարտականություններ չեն առաջանում⁶⁰: Պետք է նշել, որ առավել վտանգի աղբյուրով վնասի պատճառման սպառնալիքը առաջ է բերում վարչական միջոցների կիրառում, որոնք ուղղված են այդ սպառնալիքի վերացմանը, ինչպես նաև սպառնալիքի համար մեղավոր անձանց պատժելուն: Այսինքն՝ ասել, որ առավել վտանգի աղբյուրով վնաս պատճառված չլինելու դեպքում անհնար է խոսել այդ աղբյուրը տիրապետողի պատասխանատվության մասին, ճիշտ չի լինի, քանի որ ամեն դեպքում առավել վտանգի աղբյուրները տիրապետողները ենթակա են պատասխանատվության և պատասխանատվություն են կրում, երբ խախտում

⁵⁹ Стѣи Красавчикѡв О.А., Возмещенія вреда, причиненного источником повышенной опасности. М. Юрид. Лит., 1966г., էջ 131-137, Ойгензихт В.А. Категория "риска" в советском гражданском праве. Правоведение. 1971, No 5, էջ 67, Братусь С.Н. Юридическая ответственность и законность. М. 1976, էջ 177:

⁶⁰ Стѣи նաև А. И. Загоруйко, նշված աշխատությունը, էջ 74:

են այդ աղբյուրների շահագործման կանոնները (աղտոտում են շրջակա միջավայրը, արագ են վարում ավտոտրանսպորտային միջոցը և այլն): Մակայն վնաս պատճառելուց ծագող և քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված իրավահարաբերությունները կարող են առաջանալ միմիայն այն դեպքում, երբ վնաս է պատճառվել քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը, ինչպես նաև քաղաքացու կյանքին կամ առողջությանը: Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար կարևոր առանձնահատկություն է այն, որ վնասի հատուցման ժամանակ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը կամ տիրապետողը պատասխանատվություն է կրում ոչ թե աղբյուրի վարքի, այլ իր գործողությունների կամ այդ գործողությունների համար լիազորված անձանց վարքագծի համար⁶¹:

Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ է, որ վնասը հասցված լինի առավել վտանգի աղբյուրի և դրան բնորոշ վտանգավորության հետևանքով: Անհրաժեշտ է բացահայտել աղբյուրի վտանգավորության և առաջացած վնասի միջև պատճառական կապի առկայությունը: Սրա հետ մեկտեղ նշված պատճառական կապի շրջանակներում անհրաժեշտ է հաստատել պատճառական կապի առկայությունը առավել վտանգի աղբյուրը տիրապետողի գործողությունների և պատճառված վնասի միջև, նաև պատճառական կապի առկայությունը վնասի աղբյուրի կառավարումը անմիջականորեն իրականացնող անձի գործողությունների և պատճառված վնասի միջև: Միայն այս հանգամանքների բազմակողմանի քննարկումը և բացահայտումը կարող են հնարավորություն ընձեռել պատասխանելու այն հարցին, թե արդյոք առավել վտանգի աղբյուրը տիրապետող անձը այլ անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար ենթակա՞ է պատասխանատվության, թե՞ ոչ:

Այս հարցի կապակցությամբ հետաքրքրական փոփոխությունների են ենթարկվել Գ.Կ. Մատվեևի մոտեցումները: Եթե հիսունական և վաթսունական թվականներին հեղինակը գտնում էր, որ. «Անձը պատասխանատու է իր գործողությունների համար ընդհանուր

⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 75:

հիմունքներով միայն այն դեպքում, եթե այդ գործողությունները ունեն հակաիրավական բնույթ, եթե դրանք վնաս են պատճառում ինչ-որ մեկին, եթե առկա է գործողությունների և պատճառված վնասի միջև պատճառական կապը, և վերջապես, եթե այդ վնասակար գործողությունների հիմքում ընկած է վնաս պատճառողի մեղքը՝ դիտավորյալ կամ անզգույշ գործողությունները»⁶², ապա հետագայում՝ արդեն յոթանասունական թվականներին, Մատվենը գրում է, որ քաղաքացիական իրավունքում կա ոչ միայն «մեղավոր», այլև «անմեղ» պատասխանատվություն: Ընդ որում, ընդունելով սա, Մատվենը դեռևս շարունակում է պնդել, որ պատասխանատվությունը ծագում է իրավախախտման՝ հակաօրինական և մեղավոր վնաս պատճառելու արդյունքում: Իսկ ինչ վերաբերում է վնասի համար օրենքում առկա պատասխանատվության մյուս հիմքերին, որը օրենսդրության կողմից անվանվում է «պատասխանատվություն», ապա ըստ հեղինակի այս դեպքերում ավելի ճիշտ կլիներ խոսել ոչ թե պատասխանատվության, այլ վնասը հատուցելու կամ տուգանք վճարելու պարտականության մասին⁶³: Վերջում հեղինակը եզրակացնում է. «Քանի որ ընդունված է հաշվի նստել օրենսդրության և դատական պրակտիկայում կիրառվող ավանդական տերմինաբանության հետ, ապա պետք է ընդունել, որ հակաիրավական արարքի ոչ լիարժեք հանցակազմի առկայության դեպքում այսպես կոչված «պատասխանատվությունը» առաջանում է ոչ թե իրավախախտմանից, այլ հատուկ իրավաբանական փաստերից, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով»⁶⁴:

Այնուամենայնիվ, իրավաբանների մեծ մասը կողմնակից է պատասխանատվություն հասկացության տեսական այն մեկնությանը, որը չնայած պատասխանատվության հիմքում տեսնում է մեղքը, սակայն ընդունում է, որ այս սկզբունքից կա բացառություն, այն է. ընդհանուր կանոնների համաձայն վնասի համար պատասխանատվությունը առաջանում է վնաս պատճառողի մեղքի առկայության

⁶² Ст'ю Матвеев Г.К., Вина в советском гражданском праве., К. 1955, էջ 24:

⁶³ Ст'ю Матвеев Г.К., Основания гражданско-правовой ответственности, М., 1970, էջ 7, 17:

⁶⁴ Ст'ю Матвеев Г.К., Основания юридической ответственности, Советское государство и право, 1971. No 10, էջ 30:

դեպքում, օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ նաև առանց մեղքի: Մի շարք հեղինակներ, մասնավորապես Բ.Ս. Անտիմոնովը, Ե.Ա. Ֆլեյշիցը, Ա.Մ. Բելյակովան առանց մեղքի պատասխանատվության հիմնավորումը տեսնում են հասարակության և պետության համար անհրաժեշտ վարքագծի հիմքում⁶⁵, Մ.Մ. Ագարկովը՝ անհրաժեշտ ուշադրության հիմքում, Վ.Ս. Սերեբրովսկին՝ անհրաժեշտ զգուշավորության բարձրացման հիմքում⁶⁶: Հետաքրքիր է, որ միայն Կ.Կ. Յախչկովն է գտնում, որ չկա ոչ մի հիմք պնդելու համար, որ մեղքը՝ որպես պատճառված վնասի պատասխանատվության հիմնական պայման, ամենագլխավորն է⁶⁷:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած քաղաքացիական օրենսդրության մեջ մեղքը հանդիսանում է որպես հասցված վնասի համար պատասխանատվության կարևոր պայման, օրենսդիրը սահմանել է մի շարք նորմեր, որոնք պատասխանատվություն են սահմանում նաև անկախ վնաս պատճառողի մոտ մեղքի առկայությունից: Այս հանգամանքը, կարծում ենք, ունի իր տրամաբանական բացատրությունը, քանի որ ընդունելով, որ անձի գործողություններում պետք է առկա լինի սուբյեկտիվ կողմը, որը և մղում է անձին հակահրավական արարքի կատարմանը, միաժամանակ պետք է նշենք նաև, որ առանձին դեպքերում տիրապետելով, տնօրինելով կամ օգտագործելով որոշակի խումբ առարկաներ կամ զբաղվելով որոշակի գործունեությամբ՝ անձը արդեն իսկ գիտակցում է այդ գործունեության անվերահսկելիության և անկառավարելիության հնարավորությունը, ուստի և հասկանում է, որ իր գործողությունները կարող են նաև վնաս պատճառել այլ անձանց, չնայած ինքը ձեռնարկել է բոլոր միջոցները՝ կանխելու այդպիսի վնասը:

⁶⁵ Стѣи Антимонов Б.С., Значение вины потерпевшего при гражданском правонарушении., М. Гос. Изд. Юрид. Лит., 1950 г., էջ 88, Белякова А.М., Возмещения причиненного вреда., М. 1972, էջ 10-12, Флейшиц Е.А., Обязательства из причинения вреда и из неосновательного обогащения, М. 1951, էջ 137:

⁶⁶ Стѣи Агарков М.М., Возникновение обязательства из причинения вреда. Гражданское право, под редакцией М.М. Агаркова и Д.М. Генкина, М., 1944. էջ 337, Серебровский В.И., Обязательства, возникающие из причинения вреда, Советское гражданское право, Под. Ред. С.Н. Братуся. М., 1950. էջ 521:

⁶⁷ Стѣи Яичков К.К., Система обязательств из причинения вреда в советском гражданском праве. Вопросы гражданского права. М., 1957, էջ 170:

Գտնում ենք, որ քննարկելով մեղքի առկայության կամ բացակայության հարցը՝ որպես օրենքով նախատեսված առանձին դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվության պայման, կարող ենք հանգել հետևյալ եզրակացության. քննարկվող իրավահարաբերություններում (ՀՀ Քաղ. օր., հ. 1072) վնաս պատճառողի մոտ մեղքի առկայությունը դրսևորվում է ոչ թե անմիջապես, այլ երկրորդավորված, այսինքն անձը, չնայած վնասը պատճառելու պահին չի դրսևորել մոտայուտ վնասի պատճառելու ո՛չ դիտավորություն և ո՛չ էլ անզգուշություն, սակայն միայն այն հանգամանքը, որ զբաղվել է այդպիսի գործունեությամբ, արդեն իսկ նշանակում է, որ գիտակցել է վնասի պատճառման հնարավորությունը և պարտավոր է պատասխանատվություն կրել պատճառված վնասի համար:

ԳԼՈՒԽ II **ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ** **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Պատճառված վնասի հատուցման ինստիտուտի մասին առավել բազմակողմանի և ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նախ և առաջ անդրադառնալ այն անձանց շրջանակին, որոնք պատասխանատվություն են կրում վնաս պատճառելու համար, այսինքն՝ վնաս պատճառելու հետևանքով առաջացող պատասխանատվության սուբյեկտներին: ՀՀ քաղ.օր-ի 1058 հոդվածում նշված է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

Համաձայն Քաղ. օր.-ի երկրորդ բաժնի՝ ՀՀ քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում քաղաքացիները (գլուխ 4), իրավաբանական անձինք (գլուխ 5), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքները (գլուխ 6): Ուստի պատճառված վնասի համար պատասխանատվության սուբյեկտներ կարող են հանդիսանալ, համաձայն Քաղ. օր.-ի, քաղաքացիները (այդ թվում օտարերկրյա և քաղաքացիություն չունեցող անձինք), իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները (ՀՀ Քաղ. օր.-ը սահմանում է, որ ՀՀ-ն և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով): Օրենսգիրքը նշում է, որ Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից: Հայաստանի Հանրապետության անունից քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում են պետական մարմինները, իսկ համայնքների անունից՝ տեղական ինքնակառավարման մարմինները: Միևնույն ժամանակ օրենսգիրքը

նշում է, որ օրենքներով, ՀՀ նախագահի հրամանագրերով, ՀՀ կառավարության որոշումներով և համայնքների իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով, նրանց հատուկ հանձնարարությամբ ու նրանց անունից կարող են հանդես գալ իրավաբանական անձինք և քաղաքացիները: Քաղ. օր.-ի 130 հոդվածի համաձայն ՀՀ-ն և համայնքները իրենց պարտավորությունների համար պատասխանատու են սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքով:

Վերը մատնանշված սուբյեկտներից յուրաքանչյուրն ունի պատճառոված վնասի համար պատասխանատվության իր առանձնահատկությունները. քաղաքացիական իրավահարաբերությունների յուրաքանչյուր մասնակից, յուրաքանչյուր սուբյեկտ, լինի քաղաքացի, իրավաբանական անձ կամ պետություն, ունի պատասխանատվության իր յուրահատկությունները:

Նկատի ունենալով այն, որ պատասխանատվության վերոնշյալ բոլոր սուբյեկտների մասնակցությունը քաղաքացիաիրավական հարաբերություններին ունի բազմաթիվ առանձնահատկություններ և նրբություններ, և դրանցից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը իրենից պրակտիկ և տեսական մեծ նշանակություն է ներկայացնում, մենք կուսումնասիրենք քաղաքացիական իրավունքի սուբյեկտների կողմից պատճառոված վնասի հատուցման առանձնահատկությունները համաձայն Քաղ. օր.-ի կողմից կատարված դասակարգման:

§1. Իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունը իր աշխատողի պատճառած վնասի համար

Իրավաբանական գիտության մեջ, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների պրակտիկայում առանձնահատուկ ուշադրության արժանի և, ցավոք, նվազ ուսումնասիրված հարաբերությունների թվին է դասվում իրավաբանական անձի և քաղաքացու՝ իր աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում այլ անձանց գույքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրը:

Ինչպես ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1062 հոդվածում. «Իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս պատճառած վնասը»: Հարկ է նշել, որ հոդվածում տրված «աշխատող» հասկացությունը ավելի լայն իմաստով է ընկալվում, քան ընդունված է հասկանալ այն ավանդական իմաստով: Ինչպես նշված է նույն հոդվածի երկրորդ մասում, աշխատող է համարվում աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կատարող քաղաքացին, եթե նա գործել է կամ պետք է գործեր համապատասխան իրավաբանական անձի առաջադրանքով և աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո: Ակնհայտ է, որ դելիկտային պատասխանատվության նպատակներից ելնելով՝ պատճառված վնասի հատուցումն ամբողջական դարձնելու համար քաղաքացիական օրենսդրությունն «աշխատող» հասկացության տակ ենթադրում է ոչ միայն այն անձանց, ովքեր աշխատում են գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա, այլև այն անձանց, ովքեր իրականացնում են աշխատանքներ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա:

Գտնում ենք, որ և՛ «աշխատող» հասկացության բացահայտումը, և՛ ամբողջական խնդիրը առավել համակողմանի և ամբողջական ուսումնասիրելու համար կարևոր է խնդիրը ուսումնասիրել եվրոպական զարգացած երկրների քաղաքացիական օրենսդրությունների համատեքստում: Մասնավորապես Ֆրանսիական իրավունքում իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունը իր աշխատողի պատճառած վնասի համար կարգավորվում է Ֆրանսիայի Քաղ. օր. 1384 հոդվածի առաջին և հինգերորդ մասերով: Համաձայն 1384 հոդվածի առաջին մասի. «Յուրաքանչյուր ոք պատասխանատու է ոչ միայն իր գործողությամբ պատճառված վնասի, այլև այն անձի պատճառած վնասի համար, ում գործողությունների համար պատասխանատու է ինքը»: Իսկ նույն հոդվածի հինգերորդ կետն ամրագրում է, որ. «Տերերը և գործատուները պատասխանատու են իրենց ծառայողների և աշխատողների կողմից աշխատանքային գործառույթները կատարելու ընթացքում պատճառված վնասի համար»: Ինչպես ակնհայտ է Ֆրանսիայի քաղ.օր. 1384 հոդվա-

ծից, հողվածի առաջին կետը ընդհանուր հիմք է ստեղծում գործատուների պատասխանատվության համար, իսկ հինգերորդ կետով արդեն կարգավորման է ենթարկվում այդ անձանց պատասխանատվությունը իրենց աշխատակիցների կողմից պատճառված վնասի համար:

Որպեսզի գործատուն աշխատողի կողմից պատճառված վնասի համար դիտվի որպես պատասխանատվության սուբյեկտ, անհրաժեշտ է հետևյալ հանգամանքների առկայությունը.

1. Աշխատակիցը պետք է ենթակա լինի պատասխանատվության, այսինքն աշխատակցի արարքը պետք է ենթադրի վնաս պատճառելուց ծագող հարաբերությունների առաջացում, սա իր հերթին նշանակում է, որ պետք է առկա լինեն վնասի առաջացման ընդհանուր հիմքերը՝ վնաս, հակաօրինական արարք, մեղք և պատճառական կապ:

2. Գործատուի և վնաս պատճառողի միջև պետք է լինեն աշխատանքային հարաբերություններ: Այս հարցի մասին արևմտաեվրոպական իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ հնարավոր են նաև դեպքեր, երբ վնաս պատճառողը աշխատանքային հարաբերությունների մեջ չլինի գործատուի հետ և աշխատանքը կատարի ընկերական հիմունքներով⁶⁸:

3. Աշխատակցի գործողությունը, որը վնասի առաջացման հիմք է հանդիսացել, պետք է լինի աշխատակցի աշխատանքային գործառնությունների ներքո:

Անգլիական իրավունքում աշխատողի կողմից պատճառված վնասի համար իրավաբանական անձի մոտ պատասխանատվության առաջացման պայմանները հիմնականում նույնական են ֆրանսիական իրավունքի հետ: Դրանք են.

1. Աշխատողը պետք է վնաս պատճառած լինի,
2. վնաս պատճառողը պետք է լինի գործատուի աշխատողը և ոչ թե անկախ ծառայություններ մատուցող,
3. վնասը պետք է պատճառված լինի աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում:

⁶⁸ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000թ., էջ 468-474:

Միակ հնարավորությունը գործատուի համար՝ խուսափելու վնասի հատուցումից, այն է, որ նա կարողանա ապացուցել, որ երեք վերոնշյալ հանգամանքներից մեկն ու մեկը բացակայում է⁶⁹:

Ինչպես ակնհայտ է արևմտաեվրոպական, հայկական, ինչպես նաև ռուսական իրավաբանական գրականությունից և դատական պրակտիկայից, որպեսզի իրավաբանական անձի կամ քաղաքացու աշխատողի գործողությունների արդյունքում իրավաբանական անձի կամ քաղաքացու մոտ առաջանան վնասի հատուցման պարտականություն, անհրաժեշտ է տեսության մեջ ընդունված պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման չորս հիմքերի առկայությունը՝ վնաս, հակաօրինական արարք, պատճառական կապ առաջացած վնասի և հակաօրինական արարքի միջև և մեղքի առկայություն:

Ի տարբերություն հայկական, ռուսական, ֆրանսիական և անգլիական իրավունքների՝ իր աշխատողի կողմից երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվության յուրահատուկ կարգ է գործում Գերմանիայում: Չնայած Գերմանայի Քաղ. օր. 831 հոդվածի առաջին կետը սահմանում է, որ գործատուն պատասխանատվություն է կրում իր աշխատողի կողմից երրորդ անձանց պատճառված վնասի համար, սակայն հոդվածի շարունակությունից հետևում է, որ եթե գործատուն ցուցաբերել է բավարար ուշադրություն աշխատողի ընտրության հարցում, կամ աշխատողը վնաս է պատճառել՝ խախտելով աշխատանքային կանոնները, կամ էլ եթե նույնիսկ գործատուն ցուցաբերել պատշաճ ուշադրություն աշխատողին աշխատանքի ընդունելիս, որը, սակայն, չէր կանխի վնասի պատճառումը, ապա գործատուն ազատվում է աշխատողի կողմից պատճառված վնասի հատուցումից: Այսինքն Գերմանիայի Քաղ. օր. 831 հոդվածի առաջին կետի առաջին նախադասությունը չնայած ամրագրում է գործատուի պատասխանատվությունը աշխատողի կողմից պատճառված վնասի համար, սակայն հոդվածի շարունակությունը թույլ է տալիս գործատուին հեշտությամբ խուսափել այդ պատասխանատվությունից՝ ապացուցելով, որ ինքը պատշաճ կարգով է կատարել աշխատողի ընտրությունը, պատճառված վնաս-

⁶⁹ Sté u Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշված աշխատությունը, էջ 477:

սի համար ինքը մեղք չունի, պատճառական կապը բացակայում է, այսինքն, եթե նույնիսկ գործատուն մեղք չունենար, վնասը կպատճառվեր⁷⁰: Պատասխանատվության այս կարգի սահմանումը իրավաբանական գրականության մեջ բացատրվում է նրանով, որ մեծ ընկերությունները, ունենալով հազարավոր աշխատողներ, ի վիճակի չեն հսկողություն իրականացնել վերջիններիս գործողությունների նկատմամբ, ուստի անհնար է այդ աշխատակիցների կողմից երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվության կանչել գործատուներին: Գործատուն կարող է պատասխանատվություն կրել միայն այն դեպքում, եթե պատշաճ չի կատարել աշխատակցի ընտրությունը, որն և է գործատուի մեղքը⁷¹: Փաստորեն, Գերմանիայի քաղաքացիական օրենսգիրքը ավելի նպաստավոր ռեժիմ է սահմանում գործատուների, քան աշխատակիցների կամ տուժողների համար:

Մեր կարծիքով, իրավաբանական անձի պատասխանատվությունն իր աշխատողի պատճառած վնասի համար կարևորվում է այն դեպքերում, երբ առաջ է գալիս վնասի ամբողջական հատուցման ապահովման խնդիրը՝ կապված վնասի մեծության, պատճառված վնասի հետևանքով տուժողների բազմաթիվության հետ: Այս կապակցությամբ անգլիական տեսական գրականության մեջ աշխատողի կողմից պատճառված վնասի հատուցումը գործատուի վրա դնելը հիմնավորվում է նրանով, որ գործատուն ամեն դեպքում ավելի հարուստ է, քան աշխատողը, ուստի գործատուն ավելի ռեալ հնարավորություն ունի հատուցելու պատճառված վնասը⁷²:

Որպես ասվածի հիմնավորում կարելի է բերել առօրյայում պատահող մի շարք պատահարներ, որոնց արդյունքում տուժում են բազմաթիվ մարդիկ, և վերջիններիս կրած վնասների հատուցումն ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է պատասխանատվության կանչել ֆինանսապես ինքնուրույն և հարուստ անձին, ինչպիսին է գործատուն: Օրինակ՝ երթուղային տաքսու հետ կապված

⁷⁰ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշված աշխատությունը, էջ 482:

⁷¹ Տե՛ս նույն աշխատությունը, էջ 483-485:

⁷² R.V.F. Heuston and R.A. Buckley, Salmond and Heuston on the Law of Torts, 21st edn. (London: Sweet & Maxwell, 1996) էջ 430, B.S. Markesinis and S.F. Deakin "Tort Law" Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջ 497:

վթարի արդյունքում վնաս կարող է պատճառվել ոչ միայն անձանց գույքին, այլև կյանքին և առողջությանը: Ակնհայտ է, որ պատճառված վնասի ծավալը բավականին մեծ է, ուստի առաջ է գալիս վնասի ամբողջական հատուցման խնդիրը: Երթուղային տաքսու վարորդը, որի անմիջական գործողությունների արդյունքում պատճառվել է վնասը, կարող է մահանալ, ուստի տուժողները վարորդի իրավահաջորդներից կարող են պահանջել վնասի հատուցում միայն վերջինիս ժառանգական գույքի սահմաններում, որը կարող է ոչ միայն չբավականացնել ամբողջ վնասի հատուցման համար, այլև անգամ մեկ տուժողին պատճառված վնասի հատուցմանը: Ահա այստեղ կարևորվում է այն իրավաբանական անձին պատասխանատվության կանչելու հարցը, որը վերահսկել և տնօրինել է նշված երթուղին, ուստի և պատասխանատվություն է կրում երթուղի դուրս եկած բոլոր մեքենաների սարքինության ու անվտանգության համար: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում իրավաբանական անձն ունի ավելի շատ դրամական միջոցներ՝ հատուցելու պատճառված վնասը: Սակայն մինչև իրավաբանական անձի վրա վնասը հատուցելու պարտականությունը դնելը անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք վնասի պատճառման պահին երթուղայինի վարորդը գտնվել է աշխատանքային հարաբերությունների մեջ երթուղու գիծը սպասարկող ընկերության հետ, արդյո՞ք ընկերությունը պարտավոր է եղել վերահսկել մեքենայի շահագործողի կողմից անվտանգության կանոնների պահպանումը: Այս ամենի ամբողջական պատասխանի արդյունքում էլ հնարավոր կլինի պատասխանատվության կանչել երթուղին սպասարկող ընկերությանը:

Ֆրանսիական օրենսդրությունը գործատուի համար ստեղծում է այնպիսի վիճակ, որը հնարավորություն չի տալիս վերջինիս վնասի հատուցումից խուսափելու համար հղում կատարել այնպիսի հանգամանքների, ինչպիսիք են՝ պատճառված վնասը իր անձնական մեղքով չէ, գործատուն չէր կարող կանխատեսել կամ նույնիսկ կանխել վնասը և այլն: Միակ հնարավոր միջոցը գործատուի համար՝ ազատվելու աշխատակցի կողմից պատճառված վնասի հատուցումից, այն է, որ ինքը կարողանա ապացուցել, որ վնասը պատճառվել է այնպիսի հանգամանքներում, որոնք աշխատակիցը հնարավորու-

թյուն չի ունեցել ո՛չ կանխատեսելու և ո՛չ էլ կանխելու, կամ վնասը պատճառվել է տուժողի մեղավորությամբ:

ՀՀ քաղ.օր. 1062 հոդվածը, ամրագրելով իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունը իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար, ենթադրում է, որ վնասի առկայության դեպքում տուժողները անմիջապես դատական հայց կարող են հարուցել իրավաբանական անձի կամ քաղաքացու նկատմամբ, ում աշխատողը պատճառել է վնասը: Սակայն արդյո՞ք սա բացառում է տուժողի հնարավորությունը հայց հարուցել ընդդեմ անմիջապես վնաս պատճառողի, կամ որպես պատասխանատվության սուբյեկտ դիտել և՛ իրավաբանական անձին, և վերջինիս աշխատողին համապարտության կարգով:

Դատավարական առումով ֆրանսիական օրենսդրությամբ տուժողը անմիջապես իրավունք ունի հայց հարուցելու գործատուի դեմ: Սակայն սա չի նշանակում, որ տուժողը չի կարող անմիջապես վնասի հատուցման հայցով պահանջ ներկայացնել հենց վնաս պատճառողին, այսինքն՝ աշխատակցին: Ֆրանսիական օրենսդրությամբ տուժողը հնարավորություն ունի իր նախընտրությամբ հայց հարուցել կամ գործատուի, կամ էլ վերջինիս աշխատակցի հանդեպ, որը պատճառել է վնասը: Սակայն եթե գործատուի նկատմամբ ներկայացվող հայցը կկարգավորվի Քաղ. օր. 1384 հոդվածի կանոններով, ապա աշխատակցի նկատմամբ հարուցված հայցը կկարգավորվի 1382 հոդվածի կանոններով⁷³:

Ինչպես ֆրանսիական իրավունքում, այնպես էլ անգլիական իրավունքում գործատուի պատասխանատվությունը իր աշխատողի համար չի բացառում տուժողի հնարավորությունը վնասի հատուցում պահանջելու անմիջապես վնաս պատճառող աշխատողից: Ընդ որում, տուժողը իր հայեցողությամբ կարող է վնասի հատուցում պահանջել կամ գործատուից, կամ՝ աշխատողից, կամ էլ երկուսից համապարտության կարգով⁷⁴:

Այս սկզբունքը, կարծում ենք, կիրառելի է նաև ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես, Քաղ. օր. 1062 հոդվածը, նպատակ ունենալով ապահովել վնասի ամբողջական հատուցումը, չի կարող ար-

⁷³ Տե՛ս Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 470:

⁷⁴ B.S. Markesinis and S.F. Deakin, նշված աշխատությունը, էջ 553:

գելել կամ բացառել քաղաքացու հնարավորությունը վնասը հատուցելու պահանջ ներկայացնել անմիջապես վնաս պատճառող քաղաքացուն, քանի որ վնասի ամբողջական հատուցման սկզբունքից ելնելով՝ հնարավոր են դեպքեր, երբ վնաս պատճառող աշխատողը ավելի շատ գույք ունենա վնասի հատուցման համար, քան իրավաբանական անձը:

Ընդ որում, ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, տուժողը կարող է գործատուի և աշխատակցի նկատմամբ հայց հարուցել՝ որպես համապարտ պարտապանների, և եթե բավարարվի հայցը, ապա վերջիններս պատասխանատվություն կկրեն համապարտության կարգով⁷⁵:

Գործատուի պատասխանատվությունը իր աշխատակցի գործողությունների համար ծագում է ոչ միայն այն պատճառով, որ աշխատակիցը հանդես է գալիս գործատուի անունից, ներկայացնում է վերջինիս, այլև կարելի է նկատել, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում գործատուն հանդես է գալիս նաև որպես աշխատակցի գործողությունների երաշխավոր, ուստի և պատասխանատվություն կրելով աշխատակցի կողմից պատճառված վնասի համար՝ օժտված է նաև հետադարձ պահանջի իրավունքով:

Խոսելով իրավաբանական անձի աշխատողի կողմից պատճառված վնասի համար իրավաբանական անձի պատասխանատվության մասին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև իրավաբանական անձի ռեգրեսիվ պահանջի իրավունքին, որը ունի վերջինս իր աշխատողի նկատմամբ նրա կողմից պատճառված վնասի հատուցումից հետո: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074 հոդվածի՝ այլ անձի (աշխատողի՝ ծառայողական, պաշտոնական կամ այլ աշխատանքային պարտականություններ կատարելիս, տրանսպորտային միջոցներ վարելիս և այլ) պատճառած վնասը հատուցած անձը հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վնասը հատուցման չափով: Այստեղ կարևոր է նշել այն հանգամանքը, որ իրավաբանական անձը պարտավոր է հատուցել իր աշխատողի պատճառած վնասը, եթե առկա են եղել վնասի պատճառման համար պատասխանատվություն առաջացնող

⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

չորս հիմքերը, ինչպես նաև այն դեպքում, երբ թեև աշխատողի մոտ վնասը պատճառելու պահին բացակայել է մեղքը, սակայն վնասը պատճառվել է շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ: Սակայն իրավաբանական անձը հետադարձ պահանջի իրավունք ունի իր աշխատակցի նկատմամբ միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ աշխատակիցը վնասը պատճառել է մեղավորությամբ, հակառակ դեպքում իրավաբանական անձը գրկվում է ռեգրեսիվ պահանջի իրավունքից:

Ինչպես նշեցինք, խոսելով Ֆրանսիայի քաղաքացիական օրենսդրության մասին, ֆրանսիական իրավունքը հիմնականում միտված է տուժողի շահերի պաշտպանությանը, որի արդյունքում հնարավոր է, որ վնասի հատուցման ամբողջ բեռը ընկնի ոչ թե գործատուի, այլ աշխատակցի վրա: Այս խնդիրը իր արտացոլումն է գտել ինչպես ֆրանսիական իրավաբանական գրականության, այնպես էլ դատական պրակտիկայում, ուստի պատահական չէ, որ ներկայումս ֆրանսիական դատական պրակտիկան առաջնորդվում է այն հանձնարարականով, որ յուրաքանչյուր դեպքում չէ, որ տուժողը իրավունք ունի ընտրելու, թե ում նկատմամբ հայց հարուցի՝ գործատուի, թե աշխատակցի, դեռ ավելին՝ գործատուին իրավունք չի տրվում ռեգրեսիվ հայցով փոխհատուցել իր կողմից կատարված ծախսերը աշխատակցից այն դեպքում, եթե ինքը չի ապացուցում, որ վնասը պատճառվել է աշխատակցի անձնական մեղքի (*faute personnelle*) արդյունքում: Այս կապակցությամբ ֆրանսիական դատական պրակտիկան ներկայումս դիտարկում է գործերի լուծման հետևյալ երեք տարբերակները.

1. աշխատակիցը գործել է իր աշխատանքային պարտականությունների շրջանակում և անձնական մեղք չի ունեցել. վնասի հատուցումը ամբողջությամբ ընկնում է գործատուի վրա, և վերջինս վնասը հատուցելուց հետո չունի հետադարձ պահանջի իրավունք,

2. աշխատակիցը գործել է իր աշխատանքային պարտականությունների շրջանակում, սակայն թույլ է տվել նաև անձնական մեղք. պատասխանատվության սուբյեկտ են դիտվում և՛ գործատուն, և՛ աշխատակիցը, իսկ վնասը հատուցելուց հետո գործատուն իրավունք է ստանում նաև հետադարձ պահանջի,

3. աշխատակիցը չի գործել իր աշխատանքային պարտականությունների շրջանակում և թույլ է տվել անձնական մեղք. ողջ պատասխանատվությունն ընկնում է աշխատակցի վրա⁷⁶:

Գործատուի հետադարձ պահանջի իրավունքը աշխատողի նկատմամբ ճանաչվում է նաև անգլիական քաղաքացիական օրենսդրությամբ:

Ասվածը քննարկելով երթուղային տաքսու վթարի տեսանկյունից՝ կարող ենք արձանագրել, որ իրավաբանական անձը, հատուցելով վթարի արդյունքում պատճառված վնասը, իրավունք չի ունենա ռեգրեսիվ հայց ներկայացնել վարորդի իրավահաջորդների նկատմամբ, եթե ապացուցվի, որ իրավաբանական անձն է պարտավոր եղել հսկել մեքենայի սարքիմությունը, և վթարը առաջացել է ոչ վարորդի մեղքով: Սակայն այս դեպքում ևս, ինչպես նշվեց, իրավաբանական անձը չի ազատվի պատճառված վնասի հատուցման պարտականությունից:

Ակնհայտ է, որ իրավաբանական անձի պատասխանատվությունը իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար իրավաբանական անձի պատասխանատվությունն է նախ և առաջ իր գործողությունների համար, քանի որ իրավաբանական անձի աշխատողը քաղաքացիաիրավական հարաբերություններում հանդես է գալիս իրավաբանական անձի անունից: Խոսելով իրավաբանական անձի պատասխանատվության մասին՝ հարկ է նշել նաև, որ պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ պայման է, որ վերջինիս աշխատողը վնասը պատճառի աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ՝ իրավաբանական անձի հանձնարարությամբ գործելիս: Անվիճելի է, որ եթե քաղաքացին իրավունքի այլ սուբյեկտներին վնաս պատճառի աշխատանքի ժամանակից դուրս և ոչ թե իրավաբանական անձի կողմից իրեն ամրակցված գույքով, այլ իր կամ երրորդ անձանց գույքով, ապա անհնար կլինի խոսել իրավաբանական անձի պատասխանատվության մասին: Սակայն հնարավոր են նաև դեպքեր, երբ քաղաքացին կամ աշխատողը վնաս պատճառի երրորդ անձանց աշխատաժամանակից դուրս, բայց իրավաբանական անձի գույքով: Այս դեպքում հարց է

⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

ծագում, թե ով պետք է պատասխանատվություն կրի պատճառված վնասի համար՝ քաղաքացին, ով գործել է աշխատանքից դուրս, թե՞ իրավաբանական անձը, որի գույքով պատճառվել է վնասը: Այս դեպքում պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ աշխատողը վնաս է պատճառել իրավաբանական անձի գույքով, որի պահպանության պատասխանատվությունը կրում է իրավաբանական անձը: Եթե քաղաքացին աշխատանքից ազատ ժամանակ վնաս է պատճառել երրորդ անձանց, ապա նախ և առաջ պետք է պարզել, թե ինչպես է այդ գույքը հայտնվել աշխատակցի մոտ: Եթե այն աշխատակցին է անցել իրավաբանական անձի թույլտվությամբ, ապա միանշանակ պատասխանատվության սուբյեկտ պետք է դիտել այդ իրավաբանական անձին, իսկ եթե այդ գույքը քաղաքացու տիրապետման տակ է անցել առանց իրավաբանական անձի թույլտվության, ապա վնասի հատուցման սուբյեկտ պետք է դիտել քաղաքացուն, որն ապօրինաբար է տիրացել գույքին: Իհարկե, այս դեպքում պետք է ուսումնասիրել և բացահայտել նաև այն հանգամանքը, թե արդյոք իրավաբանական անձը պատշաճ հսկողություն է իրականացրել գույքի նկատմամբ: Եվ եթե ապացուցվի, որ իրը հայտնվել է աշխատողի տիրապետման տակ առանց իրավաբանական անձի թույլտվության, սակայն վերջինիս անփութության արդյունքում, ապա, մեր կարծիքով, վնասի հատուցման պարտականությունը, ելնելով տուժողի շահերից, պետք է դրվի և՛ աշխատողի, և՛ իրավաբանական անձի վրա համապարտության կամ բաժնային պատասխանատվության սկզբունքով:

Համաձայն Մարկեսինիսի և Դեակինի՝ Մեծ Բրիտանիայում իրավաբանական անձի պատասխանատվությունը ծագում է միայն այն դեպքում, երբ վնասը պատճառվել է աշխատանքային պայմանագրի հիման վրա իրավաբանական անձի անունից կամ վերջինիս համար գործող աշխատակցի կողմից, իսկ այն դեպքում, երբ գործում է ծառայությունների մատուցման պայմանագիր, ծառայություն մատուցողը ինքն է կրում պատասխանատվություն իր կողմից պատճառված վնասի համար⁷⁷: Չնայած իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են կարծիքներ, որոնց հետ կարելի է հա-

⁷⁷ B.S. Markesinis and S.F. Deakin, նշված աշխատությունը, էջ 497-499:

մածայնվել. օրինակ, կախված կոնկրետ հանգամանքներից հնարավոր է նաև կապալի պայմանագրով կապալառուի կամ ծառայությունների մատուցման պայմանագրով պատվիրատուի պատասխանատվությունը այն դեպքում, երբ ծառայություններ մատուցողը, գործելով պայմանագրի շրջանակներում, վնաս է պատճառել երրորդ անձանց⁷⁸:

Ինչպես նկատեցինք վերը, խոսելով իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվության հիմնական մոտեցումների մասին, քննարկվող բոլոր իրավական համակարգերում էլ ամրագրված է, որ, որպեսզի գործատուն պատասխանատվություն կրի իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար, անհրաժեշտ է, որ վնասը պատճառված լինի աշխատողի «աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակում»: Ընդ որում, յուրաքանչյուր իրավական համակարգ «աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակ» ձևակերպումը բնորոշում է յուրովի: Մասնավորապես ՀՀ Քաղ. օր.-ը խոսում է աշխատողի «աշխատանքային պարտականությունների կատարման» ընթացքում պատճառված վնասի մասին, ֆրանսիական օրենսդրությամբ աշխատողը պետք է գործած լինի «իր գործառնությունների շրջանակում», անգլիական իրավունքը պահանջում է, որ աշխատողը վնաս պատճառած լինի «աշխատանքի ընթացքում», գերմանական օրենսդրությամբ անհրաժեշտ է, որ վնասը պատճառված լինի աշխատողի կողմից «իր առաջադրանքը կատարելու ընթացքում»: Ակնհայտ է, որ այս արտահայտությունները միասնական չեն, և դրանք միասնական չեն մեկնաբանվում նաև տարբեր օրենսդրական համակարգերում: Սակայն ակնհայտ է նաև, որ բոլոր իրավական համակարգերն էլ ընդունում են, որ աշխատողների կողմից պատճառված վնասի հատուցման համար անհրաժեշտ է որոշակի սահմանների որոշումը: Միայն այն հանգամանքը, որ վնաս պատճառողը հանդիսացել է այս կամ այն անձի աշխատողը, բավարար չէ, որպեսզի գործատուն պատասխանատվություն կրի այդ անձի կողմից պատճառված վնասի համար: Այլապես նույնիսկ եթե աշխատողը վնաս պատճառի ընկերոջ տանը թեյ խմելիս, ապա վնասի հատուցման պարտականություն

⁷⁸ St'u Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 478:

կառաջանա գործատուի համար⁷⁹: Այս պատճառով ակնհայտ է, որ անհրաժեշտություն է զգացվում որոշակիացնելու, թե որ դեպքերը կարող են դիտվել որպես աշխատանքային պարտականությունների կատարում:

Նախ և առաջ հարկ ենք համարում նշել, որ բացահայտելու համար «աշխատանքային պարտականություններ կատարել» ձևակերպումը, անհրաժեշտ է պարզել՝ արդյոք դրա տակ օրենսդիրը հասկանում է աշխատանքի ժամանակ կատարած արարքը, թե միայն այն արարքները, որոնք կատարվել են աշխատանքի ժամանակ գործատուի հանձնարարությամբ: Իսկ այն դեպքում, երբ վնաս է պատճառվել չնայած աշխատանքի ժամանակ, սակայն առանց գործատուի հանձնարարության, չի կարող առաջանալ քաղաքացիաիրավական պատասխանատվություն գործատուի համար: Մեկնաբանման կարիք ունի նաև այն հանգամանքը, թե «աշխատանքային պարտականությունների կատարում» հասկացությունը նշանակու՞մ է, արդյոք, աշխատանքային պայմանագրով աշխատողի վրա դրված պարտականությունների կատարում, թե այն նաև նկատի ունի աշխատանքի ժամանակ գործատուի սարքավորումներով այլ աշխատանքի կատարումը: Օրինակ, ավտոտրանսպորտային ծառայություններ մատուցող կազմակերպությունն արդյո՞ք պատասխանատու է այն դեպքում, երբ վերջինիս աշխատակիցը աշխատանքի ժամին, առանց գործատուի համաձայնության, սակայն վերջինիս տրանսպորտային միջոցով դուրս է եկել իրեն հատկացված գծից և վրաերթի ենթարկել հետիոտնին:

Կարծում ենք, խնդրին վերջնական և ամբողջական պատասխան տալու համար անհրաժեշտ է գտնել այս հարցերի պատասխանները, որոնք էլ մեզ հնարավորություն կտան եզրակացնելու, թե որ դեպքում գործատուն պատասխանատվություն կկրի իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար և որ դեպքում կազատվի այդ վնասի հատուցումից:

Ֆրանսիական իրավական պրակտիկան հարցի պատասխանը ստանալու համար ուշադրություն է դարձնում խնդրի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներին: Որպես օբյեկտիվ հանգամանքներ

⁷⁹ Այս մասին տե՛ս նաև Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 499-500:

են դիտվում ժամանակը. արդյո՞ք վնաս պատճառող արարքը տեղի է ունեցել աշխատանքի ժամին, տեղը. արդյո՞ք վնաս պատճառող արարքը տեղի է ունեցել աշխատանքի հետ կապված վայրում, գործիքները. արդյո՞ք աշխատակիցը վնասը պատճառել է գործատուի կողմից հատկացված գործիքների օգնությամբ: Սուբյեկտիվ հանգամանքներն են գործատուի համաձայնությունը, գործատուի շահը: Առաջինը ենթադրում է, թե որքանով է գործատուն տեղյակ եղել աշխատակցի գործողությունների մասին, իսկ երկրորդը՝ արդյո՞ք վնասաբեր արարքը ծառայել է գործատուի շահերին, թե դրանից օգուտ է ստացել միայն աշխատողը⁸⁰:

Ըննարկվող խնդրի վերաբերյալ ֆրանսիական դատական պրակտիկան և մասնավորապես Ֆրանսիայի վճռաբեկ դատարանը նշում են, որ գործատուն կարող է ազատվել աշխատակցի կողմից պատճառված վնասի հատուցումից միայն այն դեպքում, եթե աշխատակիցը գործել է այն գործառույթների շրջանակից դուրս, որոնց համար նա ընդունվել է աշխատանքի, գործել է առանց համապատասխան հանձնարարականի և այնպիսի նպատակների համար, որոնք տարբեր են իրեն տրված հանձնարարականներից⁸¹:

Անգլիական օրենսդրությունը և դատական պրակտիկան իրենց հերթին նշում են, որ քննարկվող խնդրի պատասխանը պետք է տրվի աշխատողի արարքը դրան ուղեկցող բոլոր հանգամանքների հետ համատեղ քննարկման արդյունքում: Աշխատողի կողմից պատճառված վնասը պետք է հատուցվի գործատուի կողմից, այսինքն աշխատողի արարքը պետք է դիտվի աշխատանքային պարտականությունների կատարման արդյունքում կատարված արարք, եթե հակաօրինական արարքը կատարվել է գործատուի լիազորությամբ կամ հանձնարարությամբ, եթե հակաօրինական արարքը կատարվել է գործատուի հանձնարարությունը կատարելիս: Նշվածից կարելի է եզրակացնել, որ գործատուն պատասխանատվություն է կրում աշխատողի այն արարքների համար, որ ինքն է հանձնարարել, ինչպես նաև գործատուն պատասխանատվություն է կրում աշխատողի այն հակաօրինական արարքների համար, որոնք կատարվել են աշխա-

⁸⁰ St'u Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 502:

⁸¹ Այս մասին և մասնավորապես ֆրանսիական, անգլիական և գերմանական դատական պրակտիկայի մասին տես www.rechten.unimaas.nl/casebook:

տողի կողմից, չեն եղել գործատուի հանձնարարականը, սակայն կատարվել են գործատուի մեկ այլ հանձնարարական կատարելու նպատակով: Այլ կերպ ասած՝ գործատուն պատասխանատվություն է կրում ոչ միայն նրա համար, ինչ ինքը հանձնարարել է աշխատողին կատարել, այլև հանձնարարականի կատարման եղանակների համար: Ինչպես նշվում է անգլիական իրավաբանական գրականության մեջ, գործատուն պատասխանատվություն կկրի այն բոլոր դեպքերի համար, երբ աշխատողը անփութությամբ կկատարի այն, ինչ նրան հանձնարարվել էր կատարել զգուշորեն, կամ նա կատարել է մի բան սխալմամբ, սակայն նրան հանձնարարված է եղել կատարել ճշտորեն⁸²:

Ինչպես ֆրանսիական և անգլիական, այնպես էլ գերմանական դատական պրակտիկան և իրավունքը նշում են, որ աշխատողի արարքը պետք է դիտվի Գերմանիայի Քաղ. օր. 831 հոդվածում նշված «առաջադրանքը կատարելու ընթացքում» ձևակերպմանը համապատասխան այն դեպքում, երբ այն անմիջականորեն կապված է առաջադրանքի հետ և մտնում է այն գործողությունների ցանկի մեջ, որոնք ուղղված են առաջադրանքի կատարմանը: Սա նշանակում է, որ, որպեսզի գործատուն պատասխանատվություն կրի աշխատողի կողմից պատճառված վնասի համար, անհրաժեշտ է, որ աշխատողի հակաօրինական արարքը կատարված լինի գործատուի առաջադրանքը կատարելու ընթացքում, ինչպես նաև արարքը պետք է ուղղված լինի առաջադրանքի կատարմանը⁸³:

Խոսելով ՀՀ Քաղ. օր. 1062 հոդվածի «աշխատանքային պարտականությունները կատարելիս» ձևակերպման մասին և հիմք ընդունելով արևմտաեվրոպական երկրների իրավակիրառական փորձը՝ կարող ենք ասել, որ, որպեսզի աշխատողի կողմից պատճառված վնասը դիտվի որպես աշխատանքային պարտականությունները կատարելիս պատճառված վնաս, անհրաժեշտ է նախ և առաջ պատճառված վնասի հանգամանքները քննարկել իրենց ամբողջականության մեջ. ի՞նչ պայմաններում է պատճառվել վնասը, ինչպիսի՞ միջոցներով է պատճառվել վնասը, ի՞նչ հանգամանքների ուժով են այդ միջոցները անցել աշխատողի տիրապետության տակ: Այնուհետև

⁸² R.V.F. Heuston and R.A. Buckley, նշված աշխատությունը, էջ 443:

⁸³ St'u Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 511:

կարևոր է պատասխանել հետևյալ հարցին. արդյո՞ք վնասը պատճառելու պահին աշխատողը կատարել է գործատուի հանձնարարականը, արդյո՞ք այն գործողությունները, որոնք աշխատողի կողմից կատարվելու արդյունքում վնաս է պատճառվել երրորդ անձին, եղել են վերջինիս աշխատանքային պարտականությունների թվում և ուղղված են եղել ապահովելու գործատուի շահը: Այստեղ գտնում ենք, որ հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, թե ինչպես են գործատուին պատկանող միջոցները անցել աշխատողի տրամադրության տակ: Օրինակ, եթե տրանսպորտային միջոցը գործատուն տրամադրել է աշխատողին ուղեբեռ տեղափոխելու համար, և այդ ընթացքում վնաս է պատճառվել, ապա անշուշտ վնասի հատուցման պարտականությունը կընկնի գործատուի վրա: Սակայն նման վստահությամբ չենք կարող խոսել գործատուի պատասխանատվության մասին, եթե աշխատակիցը ինքնազուխ վերցրել է գործատուին պատկանող ավտոմեքենան և վնաս պատճառել երրորդ անձանց:

Գտնում ենք, որ տեսականորեն անհնար է ամբողջական պատասխան տալ բարձրացված հարցին, սակայն միևնույն ժամանակ համոզված ենք, որ տեսությամբ հնարավոր է տալ այն ուղենիշները, որոնք հիմք կարող են հանդիսանալ դատարանների համար՝ յուրաքանչյուր գործով կայացնելու օբյեկտիվ և արդարացի վճիռ: Ուստի, ամփոփելով վերոգրյալը, կարող ենք նշել, որ «աշխատանքային պարտականությունները կատարելիս» ձևակերպման տակ պետք է հասկանալ իրավաբանական անձի կամ քաղաքացու աշխատողի այնպիսի գործողություններ, որոնք.

ա/ կատարվել են աշխատանքային ժամին գործատուի կողմից տրամադրված միջոցներով,

բ/ կատարվել են գործատուի առաջադրանքը կատարելու նպատակով,

գ/ կատարվել են ի շահ գործատուի:

Այս հարցերի պատասխաններն էլ հենց թույլ կտան դատարաններին բացահայտելու, թե երբ կարող է աշխատողի կողմից պատճառված վնասը դիտվել «աշխատանքային պարտականությունները կատարելիս» պատճառված վնաս և պատասխանատվություն սահմանել գործատուի համար:

ՀՀ քաղ. օր-ի 1062 հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ տնտեսական ընկերակցությունները հատուցում են իրենց մասնակիցների կողմից ընկերակցության ձեռնարկատիրական կամ այլ գործունեություն իրականացնելիս պատճառված վնասը:

Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, խոսելով իրավաբանական անձանց տեսակների մասին, հիմնականում ուշադրություն պետք է դարձնել այն կորպորատիվ կազմակերպություններին, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են իրենց մասնակիցների միջոցով առանց համապատասխան աշխատանքային պայմանագրերի կնքման⁸⁴: Այստեղ հեղինակները նկատի ունեն լրիվ և կոմանդիտային ընկերակցությունները /ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ լիակատար ընկերակցությունները/, ինչպես նաև արտադրական կոոպերատիվները: Մեր կարծիքով, ուշադրության են արժանի ցանկացած իրավակազմակերպական ձև ունեցող իրավաբանական անձինք, որոնց անունից կարող են հանդես գալ պայմանագրի հիման վրա աշխատող քաղաքացիները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ տնտեսական ընկերակցությունները պարտավոր են հատուցել իրենց մասնակիցների կողմից պատճառված վնասը, որը տեղի է ունեցել ընկերակցության ձեռնարկատիրական գործունեության, արտադրական կամ այլ գործունեություն իրականացնելիս⁸⁵:

Գտնում ենք, որ իրավաբանական անձանց պատասխանատվության ուսումնասիրությունը վերջիններիս աշխատակիցների կողմից պատճառված վնասի համար չպետք է սահմանափակվի միայն աշխատանքային պայմանագրով աշխատող աշխատակիցների կողմից պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրների քննարկմամբ: Ելնելով այն հանգամանքից, որ ներկայումս ՀՀ-ում իրավաբանական անձանց իրավակազմակերպական տեսակները իրենցից ենթադրում են, որ իրավաբանական անձինք կարող են ունենալ ոչ միայն աշխատանքային պայմանագրով աշխատողներ, այլև գործադիր մարմիններ (տնօրենների խորհուրդ, տնօրեն), որոնք

⁸⁴ Տե՛ս Гражданское право, обязательственное право, учебник, Восточный экспресс, М, 1998г., էջ 616:

⁸⁵ Տե՛ս նույն տեղում:

կազմավորվում են ընդհանուր ժողովների կողմից,⁸⁶ և որոնց գործողությունների արդյունքում նույնպես կարող է վնաս պատճառվել երրորդ անձանց, կարևոր ենք համարում քննարկել նաև իրավաբանական անձանց կորպորատիվ մարմինների կողմից պատճառված վնասի հատուցումը:

Ֆրանսիական օրենսդրությունը այս հարցին մոտենում է հստակ: Իրավաբանական անձի կորպորատիվ մարմինների՝ խորհրդի անդամներ, տնօրեններ, սնանկության կառավարիչներ և այլն, կողմից պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում իրավաբանական անձը: Ըստ էության, ֆրանսիական իրավունքը իրավաբանական անձի պատասխանատվության մասին խոսելիս տարբերակում չի դնում աշխատանքային պայմանագրով աշատանքային պարտականությունները կատարող աշխատողի կողմից պատճառված վնասի և ընկերության ղեկավար մարմնի կողմից պատճառված վնասի համար ընկերության պատասխանատվության միջև: Երկու սուբյեկտների կողմից պատճառված վնասի դեպքում էլ, որպեսզի իրավաբանական անձը հանդես գա որպես պատասխանատվության սուբյեկտ, անհրաժեշտ են աշխատանքի սկզբում թվարկված երեք հանգամանքները⁸⁷:

Ինչպես նշվեց, ֆրանսիական դեղիկտային իրավունքի կարևորագույն և մեզ համար նորություն հանդիսացող դրույթներից է իրավաբանական անձի պատասխանատվությունը իր կառավարման մարմիններում ընդգրկված անձանց կողմից ընկերությունը ներկայացնելիս պատճառված վնասի համար: Այս սկզբունքը ընդունվում է նաև անգլիական իրավունքի կողմից: Սակայն, ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, կարիք կա հստակ առանձնացնելու, թե որ մարմիններն են հանդիսանում ընկերության կառավարման մարմիններ, որոնց գործողությունների համար ընկերությունը պատասխանատվություն կարող է կրել քննարկվող կանոններով: Ինչպես նշվում է տեսության մեջ, և որը ընդունված է անգլիական դատական պրակտիկայի կողմից, անձանց շրջանակը, ում համար

⁸⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Քաղ. օր. գլուխ 5, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԳԳ օրենք:

⁸⁷ Տե՛ս G. Viney and P. Jourdain, *Traite de droit civil-Les conditions de la responsabilite*, 2nd edn. (Paris: LGDJ, 1998), էջ 943-973:

ընկերությունը կարող է քննարկվող կարգով պատասխանատվություն կրել, շատ սահմանափակ է: Ընդունված կարգի համաձայն դրանք այն անձինք են, ովքեր, համաձայն ընկերության կանոնադրության կամ այլ իրավական ակտերի, իրավունք ունեն իրականացնելու ընկերության իշխանությունը՝ ընդհանուր ժողով, խորհուրդ և այլն: Իսկ, օրինակ, մասնաճյուղի տնօրենը չի կարող դասվել այդ անձանց ցանկում: Վերջինիս համար ընկերությունը պատասխանատվություն կկրի աշխատող-գործատու հարաբերությունների շրջանակում:

Ինչ վերաբերում է ընկերությունների կորպորատիվ մարմինների գործողությունների համար պատասխանատվությանը, ապա Գերմանիայի Քաղ. օր. 31 հոդվածը սահմանում է, որ ասոցիացիաները պատասխանատվություն են կրում տնօրենների խորհրդի, խորհրդի անդամների, ինչպես նաև ասոցիացիաների կանոնադրությունների համաձայն նշանակված այլ ներկայացուցիչների կողմից իրենց իրավասությունների շրջանակում գործելիս երրորդ անձանց պատճառված վնասի համար: Փաստորեն, այս դրույթը հնարավորություն է տալիս շրջանցել 831 հոդվածը և որոշ դեպքերում պատճառված վնասի համար պատասխանատվության կանչել իրավաբանական անձանց⁸⁸: Ընդ որում, Գերմանիայի քաղ.օր. 31 հոդվածը տարածվում է բոլոր իրավակազմակերպական տեսակների իրավաբանական անձանց վրա:

Այնուհայտ է, որ արևմտաեվրոպական զարգացած երկրների քաղաքացիական օրենսդրությունները հստակ նախատեսում են պատասխանատվություն ընկերությունների կամ իրավաբանական անձանց կառավարման մարմիններում ընդգրկված անձանց կողմից պատճառված վնասի համար: ՀՀ Քաղ. օր. 1062 հոդվածը սահմանում է. «Իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կողմից աշխատանքային /ծառայողական, պաշտոնեական/ պարտականությունները կատարելիս պատճառած վնասը»: Այնուհետև հոդվածի երկրորդ մասը ամրագրում է, որ աշխատող է համարվում աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև քաղաքացիական իրավական պայմանագրով աշխատանք կա-

⁸⁸ Տե՛ս նաև Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 487:

տարող քաղաքացին, եթե նա գործել է կամ պետք է գործեր համապատասխան իրավաբանական անձի կամ քաղաքացու առաջադրանքով կամ աշխատանքների անվտանգ կատարման նկատմամբ նրա վերահսկողության ներքո: Արդյո՞ք սրանից բխում է, որ իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում իր կառավարման մարմիններում ընդգրկված անձանց գործողությունների համար: Անշուշտ, տնօրենի հետ կնքված պայմանագիրը, գտնում ենք, կարելի է դիտել որպես քաղաքացիաիրավական պայմանագիր և տնօրենի կողմից պատճառված վնասի դեպքում պատասխանատվության կանչել իրավաբանական անձին: Սակայն արդյո՞ք կարելի է նույնն ասել տնօրենների խորհրդի անդամների մասին, որոնք ընտրվում են բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից և փաստորեն չեն կարող դիտվել որպես քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներ, սակայն որոնց՝ իրավաբանական անձի անունից կատարվող գործողության ընթացքում հնարավոր է, որ վնաս պատճառվի երրորդ անձանց: Կամ արդյո՞ք կարող ենք նույնը ասել սնանկության կառավարիչների համար:

Գտնում ենք, որ Քաղ. օր. 1062 հոդվածի վերոնշյալ ձևակերպումը հնարավորություն չի տալիս իրավաբանական անձին դիտել որպես պատասխանատվության սուբյեկտ այն դեպքում, երբ երրորդ անձանց վնաս պատճառվում է վերջինիս կառավարման մարմինների կողմից: Սա, կարծում ենք, չի կարող բխել տուժողի շահերից, քանի որ, ինչպես նշվել է նախապես, իրավաբանական անձի կամ քաղաքացու կողմից /վերջիններիս աշխատողի պատճառած/ վնասի հատուցման ինստիտուտը նպատակ ունի նախ և առաջ պաշտպանել տուժողների շահերը: *Ուստի, ելնելով հենց այդ սկզբունքից, գտնում ենք, որ քաղ. օր-ի 1062 հոդվածի երկրորդ մասը ունի վերախմբագրման կարիք և առաջարկում ենք հոդվածում ավելացնել չորրորդ մաս, որով կամրագրվի. «Իրավաբանական անձը պարտավոր է հատուցել նաև իր կառավարման մարմիններում (տնօրենների խորհուրդ, սնանկության կառավարիչ, գործադիր մարմին) ընդգրկված անձանց կողմից պատճառված վնասը, եթե վնասը պատճառվել է վերջիններիս կողմից իրավաբանական անձի անունից հանդես գալիս և ընկերության կանոնադրությամբ իրենց վրա դրված պարտականությունները կատարելիս»:*

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ իր աշխատողի կողմից պատճառված վնասի համար իրավաբանական անձի պատասխանատվության ինստիտուտը մեծ նշանակություն ունի դելիկտային իրավահարաբերությունների բնագավառում, կոչված է նպաստելու իրավաբանական անձանց, նրանց աշխատողների գործողությունների օրինականության պահպանմանը, իրավաբանական անձի և նրա աշխատողների միջև հարաբերությունների կանոնակարգմանը, ինչպես նաև, որպես առաջնային նպատակ, ապահովում է տուժողի խախտված իրավունքների և կրած վնասների առավել ամբողջական վերականգնումը:

§2. Հայաստանի Հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը

Իրավական պետության ձևավորման գործում, որի կազմավորման հիմքում ընկած է օրենքի գերակայությունը, առաջնային նշանակություն է ստանում քաղաքացիների սահմանադրական իրավունքների, օրենքով իրավաբանական անձանց երաշխավորվող իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովումը:

Պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է տարածվել նաև պետական և տեղական մարմինների վրա նրանց կողմից ընդունված ակտերի և կատարված գործողությունների արդյունքում: Ընդ որում, ինչպես նշում են Մարկեզինիսն ու Դեակինը, այս մարմինները քաղաքացիական իրավունքում հանդես են գալիս որպես քաղաքացիական իրավունքի սովորական սուբյեկտներ⁸⁹: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք, ըստ էության, քաղաքացիական իրավունքում չեն օգտվում ոչ մի ինունիտետից: Սա գտնում ենք միանգամայն արդարացված և հիմնավոր, քանի որ հենց քաղաքացիական օրենսգրքով այս մարմինները կամ, կարելի է ասել, քաղաքացիական իրավունքի սուբյեկտները դասվում են քաղաքացիական ի-

⁸⁹ Տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin "Tort Law" Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջ 326:

րավունքի մյուս սուբյեկտների թվին և նրանց հետ հավասար օժտված են քաղաքացիաիրավական իրավունքներով և պարտականություններով: Ինչպես ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128 հոդվածում. «Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով»: Ինչպես ակնհայտ է հողվածից, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները, հանդես գալով որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ և ունենալով նույնատիպ իրավունքներ իրավաբանական անձանց և քաղաքացիների հետ, չեն կարող օժտված լինել իմունիտետով, այլպես քաղաքացիական օրենսգիրքը կհակասեր ինքն իրեն: Քաղաքացիների, իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության և համայնքների հավասար քաղաքացիաիրավական սուբյեկտ լինելը հնարավորություն է տալիս օրենսդրին կարգավորել վնասի հատուցման հանգամանքները այն դեպքերում, երբ վնասը պատճառվել է ՀՀ կամ համայնքների մարմինների կողմից: Կարևորելով պետական մարմինների կողմից պատճառված վնասի հատուցումը՝ քաղ. օր-ը ընդհանուր դրույթներում՝ ի դեմս հողված 18-ի, ամրագրում է. «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտի հրապարակման հետևանքով քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատճառված վնասները հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը»: Ամրագրելով այս մարմինների կողմից պատճառված վնասի հատուցման սկզբունքը՝ օրենսգիրքը պետական մարմինների և դրանց՝ պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասի հատուցման ավելի մանրակրկիտ կարգ է սահմանում 60-րդ գլխում: Մասնավորապես Քաղ. օր. 1063 հոդվածը, ըստ էության կրկնելով 18 հոդվածը, սահմանում է. «Քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողու-

թյուններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը»: Օրենսգիրքը պետության վրա պատճառված վնասի հատուցման պարտականություն է դնում նաև այն դեպքում, երբ վնասը պատճառվել է հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով: Այսպես, Քաղ. օր.-ը սահմանում է, որ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Իսկ այն դեպքերում, երբ քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը չի հանգեցնում ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու, ապա հատուցվում է Օրենսգրքի 1063 հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

Ընդհանրապես, հարկ ենք համարում նշել, որ պետական մարմինների կողմից պատճառված վնասի քաղաքացիաիրավական պատասխանատվության ինստիտուտը հատուկ է ոչ միայն Հայաստանի Հանրապետությանը: Այն գործում է ինչպես Ռուսաստանի Դաշնությունում, Մեծ Բրիտանիայում, այնպես էլ Եվրոպական այլ երկրներում: Մասնավորապես Մեծ Բրիտանիայում այս ինստիտուտը սկսել է ձևավորվել և զարգանալ դեռևս տասնիններորդ դարի կեսերին⁹⁰: Արքունիքը Մեծ Բրիտանիայում պատմականորեն օգտվում է քրեական և քաղաքացիական իմունիտետից, ինչպես նաև կենտրոնական

⁹⁰ Տե՛ս B.S. Markesinis and S.F. Deakin "Tort Law" Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջ 326:

կառավարման մարմինները չէին կարող պատասխանատվության կանչվել վնասի հետևանքով ծագած պարտավորությունների ուժով: Սակայն ստեղծված իրավիճակից ելքը գտնվեց պետական մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ հայցեր հարուցելու միջոցով: Չնայած պետական մարմինները անմիջապես չէին դիտվում որպես իրենց պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասի հատուցողներ, սակայն ընդունված էր, որ այդ անձանց կողմից պատճառված վնասը հատուցվի պետության միջոցների հաշվին⁹¹: Մեծ Բրիտանիայում սա դիտվում էր որպես հակաօրինական գործունեություն, ուստի հասկանալով, որ ամեն դեպքում ցանկալի է պետության պատասխանատվությունը պետական մարմինների պատճառած վնասի համար, 1947 թ. ընդունվեց Թագի գործունեության ակտը, որով վերացվեց այս անձեռնմխելիությունը և հնարավորություն ստեղծվեց, որ արքունիքը պատասխանատվություն կրի իր ծառայողների և պաշտոնյաների կողմից պատճառված վնասի համար օրենքով սահմանված կարգով:

Ինչպես նշեցինք, ՀՀ-ն և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասի համար: Ընդ որում, ըստ օրենսգրքում ամրագրված կարգի, պատասխանատվությունը ծագում է ինչպես այդ մարմինների գործողությունների, այնպես էլ անգործության համար: Ելնելով վերոգրյալից, նաև նկատի ունենալով միջազգային իրավակիրառական պրակտիկան, գտնում ենք, որ պետական մարմնի անգործության տակ պետք է հասկանալ նաև անպիսի գործողությունների չկատարումը, որոնք, գտնվելով պետական մարմնի գործառույթների շրջանակում, պարտադիր են եղել վերջինիս կողմից կատարման, իսկ չկատարման կամ վատ հսկողության արդյունքում վնաս է պատճառել քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտներին: Օրինակ, քաղաքապետարանի համապատասխան բաժնի վատ հսկողության կամ անփութ գործունեության արդյունքում առաջացած ճանապարհային փոսը պատճառ է հանդիսացել մեքենայի վթարման: Եթե համեմատական վերլուծություն կատարենք Գերմա-

⁹¹ Տե՛ս C.Harlow, *Compensation and Government Torts* (1982), ch. 2, B.S. Markesinis and S.F. Deakin *"Tort Law"* Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջ 327:

նական օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի հետ, ապա կտեսնենք, որ Գերմանիայում դատարանները քննարկվող դեպքերում վնասի հատուցման իրավունք են տալիս տուժողներին⁹²: Մա, գտնում ենք, միանգամայն արդարացված է հետևյալ պատճառներով: Նախ և առաջ պետությունը, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից գանձելով տարատեսակ հարկեր և տուրքեր, պարտավոր է հավաքված գումարները ծախսել ըստ նպատակի: Մասնավորապես, մեքենայի սեփականատերը, լինի դա քաղաքացի թե իրավաբանական անձ, յուրաքանչյուր տարի վճարելով պետական վճարներ մեքենայի համար, իրավունք ունի պահանջելու, որ ճանապարհները լինեն բարվոք վիճակում: Քաղաքացիները, կատարելով գումարային վճարներ և տարատեսակ մուծումներ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավունք ունեն պահանջելու, որ այդ մարմինների իրավասության տակ գտնվող տարածքները լինեն բարվոք վիճակում, առանց փոսերի, ձմռանը՝ սառցազերծված: Իսկ այն դեպքերում, երբ այդ մարմինների թերության արդյունքում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որ մեքենան վնասվում է՝ ընկնելով փոսը, կամ քաղաքացին վնասվում է՝ սայթաքելով սառույցի վրա, ապա գտնում ենք, որ համապատասխան պետական մարմինը պարտավոր է կրել քաղաքացիական պատասխանատվության ծագած վնասի համար: Այս ինստիտուտի արդիականությունը և կարևորությունն այն է, որ դրանով ոչ միայն քաղաքացիաիրավական պաշտպանություն են ստանում հարկատուների շահերը, ավելի արդյունավետ և վերահսկելի է դառնում պետական մարմինների գործունեությունը, այլև օրենքի տնտեսական վերլուծության տեսանկյունից կատարվում է ծախսերի հավասար բաշխում. կրած վնասի վերականգնման ողջ ծանրությունը տուժողի վրայից փոխանցվում է տնտեսապես ավելի հզոր պետական մարմնին:

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական վճիռներում դժվար է գտնել այնպիսի գործեր, երբ իրավունքի սուբյեկտը վնասի հատուցում է ստանում պետական մարմնի անգործության արդյունքում պատճառված վնասի համար:

⁹² St'u Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000թ., էջ 288:

Համոզված ենք, որ սա ոչ թե Քաղ. օր. թերության արդյունք է, այլ քաղաքացիների իրավագիտակցության պակասի և, որ ամենակարևորն է, դատական պրակտիկայի բացակայության: Համոզված ենք, որ և՛ իրավաբանական տեսական գրականությունը, և՛ պրակտիկ իրավաբանությունը պետք է շարժվի այն ուղղությամբ, որ օրենքում առկա յուրաքանչյուր հոդված, որը կոչված է պաշտպանելու քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին, և որի կիրառումը տնտեսապես շահավետ կարող է լինել հասարակության մեջ ծախսերի հավասար բաշխման տեսանկյունից, անպայմանորեն կիրառվի պրակտիկորեն:

Ստորև ներկայացնում ենք պետական մարմինների կողմից պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունները անգլիական, գերմանական և ֆրանսիական օրենսդրությամբ:

Անգլիական իրավունք:

Ինչպես արդեն նշվել է, անգլիական իրավունքում դեղիկտային պարտավորությունները հավասարապես ծագում են ինչպես անհատների, այնպես էլ պետական մարմինների համար⁹³: Համաձայն անգլիական իրավունքի՝ որպեսզի ծագած իրավահարաբերությունը դիտվի որպես պետական մարմնի նկատմամբ ծագած իրավահարաբերություն, անհրաժեշտ է, որ.

1. վնաս պատճառողը կամ, ինչպես նշվում է անգլիական իրավաբանական գրականության մեջ, պատասխանողը, լինի պետական ծառայող՝ բառի լայն իմաստով,

2. բողոքարկվող ակտը կամ գործողությունը պետք է ընդունված կամ կատարված լինի պետական ծառայողի իրավասությունների օգտագործմամբ,

3. պետական ծառայողը կամ պետք է նպատակ ունենա իր ակտով վնասելու տուժողին կամ էլ գործում է իմանալով, որ ինքը իրավասու չէ կատարելու նման գործողություն կամ էլ իմանալով, որ իր գործողությունը կարող է վնասել տուժողին,

⁹³ Պետական մարմինների քաղաքացիաիրավական պատասխանատվության մասին ավելի մանրամասն տես S. Arrowsmith, *Civil Liability and Public Authorities* (Winteringham: Earls Gate Press, 1992):

4. հայցվորը պետք է ունենա համապատասխան շահ հայց հարուցելու համար⁹⁴:

Գերմանական իրավունք:

Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 839 պարագրաֆի 1-ին կետը ամրագրում է, որ այն պաշտոնատար անձը, ով դիտավորությամբ կամ անփութությամբ խախտում է երրորդ անձի նկատմամբ ունեցած իր պաշտոնական պարտականությունները, պարտավոր է հատուցել այդ խախտման արդյունքում երրորդ անձին պատճառված վնասը⁹⁵:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ նույն օրենքի 839 պարագրաֆի 1-ին կետի երկրորդ նախադասությամբ, ինչպես նաև 839 պարագրաֆի 2-րդ և 3-րդ կետերով այս պարտականությունը ենթարկվում է որոշակի սահմանափակումների: Այդ սահմանափակումների էությունն այն է, որ պետական պաշտոնյայի պատասխանատվությունը կարող է մերժվել, եթե տուժողը այլ աղբյուրից հնարավորություն ունի վնասի հատուցում ստանալու, ինչպես նաև այն դեպքում, երբ տուժողը դիտավորությամբ կամ անփութությամբ խուսափել է օրենքով տրված հնարավորություններով վնասը կանխելուց:

Իսկ ինչ վերաբերում է դատական ակտերին, ապա դատական մարմինների համար պատասխանատվությունը կարող է ծագել միայն այն դեպքում, երբ խախտելով իր պարտականությունը՝ դատական մարմինը թույլ է տվել քրեական արարք⁹⁶:

Նշված հոդվածները պետությանը կամ այլ պետական մարմիններին չեն ենթարկում քաղաքացիաիրավական պատասխանատվության պետական պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասի համար: Այդպիսի պատասխանատվություն պետության համար առաջանում է Գերմանիայի սահմանադրության 34 հոդվածի առաջին նախադասությամբ, համաձայն որի, եթե անձը խախտում է իր պաշտոնական իրավասությունները երրորդ անձի նկատմամբ, ա-

⁹⁴ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche “Tort Law”, Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000թ., էջ 358:

⁹⁵ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշված աշխատությունը, էջ 371:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում:

պա պարտավորությունը պետք է առաջանա պետության կամ այն պետական մարմնի համար, ում մոտ աշխատում է պաշտոնյան:

Ֆրանսիական իրավունք:

Ֆրանսիական իրավունքում պետական մարմինների և պաշտոնատար անձանց արտապայմանագրային պատասխանատվության կարգը սահմանվում է ադմինիստրատիվ իրավունքի նորմերով: Ֆրանսիայում պետական մարմինների արտապայմանագրային պատասխանատվությունը դասվում է երկու տեսակի՝ մեղքի հիման վրա առաջացող պատասխանատվություն և առանց մեղքի պատասխանատվություն: Մեղքի հիման վրա առաջացող պատասխանատվությունը, ըստ էության, բավականին նման է Ֆրանսիայի Քաղ. օր. 1382 հոդվածով սահմանված պատասխանատվությանը և առաջանում է ցանկացած դեպքում, երբ Պետական Կոնսուլի (*Conseil d'Etat*) կողմից կճանաչվի հակաօրինական: Երկրորդ՝ առանց մեղքի պատասխանատվությունը ծագում է առանձին դեպքերում, որի հիմքում ընկած է հասարակության հավասարության, այսինքն հասարակության կողմից առաջացած ծախսերի կրման հավասարության սկզբունքը⁹⁷:

Ֆրանսիական օրենսդրությունը ընդունում է նաև պետության պատասխանատվությունը դատական մարմինների ակտերի համար⁹⁸:

§3. Ահաբեկչական գործողության արդյունքում քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին պատճառված վնասի հատուցումը

Ինչպես նշվեց քաղաքացու կյանքը, քաղաքացիական իրավունքի սուբյեկտների սեփականությունը, հանդիսանալով բարձրագույն արժեքներ, մշտապես գտնվել և գտնվում են օրենքի պաշտպա-

⁹⁷ St'u Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000թ., էջ 377-379:

⁹⁸ St'u Code de l'organisation judiciaire, Article L. 781-1:

նության ներքո: Մարդկության զարգացման հետ համահունչ փոփոխման է ենթարկվում նաև հանրության վերաբերմունքը այն ձևերի հանդեպ, որոնցով հնարավոր է վնաս հասցնել վերոնշյալ արժեքներին: Մասնավորապես, եթե դեռևս 20-րդ դարի սկզբներին բացակայում էր այնպիսի վնասի աղբյուրի հասկացությունը, ինչպիսին է՝ առավել վտանգի աղբյուրը, ապա իրավունքի արդի համակարգում առավել վտանգի աղբյուրները ստացել են իրենց հատուկ կարգավորումը⁹⁹:

Ակնհայտ է, որ ներկայումս միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է գտնվում այնպիսի մի բացառիկ խնդիր, ինչպիսին է ահաբեկչությունը: Կարելի է արձանագրել, որ ժամանակակից աշխարհում դժվար թե գտնվի մի երկիր, որն այս կամ այն կերպ տուժած չլինի ահաբեկչությունից: Ահաբեկչական գործողությունները, վնասելով պետություններին, քաղաքացիներին, նպաստում են տարբեր պետությունների, իշխանությունների թուլացմանը, պետությունների միջև հարաբերությունների վատթարացմանը, սակայն նախ և առաջ դրանք անմիջականորեն վնաս են հասցնում քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին, քանզի տեռորիստական ակտերի արդյունքում վնասվում է իրավունքի սուբյեկտների սեփականությունը, քայքայվում է քաղաքացիների առողջությունը, մարդիկ զրկվում են իրենց կյանքից: Քաղաքացիների կյանքը, առողջությունը, սեփականությունը արժեքներ են, որոնց պաշտպանությունը ոչ միայն կոնկրետ քաղաքացու կամ իրավաբանական անձի, այլ, նախ և առաջ, յուրաքանչյուր պետության պարտականությունն է: Իսկ որքանով են նման դեպքերում պետությունները քայլեր ձեռնարկում պաշտպանելու, իսկ վնասվելու դեպքում՝ հատուցելու քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց պատճառված վնասները:

Ելնելով ահաբեկչության արդյունքում պատճառված վնասի հատուցման անհրաժեշտությունից, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ դեռևս կարգավորված չէ այն, ստորև աշխարհի մի շարք երկրների օրենսդրությունների համեմատական վերլուծության հիման վրա փորձ կարվի բացահայտել ահաբեկչական գործողության արդյունքում պատ-

⁹⁹ Տե՛ս, օրինակ, ԳԳ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1072:

ճառված վնասի հատուցման նրբությունները և առաջարկել դրանց կիրառման մեխանիզմներ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ:

Ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, մի ամբողջ գլուխ /Գլուխ 60/ նվիրելով վնասի հատուցման խնդիրներին, բաց է թողել ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցման հարցի կարգավորումը: Անշուշտ, կարելի է ասել, որ Զաղ. օր.-ի վերոնշյալ գլխի սկզբունքներին համապատասխան ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցումը նույնպես կարելի է դնել անմիջապես վնաս պատճառողների՝ տեռորիստների վրա: Առաջին հայացքից մմանատիպ պնդմանը կարելի է հավանություն տալ, քանզի ահաբեկչությունը՝ ամրագրված լինելով ՀՀ քրեական օրենսգրքում¹⁰⁰, հանդիսանում է քրեական հանցագործություն, ուստի ինչպես ցանկացած քրեական հանցագործության դեպքում, երբ տուժողները իրավունք ունեն քաղաքացիական հայցով հանցագործից պահանջել վնասի հատուցում, այս դեպքում ևս տուժողները կամ նրանց իրավահաջորդները օժտված են մմանատիպ իրավունքով: Սակայն խնդրի ավելի խորը և հանգամանալից ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ վերոնշյալ մոտեցումը չի դիմանում ոչ մի քննադատության: Մասնավորապես, եթե փորձենք համեմատություն անցկացնել քրեական օրենսգրքում ամրագրված մյուս հանցագործությունների և ահաբեկչության միջև, ապա կտեսնենք, որ.

1. Յանկացած քրեական հանցագործության դեպքում տուժողների շրջանակը ավելի քիչ և սահմանափակ է, քան ահաբեկչական գործողության ժամանակ: Ակնհայտ է, որ որքան շատ են տուժողները, այնքան մեծ է վնասը, ուստի դժվար է հասնել բոլոր տուժողների կրած վնասների հատուցմանը:

2. Այլ հանցագործությունների դեպքում պատճառված վնասի ծավալները շատ ավելի նվազ են, քան ահաբեկչական գործողության դեպքում:

¹⁰⁰ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ 217, 388, 389:

3. Շատ դեպքերում այդպես էլ ահաբեկիչները անհայտ են մնում, ուստի կոնկրետ վնաս պատճառողից վնասի հատուցում ստանալն ինքնին անհնար է դառնում:

4. Ի տարբերություն քրեական հանցագործների՝ ահաբեկիչները չեն ունենում օրինական գույք, դրամական միջոցներ, հաճախ նրանց բնակության վայրը կարող է մեկ այլ երկիր լինել կամ նույնիսկ անհայտ մի վայր (մանավանդ միջազգային ահաբեկիչների պարագայում):

5. Ահաբեկչական գործողության արդյունքում մեծ է հնարավորությունը, որ մահանան նաև իրենք՝ ահաբեկիչները /օրինակ. ինքնասպան ահաբեկիչների պարագայում/:

Առավել քան ակնհայտ է, որ քրեական հանցագործությունների և ահաբեկչական գործողության միջև վերոնշյալ տարբերությունների առկայությունը անհնար է դարձնում ահաբեկչական գործողության դեպքում վնասի ոչ միայն ռեալ, այլև, նույնիսկ, տեսական հատուցումը: Այս ամենը հանգեցնում է այն համոզմունքին, որ ՀՀ օրենսդրությունը պարտավոր է պարունակել ահաբեկչական գործողության դեպքում քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին պատճառված վնասի հատուցման հստակ մեխանիզմներ:

Սակայն մինչև Հայաստանի օրենսդրական համակարգում համապատասխան փոփոխությունների առաջարկություններին անդրադառնալը կցանկանալինք ներկայացնել մի շարք զարգացած երկրների փորձը՝ ուղղված բարձրացված խնդրի կարգավորմանը, քանզի այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, ԱՄՆ-ը և այլն, այս խնդիրը արդեն ստացել է իր կարգավորումը, ուստի այս երկրներում ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցման մեխանիզմների համեմատական վերլուծությունը հնարավորություն կտա մեզ Հայաստանում ներդնել լավագույն տարբերակը:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Ֆրանսիան բազմիցս դարձավ ահաբեկչական հարձակումների թիրախ: Այս ամենը հանգեցրեց նրան, որ խոշոր համաժողովրդական ազդեցության արդյունքում ձևավորվեցին ահաբեկչության դեմ պայքարելու և ահաբեկչական գործողությունների դեպքում տուժողներին պատճառված վնասի հատուցման հստակ համակարգեր: Մասնավորապես

1986թ. սեպտեմբերի 9-ի օրենքով ստեղծվեց հատուկ ֆոնդ, որի կարգավիճակը ավելի հստակեցվեց 1990թ. հուլիսի 6-ի թիվ 90-589 օրենքով: Նշված իրավական ակտերով ստեղծվեց և վերջնականապես ձևավորվեց ահաբեկչական գործողությունների և այլ հարձակումների արդյունքում տուժածների փոխհատուցման ֆոնդը (այսուհետ՝ Ֆոնդ): Ֆոնդի գումարները գոյանում են գույքը ապահովագրող ապահովագրական ընկերությունների կողմից ստացվող պարգևավճարներից 3 եվրո գանձելու միջոցով: Ինչպես ամրագրված է թիվ 90-589 օրենքում, Ֆոնդի նպատակն է փոխհատուցել ահաբեկչական գործողությունների արդյունքում Ֆրանսիայի տուժած քաղաքացիների՝ անկախ նրանից՝ նրանք գտնվում են Ֆրանսիայում, թե՞ արտասահմանում, ինչպես նաև հատուցել ահաբեկչական գործողության արդյունքում Ֆրանսիայում տուժած օտարերկրյա քաղաքացիների՝¹⁰¹: Ընդ որում, հարկ է նշել, որ Ֆոնդը ապահովում է լրիվ փոխհատուցում ֆիզիկական վնասի, բարոյական վնասի և ահաբեկչական գործողությունից առաջացած ցանկացած այլ վնասի համար՝ բացառությամբ գույքին պատճառված վնասից: Անձի մահվան դեպքում վերջինիս հարազատները մահվան հետևանքով կրած տնտեսական կորուստների փոխհատուցման իրավունք են ստանում: Փոխհատուցումը ներառում է բժշկական ծախսերը, լրացուցիչ ծախսերը և այլն: Իսկ ինչ վերաբերում է գույքին պատճառված վնասի հատուցմանը, ապա այն փոխհատուցում են ապահովագրական ընկերությունները¹⁰²: Հատկանշական է, որ 1990թ. հուլիսի 6-ի օրենքը ահաբեկչական գործողության արդյունքում տուժած անձանց հավասարեցնում է պատերազմում տուժած քաղաքացիների հետ՝ օժտելով վերջիններիս այս կարգավիճակի հետ կապված բոլոր արտոնություններով, մասնավորապես՝ անվճար բուժօգնություն և փոխհատուցումից զատ նաև կենսաթոշակ¹⁰³: Անհրաժեշտ է նշել նաև, որ համաձայն Ֆրանսիայի օրենսդրության, տուժածները ամեն դեպքում, բավարարված չլինելով Ֆոնդի փոխհատուցումից, իրավունք

¹⁰¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Bernard A. Koch (ed.) "Terrorism, Tort Law and Insurance" A Comparative Survey", Springer WienNew York, 2004թ., էջ 30-31:

¹⁰² Տե՛ս նույն տեղում, էջ 32:

¹⁰³ Տե՛ս 1990թ. հուլիսի 6-ի թիվ 90-589 օրենք, հոդված 26:

ունեն լրացուցիչ փոխհատուցում պահանջել ահաբեկչական գործողությունը իրականացնողներից քաղաքացիական հայցի կարգով¹⁰⁴:

Չնայած մինչ օրս Գերմանիան չունի առանձին օրենսդրական ակտ ահաբեկչական գործողության հետևանքով տուժածների փոխհատուցում տալու մասին, սակայն, ելնելով 1976թ. մայիսի 11-ի «Բռնի գործողությունների հետևանքով տուժածների փոխհատուցման» ակտի (այսուհետ՝ Ակտ) դրույթներից¹⁰⁵, կարող ենք ասել, որ այն կարող է ապահովել փոխհատուցում նաև ահաբեկչական գործողության արդյունքում տուժածների համար:

Այսպես, համաձայն Ակտի, անձինք իրավունք ունեն փոխհատուցում պահանջելու, երբ վերջիններս մարմնական վնասվածք են ստացել իրենց կամ երրորդ անձանց ուղղված դիտավորյալ, բռնի և հակաօրինական հարձակման արդյունքում կամ նմանատիպ հարձակմանը օրենքի սահմաններում դիմադրելու արդյունքում¹⁰⁶: Ակտով նմանատիպ փոխհատուցման իրավունք է տրված նաև այն դեպքում, երբ վնասը պատճառվում է դիտավորյալ թունավորմամբ կամ հանրության համար վտանգավոր գործողություններով քրեական հանցագործություն կատարելու արդյունքում՝ այլ անձանց անփութորեն վտանգելով¹⁰⁷:

Ընդ որում, հարկ է նշել, որ պատճառված վնասի հատուցման պարտականությունը, ըստ Ակտի, կրում են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը կամ Դաշնային Հողերը: Թեև վիճելի է այն հարցը, թե արդյոք Ակտը նախատեսում է վնասի հատուցում այն անձանց համար, ովքեր վնասվել են ահաբեկչական գործողության արդյունքում տուժածներին օգնություն ցույց տալու ժամանակ, սակայն ակնհայտ է, որ Ակտը վնասի հատուցում չի նախատեսում գույքին պատճառված կամ տնտեսական վնասի դեպքում: Տուժող վնասի հատուցման իրավունք ունի միայն այն պարագայում, եթե ահաբեկչական գործողության արդյունքում վնասվել է վերջինիս առող-

¹⁰⁴ Տե՛ս նաև <http://www.fgti.fr>, Bernard A. Koch, նշված աշխատությունը, էջ 33:

¹⁰⁵ Գերմանիայի օրենսդրության մեջ Ակտը կարճ կրչվում է՝ OEG: Ակտում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2000թ. դեկտեմբերի 6-ի օրենքով (BGBl. 2000 I 1676):

¹⁰⁶ Տե՛ս § 1 par. 1 OEG:

¹⁰⁷ Տե՛ս § 1 par. 2 OEG:

ջությունը¹⁰⁸: Որպեսզի անձը Ակտի ուժով վնասի հատուցման իրավունք ունենա, անհրաժեշտ է, որ հարձակումը տեղի ունեցած լինի կամ Գերմանիայում կամ Գերմանիայի սահմաններից դուրս Գերմանիայի դրոշի ներքո նավարկող նավի կամ ինքնաթիռի վրա: Եթե վերոնշյալ բոլոր պահանջները առկա են, ապա վնասը հատուցվում է այն Գաշնային Հողի կողմից, որի տարածքում պատճառվել է վնասը, կամ որտեղ տուժողը սովորաբար բնակվում է: Իսկ այն դեպքում, երբ վնասը պատճառվել է ինքնաթիռում կամ նավի վրա, ապա, համաձայն Ակտի, վնասը հատուցվում է Գերմանիայի Գաշնային Հանրապետության կողմից¹⁰⁹: Հատուցվող վնասի ծավալները որոշվում են 1950թ. դեկտեմբերի 20-ին ընդունված «Պատերազմի հետևանքով տուժածների կենսաթոշակների մասին» ակտի համաձայն:

Հարկ ենք համարում նշել, որ մեր կարծիքով, չնայած Ակտում հստակ նշված չէ այն մասին, որ այն վերաբերում է նաև ահաբեկչական գործողության արդյունքում տուժածների փոխհատուցման իրավունքին, սակայն վերջինիս վերլուծությունից ակնհայտ է, որ այն կարող է տարածվել և կարգավորել նաև վերոնշյալ հարաբերությունները: Այս առումով, կարծում ենք, պետք է համաձայնվել Ուլրիխ Մագնուսի այն տեսակետի հետ, որ եթե դիտարկենք Ակտի առաջին պարագրաֆում ամրագրված «Բռնի հարձակում» /violent attack/ տերմինը 2001թ. սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած ահաբեկչական գործողության համատեքստում, ապա ակնհայտ է, որ Ակտի ուժով կարող են հատուցվել նաև ահաբեկչական գործողությունների արդյունքում պատճառված վնասները¹¹⁰:

Իտալիայում հիմնական օրենսդրական ակտերը, որոնք կարգավորում են ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցման կարգը, երեքն են՝ 1980թ. օգոստոսի 13-ի թիվ 446 օրենքը, 1990թ. հոկտեմբերի 20-ի թիվ 302 օրենքը և 1998թ. նոյեմբերի 23-ի թիվ 407 օրենքը: Հատկանշական է, որ վերոնշյալ օրենքները սահմանում են կոնկրետ փոխհատուցման գումարներ, ո-

¹⁰⁸ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս E. Kunz/G. Zellner. *Opferentschadigungsgesetz. Kommentar* (4-th edn. 1999), § 1 no. 3 et. seq., ինչպես նաև § 1 no. 31 et. seq.:

¹⁰⁹ Տե՛ս § 4 OEG:

¹¹⁰ Տե՛ս Bernard A. Koch, նշված աշխատությունը, էջ 48:

րոնք իրավունք ունեն ստանալու ահաբեկչական գործողության արդյունքում տուժածները: Ընդ որում, ի տարբերություն Ֆրանսիայի և Գերմանիայի, որտեղ վնասի հատուցման գումարը որոշվում է՝ կոնկրետ գործի հանգամանքներից և պատճառված վնասի չափից ելնելով, Իտալիայում գումարները սահմանվում են վերոնշյալ օրենքներով և վճարվում են պատճառված վնասի և աշխատունակության կորստի տոկոսին համապատասխան: Օրինակ, 1990թ. թիվ 302 օրենքով վնասի հատուցման գումար է սահմանված 77468 եվրոն, որի համապատասխան աշխատունակությանը պատճառված վնասի յուրաքանչյուր տոկոսին տրվում է 774,68 եվրո: Համաձայն Իտալիայի օրենսդրության՝ վնասի հատուցման իրավունք են ստանում անմիջապես տուժողները, իսկ այն դեպքում, երբ տուժողը մահացել է, վնասի հատուցման իրավունքը փոխանցվում է վերջինիս ընտանիքի անդամներին¹¹¹:

Անգլիայում, որը շատ հաճախ է դառնում ահաբեկչական գործողությունների թիրախ, մանավանդ Իռլանդական հանրապետական բանակի կողմից, ահաբեկչության դեմ պայքարի և ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունն այն է, որ 1993 թ. Վերաապահովագրման ակտով /Տեռորիզմի ակտ/ պետությունը հանդիսանում է ապահովագրական ընկերություններին վերաապահովագրող: Ակտով սահմանված իր պարտականությունների կատարման համար պետությունը ստեղծել է ինքնուրույն ապահովագրական ընկերություն, որի միջոցով էլ փոխհատուցվում են պատճառված վնասները: Պետությունը հատուցում է ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի 90 տոկոսը, իսկ մնացած 10 տոկոսը հատուցում են ապահովագրական ընկերությունները¹¹²: Ընդ որում, այս ակտով, ըստ էության, պաշտպանվում է նաև սեփականությունը:

Ի տարբերություն եվրոպական երկրների՝ քննարկվող խնդրի կարգավորման առանձնահատուկ կարգ է սահմանված ԱՄՆ-ում: Նախ և առաջ հարկ ենք համարում նշել, որ ԱՄՆ-ում չկա պատճառված վնասի հատուցման կամ դեխիկտային հարաբերությունների

¹¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 58:

¹¹² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Bernard A. Koch, Գշված աշխատությունը, էջ 149-154:

կարգավորման միասնական իրավական համակարգ. յուրաքանչյուր նահանգ այս խնդիրը կարգավորում է իր օրենսդրությամբ: Բացի այդ՝ ԱՄՆ-ում՝ որպես անգլո-սաքսոնական իրավական համակարգում գտնվող երկրում, վնաս պատճառելուց բխող պարտավորությունները կարգավորվում են նաև դատական նախադեպերով: Ինչ վերաբերում է ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի հատուցման խնդրին, ապա ԱՄՆ-ում նախ և առաջ տարանջատում են ահաբեկչական գործողությամբ պատճառված վնասի հատուցման սուբյեկտների երեք խումբ.

1. Առաջին խմբի մեջ են մտնում պետությունների կողմից հովանավորված ահաբեկչական գործողությունները, որոնց արդյունքում պատասխանատվության սուբյեկտ է դիտվում տվյալ պետությունը՝ համաձայն կոնգրեսի կողմից սահմանված «Պետական հովանավորությամբ կատարված ահաբեկչական գործողությունների համար քաղաքացիաիրավական պատասխանատվություն» ակտի /Civil Liability for State Sponsored Acts of Terrorism Acts/¹¹³: Համաձայն ակտի, եթե ահաբեկչական գործողությունը տեղի է ունեցել որևէ պետության հովանավորությամբ, ապա ԱՄՆ-ի յուրաքանչյուր տուժած քաղաքացի իրավունք ունի ԱՄՆ դատարաններում հայց հարուցել տվյալ պետության դեմ և ստանալ փոխհատուցում¹¹⁴:

2. Երկրորդ խմբին են պատկանում անհատ ահաբեկիչները կամ այն ահաբեկչական գործողությունները, որոնք չեն հովանավորվել որևէ պետության կողմից: Այս խմբի պատասխանատվության կարգը սահմանված է հետևյալ երեք օրենսդրական ակտերով՝

ա. Հակատեռորիզմի ակտ /Anti-Terrorism Act/,

բ. Շորթոդների ազդեցության և կոռումպացված կազմակերպությունների ակտ /Racketeer Influenced and Corrupt Organisations Act /RICO/,

գ. Տանջանքների հետևանքով տուժածների պաշտպանության ակտ /Torture Victim Protection Act/¹¹⁵:

3. Եվ երրորդ խումբը՝ ատոմային կայանների սեփականատերեր կամ կառավարողներ՝ համաձայն Փրայս Անդերսոն ակտի /Price

¹¹³ 28 U.S.C.

¹¹⁴ Տե՛ս 28 U.S.C §§ 1605 (a)(7), 1606:

¹¹⁵ 18 U.S.C.

Anderson Act¹¹⁶: Պատասխանատվության այս վերջին խմբի սուբ-յեկաները պատասխանատվություն են կրում այն բանի համար, որ, իրենց գործունեության առավել վտանգավորության հետ կապված, պարտավոր են ապահովել իրենց հիմնարկների անվտանգությունը՝ այդ թվում նաև ահաբեկչական հարձակումներից: Սակայն ամեն դեպքում ատոմային կայանների կառավարիչների և սեփականատերերի պատասխանատվությունը սահմանափակվում է կայանի կողմից կատարված ապահովագրության սահմաններում՝ զումարած այն ֆոնդերը, որոնցում հավաքվում է նախկինում ստացված արտադրական կապիտալների ամբողջությունը¹¹⁷:

Բացի վերոնշյալ օրենսդրական ակտերից՝ ԱՄՆ-ում գործում է նաև հատուկ ֆոնդ՝ ուղղված 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժածների վնասների հատուցմանը: Կարևոր ենք համարում նշել, որ ֆոնդի, ֆեդերալ կառավարության և ապահովագրական ընկերությունների կողմից մինչ օրս սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտից տուժած ինչպես քաղաքացիներին, այնպես էլ իրավաբանական անձանց վճարվել է ոչ պակաս 38 միլիարդ ԱՄՆ դոլար¹¹⁸: Չնայած մինչ օրս սա միակ ֆոնդն է ԱՄՆ-ում, որի նպատակն է փոխհատուցել կոնկրետ ահաբեկչական գործողության արդյունքում տուժածներին, սակայն ամերիկյան իրավաբանական գրականության մեջ կարծիք է հայտնվում, որ այն կարող է նաև նախադեպ հանդիսանալ նմանատիպ այլ ֆոնդերի ստեղծման համար¹¹⁹:

Այսպիսով, ինչպես նկատեցինք, աշխարհի զարգացած երկրների օրենսդրությունները այս կամ այն կերպ կարգավորում են ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասի փոխհատուցումը: Ըստ որում, կարևոր ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ մեր կողմից ուսումնասիրված գրեթե բոլոր պետությունների օրենսդրություններում էլ փոխհատուցման հիմնական պարտականությունը կրում է հենց պետությունը: Սա բացատրվում է

¹¹⁶ 42 U.S.C.:

¹¹⁷ Տե՛ս 42 U.S.C. § 2210:

¹¹⁸ <http://www.rand.org/news/press.04/11.08b.html>

¹¹⁹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Bernard A. Koch, Գշված աշխատությունը, էջ 179-180:

նրանով, որ յուրաքանչյուր պետության պարտականությունն է ապահովել իր քաղաքացիների անվտանգությունը և անձեռնմխելիությունը՝ հատկապես ահաբեկչական գործողության դեպքում: Ըստ այդմ էլ նպատակահարմար ենք գտնում, որ Հայաստանի Հանրապետությունում էլ ահաբեկչական գործողության դեպքում պատճառված վնասի փոխհատուցման պարտականությունը քաղաքացիական իրավունքների սուբյեկտների նկատմամբ կրի պետությունը: Մասնավորապես, կարելի է նախատեսել, որ օրենքով սահմանվի պարտադիր ապահովագրություն՝ ապահովագրելով ահաբեկչական գործողության արդյունքում պատճառված վնասների ռիսկը: Ընդ որում, որպես ապահովագրող պետք է հանդես գա ՀՀ-ն, իսկ շահառուներ՝ քաղաքացիները: Ինչպես ցույց է տալիս արտասահմանյան երկրների պրակտիկան, ապահովագրությունը նմանատիպ դեպքերում հանդիսանում է պատճառված վնասի հատուցման ամենառեալ միջոցներից մեկը: Սակայն, խոսելով ապահովագրության մասին ՀՀ-ում, պետք է նկատի ունենալ նաև այն, որ այս ինստիտուտը մեզանում դեռևս գտնվում է ձևավորման փուլում, ուստի ներկա պահին վստահել ապահովագրական ընկերություններին և վճարել գումարներ՝ գտնում ենք աննպատակահարմար:

Խնդրի լավագույն լուծումը, մեր կարծիքով, խնդրի առանձին կարգավորումն է համապատասխան իրավական ակտով:

§4. Քաղաքացիների կողմից պատճառված վնասի հատուցումը

Ինչպես արդեն նշվեց վերը, ՀՀ Քաղ. օր.-ի չորրորդ գլուխը վերաբերում է քաղաքացիներին՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտների: Քաղ. օր.-ի 20 հոդվածը սահմանում է, որ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես: Հոդվածը նաև նշում է, որ քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահից և դադարում է մահվամբ: Հոդվածից կարծես բխում է, որ քաղաքացին կարող է իրավունքներ ձեռք բերել, ինչպես նաև պարտականություններ կրել ծննդյան պահից սկսած,

սակայն այստեղ շատ կարևոր է նշել, որ, որպեսզի քաղաքացին դառնա դեյիկտային հարաբերությունների լիիրավ մասնակից, նախ և առաջ պետք է օժտված լինի լրիվ գործունակությամբ: Համաձայն Քաղ. օր.-ի 24 հոդվածի՝ քաղաքացու գործունակությունը իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու և իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունն է, որը ծագում է քաղաքացու լրիվ չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Ուստի և, համաձայն վերոնշյալ հոդվածի, քաղաքացու՝ որպես պատասխանատվության սուբյեկտի մոտ պատճառված վնասի համար պատասխանատվությունը կարող է ծագել միայն այն դեպքում, երբ վնաս պատճառողը լրիվ գործունակ է և կարող է հաշիվ տալ իր գործողությունների համար: Այստեղ ավելորդ չէ նշել, որ, համաձայն Քաղ. օր.-ի 31 և 32 հոդվածների, քաղաքացին կարող է ճանաչվել անգործունակ կամ քաղաքացու գործունակությունը կարող է սահմանափակվել: Հանգամանքներ, որոնք նույնպես ազատում են քաղաքացուն մեկ այլ անձին հասցված վնասի համար պատասխանատվությունից: Օրենսգրքի 24 հոդվածից բխում է, որ պատճառված վնասի համար պատասխանատվության առանձնահատուկ պայմաններ են գործում տասնութ տարին չլրացած փոքրահասակների ու անչափահասների կողմից պատճառված վնասի համար պատասխանատվության դեպքում: Մակայն այս հանգամանքը, և այն, որ պատասխանատվությունից կարող են ազատվել անգործունակ անձինք, չի նշանակում, որ իր գործողությունների համար հաշիվ տալուն անընդունակ քաղաքացու կողմից մեկ այլ անձին պատճառված վնասի դեպքում տուժողը զրկվում է իր կրած վնասների փոխհատուցումից: ՀՀ Քաղ. օր.-ի 1067, 1068 և 1069 հոդվածները սահմանում են պատասխանատվության սուբյեկտների շրջանակը համապատասխանաբար մինչև տասնչորս տարեկան անչափահասների, տասնչորսից տասնութ տարեկան անչափահասների և անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասի համար: Միաժամանակ անդրադառնանք 1058 հոդվածի առաջին մասի երկրորդ կետի, համաձայն որի վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Այսինքն, օրենսգրքով հնարավորություն է տրվում վնասի հատուցման պարտա-

կանությունը դնել այն անձանց վրա, ովքեր անմիջապես իրենց գործողություններով չեն մասնակցել վնասի պատճառմանը: Ընդ որում, օրենսգիրքը շատ կոնկրետ ներկայացնում է այն դեպքերը, երբ հնարավոր է այդպիսի պատասխանատվության սահմանումը: Կարծում ենք՝ բացի օրենսգրքում սահմանված դեպքերի, անթույլատրելի է վնասի պատճառման համար պատասխանատվությունը վնասի պատճառման հետ անմիջականորեն կապ չունեցող անձանց վրա դնելը:

§4.1. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի հատուցումը

- **Փոքրահասակի ծնողները և որդեգրողները որպես փոքրահասակի կողմից այլ անձանց պատճառած վնասի համար պատասխանատվության սուբյեկտներ**

Համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1067 հոդվածի, տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել: Այնուհետև հոդվածը շարունակում է, որ եթե խնամակալության կարիք ունեցող փոքրահասակը գտնվել է համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ այլ նմանօրինակ հաստատությունում, որն օրենքի ուժով նրա խնամակալն է, այդ հաստատությունը պարտավոր է հատուցել փոքրահասակի պատճառած վնասը, եթե չի ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել:

Եթե փոքրահասակը վնաս է պատճառել այն ժամանակ, երբ նա գտնվել է կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության հսկողության ներքո, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ կամ պայմանագրի հիման վրա փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի հսկողության ներքո, այդ հաստատությունը կամ անձը պատասխա-

նատվություն է կրում փոքրահասակի պատճառած վնասի համար, եթե չի ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել, և եթե այլ բան նախատեսված չէ փոքրահասակի ծնողների, որդեգրողների կամ խնամակալի և կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության միջև կնքված պայմանագրով:

Այն դեպքում, երբ փոքրահասակը գտնվել է այնպիսի անձի հսկողության տակ, որն օժտված չէ ծնողական իրավագործությամբ, որին, սակայն, լիազորությունների փոխանցմամբ կամ որևէ այլ ճանապարհով վստահվել է անչափահասի նկատմամբ խնամքի, հսկողության կամ դաստիարակության իրականացումը, ապա համաձայն Քաղ. օր. 1067 հոդվածի 3¹ մասի, այդ անձը պարտավոր է հատուցել անչափահասի գործողությունների հետևանքով պատճառված վնասը, եթե այլ բան նախատեսված չէ լիազորողի կամ վստահողի և անչափահասի նկատմամբ խնամք, հսկողություն կամ դաստիարակություն իրականացնողի միջև կնքված պայմանագրով:

Այսպիսով, հոդվածը սահմանում է մի կարևոր սկզբունք. ցանկացած դեպքում, եթե վնաս պատճառողը փոքրահասակն է, ապա նրա պատճառած վնասի համար պատասխանատվության սուբյեկտ են դառնում այն անձինք, որոնք պարտավոր էին հսկողություն իրականացնել նրա նկատմամբ, և ամեն դեպքում փոքրահասակը ազատվում է անձամբ վնասի հատուցումից:

Այստեղ կարելի է համաձայնվել Ս. Ե. Գոնցովի և Մ.Յա. Մարինինայի այն տեսակետի հետ, որ քաղաքացիական օրենսգրքով երեխաների կողմից հասցված վնասի հատուցման պարտականությունը ծնողների վրա դնելը չի նշանակում, որ նրանք պատասխանատվություն են կրում ուրիշի մեղքի համար, քանզի Ընտանեկան օրենսգիրքը սահմանում է, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողներն իրենց անչափահաս երեխաների օրինական ներկայացուցիչներն են և բոլոր, այդ թվում և դատական հիմնարկներում հանդես են գալիս նրանց իրավունքների ու շահերի պաշտպանության համար:

հերի պաշտպանությամբ¹²⁰: Բացի այդ՝ վերջիններս պատասխանատվություն են կրում ոչ թե ուրիշի գործողությունների, այլ իրենց հակաօրինական գործողությունների և մեղքի համար¹²¹: Նույնը կարելի է ասել նաև խնամակալության մարմնի մասին, եթե փոքրահասակը վնասի պատճառման պահին եղել է վերջինիս խնամակալության ներքո (Քաղ. օր.-ի 38 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը): Համաձայնվելով տեսության մեջ արտահայտված այս տեսակետի հետ՝ տարակուսանքի է արժանի Օրենսգրքի 1067 հոդվածի այն ձևակերպումը, որ ծնողները և մյուս սուբյեկտները կարող են ազատվել փոքրահասակի կողմից պատճառված վնասի հատուցումից, եթե ապացուցեն, որ վնասը փոքրահասակի մեքով չի պատճառվել: Անհրաժեշտ է նշել, որ Քաղ. օր. նշված ձևակերպումը փոփոխության արդյունք է, քանի որ մինչև 2007 թվականը օրենսգիրքը ծնողներին և այլ սուբյեկտներին ազատում էր փոքրահասակի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվությունից այն դեպքում, երբ վերջիններս ապացուցում էին իրենց մեղքի բացակայությունը: Ակնհայտ է մի բան. փոքրահասակի մեղք ասելով մենք հասկանում ենք փոքրահասակի կողմից իր գործողությունների և դրանց հնարավոր հետևանքների գիտակցումը: Այսինքն փոքրահասակը պետք է կարողանա իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերել և իրականացնել, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծել ու դրանք կատարել, ինչը, համաձայն օրենսգրքի 24 հոդվածի, ծագում է միայն քաղաքացու լրիվ չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Այսպիսով, գտնում ենք, որ, Քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի տեսանկյունից խնդիրը քննարկելով, կարող ենք հանգել այն եզրակացության, որ դեղիկտային հարաբե-

¹²⁰ Տե՛ս ԳՅ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք, հոդված 61, ինչպես նաև՝ Ս.Է. Донцов, М.Я. Маринина, նույն տեղում:

¹²¹ Տե՛ս Гражданское право, обязательственное право. Учебник, часть II, под ред. В.В. Залесского, - М.: МТК Восточный экспресс. 1998г. էջ 624, տե՛ս նաև՝ Э. Абашин Возмещение вреда. М.: Белые Альвы, 2000г. էջ 28:

րություններում փոքրահասակը մեղք ունենալ չի կարող այն պարզ պատճառով, որ օրենսգիրքը անձին իր արարքները գնահատելու հնարավորություն տալիս է տասնչորս տարեկան հասակից հետո: Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ 1067 հոդվածի ձևակերպումը թերի է, պրակտիկորեն ոչ կիրառելի, քանի որ ծնողների համար դժվար չի լինի յուրաքանչյուր դեպքում ապացուցել փոքրահասակի մեղքի բացակայությունը և ազատվել վերջինիս կողմից պատճառված վնասի հատուցման պարտականությունից: Խնդիրը լուծելու համար կա երկու տարբերակ. կամ վերադառնալ հոդվածի նախկին ձևակերպմանը, երբ փոքրահասակի կողմից պատճառված վնասի համար պատասխանատու սուբյեկտները պատասխանատվություն կկրեն իրենց մեղքի համար, կամ էլ Քաղ. օր.-ում նվազեցնել գործունակության տարիքը: Սակայն այս դեպքում ևս բաց կմնա համապատասխան տարիքից ցածր անձանց պատճառած վնասի հատուցման խնդիրը:

Ելնելով վերոգրյալից՝ հոդվածի ուսումնասիրությունը մենք կշարունակենք այն կանխավարկածով, որ ամեն դեպքում ծնողների և մյուս անձանց պատասխանատվությունը փոքրահասակի կողմից պատճառված վնասի համար հետևանք է վերջիններիս մեղքի: Այս կապակցությամբ հետաքրքիր տեսակետ է հայտնում Ա.Բ. Չագրուլյոն՝ խոսելով Ուկրաինայի Քաղ. օր.-ի մասին: Համաձայն հեղինակի՝ չնայած Ուկրաինայի Քաղ. օր.-ի 440 հոդվածը սահմանում է վնասի հատուցման համար ծագող պարտականությունների առաջացման նախապայմանները՝ վնասի առկայությունը, վնաս հասցնողի գործողությունների անօրինականությունը, անօրինական գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, բայց և այնպես վնասը հատուցվում է ոչ այն անձի կողմից, ով հասցրել է վնասը, այլ նրա ծնողների, որդեգրողների, խնամակալների կամ ուսումնական, դաստիարակչական կամ բուժական հիմնարկների կողմից, եթե վնասը հասցվել է փոքրահասակի կողմից, երբ նա գտնվում էր նրանց խնամքի տակ, ուստի պատասխանատվության վերոնշյալ հանգամանքները այդ անձանց նկատմամբ կրում են սպեցիֆիկ բնույթ:

Սակայն, ըստ հեղինակի, այս դեղիկտային պարտավորությունների հիմնական առանձնահատկությունը, որը թույլ է տալիս

վերջիններիս դասել առանձնահատուկ դեյիկտային պարտականությունների շարքին, այն է, որ վնասի հատուցման համար պատասխանատվություն են կրում այն անձինք կամ մարմինները, որոնք իրենք այդ վնասը չեն հասցրել: Միևնույն ժամանակ ենթադրվում է, որ այդ անձինք ֆիզիկապես և իրավաբանորեն պատասխանատվություն են կրում իրենց և ոչ թե ուրիշի գործողությունների համար: Եվ դա բացատրվում է նրանով, որ մինչև 15 տարեկան¹²² անչափահասները, չնայած նրանք իրավունակ են և ռեգուլյատիվ պարտավորությունների բնագավառում օժտված են սահմանափակ գործունակությամբ, ճանաչվում են լրիվ անգործունակ, այսինքն չունեն հնարավորություն պատասխանատվություն կրելու հասցված վնասի համար¹²³: Կարծում ենք, ծնողների պատասխանատվությունը կարելի է դիտել նաև որպես հետևանք վերջիններիս գործողությունների, այսինքն նրանք պատասխանատվություն են կրում այն պատճառով, որ պատշաճ չեն իրականացրել անչափահասի նկատմամբ հսկողությունը, սխալ են դաստիարակել նրան: Ա.Ի. Չագորուկոն իրավացիորեն նշում է, որ չնայած անչափահասները, որոնց համապատասխան տարիքը չի լրացել, չեն կրում պատասխանատվություն իրենց գործողությունների, ուստի և պատճառած վնասի համար, չի կարող ստեղծվել այնպիսի մի իրավիճակ, որ ոչ ոք պատասխանատվություն չկրի նրանց կողմից պատճառված վնասի համար: Սա, փաստորեն, կհակասի քաղաքացիական հասարակության էությանը, մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին¹²⁴: Մյուս կողմից այն անձանց շրջանակը, ում վրա պարտականություն է դրվել հատուցելու փոքրահասակի հասցրած վնասը, չի կարող կամայական լինել: Ուստի և, ինչպես նշեցինք վերը, օրենսդիրը հստակ սահմանել է այն անձանց շրջանակը, ովքեր պատասխանատու են փոքրահասակի գործողությունների համար և պատասխանատվություն են կրում այն դեպքում, երբ այդ գործողությունների հետևանքով վնաս է առաջացել:

¹²² Ուկրաինայի քաղաքացիական օրենսգրքով դա 15 տարին չլրացած անչափահասն է՝ ի տարբերություն ՀՀ Քաղ. օր.-ի, որը սահմանում է 14 տարեկանը:

¹²³ Տե՛ս Ա. Պ. Загорулько, Обязательства по возмещению вреда. Харьков, 1996 г., էջ 40-41:

¹²⁴ Տե՛ս Ա. Պ. Загорулько, նշված աշխատությունը, նույն տեղում:

Ա.Մ. Բելյակովան նշում է, որ ծնողները և խնամակալները պատասխանատվություն են կրում նաև այն դեպքում, երբ նրանք երեխային տրամադրել են այլ անձանց հսկողությանը (տատ, պապ և այլք): Ընդ որում, փոխհատուցելով վնասը, նրանք չունեն այդ անձանց նկատմամբ ռեգրեսիվ հայցի իրավունք¹²⁵: Այստեղ թերևս կարելի է նկատել, որ համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի հոդված 1067-ի մաս 3-ի, եթե փոքրահասակը վնաս է պատճառել այն ժամանակ, երբ գտնվելիս է եղել պայմանագրի հիման վրա իր նկատմամբ հսկողություն իրականացնող անձի խնամակալության ներքո, ապա այդ անձը պատասխանատվություն է կրում փոքրահասակի պատճառած վնասի համար: Ավելին, հոդվածի 3¹ մասը սահմանում է, որ այն անձը, որն օժտված չէ ծնողական իրավագործությամբ, որին, սակայն, լիազորությունների փոխանցմամբ կամ որևէ այլ ճանապարհով վստահվել է անչափահասի նկատմամբ խնամքի, հսկողության կամ դաստիարակության իրականացումը, պարտավոր է հատուցել անչափահասի գործողությունների հետևանքով պատճառված վնասը, եթե այլ բան նախատեսված չէ լիազորողի կամ վստահողի և անչափահասի նկատմամբ խնամք, հսկողություն կամ դաստիարակություն իրականացնողի միջև կնքված պայմանագրով: Ակնհայտ է, որ վերը թվարկված անձինք, հնարավոր է, հենց պայմանագրով կամ ուղղակի լիազորությունների փոխանցմամբ հսկողություն իրականացնեն փոքրահասակի նկատմամբ, ուստի և դառնան պատասխանատվության սուբյեկտներ վերջինիս կողմից հասցված վնասի առկայության դեպքում:

Ինչպես նշեցինք, առաջին հերթին օրենսգիրքը մատնանշում է տասնչորս տարին չլրացած անչափահասի ծնողներին, որոնք, փաստորեն, դառնում են պատասխանատվության սուբյեկտներ փոքրահասակի կողմից հասցված վնասի դեպքում: Օրենքը առաջին հերթին նշում է ծնողներին, քանի որ նախ և առաջ հենց նրանց վրա է պարտականություն դրվում դաստիարակելու երեխաներին և նախապատրաստելու նրանց հասարակության համար օգտակար աշխատանքի: Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի հոդված 51-ի՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երե-

¹²⁵ Ст'я Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 53:

խաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք: Ծնողները պարտավոր են ապահովել երեխաների կրթություն ստանալը:

Խնդիրն ավելի խորը պատկերացնելու համար կցանկանալինք օրինակ բերել դատական պրակտիկայից: 1999թ. հուլիսի 2-ին ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը քննել է Ա.Գրիգորյանի հայցն ընդդեմ Գ.Հակոբյանի և Ա.Գալստյանի անչափահաս երեխայի՝ Է. Կ. Գրիգորյանի առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Հայցվոր Ա.Գ.-ն հայտնել է, որ պատասխանողների անչափահաս որդին՝ տասնամյա Ա.Հակոբյանը, 1998թ. նոյեմբերի 18-ին, ժամը 17-ի սահմաններում, իրենց բակում ինքնաշեն աղեղից արձակած նետով հարվածել է իր չորսամյա որդու՝ Է.Գ.-ի աչքին՝ պատճառելով ծանր մարմնական վնասվածք: Հայցվորը հայտնել է, որ Երևան քաղաքում որդուն վիրահատել են, և կատարվել է 800 ԱՄՆ դոլարի ծախս, որից 250-ը տվել են պատասխանողները, 150-ը հավաքվել է հարևանների հանգանակություններից, իսկ 400-ը՝ իր անձնական միջոցներից: Որդու աջ աչքի տեսողությունը հավասարվել է զրոյի, և նրան ամբողջովին կուրանալուց փրկելու համար անհրաժեշտ է կատարել երկրորդ բարդ վիրահատությունը Գերմանիայում: Վիրահատության արժեքը կազմում է 30000 ԱՄՆ դոլար, որից 9800-ը վիրահատության առաջին փուլի արժեքն է: Բացի այդ՝ անհրաժեշտ են նաև սննդի, բնակարանի, տրանսպորտային ծախսեր, որոնց համար ինքը վաճառել է Նորքի երկրորդ զանգվածում գտնվող իր բնակարանը: Դատավարության ընացքում հայցվորը հայտնել է, որ, չնայած իր հայցադիմումով խնդրել է պատասխանողներից բռնազանձել 9800 ԱՄՆ դոլար, սակայն, նկատի ունենալով պատասխանողների նյութական վիճակը, խնդրել է բռնազանձել նրանցից 3800 ԱՄՆ դոլար:

Պատասխանողներն առարկել են հայցի դեմ և հայտնել, որ վնասը պատճառվել է պատահականությամբ, բացի այդ իրենք վատ

նյութական վիճակի մեջ են և հնարավորություն չունեն բավարարել հայցվորի պահանջը:

Դատարանը, ելնելով այն հանգամանքից, որ համաձայն ՀՀ - Քաղ. օր.-ի 1067 հ. 1-ին մասի. «14 տարեկան չդարձած անչափահաս սի պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները», իսկ համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1080 հ. 1-ին մասի, 1087 հ. 1-ին մասի և 1085 հ. 2-րդ մասի. «14 տարեկան չդարձած անչափահասին հաշմություն կամ նրա առողջությանը այլ վնաս պատճառելու դեպքում դրա համար պատասխանատու անձը պարտավոր է հատուցել առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերը, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման: Լրացուցիչ ծախսերի հատուցման գումարները կարող են հատկացվել ապագա ժամանակի համար բժշկական փորձաքննության հիման վրա որոշվող ժամկետների շրջանակներում», որոշել է հայցը բավարարել մասնակիորեն՝ Ա.Գ.-ի և Գ.Հ.-ի տնտեսությունից բռնագանձել 3500 ԱՄՆ դոլար՝ որպես Է.Գ.-ին պատճառած վնասի հատուցում¹²⁶:

Շատ կարևոր է նշել, որ քանզի երեխաների դաստիարակության գործում ծնողներն ունեն հավասար իրավունքներ, ապա երեխաների կողմից հասցված վնասի դեպքում նրանք հանդիսանում են պատասխանատվության հավասար սուբյեկտներ: Ծնողը, որը երեխաներից առանձին է բնակվում, չի ազատվում երեխայի կողմից վնաս հասցնելու դեպքում առաջացող պարտավորություններից և մյուս ծնողի հետ, ում հետ որ բնակվում է երեխան, կրում է հավասար պատասխանատվություն¹²⁷ :

Անշուշտ, կարող է հարց առաջանալ, թե ինչու՞ պետք է ծնողը, որը չի բնակվում երեխայի հետ, պատասխանատվություն կրի երեխայի հասցրած վնասի համար: Այս հարցի պատասխանը տրված է հենց Ընտանեկան օրենսգրքի 54 հոդվածում, համաձայն որի երե-

¹²⁶ Տե՛ս ԳՅ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործ N 99-474, 1999թ.:

¹²⁷ Տե՛ս В. С. Тадевосян, Ответственность родителей за вред, причиненный детьми. Сов. Гос-во и право. 1949. No 4. էջ 30, С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 77, տե՛ս նաև Гражданское право, обязательственное право. Учебник, նույն տեղում:

խայից անջատ ապրող ծնողը իրավունք ունի շփվելու երեխայի հետ և պարտավոր է մասնակցել նրա դաստիարակությանը, իսկ մյուս ծնողը, ում հետ ապրում է երեխան, իրավունք չունի այդ ծնողին խոչընդոտել շփվելու երեխայի հետ և մասնակցելու նրա դաստիարակությանը: Այստեղ չենք կարող համաձայնվել Ս.Ե. Գոնցովի և Մ.Յա. Մարիինայի այն տեսակետի հետ, որ ծնողների առանձին բնակվելու դեպքում, եթե մի ծնողը խոչընդոտ է հանդիսանում մյուսին՝ մասնակցելու երեխայի դաստիարակությանը, ապա վերջինս ազատվում է երեխայի կողմից հասցված վնասի դեպքում առաջացող պատասխանատվությունից¹²⁸: Ինչպես պարզորոշ նշված է Ընտանեկան օրենսգրքի 54 հոդվածում, այն ծնողը, որի մոտ ապրում է երեխան, իրավունք չունի մյուս ծնողին խոչընդոտ հանդիսանալ շփվելու երեխայի հետ և մասնակցելու նրա դաստիարակությանը: Ուստի ծնողի առարկությունն այն մասին, որ ինքը ենթակա չէ պատասխանատվության, քանի որ մյուս ծնողը խոչընդոտել է իրեն իրականացնելու իր ծնողական պարտականությունները, անհիմն է, քանի որ օրենքով նա իրավունք ունի պահանջել մյուս ծնողից, որ թույլ տրվի իրեն շփվել երեխայի հետ, դաստիարակել երեխային, և, փաստորեն, պարտավոր էր դա անել, իսկ չանելու դեպքում, կարելի է ասել, ծնողը թույլ է տվել հանցավոր անփութություն և ունի մեղքի իր բաժինը երեխայի կողմից հասցված վնասի համար: Վ.Ս. Թադևոսյանը այս հարցի առնչությամբ նշում է, որ ծնողներից մեկին, որն առանձին է բնակվում ընտանիքից, կարելի է ազատել պատասխանատվությունից այն դեպքում, եթե նա օբյեկտիվորեն ի վիճակի չէ ազդել երեխայի վրա և դաստիարակել նրան¹²⁹: Սակայն նա չի նշում, թե որոնք են այդ օբյեկտիվ պայմանները:

Կարծում ենք՝ ծնողին երեխայի կողմից հասցրած վնասի պատասխանատվությունից ազատող հանգամանք կարող են հանդիսանալ ծնողի անգործունակ լինելը, ծնողական իրավունքներից զրկված լինելը: Հարց է ծագում, արդյոք ազատվում է պատասխանատվությունից այն ծնողը, ով բնակվում է այլ երկրում: Այստեղ կարող է լինել խնդրի երկու մոտեցում. առաջին՝ այլ երկրում բնակվող ծնողը ազատված չէ երեխայի նկատմամբ ունեցած իր ծնողական իրավունք-

¹²⁸ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը էջ 78:

¹²⁹ Տե՛ս, В. С. Тадевосян, նշված աշխատությունը, նույն տեղում:

ներից, ուրեմն և պատասխանատու է փոքրահասակի գործողությունների համար, և երկրորդ՝ այլ երկրում բնակվող ծնողը ի վիճակի չէ հսկողություն իրականացնել փոքրահասակի նկատմամբ և զբաղվել վերջինիս դաստիարակությամբ: Միևնույն ժամանակ ավերորդ չէ նշել, որ դժվարություն է առաջացնում նաև այն հարցի պատասխանը, թե ինչպես պետք է օտար երկրում բնակվող ծնողին հարկադրել հատուցել փոքրահասակի պատճառած վնասը: Հետաքրքիր է, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1075 հոդվածը սահմանում է պատասխանատվություն ծնողական իրավունքներից զրկված ծնողի համար: Օրենսգրքը որպես այդպիսի պատասխանատվության պայման է նշում հետևյալ երկու հանգամանքների առկայությունը.

ա) վնասը պետք է պատճառված լինի անձին ծնողական իրավունքներից զրկելուց ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում,

բ) երեխաների գործողությունների և իրենց ծնողական պարտականությունները, մինչև դրանցից զրկվելը, իրականացնող անձանց գործողությունների միջև պետք է լինի պատճառական կապ¹³⁰:

Փոքրահասակի կողմից այլ անձանց կյանքին կամ առողջությանը պատճառած վնասի համար ծնողների պատասխանատվության հետաքրքիր դրույթներ է պարունակում Ֆրանսիայի օրենսդրությունը: Այստեղ հետաքրքրական է այն փաստը, որ, ի տարբերություն ՀՀ օրենսդրության, երբ վնասի հատուցման պարտականությունը հավասարապես բաշխվում է երկու ծնողների միջև, Ֆրանսիայում պատասխանատվությունը կրում է հայրը, քանի որ վերջինս է իրականացնում ծնողական իշխանությունը: Մայրը պատասխանատվություն է կրում միայն հոր մահից հետո¹³¹: Միաժամանակ հոր կենդանության օրոք, ըստ հեղինակի, օրենքը պատասխանատվությունը կարող է դնել մոր վրա միայն այն դեպքերում, երբ նրա վրա է դրված երեխաների խնամակալության հարցը (ամուսնալուծության դեպքում ամուսինը զրկված է ծնողական իրավունքներից կամ անհայտ է նրա գտնվելու վայրը, կամ էլ ի վիճակի չէ կամահայտնության): Այսպիսով, Ֆրանսիայի օրենսդրությամբ ծնողները համա-

¹³⁰ St u Гражданское право, обязательственное право, учебник, էջ 625:

¹³¹ St u Л. Жюллио Де Ла Морандьер, Гражданское право Франции, М., 1960, էջ 437:

պարտ պատասխանատվություն չեն կրում, պատասխանում է կա՛ն հայրը, կա՛ն մայրը¹³²:

Փոքրահասակները պատասխանատվություն չեն կրում նաև այն դեպքում, երբ վնաս են պատճառել առավել վտանգի աղբյուրով¹³³:

Հետաքրքրական է՝ արդյոք ազատվում են ծնողները պատասխանատվությունից, եթե երեխան վնասը հասցրել է շրջապատի համար առավել վտանգի աղբյուր հանդիսացող առարկայով, օրինակ՝ ավտոմեքենայով: Կարծում ենք՝ ոչ, քանի որ եթե փոքրահասակը ինչ-ինչ կերպ տիրապետել է առավել վտանգի աղբյուր հանդիսացող իրին և դրանով վնաս հասցրել մեկ այլ անձին, ապա դա նույնպես ծնողական վատ հսկողության և դաստիարակության արդյունք է, և որպես պատասխանատվության սուբյեկտներ պետք է դիտվեն ծնողները: Նմանատիպ կարծիք են հայտնում նաև Ս.Ե. Դոնցովը և Մ. Յա. Մարինինան¹³⁴:

Խոսելով փոքրահասակի կողմից հասցված վնասի դեպքում փոքրահասակի ծնողների պատասխանատվության մասին՝ կցանկանալինք անդրադառնալ այն հարցին, թե ինչպիսի պատասխանատվություն կամ ով է պատասխանատվություն կրում այն դեպքում, երբ 14-ը չլրացած անչափահասը իր գործողությունների հետևանքով վնաս է հասցրել ինքն իրեն: Այս դեպքում, կարծում ենք, անկախ այն բանից, թե ում է հասցվել վնասը փոքրահասակի կողմից, վնասը հասցվել է նրա հակաօրինական կամ անզգույշ գործողությունների հետևանքով, որի համար, ինչպես նշվեց վերը, պատասխանատվություն են կրում երեխայի ծնողները, և այս դեպքում ևս պատասխանատվությունն ընկնում է երեխայի ծնողների վրա, որոնք պարտավոր են հոգավ իրենց երեխայի առողջության քայքայման հետևանքով առաջացած ծախսերը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74 հոդվածը սահմանում է, որ բացառիկ հանգամանքների առկայության (ծանր հիվանդություն, երեխաների կամ անաշխատունակ չափահաս անապահով զավակների խեղում, նրանց նկատմամբ հատուկ խնամքի համար վճարելու անհրաժեշտություն և այլն) դեպքում ծնողներից

¹³² Տե՛ս Ս. Ժյոլլիո Դե Լա Մորանդյեր, նույն տեղում:

¹³³ Տե՛ս նաև Բելյակովա Ա.Մ., նշված աշխատությունը, էջ 56:

¹³⁴ Տե՛ս Ս.Ե. Դոնցով, Մ.Գ. Մարինինա, նշված աշխատությունը, նույն տեղում:

յուրաքանչյուրը կարող է դատարանի վճռով ներգրավվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսեր կրելու գործին:

Այստեղ կարևորվում է նաև այն հանգամանքը, թե ինչ միջոցներով է ինքն իրեն վնաս հասցրել անչափահասը: Եթե դա տեղի է ունեցել շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով, ապա պատասխանատվության հարցը, կարծում ենք, պետք է կիսվի ծնողների և այդ աղբյուրի տիրոջ միջև, եթե առավել վտանգի աղբյուրի տերը չապացուցի, որ այդ իրը դուրս է եկել իր տիրապետությունից այլ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով: Այս հարցը իր կարգավորումն է ստացել ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածով, որտեղ նշվում է, որ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ, որոնց թվին են դասվում տրանսպորտային միջոցները, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործումը, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրագործումը, պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրի պատճառած վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Միևնույն ժամանակ հոդվածը նշում է, որ առավել վտանգի աղբյուրի տիրոջը դատարանը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հիմքերով: Իսկ ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերն ամրագրում են, որ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից: Այնուհետև հոդվածը շարունակում է, որ տուժողի կոպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ (այստեղ, անշուշտ, օրենսդիրը նկատի ունի առավել վտանգի աղբյուրով հասցված վնասը), հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել: Միևնույն ժամանակ հոդվածը նշում է, որ քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել:

Այսպիսով, դատելով վերոշարադրյալից, կարող ենք եզրակացնել, որ այն դեպքում, երբ անչափահասը իրեն վնաս է պատճառել, նախ և առաջ պատասխանատվություն են կրում ծնողները, իսկ եթե վնասը պատճառվել է գործունեության առավել վտանգի աղբյուրով, ապա վնասի հատուցման պարտականությունը դրվում է նաև այդ աղբյուրը տիրապետողի վրա, եթե վերջինս չապացուցի, որ այն իր տիրապետությունից դուրս է եկել այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, կամ չապացուցի, որ վնասի պատճառը տուժողի դիտավորությունն է կամ անհաղթահարելի ուժը:

Ինչպես մեր օրենսդրության, այնպես էլ Ֆրանսիայի օրենսդրության մեջ տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցի պատասխանը, թե ով պետք է պատասխանատվություն կրի այն դեպքում, երբ վնասը հասցվել է կենդանու կողմից, որը եղել է երեխայի օգտագործման տակ: Ըստ մեզ, եթե կենդանին տրվել է երեխային ծնողների կողմից, կամ երեխան սկսել է հսկողություն իրականացնել կենդանու նկատմամբ ծնողների վատ հսկողության պատճառով, ապա այս դեպքում նույնպես պատասխանատու են ծնողները: Նմանատիպ տեսակետ է պաշտպանում նաև Ժյուլիո դե լա Մորանդերը¹³⁵:

Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ վերը քննարկվող դեպքերում պատասխանողի դերում կարող են հանդես գալ նաև անձինք, որոնք չեն տիրապետում գործունեության առավել վտանգի աղբյուրներին: Ուրիշի մեղքի համար նրանց վրա պատասխանատվություն դնելը արդարացված չէ: Իրավունքի նորմերը կոչված են ապահովելու քաղաքացիական իրավահարաբերությունների բոլոր մասնակիցների իրավունքներն ու հետաքրքրությունները: Վնաս պատճառողը պետք է պատասխանատվություն կրի միայն իր մեղքին համապատասխան¹³⁶:

Քաղ. օր.-ի 1067 հոդվածը նշում է, որ 14 տարեկան չդարձած անչափահասի պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա որդեգրողները: Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112 հոդվածի՝ որդեգրումը իրավաբանական այն ակտն է, որի համաձայն որդեգրողները և որդեգրվածները ձեռք են բերում

¹³⁵ Տե՛ս Ս. Жюллио Де Ла Морандьер, նույն աշխատությունը, էջ 438-439:

¹³⁶ Այս մասին տե՛ս նաև С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 78-80:

ծնողների և զավակների համար օրենքով նախատեսված իրավունքներ և պարտականություններ: Հողվածից ակնհայտորեն բխում է, որ որդեգրողները որդեգրման ակտի համաձայն երեխաների նկատմամբ իրականացնում են ծնողական ֆունկցիաներ, ուստի և նրանց վրա տարածվում են ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51 հոդվածով նախատեսված ծնողական իրավունքները և պարտականությունները, և նրանք որդեգրվածների կողմից հասցված վնասի դեպքում դառնում են պատասխանատվության սուբյեկտներ¹³⁷: Ընդ որում, այս անձինք պատասխանատվություն են կրում ոչ միայն երեխաների նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու, այլև փոքրահասակին սխալ դաստիարակելու համար¹³⁸: Պետք է նշել, որ փոքրահասակի կողմից պատճառված վնասի համար այս սուբյեկտների պատասխանատվության պայմանները նույնն են փոքրահասակի ծնողների պատասխանատվության պայմանների հետ: Այդ պատճառով հատուկ անդրադառնալ որդեգրողների քաղաքացիաիրավական պատասխանատվությանը գտնում ենք աննպատակահարմար:

- **Փոքրահասակի խնամակալները, դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ այլ մնանօրինակ հաստատությունները՝ որպես փոքրահասակի կողմից պատճառված վնասի պատասխանատվության սուբյեկտներ**

Քաղ. օր.-ի 1067 հոդվածը սահմանում է, որ 14 տարեկան չդարձած անչափահասի պատճառած վնասի համար պատասխանատվություն է կրում նրա խնամակալը:

Խնամակալություն սահմանվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար: Անչափահասների նկատմամբ խնամակալություն սահմանվում է նաև նրանց դաստիարակելու նպատակով: Խնամակալություն սահմանվում է 14 տարին չլրացած անչափահասների նկատմամբ: Ինչպես նշվում է օրենսգրքում, խնամակալները խնամարկյալների ներկայացուցիչներն են օրենքի ուժով և նրանց

¹³⁷ Տե՛ս նաև С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, նույն տեղում:

¹³⁸ Տե՛ս Гражданское право, обязательственное право, учебник, նույն տեղում:

անունից ու ի շահ նրանց կնքում են բոլոր գործարքները¹³⁹: Քաղ. օր.-ը սահմանում է, որ անչափահասների նկատմամբ խնամակալություն սահմանվում է նրանց ծնողների, որդեգրողների բացակայության, դատարանով ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու, ինչպես նաև այն դեպքերում, երբ անչափահասներն այլ պատճառով մնացել են առանց ծնողական խնամքի. մասնավորապես, երբ ծնողները խուսափում են նրանց դաստիարակությունից կամ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությունից:

Խնամակալ նշանակում է խնամակալության կարիք ունեցող անձի բնակության վայրում գտնվող խնամակալության և հոգաբարձության մարմինը մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն սահմանելու անհրաժեշտությունը: Այն անձի նկատմամբ, ով ունի խնամակալության կարիք, մինչև խնամակալության նշանակումը հսկողություն է իրականացնում խնամակալության և հոգաբարձության մարմինը: Ըստ Ս.Ե. Դոնցովի և Մ.Յա. Մարինինայի՝ փոքրահասակի կողմից պատճառված վնասի հատուցումը կարող է դրվել խնամակալի վրա միայն այն դեպքում, երբ խնամակալությունը նշանակված է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից¹⁴⁰:

Ծագում է հետևյալ հարցը. ո՞վ պետք է պատասխանատվություն կրի այն դեպքում, երբ երեխան վնաս է հասցրել՝ գտնվելով ազգականների հսկողության տակ, եթե երեխայի նկատմամբ խնամակալություն նշանակված չէ, և այդ ազգականները պաշտոնապես չեն հանդիսանում երեխայի խնամակալները, իսկ փոքրահասակի ծնողները գտնվում են հիվանդանոցում կամ այլ օբյեկտիվ հանգամանքների առկայության պատճառով չեն կարող տվյալ պահին հսկողություն իրականացնել երեխայի գործողությունների նկատմամբ:

Կարծում ենք, որ այս դեպքում այդ ազգականներին պետք է դիտել որպես բանավոր գործարքի, այսինքն պայմանագրի հիման վրա կամ լիազորությունների փոխանցմամբ անչափահասի նկատմամբ հսկողություն իրականացնող անձինք և դիտել որպես պատասխանատվության սուբյեկտներ՝ համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1067 հոդ-

¹³⁹ Տե՛ս ԶԶ Քաղ. օր. հոդվածներ 33, 34:

¹⁴⁰Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 80:

վածի 3-րդ և 3¹-րդ մասերի, այն է՝ «3. Եթե փոքրահասակը վնաս է պատճառել այն ժամանակ, երբ նա գտնվել է կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության հսկողության ներքո, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ կամ պայմանագրի հիման վրա փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի հսկողության ներքո, այդ հաստատությունը կամ անձը պատասխանատվություն է կրում փոքրահասակի պատճառած վնասի համար, եթե չի ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել, և եթե այլ բան նախատեսված չէ փոքրահասակի ծնողների, որդեգրողների կամ խնամակալի և կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության միջև կնքված պայմանագրով:

3¹. Այն անձը, որն օժտված չէ ծնողական իրավագործությամբ, որին, սակայն, լիազորությունների փոխանցմամբ կամ որևէ այլ ճանապարհով վստահվել է անչափահասի նկատմամբ խնամքի, հսկողության կամ դաստիարակության իրականացումը, պարտավոր է հատուցել անչափահասի գործողությունների հետևանքով պատճառված վնասը, եթե այլ բան նախատեսված չէ լիազորողի կամ վստահողի և անչափահասի նկատմամբ խնամք, հսկողություն կամ դաստիարակություն իրականացնողի միջև կնքված պայմանագրով»:

Այստեղ անհասկանալի է, թե ինչու է Օրենսգիրքը ծնողների, որդեգրողների, խնամակալների, կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատությունների համար պատասխանատվությունից ազատման պայման նախատեսել փոքրահասակի մեղքի բացակայությունը, իսկ փոքրահասակի նկատմամբ լիազորությունների փոխանցմամբ հսկողություն իրականացնող անձի համար՝ ոչ: Կարծում ենք, սա ևս օրենքի բաց է և շտկման կարիք ունի: Ճիշտ է, այս անձինք կազատվեն վնասի հատուցման պարտականությունից, եթե նման պայման նախատեսված լինի փոքրահասակի ծնողների հետ կնքված պայմանագրով, սակայն անհնար է պատկերացնել, որ, ասենք, խանութ գնալու համար փոքրահասակին տատիկի կամ հարևանի ժամանակավոր խնամքին հանձնելիս ծնողը այդ անձանց հետ պայմանագիր կնքի:

Կարծում ենք, որ երեխայի ազգականներին միանշանակորեն պատասխանատվության սուբյեկտ դիտելը չի բխում արդարության

և օրինականության սկզբունքներից: Քննարկվող խնդրին ճիշտ լուծում տալու համար պրակտիկայում ցանկացած նմանատիպ հարց քննելիս անհրաժեշտ է նախ և առաջ ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքներին.

1. արդյոք փոքրահասակի կողմից վնաս պատճառելը եղել է ազգականի կողմից վատ հսկողության հետևանք,

2. արդյոք վնասը պատճառվել է ծնողների կողմից փոքրահասակին վատ դաստիարակելու հետևանքով:

Այս հանգամանքներից յուրաքանչյուրը հաշվի առնելով՝ պետք է որոշել, թե ում վրա պետք է դրվի պատասխանատվությունը՝ փոքրահասակի նկատմամբ վատ հսկողություն իրականացնող ազգականի⁶, թե⁷ փոքրահասակին սխալ դաստիարակած ծնողի:

Միևնույն ժամանակ բաց է նաև այն հարցի պատասխանը, թե ով պետք է պատասխան տա այն դեպքում, երբ փոքրահասակը վնաս է հասցրել այն ժամանակ, երբ գտնվել է խնամակալության և հոգաբարձության մարմնի հսկողության տակ, սակայն մինչ այդ նրա նկատմամբ պատշաճ ձևով նշանակված չի եղել խնամակալություն: Մեր կարծիքով, այս դեպքում էլ պատասխանատվության սուբյեկտ պետք է դիտել խնամակալության և հոգաբարձության մարմնին, քանի որ, համաձայնվելով հսկողություն իրականացնել փոքրահասակի նկատմամբ, ըստ էության, այս մարմինները կամ անձինք ստանձնել են պատասխանատվություն երեխայի կողմից պատճառված վնասի համար:

Կարևորելով այն հանգամանքը, որ խնամակալները պատասխանատվություն են կրում անչափահասների կողմից պատճառված վնասի հատուցման համար, օրենքը սահմանել է, որ խնամակալներ նշանակվում են չափահաս գործունակ քաղաքացիները, ինչպես նաև նշվում է, որ խնամակալներ չեն կարող նշանակվել քրոնիկ ալկոհոլախտությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ հիվանդ անձինք, կյանքի և առողջության նկատմամբ դիտավորյալ հանցագործություններ կատարած անձինք, խնամակալների (հոգաբարձուների) պարտականություններից հեռացված անձինք, ծնողական իրավունքներից զրկված անձինք, ծնողական սահմանափակ իրավունքներով անձինք, նախկին որդեգրողները, եթե որդեգրումը վերացվել է նրանց մեղքով, ինչպես նաև այն անձինք, ովքեր առողջական վիճա-

կով չեն կարող իրականացնել երեխայի դաստիարակության պարտականությունը¹⁴¹, ուստի և այժմ չեն կարող բնականոն ազդեցություն ունենալ փոքրահասակի վրա:

Խնամակալը պարտավոր է փոքրահասակի հետ բնակվել համատեղ՝ անչափահասին անընդհատ հսկողության տակ պահելու և ճիշտ դաստիարակելու նապատակով: Ինչպես նշված է Քաղ. օր.-ի 38 հոդվածի երրորդ մասում՝ խնամակալները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը:

Այն դեպքում, երբ փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականությունն անցնում է դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ այլ նմանօրինակ հաստատություններին, որոնք օրենքի ուժով հանդիսանում են նրա խնամակալը, վերջիններս պարտավոր են հատուցել փոքրահասակի պատճառած վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը հաստատության մեղքով չի պատճառվել¹⁴²:

Քաղ. օր.-ի 1067 հոդվածի երրորդ մասը սահմանում է, որ եթե փոքրահասակը վնաս է պատճառել այն ժամանակ, երբ գտնվել է կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության հսկողության ներքո, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ կամ պայմանագրի հիման վրա փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի հսկողության ներքո, ապա այդ հաստատությունը կամ անձը պատասխանատվություն են կրում փոքրահասակի պատճառած վնասի համար, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:

Կցանկանայինք ավելի մեծ ուշադրություն դարձնել «պայմանագրի հիման վրա փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձ» հասկացության վրա: Ինչպես նշվեց վերը, պայմանագրի հիման վրա փոքրահասակի նկատմամբ հսկողություն կարող են իրականացնել նրա ազգականները, փոքրահասակների խնամքով զբաղվելու մեջ մասնագիտացած մարդիկ կամ հաստատությունները, որոնք երեխայի ծնողների հետ կնքած պայմանագրի հիման

¹⁴¹ ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 135:

¹⁴² Տե՛ս ՀՀ Քաղ. օր., հոդված, 1067 կետ 2:

վրա հսկողություն են իրականացնում տասնչորս տարին չլրացած անչափահասի նկատմամբ, զբաղվում են նրա դաստիարակությամբ: Ծիշտ հասկանալու և գնահատելու համար հողվածով տրված «պայմանագիր» հասկացությունը և դրանից ծագող իրավական հետևանքները՝ կցանկանալինք անդրադառնալ ՀՀ Քաղ. օր.-ի գլուխ 28-ին, որտեղ սահմանված են «պայմանագրի» հասկացությունը և պայմանները: Համաձայն օրենսգրքի 436 հոդվածի՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն: Պայմանագիրը կարող է կնքվել և՛ գրավոր, և՛ բանավոր: Ընդ որում, ինչպես նշում է օրենսգիրքը, պայմանագիրը համարվում է բանավոր կնքված մաս այն դեպքում, երբ անձի վարքից ակնհայտ է գործարք կնքելու նրա կամքը: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ պայմանագիրը գործում է այն ընթացքում, երբ ծնողները որոշ ժամանակով հանձնում են իրենց երեխային մեկ այլ անձի հսկողությանը, որը փաստորեն դառնում է փոքրահասակի ժամանակավոր խնամակալը մինչև փոքրահասակին ծնողներին վերադարձնելը: Սրանից հետևում է, որ այդ անձը բանավոր պայմանագրի հիման վրա իրականացնում է հսկողություն 14 տարին չլրացած անչափահասի նկատմամբ, ուստի և պատասխանատու է իր հսկողության ժամանակ անչափահասի կողմից հասցված վնասի համար: Միջազգային պրակտիկայում մեծ տեղ է հատկացվում պայմանագրով երեխաների նկատմամբ հսկողություն իրականացնող դայակների ինստիտուտին, որոնք (դայակները), փաստորեն, պատասխանատու են փոքրահասակի գործողությունների համար և կրում են դրանց հետևանքով առաջացող վնասի փոխհատուցման պարտականությունը¹⁴³: Հենց այս հարաբերությունների կարգավորմանն է ուղղված ՀՀ Քաղ. օր.-ի վերոնշյալ հոդվածը:

Հնարավոր են դեպքեր, երբ փոքրահասակի կողմից վնաս պատճառելը ինչպես ծնողների, այնպես էլ դաստիարակչական կամ այլ հաստատության կողմից իրականացվող վատ հսկողության հետևանք է: Այս դեպքում, համաձայն ենք Ս. Ե. Դոնցովի և Մ.Յա.

¹⁴³ Стен Эмиль Абашин, նշված աշխատությունը, նույն տեղում:

Մարինինայի հետ, վնասը պետք է հատուցվի և՛ ծնողների, և՛ դաստիարակչական հիմնարկի կողմից բաժնային պատասխանատվությամբ¹⁴⁴, իսկ Ա.Ի. Չագորուկոն գտնում է, որ տվյալ դեպքում պետք է լինի համապարտ պատասխանատվություն¹⁴⁵: Բացի այդ՝ հնարավոր են դեպքեր, որ վնասը պատճառվի միաժամանակ մի քանի անչափահասի կողմից: Այս դեպքում նույնպես համաձայն ենք, որ վնասը պետք է հատուցվի բաժնային պատասխանատվությամբ¹⁴⁶: Այստեղ ուշադրություն պետք է դարձվի այն հանգամանքի վրա, թե ում հսկողության տակ են գտնվել անչափահասները վնասի պատճառման պահին:

Ինչպես նշում են հեղինակները, այս դեպքում չի կարող կիրառվել համապարտ պատասխանատվություն, քանի որ վնաս պատճառող փոքրահասակները իրենք պատասխանատվության չեն ենթարկվում¹⁴⁷: Նույն կարծիքն է հայտնում նաև Ա.Ս. Բեյակովան¹⁴⁸: Իսկ Ա.Ի. Չագորուկոն նշում է, որ համապարտության ժամանակ առկա է և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պահ (նախնական պայմանավորվածություն), ուստի խոսել փոքրահասակների կողմից համատեղ վնասի հասցման դեպքում այդ պահերի համակցության մասին ճիշտ չէ: Իսկ նրանք, ովքեր պետք է պատասխանատվություն կրեն, իրենք վնասի պատճառմանը չեն մասնակցել¹⁴⁹: Ամեն դեպքում պատասխանատվության չափը որոշելիս պետք է հաշվի առնել յուրաքանչյուր կողմի մեղքի չափը, ինչպես նաև հասցված վնասի առանձնահատկությունները:

1067 հոդվածում թվարկված անձինք պատասխանատվություն են կրում այնպիսի գործողությունների համար, որոնցով անմիջականորեն այլ անձանց վնաս չի պատճառվում, բայց որոնք (այսինքն այդ գործողությունները) պատճառ են հանդիսանում, որ թվարկված անձանց հսկողության տակ գտնվող երեխաների կողմից վնաս հասցվի այլոց: Հետևաբար, վերոնշյալ բոլոր իրավաբանական և ֆի-

¹⁴⁴ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 81:

¹⁴⁵ Տե՛ս А. И. Загорулько, նշված աշխատությունը, էջ 48:

¹⁴⁶ Այս մասին տե՛ս նաև А. И. Загорулько, նշված աշխատությունը, նույն տեղում, С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, նույն տեղում:

¹⁴⁷ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, նույն տեղում:

¹⁴⁸ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 57:

¹⁴⁹ Տե՛ս А. И. Загорулько, նշված աշխատությունը, էջ 48-49:

զիկական անձանց գործողությունները, որոնց հետևանքով նրանց հսկողության տակ գտնվողները վնաս են հասցրել, պետք է լինեն հակաիրավական, որը պետք է դրսևորվի հետևյալում. որպեսզի հակաօրինական ճանաչվեն 1067 հողվածում նշված անձանց գործողությունները, անհրաժեշտ է միայն, որ նրանց կողմից խախտվեն օբյեկտիվ իրավունքի նորմերը՝ ծնողների և խնամակալների կողմից՝ ընտանեկան օրենսդրությունը, դաստիարակչական կամ այլ հաստատության կողմից՝ իրենց կանոնադրությունները, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք կարգավորում են վերջիններիս գործունեությունը¹⁵⁰, պայմանագրով փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի կողմից՝ պայմանագրով ստանձնած իր պարտականությունները և այլն:

Համաձայն ենք այն տեսակետի հետ, որ վերոնշյալ անձինք, որոնք պատասխանատու են փոքրահասակների հասցրած վնասի համար, պետք է ոչ միայն կատարեն իրենց պարտականությունները, այլև իրականացնեն իրենց տրված իրավունքները¹⁵¹: Բայց այս դեպքում պետք է պարզել, թե որն է այս անձանց պարտականությունների տիրույթը, պարտականություններ, որոնց անպարտաճանաչ կատարումը հանգեցնում է պատասխանատվության: Քաղ. օր.-ը ծնողների, որդեգրողների և խնամակալների պարտականությունների մասին ոչինչ չի ասում. այս անձանց պարտականությունները և իրավունքները հստակորեն սահմանված են Ընտանեկան օրենսգրքում: Ինչ վերաբերում է կրթական, բուժական կամ այլ հաստատություններին, օրենքը սահմանում է միայն, որ վերջիններս պարտավոր են հսկողություն իրականացնել փոքրահասակի նկատմամբ: Ենթադրվում է, որ այդ մարմինների հսկողությունը մինչև 14 տարեկանի նկատմամբ կարող է իրականացվել միայն այն ժամանակ, երբ փոքրահասակը գտնվում է այդ հիմնարկներից մեկում: Ուստի պետք է նկատի ունենալ, որ ծնողները, որդեգրողները կամ խնամակալները պատասխանատվություն են կրում այն դեպքում, եթե փոքրահասակի կողմից պատճառած վնասը նրա նկատմամբ վերջիններիս կողմից վատ հսկողության, ոչ ճիշտ դաստիարակության հետևանք է: Իսկ կրթական, դաստիարակչական կամ մմանատիպ այլ հաստա-

¹⁵⁰ Տե՛ս նաև Ա. Մ. Загорянько, նշված աշխատությունը, էջ 44:

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում:

տությունները պատասխանատվություն են կրում, եթե վնասը առաջացել է փոքրահասակի նկատմամբ այդ հաստատություններում գտնվելու ժամանակ վատ հսկողության հետևանքով: Գտնում ենք, որ այս մարմինները պետք է պատասխանատվություն կրեն ոչ միայն փոքրահասակին վատ հսկելու, այլև վատ դաստիարակելու համար, քանի որ այդ մարմինների անվանումը ինքնին ենթադրում է երեխային դաստիարակելու նրանց պարտականությունը:

Սակայն պետք է ընդունել, որ «հսկողություն» հասկացությունը, որը օգտագործվում է վերոնշյալ հաստատությունների և փոքրահասակների միջև հարաբերություններում, չի արտահայտում այդ հարաբերությունների ողջ էությունը: Հսկողություն պարտավոր են իրականացնել նաև ծնողները և խնամակալները: Նույնիսկ երեխայից առանձին ապրող ծնողների՝ հսկողություն իրականացնելու անկարողությունը չի ազատում նրանց երեխայի կողմից պատճառված վնասի հատուցումից: Բացի այդ՝ հսկողություն չի նշանակում սուկ հետևել երեխայի գործողություններին. հսկել նշանակում է ճիշտ, բարոյական ազդեցություն ունենալ երեխայի վրա: Սա նշանակում է, որ Քաղ. օր.-ի 1067 հոդվածում թվարկված անձինք սուկ հսկողություն չեն իրականացնում փոքրահասակի նկատմամբ, այլ նաև դաստիարակում են նրան, ազդում են նրա վրա բարոյապես և հոգեպես: Իրավացի են այն հեղինակները, որոնք գտնում են, որ փոքրահասակի կողմից վնաս պատճառելը ոչ միայն նրա նկատմամբ իրականացվող վատ հսկողության, այլև նախ և առաջ՝ վատ դաստիարակության հետևանք է:

Ճիշտ չէ մտածել, որ եթե 14 տարին չլրացած անչափահասները անգործունակ են, ապա նրանց վնասակար գործողությունները հակաիրավական չեն: Որպեսզի 1067 հոդվածում նշված անձինք դառնան փոքրահասակի կողմից պատճառված վնասի պատասխանատվության սուբյեկտ, անհրաժեշտ է նաև փոքրահասակի հսկաօրինական գործողությունը: Փոքրահասակները կարող են վնաս հասցնել՝ չիմանալով, չգիտակցելով իրենց գործողությունների վատ և վնասակար բնույթը, ինչպես նաև չկարողանալով կանխորոշել այդ գործողությունների հետևանքները: Փոքրահասակի գործողությունները որպես հակաիրավական բնորոշելու համար պետք է պարզել ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ իրավունքի նորմերի խախտում-

ներք: Միայն այս դեպքում է հնարավոր խոսել փոքրահասակների հակաօրինական արարքների, դրանց հետևանքների և այդ հետևանքներից ծագող պատասխանատվության մասին: Միայն այս դեպքում վերոհիշյալ սուբյեկտները կկրեն պատասխանատվություն փոքրահասակի հասցրած վնասի համար: Բայց և այնպես համաձայն ենք, որ վերոնշյալ հարաբերություններում մեղքի հիմնական բաժինը ընկնում է ծնողների, որդեգրողների, խնամակալների, դաստիարակչական, կրթական, բուժական կամ այլ հաստատությունների վրա¹⁵²: Այդ անձանց մոտ պատասխանատվություն չի ծագի նաև այն դեպքում, երբ չնայած նրանք բացթողումներ ունեն փոքրահասակի նկատմամբ ունեցած իրենց պարտականությունների մեջ, սակայն փոքրահասակի գործողությունները իրավաչափ են եղել, օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմաններում:

Քաղ. օր.-ի 1067 հոդվածը նշում է, որ ծնողները, որդեգրողները, խնամակալները, կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատությունները չեն դադարում փոքրահասակի հասցրած վնասի համար պատասխանատվության սուբյեկտ լինելուց նաև այն դեպքում, երբ փոքրահասակը հասել է չափահաս տարիքի, կամ նա իր կողմից պատճառած վնասը հատուցելու համար բավարար գույք է ստացել: Փոքրահասակը չի հանդիսանա իր կողմից պատճառած վնասի պատասխանատվության սուբյեկտ նույնիսկ այն դեպքում, երբ նա դարձել է 14 տարեկան, և մահացել են նրա ծնողները: Սա բացատրվում է նրանով, որ վնասի պատճառման պահին փոքրահասակը չի եղել իրավաբանական մեղքի կրող, իսկ նրա ծնողները պատասխանատվության սուբյեկտ են հանդիսացել իրենց մեղքի համար¹⁵³: Այս կարգից Քաղ. օր.-ը նախատեսում է միայն մեկ բացառություն, այն է. եթե ծնողները, խնամակալը կամ 1067 հոդվածի 3-րդ մասում նշված այլ քաղաքացիները մահացել են կամ բավարար միջոցներ չունեն պատճառված վնասը հատուցելու համար, իսկ վնաս պատճառողը, դառնալով լրիվ գործունակ, ունի այդպիսի միջոցներ, դատարանը, հաշվի առնելով տուժողի և վնաս պատճառողի գույքաչին դրությունը, ինպես նաև այլ հանգամանքներ, իրավունք ունի

¹⁵² Տե՛ս Ա. Ի. Загоруйко, նշված աշխատությունը, էջ 45:

¹⁵³ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 56:

վճիռ կայացնել վնասի հատուցումը լրիվ կամ մասնակիորեն վնաս պատճառողի վրա դնելու մասին:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ պետք չէ հնարավորություն տալ վերոնշյալ սուբյեկտներին փոքրահասակի չափահաս դառնալուց հետո ռեգրեսիվ հայցով հանդես գալու¹⁵⁴: Սա բացատրվում է նրանով, որ այդ սուբյեկտները նախ և առաջ պատասխանատվություն են կրում իրենց մեղքի համար, ուստի և փոքրահասակի չափահաս դառնալը չի ազատում նրանց պատասխանատվությունից: Իսկ ինչ վերաբերում է ռեգրեսիվ հայցին, ապա այդ հարցը իր կարգավորումն է ստացել ՀՀ Քաղ. օր.-ի 1074 հոդվածի 4 մասում, որտեղ նշված է, որ օրենսգրքի 1067-1069 հոդվածներում նշված հիմունքներով վնասը հատուցած անձինք հետադարձ պահանջի իրավունք չունեն վնաս պատճառած անձից:

§4.2. Տասնչորսից տասնութ տարեկան անչափահասի կողմից պատճառված վնասի հատուցումը

Անձի կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև գույքին պատճառած վնասի համար պատասխանատվության այլ կարգ է սահմանված 14 - 18 տարեկան անձանց համար: Համաձայն Քաղ. օր.-ի 1068 հոդվածի՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար: Իրավաբանական գրականության մեջ սա բացատրվում է նրանով, որ այս անչափահասները ղեկիկտային հարաբերություններում համարվում են լրիվ գործունակ, ուստի և պատասխանատվություն են կրում իրենց արարքների համար¹⁵⁵: Այստեղ թերևս կարելի է չհամաձայնվել գրականության մեջ արտահայտված այս տեսակետին, քանի որ, մեր կարծիքով, եթե օրենսդիրը նման բան սահմաներ, ապա քաղ. օրում անչափահասի ծնողների սուբսիդիար պատասխանատվության մասին խոսք չէր լինի, քանի որ օրենսդիրը չի բացառում այն հանգա-

¹⁵⁴ Տե՛ս նաև Ա. Ի. Загорюлько, նշված աշխատությունը, էջ 49:

¹⁵⁵ Տե՛ս Ա. Ի. Загорюлько, նշված աշխատությունը, էջ 49, С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 82:

մանքը, որ այս անչափահասները սովորաբար չեն ունենում ինքնուրույն գույք և եկամուտ, բացի այդ, համաձայն Քաղ. օր. 24 հոդվածի առաջին մասի, լրիվ գործունակությունը քաղաքացու մոտ ծագում է՝ 18 տարեկան դառնալով, ուստի և օրենսգիրքը սահմանում է, որ այն դեպքում, երբ տասնչորսից տասնութ տարեկան անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք, վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել: Փաստորեն օրենսդիրը այս դեպքում ևս վնաս պատճառելու պատասխանատվության սուբյեկտ է դարձնում ծնողներին, որդեգրողներին և հոգաբարձուներին, սակայն արդեն որոշ սահմանափակումներով: Ա. Մ. Բելյակովան գտնում է, որ 15 - 18 տարեկան անչափահասների ծնողները պատասխանատվություն պետք է կրեն իրենց երեխաների կողմից հասցված վնասի համար՝ անկախ այն հանգամանքից՝ բնակվո՞ւմ են նրանք երեխաների հետ, թե՞ ոչ¹⁵⁶: Միևնույն ժամանակ օրենսգիրքը 1068 հոդվածի 3 մասով սահմանում է, որ եթե հոգաբարձության կարիք ունեցող տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը գտնվում է համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ այլ նմանօրինակ հաստատությունում, որն օրենքի ուժով նրա հոգաբարձուն է, այդ հաստատությունը պարտավոր է հատուցել նրա հասցրած վնասը լրիվ կամ չբավարարող մասով, եթե չի ապացուցում, որ վնասն իր մեղքով չի առաջացել: Հոդվածում նշված է, որ վերոնշյալ սուբյեկտները պատասխանատվություն են կրում անչափահաս երեխաների կողմից պատճառված վնասի համար միայն մեղքի առկայության դեպքում, սակայն ըստ էության բացահայտված չէ, թե որն է նրանց մեղավորությունը: Ուկրաինայի Գերագույն դատարանի պլենումի 27 մարտի 1992թ. «Գատարանների կողմից վնասի հատուցման քաղաքացիական գործերի քննության պրակտիկայի մասին» որոշման 6-րդ կետում ասվում է. «15 - 18 տարեկան անչափահասների կողմից հասցված վնասի հատուցման պարտականությունը դրվում է ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների վրա այն դեպքում, երբ

¹⁵⁶ Стен Белякова А.М., Имущественная ответственность за причинение вреда., М., 1979г., էջ 55:

նրանց մեղավոր գործունեությունը հասցված վնասի պատճառ կհանդիսանա»¹⁵⁷: Կարծում ենք՝ այս մեկնաբանությունը կարող է կիրառելի լինել նաև ՀՀ Քաղ. օր.-ի վերաբերյալ: Է. Աբաշինը հատուկ շեշտում է, և կարծում ենք, պետք է համաձայնվել նրա հետ, որ քննարկվող սուբյեկտների մոտ մեղքի առկայությունը պետք է հաստատվի միայն դատական կարգով¹⁵⁸:

Այսպիսով, Քաղ. օր. 1068 հոդվածից բխում է, որ ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուները պատասխանատվություն են կրում տասնչորսից տասնութ տարեկան անչափահասի կողմից պատճառված վնասի համար, եթե.

1. անչափահասը չունի բավարար միջոցներ իր կողմից հասցված վնասի փոխհատուցման համար,
2. անչափահասը մեղավոր է,
3. ծնողները կամ հոգաբարձուները իրենք են մեղավոր անչափահասի սխալ դաստիարակության և հսկողության մեջ:

Ընդ որում, հարկ ենք համարում նշել, որ թվարկված սուբյեկտների պատասխանատվության համար պարտադիր է նշված երեք պայմանների համատեղ առկայությունը:

Կարևոր է շեշտել նաև, որ այս դեպքում ծնողների մոտ առաջանում է սուբսիդիար պատասխանատվություն¹⁵⁹, որի դեպքում հարց է առաջանում, թե վնասի որ մասը պետք է հատուցեն ծնողները կամ հոգաբարձուները: Օրենսդիրը սահմանում է, որ վերոնշյալ սուբյեկտները վնասը պետք է հատուցեն լրիվ կամ պակասող մասով, եթե անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ գույք: Ստացվում է, որ վնասի հատուցումը կարող է իրականացվել՝ վնասի փոխհատուցում գանձելով ինչպես ծնողներից, այնպես էլ երեխաներից, և երեխաներից վնասի փոխհատուցում բռնագանձելը չի բացառում վնասի դիմաց ծնողներից ևս հատուցում ստանալը: Հոդվածից բխում է նաև, որ եթե անչափահասը չի կարող լրիվ փոխհատուցել իր կողմից հասցված վնասը, ապա այդ վնասը լրիվ կարող է հատուցվել ծնողների կողմից: Այս մոտեցումը, թերևս,

¹⁵⁷ Տե՛ս Ուկրաինայի օրենսդրության և իրավական պրակտիկայի Բյուլետեն, 1995թ., N1, էջ 113:

¹⁵⁸ Տե՛ս Զ. Абашин, նշված աշխատությունը, էջ 30:

¹⁵⁹ Տե՛ս Զ. Абашин, նշված աշխատությունը, էջ 29:

սխալ է, քանի որ անչափահասի կողմից վնասի լրիվ հատուցման անկարողությունը չի նշանակում, որ անչափահասը պետք է ամբողջովին ազատվի պատասխանատվությունից. չէ՞ որ վնասի լրիվ փոխհատուցման մեջ մտնում է վնասի 100% հատուցումը, իսկ ոչ լրիվի մեջ կարող է մտնել նույնիսկ 98%-ը: Ուստի գտնում ենք, որ օրենսգրքում պետք է հստակեցվի, որ ծնողները, որդեգրողները կամ խնամակալները պետք է լրիվ հատուցեն անչափահասի կողմից հասցված վնասը միայն այն դեպքում, երբ անչափահասը չունի ոչ մի եկամտոտի աղբյուր կամ գույք, իսկ այդպիսինի առկայության դեպքում նախ և առաջ վնասի հատուցումը պետք է դրվի տասնչորսից տասնութ տարեկան անչափահասի, ապա մնացած մասը նոր՝ նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի վրա¹⁶⁰:

Բացի այդ՝ անհրաժեշտ է հստակեցնել նաև սուբսիդիար պատասխանատվության հիմքերը: Համարվում է, որ ծնողների, որդեգրողների, հոգաբարձուների և վերոնշյալ հաստատությունների սուբսիդիար պատասխանատվության առաջնային հիմքը մեղքն է, որը արտահայտվում է ըստ այնմ, որ այդ սուբյեկտները պատշաճ կերպով չեն իրականացնում իրենց խնամակալության տակ գտնվող անչափահասների դաստիարակությունը, անփութորեն են հսկում անչափահասների գործողությունները: Սակայն եթե նրանք կարողանան ապացուցել, որ վնասի պատճառման մեջ բացակայում է իրենց մեղքը, ապա կազատվեն պատասխանատվությունից: Ընդունելի ենք համարում այն տեսակետը, որ կոնկրետ վնասի դեպքում ծնողների մեղքը և երեխաների մեղքը տարբեր հակաիրավական արարքներ են, որոնցում ծնողների իրավախախտումները անմիջական պատճառական կապի մեջ չեն գտնվում վնասի հետ¹⁶¹: Հասցված վնասը անչափահասի մեղավոր գործողությունների հետևանք է, որոնք արդյունք են ծնողների կամ այլ սուբյեկտների կողմից սխալ հսկողության և դաստիարակության: Այս առումով էլ հենց ծնողների կողմից երեխայի դաստիարակության նկատմամբ ցուցաբերված անգործու-

¹⁶⁰ Առաջարկում ենք ԳՂ Քաղ. օր.-ի 1068 հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. *«Այն դեպքում, երբ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամտունեք կամ այլ գույք, վնասը պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել»:*

¹⁶¹ Տե՛ս Ա. Մ. Յարոպնիկո, նշված աշխատությունը, էջ 53:

թյունն էլ հանդիսանում է իրավախախտում: Այս իրավախախտումը պատճառ է հանդիսանում անչափահասի կողմից կատարվող իրավախախտման, որի դեպքում էլ կարելի է խոսել ծնողների, որդեգրողների և հոգաբարձուների սուբսիդիար պատասխանատվության մասին:

Ծնողների, որդեգրողների, հոգաբարձուների, ինչպես նաև օրենսգրքով սահմանված հաստատությունների պատասխանատվությունը իրենց խնամքի տակ գտնվող անչափահասների գործողությունների համար կարելի է բացատրել նրանով, որ դեռևս լրիվ չափահաս չդարձած անձինք ընդունակ չեն ճիշտ գնահատել իրենց արարքները, ճիշտ ըմբռնել համամարդկային արժեքները, նրանք չունեն բավարար կյանքի փորձ, անչափահասի գիտակցությունը և կամքը դեռևս լիովին ձևավորված չեն, անչափահասները գտնվում են ինքնահաստատման փուլում, որը կարող է նրանց տողորել սխալ սոցիալական արժեքներով: Ուստի նրանք կարիք են զգում ծնողների անընդհատ հսկողության, ճիշտ դաստիարակության, որի բացակայությունը հենց պատճառ է հանդիսանում անչափահասի կողմից հակաօրինական արարքի:

Խոսելով վերոնշյալ սուբյեկտների՝ անչափահասների կողմից պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների մասին և կարևորելով մեղքի բացահայտման անհրաժեշտությունը տվյալ խնդրի արդյունավետ լուծման համար՝ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ Քաղ. օր. 1068 և 1067 հոդվածներում բացահայտված չէ, թե ինչպես պետք է արտահայտվի թվարկված անձանց մեղավորությունը: Ուկրաինայի Գերագույն դատարանի պլենումի 27 մարտի 1992թ. «Դատարանների կողմից վնասի հատուցման քաղաքացիական գործերի քննության պրակտիկայի մասին» Որոշման 6-րդ կետում ասվում է. «15 - 18 տարեկան անչափահասների կողմից հասցված վնասի հատուցման պարտականությունը դրվում է ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների վրա այն դեպքում, երբ նրանց մեղավոր գործունեությունը պատճառ կհանդիսանա վնասի առաջացման»¹⁶²: Կարծում ենք, այս մեկնաբանությունը կիրառելի է նաև ՀՀ Քաղ. օր.-ի վերաբերյալ: Մակայն սրա հետ մեկտեղ գտնում

¹⁶² Տե՛ս Ուկրաինայի օրենսդրության և իրավական պրակտիկայի Բյուլետեն, 1995թ., N1, էջ 113:

ենք, որ այս մեկնաբանության մեջ նույնպես հստակ չի նշվում, թե ինչպես պետք է արտահայտվի այդ մեղավորությունը: Երբ խոսքը փոքրահասակների կողմից հասցված վնասի մասին է, ապա մենք նշեցինք, որ քննարկվող սուբյեկտների մեղավորությունն այն է, որ վերջիններս անփույթ և անպարտաճանաչորեն են կատարել փոքրահասակին հսկելու, դաստիարակելու, խնամելու իրենց պարտականությունը, որը հենց ենթադրում է այդ սուբյեկտների մոտ հանցավոր անփութություն իրենց պարտականությունների նկատմամբ: Սակայն կարծում ենք, որ նույնը չենք կարող ասել այն դեպքերի մասին, երբ խոսքը վերաբերում է անչափահասներին: Միայն այն հանգամանքը, որ օրենսգիրքը այս սուբյեկտներին դիտում է որպես ինքնուրույն պատասխանատվություն կրող սուբյեկտներ, արդեն իսկ ենթադրում է, որ այդ անձինք կազմավորված մարդիկ են՝ պատրաստ ինքնուրույն մասնակցելու քաղաքացիաիրավական շրջանառությանը (տասնվեց տարեկանից անձը ստանում է ՀՀ քաղաքացու անձնագիր): Հիմնական ուշադրությունը պետք է դարձվի համապատասխան անձանց և մարմինների կողմից վատ հսկողության և դաստիարակության վրա, որի հետևանքով էլ անչափահասը վնաս է պատճառել: Համաձայն ենք Ա.Ի. Չագորուլկոյի արտահայտած այն տեսակետի հետ, որ կոնկրետ վնասի դեպքում ծնողների մեղքը և երեխաների մեղքը տարբեր հակաիրավական արարքներ են, որոնցում ծնողների իրավախախտումները անմիջական պատճառական կապի մեջ չեն գտնվում վնասի հետ¹⁶³: Հասցված վնասը անչափահասի մեղավոր գործողությունների արդյունք է, գործողություններ, որոնք ծնողների կամ այլ սուբյեկտների կողմից սխալ հսկողության և դաստիարակության արդյունք են: Այս առումով էլ հենց ծնողների կողմից երեխայի դաստիարակությանը ցուցաբերած անգործությունն էլ հանդիսանում է իրավախախտում: Այս իրավախախտումը պատճառ է հանդիսանում անչափահասի կողմից կատարվող իրավախախտման: Այսինքն ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների հակաօրինական գործողությունների և անչափահասի իրավախախտման պատճառական կապը իրենց անչափահաս երեխաներին վատ դաստիարակելն է, որը և այդ երեխաների հակաօրինական գործո-

¹⁶³ Տե՛ս Ա. Ի. Չագորուլկո, նշված աշխատությունը, էջ 53:

ղությունների պատճառ է դառնում¹⁶⁴: Ծնողների, որդեգրողների, հոգաբարձուների, ինչպես նաև օրենսգրքով սահմանված հաստատությունների պատասխանատվությունը իրենց խնամքի տակ գտնվող անչափահասների գործողությունների համար կարելի է բացատրել նրանով, որ դեռևս լրիվ չափահաս չդարձած անձինք ընդունակ չեն ճիշտ գնահատել իրենց արարքները, ճիշտ ըմբռնել համամարդկային արժեքները, նրանք չունեն բավարար կյանքի փորձ, անչափահասի գիտակցությունը և կամքը դեռևս լրիվ ձևավորված չեն, անչափահասները գտնվում են ինքնահաստատման փուլում, որը հնարավոր է նրանց գիտակցության մեջ առաջացնի սխալ սոցիալական արժեքներ: Ուստի նրանք կարիք են զգում ծնողների անընդհատ հսկողության, ճիշտ դաստիարակության, որի բացակայությունը հենց պատճառ է հանդիսանում անչափահասի կողմից հակաօրինական արարքի¹⁶⁵:

Մ. Շիմինովան, խոսելով ԽՍՀՄ գործող կարգի մասին, նշում էր, որ դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատությունները, որտեղ կարող է գտնվել անչափահասը վնաս հասցնելու պահին, պատասխանատվություն չեն կրում այդ վնասի համար¹⁶⁶: Մ. Ե. Գոնցովը և Մ. Յա.Մարինինան, խոսելով մույն հարցի մասին և մույնպես հայտնելով այն տեսակետը, թե 15-18 տարեկան անչափահասի պատճառած վնասի համար պատասխանատվության սուբյեկտ կարող են հանդիսանալ միայն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուները, իսկ իրավաբանական անձինք՝ ոչ: Միևնույն ժամանակ նշում են, որ շատ դեպքերում օրենսդրությամբ երեխաների հսկողությունը դրվում է տարբեր հիմնարկների և հաստատությունների վրա, իսկ տասնհինգ տարին լրացած անչափահասի կողմից վնասը կարող է պատճառվել այն ժամանակ, երբ նա գտնվել է այդ հաստատություններից մեկում, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ և զբաղվել անչափահասի դաստիարակու-

¹⁶⁴ Տե՛ս Ա. Ի. Загоруйко, նշված աշխատությունը, էջ 54:

¹⁶⁵ Ужу մասին տե՛ս նաև А.М. Белякова, Гражданско-правовая ответственность за причинение вреда. М., 1986г, էջ 94-95:

¹⁶⁶ Տե՛ս Шиминова М., Возмещение вреда причиненного здоровью. М., 1972, էջ 35:

թյամբ: Ուստի և հնարավոր է այդ հաստատությունների վրա լրացուցիչ պատասխանատվություն դնելու հարցի բարձրացումը¹⁶⁷:

Չհամաձայնվելով հեղինակների, մասնավորապես Շիմինովայի, վերոնշյալ կարծիքի հետ՝ հարկ ենք համարում նշել, որ գտնում ենք համապատասխան դաստիարակչական հիմնարկներին որպես վնասի համար սուբսիդիար պատասխանատու դիտելը լրիվ արդարացված, որը բխում է ինչպես այդ հիմնարկների կողմից անչափահասի նկատմամբ վատ հսկողություն իրականացնելուց, այնպես էլ այն հանգամանքից, որ իրավաբանական անձինք, հաճախ, ունենալով ավելի ռեալ ֆինանսական միջոցներ, կարող են հեշտությամբ ու լրիվ հատուցել պատճառված վնասը, որը ավելի արդյունավետ է ինչպես վնասի հատուցման տեսանկյունից, այնպես էլ օրենքի տնտեսագիտական քննարկման տեսանկյունից*:

Համաձայն Քաղ. օր.-ի 1068 հոդվածի 4-րդ մասի, տասնչորից մինչև տասնութ տարեկան անչափահասների պատճառած վնասը հատուցելու ծնողների, որդեգրողների, հոգաբարձուների և համապատասխան հաստատության պարտականությունը դադարում է վնաս պատճառողի չափահաս տարիքի հասնելուց հետո կամ այն դեպքերում, երբ մինչև չափահաս դառնալը նա ձեռք է բերել եկամտունեք կամ այլ գույք, որը բավարար է վնասը հատուցելու համար, կամ նա գործունակություն է ձեռք բերել մինչև չափահաս տարիքի հասնելը: Անչափահասի լրիվ գործունակ դառնալուց հետո ծնողների, որդեգրողների և հոգաբարձուների պատասխանատվությունը դադարում է անկախ նրանից, թե իրավախախտողը ունի՞ բավարար գույք վնասի հետագա հատուցման համար, թե՞ ոչ¹⁶⁸:

Կարծում ենք՝ այս հանգամանքը չի բխում քաղաքացիական հասարակության շահերից, քանի որ շատ հնարավոր է, որ չափահաս դարձած անձը չունենա ինքնուրույն եկամուտ և հնարավորություն՝ փոխհատուցելու իր կողմից հասցված վնասը, իսկ ծնողներին անչափահասի չափահաս դառնալու կապակցությամբ ազատելով վնասի հատուցման պարտականությունից՝ փաստորեն օրենքի նշյալ

¹⁶⁷ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 84-85:

* Ծանոթ. օրենքի տնտեսագիտական վերլուծության խնդրին մենք ավելի մանրամասն կանդրադառնանք հետագա գլուխներում:

¹⁶⁸ Այս հարցի մասին տե՛ս նաև Белякова А.М., նույն աշխատությունը, էջ 58:

սահմանմամբ ստեղծվում է մի իրավիճակ, երբ տուժողը չի ստանում իր կրած վնասի փոխհատուցումը:

Անչափահասը լրիվ գործունակ է դառնում տասնութ տարին լրանալուն պես: Լրիվ գործունակություն մինչև տասնութ տարեկան դառնալը նա կարող է ձեռք բերել, եթե մտել է օրինական ամուսնական կապերի մեջ: Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10 հոդվածի՝ ամուսնական տարիք է սահմանվում տղամարդկանց համար 18 տարեկանը, իսկ կանանց համար՝ 17: Սա նշանակում է, որ եթե իգական սեռի անչափահասը ամուսնության մեջ է մտնում 17 տարեկանից, ապա համարվում է լրիվ գործունակ, ուստի և լրիվ պատասխանատվություն կկրի իր կողմից պատճառված վնասի համար¹⁶⁹: Բացի դրանից՝ ՀՀ Քաղ. օր.-ը սահմանում է, որ տասնվեց տարին չլրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել տասնվեց տարեկան հասակում, եթե աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Օրենսգիրքը նշում է նաև, որ անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը (էմանսիպացիա) կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ եթե նման համաձայնությունը բացակայում է, ապա՝ դատարանի վճռով: Անչափահասի՝ վերոնշյալ հիմքերով գործունակ դառնալու դեպքում ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների, մասնավորապես նրա կողմից պատճառված վնասի հետևանքով առաջացած պարտավորությունների համար: Աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ անչափահասի կողմից հասցված վնասը ենթակա է հատուցման այն աշխատավայրի ադմինիստրացիայի կողմից, որը վարձել է անչափահասին: Ադմինիստրացիան պարտավոր է հատուցել տուժողին վնասի լրիվ չափով, իսկ անչափահասը, որի մեղավոր գործողությունների հետևանքով վնաս է պատճառվել այլ անձանց, պետք է ռեգրեսի կարգով պատասխանատվություն կրի ադմինիստրացիայի առջև¹⁷⁰:

¹⁶⁹ Տե՛ս նաև ՀՀ Քաղ. օր., հոդված 24, կետ 3:

¹⁷⁰ Տե՛ս նաև Белякова А.М, նույն աշխատությունը, էջ 60:

Ինչպես նշեցինք, Քաղ. օր.-ում ամրագրված է նաև, որ անչափահասի ծնողները, որդեգրողները, հոգաբարձուները և համապատասխան հաստատությունները դադարում են անչափահասի հասցրած վնասի համար պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալուց, եթե մինչև չափահաս դառնալը անչափահասը ձեռք է բերել եկամուտներ կամ այլ գույք, որը բավարար է վնասը հատուցելու համար: Սակայն իրավաբանական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, ըստ որի անչափահասի կողմից ինքնուրույն եկամուտ կամ գույք ունենալու հանգամանքը նրա ծնողներին կամ վերոնշյալ սուբյեկտներին ամբողջովին չի ազատում տասնչորսից տասնութ տարեկան անձի հասցրած վնասի համար պատասխանատվությունից: Այդ պարտականությունը դադարում է ժամանակավորապես և նորից կծագի, եթե վնաս պատճառող անչափահասը գրկվի իր եկամուտներից կամ գույքից¹⁷¹: Այսպիսով, ելնելով տուժողի շահերից, թերևս ճիշտ կլիներ, որ քաղաքացիական օրենսգրքում ավելի հստակեցվեն ծնողների, որդեգրողների, հոգաբարձուների, համապատասխան հաստատությունների և անչափահասի պատասխանատվության սահմանները և կարգը¹⁷²:

§4.3. Անգործունակների և իրենց գործողությունների նշանակությունը գիտակցելուն անընդունակ անձանց կողմից պատճառված վնասի հատուցումը

ՀՀ Քաղ. օր.-ի 1069 հոդվածը սահմանում է, որ անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասը հատուցում է խնամակալը կամ այն կազմակերպությունը, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ, եթե չի ապացուցում, որ

¹⁷¹ Տե՛ս Белякова А.М., նույն աշխատությունը, էջ 58, ինչպես նաև А. И. Загорулько, նշված աշխատությունը, էջ 54:

¹⁷² Առաջարկում ենք ՀՀ քաղ. օր.-ի 1068 հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասը հատուցելու՝ ծնողների, որդեգրողների, հոգաբարձուի և համապատասխան հաստատության պարտականությունը ամբողջությամբ դադարում է միայն այն դեպքում, երբ անչափահասը ձեռք է բերել եկամուտներ կամ գույք, որը բավարար է վնասը հատուցելու համար»:

վնասն իր մեղքով չի պատճառվել: Համաձայն Քաղ. օր.-ի 31 հոդվածի՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել: Անգործունակ քաղաքացու նկատմամբ սահմանվում է խնամակալություն, և, փաստորեն, խնամակալն է գործարքներ կնքում անգործունակի անունից, ինչպես նաև պատասխանատվություն կրում նրա գործողությունների և այդ գործողություններով հասցված վնասի համար, եթե չի ապացուցում, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Հոդվածից բխում է նաև, որ անձին անգործունակ ճանաչելու կարևոր նախապայման է դատարանի որոշումը, առանց որի անհնար է անգործունակությունը դիտել որպես իրավական փաստ: Ուշագրավ է, որ անգործունակ անչափահասի ծնողները պատասխանատվություն չեն կրում իրենց երեխայի գործողությունների համար, եթե իրենք օրենքով նշանակված չեն վերջինիս խնամակալներ¹⁷³:

Այստեղ կցանկանայինք նշել, որ ո՛չ իրավաբանական գրականության մեջ, ո՛չ էլ օրենսգրքում հստակ սահմանված չէ, թե ով պետք է պատասխանատվություն կրի անգործունակ ճանաչված անձի կողմից այլ անձանց պատճառած վնասի համար, եթե վնաս պատճառողը դատարանի վճռով անգործունակ ճանաչված տասնչորսից տասնուոր տարեկան անչափահասն է: Կարծում ենք, որ այս դեպքում ևս պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա անգործունակի խնամակալը կամ այն կազմակերպությունը, որը պետք է հսկողություն իրականացնեի անգործունակի նկատմամբ, իսկ ծնողները կամ որդեգրողները կարող են պատասխանատվության սուբյեկտ դառնալ միայն այն դեպքում, եթե նրանք օրենքով սահմանված կարգով հանդիսանում են անգործունակի խնամակալները:

Միաժամանակ պետք է նկատել, որ անգործունակ ճանաչված անձի խնամակալի իրավունքներն ու պարտականությունները ավելի նեղ են փոքրահասակի խնամակալի իրավունքներից: Սա բացատրվում է նրանով, որ փաստորեն անգործունակ ճանաչված քաղաքացու խնամակալը չի զբաղվում վերջինիս դաստիարակությամբ, և նրա ֆունկցիան ունի զուտ հսկողական բնույթ¹⁷⁴:

¹⁷³ Տե՛ս *Белякова А.М.*, նույն աշխատությունը, էջ 85:

¹⁷⁴ Տե՛ս *Э. Абашин*, նշված աշխատությունը, էջ 30:

Քաղ. օր.-ի 1069 հոդվածը խնամակալների հետ մեկտեղ որպես անգործունակի կողմից հասցրած վնասի պատասխանատվության սուբյեկտ նշում է նաև կազմակերպություններին, որոնք պարտավոր են հսկողություն իրականացնել անգործունակի նկատմամբ: Օրենքով հստակ տրված չեն այդ կազմակերպությունների տեսակները, սակայն դրանք որոշվում են՝ ելնելով կոնկրետ դեպքից: Որպես կանոն՝ նման կազմակերպություններ են հանդիսանում բուժհիմնարկները¹⁷⁵: Հարց է առաջանում, թե ի՞նչ սկզբունքներով պետք է որոշվի՝ խնամակալ՞ է նշանակվելու անգործունակին հսկելու համար, թե՞ այդ ֆունկցիաները դրվելու են կազմակերպության վրա, ուստի և, ո՞վ պետք է պատասխանատվություն կրի անգործունակի կողմից պատճառված վնասի համար՝ խնամակալ՞ը, թե՞ կազմակերպությունը: Օրենսդիրը հստակ չի նշում նաև այն հատուկ պայմանների մասին, որոնց առկայությունը կարող է հիմք հանդիսանալ, որպեսզի անգործունակի նկատմամբ հսկողություն իրականացնող կազմակերպությունը հանդես գա որպես իր հսկողության տակ գտնվող անձի կողմից հասցված վնասի պատասխանատվության սուբյեկտ: Կարծում ենք՝ ճիշտ կլինի պատասխանատվություն սահմանել համապատասխան կազմակերպությունների համար (պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, մասնագիտացված ինտերնատներ) միայն այն դեպքում, եթե նրանք նախատեսված կարգով չեն իրականացրել իրենց վրա դրված հսկողությունը վնաս պատճառողի նկատմամբ, կամ այդպիսի հսկողություն չեն իրականացրել, չնայած պարտավոր էին և կարող էին՝ ելնելով այդ անձի առողջական վիճակից¹⁷⁶: Իսկ կոնկրետ հիմնարկի կամ անձի միջև ընտրության կատարումը անգործունակին խնամակալ նշանակելիս, գտնում ենք, պետք է կատարվի անգործունակի վերահսկելիության և հասարակության համար վտանգավորության հաշվառմամբ:

Ելնելով այն հանգամանքից, որ անգործունակը միշտ պետք է լինի համապատասխան անձի հսկողության տակ՝ կամ խնամակալ, կամ համապատասխան կազմակերպություն, այս անձանց պատասխանատվությունը չի կարող լինել ո՛չ բաժնային և ո՛չ էլ համապարտ:

¹⁷⁵ Տե՛ս Белякова А.М., նույն աշխատությունը, էջ 62:

¹⁷⁶ Տե՛ս А. И. Загоруйко, նշված աշխատությունը, էջ 60:

Խնամակալի կամ հսկողություն իրականացնելու համար պարտավոր կազմակերպության՝ անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասի հատուցման պարտականությունը չի դադարում հետագայում նրան գործունակ ճանաչելու դեպքում: Իրավագիտության մեջ սա բացատրվում է այն հանգամանքով, որ անգործունակի կողմից վնասը հասցնելը եղել է խնամակալի կամ կազմակերպության մեղքի հետևանք, ուստի և նրանք են պարտավոր հատուցել իրենց մեղքով առաջացած վնասը¹⁷⁷:

ՀՀ Քաղ. օր.-ը նախատեսում է երկու դեպք, երբ վնասի հատուցման պարտականությունը կարող է դրվել ոչ թե խնամակալի, այլ անգործունակի վրա. այն է՝ եթե խնամակալը մահացել է կամ բավարար միջոցներ չունի պատճառած վնասը հատուցելու համար, իսկ վնաս պատճառողն ունի նման միջոցներ, դատարանն իրավունք ունի տուժողի ու վնաս պատճառողի գույքային դրության և այլ հանգամանքների հաշվառմամբ վճիռ կայացնել վնասի հատուցումը լրիվ կամ մասնակիորեն վնաս պատճառողի վրա դնելու մասին¹⁷⁸: Սակայն պետք է նշել, որ այս բացառությունը տարածվում է միայն այն դեպքում, երբ վնասը պատճառվել է քաղաքացու կյանքին կամ առողջությանը:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է նաև, որ եթե գործունակ քաղաքացին, ինչպես նաև տասնչորսից տասնութ տարեկան անչափահասը, վնաս է պատճառել այնպիսի վիճակում, երբ չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, ապա պատասխանատվություն չի կրում իր պատճառած վնասի համար¹⁷⁹, սակայն նույն հոդվածի երկրորդ մասը ավելացնում է, որ եթե վնասը պատճառվել է տուժողի կյանքին կամ առողջությանը, դատարանը կարող է տուժողի ու վնաս պատճառողի գույքային դրության, ինչպես նաև այլ հանգամանքների հաշվառմամբ վնասը հատուցելու պարտականությունը լրիվ կամ մասնակիորեն դնել վնաս պատճառողի վրա¹⁸⁰: Յավոք, օրենսգիրքը չի նշում,

¹⁷⁷ Տե՛ս Гражданское право, обязательственное право, учебник, էջ 628, Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 62:

¹⁷⁸ Տե՛ս նաև Гражданское право, обязательственное право, учебник, նույն տեղում:

¹⁷⁹ Տե՛ս ՀՀ Քաղ. օր., հոդված 1071:

¹⁸⁰ Այստեղ կցանկանայինք նշել, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսդրությամբ անմեղսունակ քաղաքացին չի ազատվում

թե որն է այն վիճակը, երբ քաղաքացին չի կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, սակայն, ելնելով իրավաբանության մեջ ընդունված մարդու ֆիզիոլոգիական վիճակների դասակարգումից, կարող ենք ենթադրել, որ այդ վիճակները կարող են լինել խիստ հոգեկան հուզմունքի վիճակը կամ այլ ժամանակավոր հոգեկան խախտումներ: Ամեն դեպքում պետք է նշել, որ և՛ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների, և՛ դատարանների համար իրենց գործողությունների ընթացքում ավելի դյուրին և արդյունավետ կլինեն, եթե օրենսդիրը հստակ սահմաններ, թե ինչ է հասկանում՝ ասելով «երբ քաղաքացին չէր կարող գիտակցել իր գործողությունները կամ ղեկավարել դրանք»:

Միևնույն ժամանակ օրենսգիրքը սահմանում է, որ վնաս պատճառողը չի ազատվում պատասխանատվությունից, եթե ոգելից խմիչքներ, թմրադեղեր օգտագործելով կամ այլ եղանակով իրեն հասցրել է այնպիսի վիճակի, որում նա չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք¹⁸¹: Այս դեպքում պատասխանատվությունը պետք է ծագի այն պատճառով, որ քաղաքացին իր մեղավոր գործողությունների միջոցով իրեն հասցրել է հոգեկան խանգարման, որի հետևանքով և վնաս է հասցրել այլ անձանց: Ինչպես նշում է Է. Աբաշինը, այն հիմնավորումները, որոնցով տվյալ քաղաքացին գրկված է գործունակությունից, չեն ազդում նրա՝ վնաս հասցնելու հնարավորության վրա: Գործում է մեկ սկզբունք. կա մեղք, պետք է լինի նաև պատասխանատվություն¹⁸²: Պաթոլոգիական հարբեցողությունը հիվանդություն է, որը կարող է առաջանալ ակոհոլի անզամ նվազագույն քանակ ընդունելիս կամ նույնիսկ դեղամիջոցի ընդունման ժամանակ, որն ունի սպիրտային հիմք: Սակայն Ա. Մ. Բելյակովայի կարծիքով, պաթոլոգիկ հարբեցողության վիճակում վնաս հասցնելը չպետք է քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմք դառնա, եթե դա պատահել է ա-

պատասխանատվությունից այն դեպքում, երբ վնասը պատճառվել է անձի կյանքին կամ առողջությանը: Մեր օրենսդրությամբ վնասի հատուցման հարցը թողնված է դատարանի հայեցողությանը:

¹⁸¹ ԳՂ Զաղ. օր., 1071 հոդված, 2-րդ կետ:

¹⁸² Стен Эмиль Абашин, նշված աշխատությունը, էջ 31:

ռաջին անգամ (օրինակ՝ սպիրտայի խմիչքի օգտագործումը առաջին անգամ): Իսկ եթե անձը գիտի, որ ենթակա է պաթոլոգիկ հարբեցողության և օգտագործել է սպիրտային խմիչք, ապա պետք է պատասխանի այդ վիճակում իր հասցրած վնասի համար, քանի որ մեղավոր է ինքն իրեն այդ վիճակին հասցնելու համար¹⁸³:

Պրակտիկայում պատահում են դեպքեր, երբ ուրիշին վնաս պատճառողը հետագայում դատարանի կողմից ճանաչվում է անգործունակ, սակայն վնասը հասցրած է լինում, այսպես ասած, կեղծ գործունակության վիճակում, քանի որ անգործունակության փաստը հաստատված չի եղել դատարանի կողմից: Համաձայն Քաղ. օր.-ի 1071 հոդվածի 3-րդ մասի, եթե վնասը պատճառվել է անձի կողմից, որը հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, դատարանը կարող է վնասը հատուցելու պարտականությունը դնել այդ անձի հետ համատեղ բնակվող աշխատունակ ամուսնու, ծնողների, չափահաս երեխաների վրա, ովքեր իմացել են վնաս պատճառողի հոգեկան խանգարման մասին, սակայն չեն բարձրացրել նրան անգործունակ ճանաչելու հարցը: Այստեղ նախ և առաջ պետք է նշել մի կարևոր հանգամանք, որը բաց է թողել օրենսդիրը. ինչ սկզբունքով պետք է իմանային անգործունակի հարազատները վերջինիս անգործունակության մասին: Անձը անգործունակ է ճանաչվում դատարանի կողմից, որի վճռի համար հիմք է հանդիսանում ոչ թե անձի պահվածքը, այլ նախ և առաջ բժշկական հանձնաժողովի եզրակացությունը: Դա վկայում է այն, որ սոսկ անձի արտաքին պահվածքը չի կարող ապացուցել վերջինիս անգործունակ լինելը: Եվ սա հատկանշական է հատկապես այն դեպքում, երբ խոսում ենք անձի հարազատների մասին. ո՞ր մի հարազատը կցանկանա տեսնել իր ամուսնու, հոր, կնոջ կամ զավակի մեջ անգործունակին: Բացի այդ, ոչ բոլոր ընտանիքներում են ապրում մասնագիտությամբ հոգեբաններ կամ բժիշկներ, որոնք կկարողանան անձի պահվածքից եզրակացության հանգել նրա մտավոր ունակությունների վերաբերյալ: Սակայն չի կարելի ժխտել նաև այն հանգամանքը, որ հաճախ մարդիկ արտաքինից իրենց այնպես են պահում, որ հենց առաջին հայացքից

¹⁸³ St'u Белякова А.М., նույն աշխատությունը, էջ 64:

նույնիսկ ոչ մասնագիտական գիտելիքներով օժտված անձը կարող է նկատել, որ իր հետ բնակվողը չի կարող հաշիվ տալ իր գործողությունների համար: Ուստի գտնում ենք, որ օրենսգրքում պետք է հստակեցվի, թե ամուսնու, ծնողների կամ չափահաս երեխաների վրա կոնկրետ որ հանգամանքներում պետք է դրվի պատասխանատվություն, եթե նրանց հետ բնակվող անգործունակ անձի գործողությունների հետևանքով վնաս է պատճառվել այլ անձանց:

§4.4. Մի քանի անձանց կողմից համատեղ պատճառված վնասի հատուցումը

Ինչպես նշվեց սույն գլխի սկզբում, Քաղ. օր.-ը սահմանում է, որ ամեն դեպքում գործունակ անձն ինքն է պատասխանատու իր հակաիրավական գործողություններով հասցված վնասի համար, լինի չ՛ քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ: Ընդ որում, ըստ Քաղ. օր.-ի 1058 հոդվածի, քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Անձի կողմից վնաս հասցնելու դեպքում պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալու հարցում ուշադրության արժանի է այն հարցը, թե ո՞վ պետք է պատճառված վնասի համար պատասխանության սուբյեկտ համարվի, եթե վնասը պատճառվել է համատեղ մի քանի անձանց կողմից: Անձինք համարվում են համատեղ վնաս պատճառած, եթե վնասի և նրանցից յուրաքանչյուրի՝ առանձին վերցրած արարքի միջև կա պատճառական կապ¹⁸⁴: Գերմանիայի Քաղ. օր. 830 պարագրաֆը սահմանում է, որ եթե անձինք վնաս են պատճառել համատեղ անօրինական գործողությամբ, ապա նրանցից յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն կրի պատճառված վնասի համար: չ՛ Քաղ. օր.-ի 1073 հոդվածը սահմանում է, որ վնասը համատեղ պատճառած անձինք տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Իրավաբանական

¹⁸⁴ Տե՛ս նաև Шиминова М., Возмещение вреда причиненного здоровью. М., 1972, էջ 53:

գրականության մեջ «համապարտ» ընդունված է անվանել այն պարտավորությունը, որի մասնակիցները մի քանի անձինք են, և որտեղ մի քանի պարտապաններին պատկանում է մեկ պարտավորություն, կամ մի քանի կրեդիտորներին՝ պահանջի մեկ իրավունք¹⁸⁵: ՀՀ Քաղ. օր.-ի 360, 361, 362, 363, 364, 365 հոդվածները սահմանում են համապարտ պարտականությունների և համիրավ պահանջների առանձնահատկությունները: Մասնավորապես Քաղ. օր.-ի 362 հոդվածից բխում է, որ տուժողը իր հայեցողությամբ կարող է լրիվ կամ մասամբ վնասի հատուցման պահանջ ներկայացնել ինչպես բոլոր վնաս պատճառողներին միասին, այնպես էլ նրանցից յուրաքանչյուրին՝ առանձին: Պրակտիկայում առաջ է քաշվում այն տեսակետը, որ համապարտ պատասխանատվությունը որոշվում է երկու անհրաժեշտ պայմաններով.

1. յուրաքանչյուր վնաս պատճառողի գործողության կամ անգործության և վնասի միջև պատճառական կապի առկայությունը,

2. հասցված վնասի անբաժանելիությունը¹⁸⁶:

Փաստորեն, այստեղ պարզ երևում են համապարտ պատասխանատվության երկու հիմնական պայմանները՝ պատճառական կապը հակաիրավական գործողությունների և վնասի միջև, ինչպես նաև վնասի անբաժանելիությունը: Համաձայն ենք գրականության մեջ արտահայտված այն տեսակետի հետ, որ համապարտ պատասխանատվության դեպքում վնաս պատճառողների մեղքը հիմնականում նույնն է լինում: Սակայն չենք կարող բացառել մեղքի տարբեր դրսևվորումները: Ընդ որում, այդ մեղքը կարող է դրսևորվել ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ: Վնաս պատճառողների անզգուշությամբ դրսևորված մեղքը կարող է լինել իրենց գործողությունների և դրանց հետևանքների նկատմամբ ոչ անհրաժեշտ ուշադրության արդյունք, որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես անփութություն: Պրակտիկայում սա տեղի է ունենում, երբ վնաս է հասցվում առավել վտանգի մի քանի աղբյուրների բախմամբ կամ

¹⁸⁵ Տե՛ս ԳԳ քաղաքացիական իրավունք, առաջին մաս, երևան, 2000թ., էջ 400, ինչպես նաև С.Е. Донцов, М.Я. Маринина, Имущественная ответственность за вред причиненный личности. М., 1986г., էջ 86, Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 430-431:

¹⁸⁶ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 88:

փոխադարձ ներգործությամբ: Պետք է նշել, որ առավել վտանգի աղբյուրներով հասցված վնասի դեպքում նույնպես համապարտ պատասխանատվություն է առաջանում այդ աղբյուրները տիրապետողների համար՝ անկախ նրանց մեղքի առկայությունից¹⁸⁷: Այստեղ ավելորդ չէ նկատել, որ պետք չէ նույնացնել միատեսակ առավել վտանգի աղբյուրներով հասցված վնասի դեպքում առաջացող համապարտ (օր՝ ավտոմեքենաներ) և տարբեր առավել վտանգի աղբյուրներով հասցված վնասի դեպքում ծագող պատասխանատվությունները (օր՝ ինքնաթիռ և գնացք): Այս դեպքում համաձայն ենք Ս.Շ. Դոնցովի և Մ.Յա. Մարինինայի հետ, որ վնասի հատուցումը պետք է բաշխվի յուրաքանչյուրի վրա իր մեղքին համապատասխան¹⁸⁸, ինչպես նաև ելնելով յուրաքանչյուրի հասցրած վնասի չափից, քանի որ, օրինակ, գնացքի և մարդատար մեքենայի բախման դեպքում գնացքի հասցրած վնասները ավելի մեծ կլինեն, քան մեքենայինը: Սակայն ամեն դեպքում կարծում ենք, որ նախ և առաջ պետք է քննարկվի յուրաքանչյուրի մեղքի աստիճանը:

Մեր կարծիքով, ուշադրության է արժանի Քաղ. օր.-ի 1073 հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ տուժողի դիմումի հիման վրա և հօգուտ նրա դատարանն իրավունք ունի համատեղ վնաս պատճառած անձանց վրա պատասխանատվություն դնել մասերով՝ դրանք որոշելով օրենսգրքի 1074 հոդվածի 2-րդ մասով նախատեսված կանոններով: Այդ հոդվածը սահմանում է, որ համատեղ պատճառած վնասը հատուցած վնաս պատճառողը իրավունք ունի մյուս վնաս պատճառողներից պահանջել տուժողին վճարված հատուցման բաժինը: Այս դեպքում մյուս վնաս պատճառողների հատուցման բաժինը որոշվում է յուրաքանչյուր վնաս պատճառողի մեղքի աստիճանին համապատասխան չափով: Իսկ մեղքի աստիճանը որոշելու անհնարինության դեպքում բաժինները ճանաչվում են հավասար:

¹⁸⁷ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 89:

¹⁸⁸ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 90:

ԳԼՈՒԽ III

ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՍՏԵՂԾՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Ինչպես արդեն նշել ենք, պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման կարևորագույն պայման է մեղքի առկայությունը, և անձը, ով վնաս է հասցրել մեկ ուրիշին, չի ազատվի քաղաքացիաիրավական պատասխանատվությունից, եթե չապացուցի, որ այդ վնասն իր մեղքով չի պատճառվել: Այս ձևակերպման մեջ, ըստ Ա.Ս. Շևչենկոյի, օրենսդրի կողմից արտահայտված է մեղավորի մեղքի կանխավարկածը այնքան ժամանակ, մինչև չապացուցուցվի վերջինիս անմեղությունը¹⁸⁹: Ինչպես նկատում է իրավագետը, ընդունված փաստ է, որ քաղաքացիական իրավունքում գործում է վնաս պատճառողի մեղքի կանխավարկածի սկզբունքը: Սակայն, ընդունելով մեղքի կանխավարկածը, մենք պետք է ընդունենք նաև հակաօրինականության կանխավարկածը: Ա.Ս. Շևչենկոն նշում է, որ եթե ընդունում ենք վնաս պատճառողի մեղքի առկայությունը, սակայն չենք ընդունում նրա գործողությունների հակաօրինականությունը, ապա այդպիսով խախտում ենք մեղքի և հակաօրինականության միջև տրամաբանական կապը: Վնաս պատճառողի գործողությունների հակաօրինականության կանխավարկածը անխուսափելիորեն բխում է օրենքում ամրագրված մեղքի կանխավարկածից: Այս պատճառով էլ անձին ցանկացած վնասի պատճառումը ճանաչվում է հակաօրինական, եթե չապացուցվի վնաս պատճառողի գործողությունների օրինականությունը¹⁹⁰: Այսպիսով, համաձայն քաղաքացիական օրենսդրության և իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետների, քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջնային նախապայման են մեղքը և հակաօրինական արարքը: Սակայն քաղաքացիական օրենսդրությունը սահմանել է որոշ բացառություններ այս սկզբունքից: Հնարա-

¹⁸⁹ Տե՛ս, Ա.Ս. Шевченко, Возмещение вреда причиненного правомерными действиями. Владивосток, 1989, էջ 5:

¹⁹⁰ Տե՛ս Ա.Ս. Шевченко, նշված աշխատությունը, էջ 6:

վոր են դեպքեր, երբ անձը կարող է պատասխանատվություն կրել նաև իրավաչափ գործողությունների՝ օրինակ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում վնաս պատճառելու համար:¹⁹¹: Պատասխանատվություն է առաջանում նաև այն դեպքում, երբ վնասը հասցվել է շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ¹⁹² (ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասի հատուցման խնդրին մենք արդեն անդրադարձել ենք): Մինչև Չեռնոբիլյան վթարը իրավաբաններից բացի շատ քչերն էին ծանոթ «առավել վտանգի աղբյուր» հասկացության հետ: Շատ մարդիկ պատկերացում չունեին նյութական աշխարհի առանձին առարկաների վտանգավորության մասին, որոնք գտնվում են քաղաքացիների և կազմակերպությունների տրամադրության տակ¹⁹³: Ներկայումս քաղաքացիաիրավական գրականության մեջ մեծ տեղ է հատկացված առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության ուսումնասիրություններին:

Ֆ1. Առավել վտանգի աղբյուրի հասկացությունը

Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն նախատեսված էր նաև Հայաստանի 1923 և 1964 թթ. քաղաքացիական օրենսգրքերով: Սակայն 1998 թվականի Քաղ. օր.-ում այդ հարցը կարգավորվում է ավելի մանրամասնորեն: Ըստ որում, եթե նախկինում այն անվանվում էր «պատասխանատվություն առավել վտանգի աղբյուրով պատճառած վնասի համար», ապա Քաղ. օր.-ի 1072 հոդվածում այն անվանվում է «պատասխանատվություն շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառած վնասի համար»¹⁹⁴:

¹⁹¹ Белякова А.М., Возмещения вреда, причиненного источником повышенной опасности. М., 1967 էջ 3, ՀՀ Քաղ. օր., հոդված 1061:

¹⁹² St'u O. A. Красавчиков, Возмещения вреда, причиненного источником повышенной опасности. М., 1966г., էջ 5:

¹⁹³ St'u С.Е. Донцов, В.В. Глянецев, Возмещение вреда по советскому законодательству. М., 1990, էջ 218:

¹⁹⁴ St'u Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, ԵՊՀ հրատարակչություն, 2001թ., էջ 623:

Թե՛ տեսության մեջ և թե՛ պրակտիկայում գոյություն ունեն մի շարք վիճելի խնդիրներ առավել վտանգի աղբյուրի հասկացության, պատասխանատվության սուբյեկտների, պատասխանատվության ծագման և այլ հարցերի վերաբերյալ:

«Առավել վտանգի աղբյուր» տերմինը առաջին անգամ օգտագործվել է 1922թ. ԽՍՀՄ քաղ. օրենսգրքի 404 հոդվածում: Այդ տարիներին դատական պրակտիկան արտահայտում էր այն կարծիքը, որ առավել վտանգի աղբյուրների թվին պետք է դասվեն այնպիսի տրանսպորտային միջոցներ, ինչպիսիք են ավտոմեքենաները, մոտոցիկլետները, ծովային և գետային նավերը: Այս ամենը նպատակ ուներ լրացնելու հոդվածում նշված առավել վտանգի աղբյուրների ցանկը: Սակայն այն ժամանակ ո՛չ օրենսդիրը, ո՛չ էլ դատական պրակտիկան չձևավորեցին առավել վտանգի աղբյուրի վերաբերյալ ամփոփիչ երակացություններ. օրենսդիրը առաջ քաշեց երկու հասկացություն.

ա) աղբյուրի առավել վտանգավորությունը շրջապատի համար,

բ) կազմակերպությունների և քաղաքացիների գործունեությունը, որը կապված է նշված վտանգի հետ¹⁹⁵:

Այս կապակցությամբ հետագայում ցիվիլիստական գրականության մեջ տարբեր հեղինակներ հանդես եկան առավել վտանգի աղբյուրի տարբեր ձևակերպումներով, որոնք իրենց ամբողջության մեջ հանգում էին այն եզրակացության, որ առավել վտանգի աղբյուրը իրենից ներկայացնում է որոշակի տեսակի գործունեություն, որը շրջապատի համար առավել վտանգ է ստեղծում: Առավել վտանգի աղբյուրների այս թերի բնորոշումն է պատճառը, որ ո՛չ քաղաքացիական օրենսդրության, և ո՛չ էլ իրավաբանական գրականության մեջ առավել վտանգի աղբյուրը կոնկրետ ձևակերպված չէ, և նշված չէ, թե ինչ է պետք հասկանալ «առավել վտանգի աղբյուր» ասելով: Այսպես, օրինակ, Ս.Ե. Դոնցովը և Մ. Յա. Մարինինան գտնում են, որ առավել վտանգի աղբյուրը կարելի է բնորոշել որպես նյութական աշխարհի այնպիսի օբյեկտների տիրապետող սուբյեկտների գործունեություն, որոնք, օժտված լինելով վնասակար ազդեցությամբ, ի-

¹⁹⁵ Այս մասին տես նաև Ա. Ի. Загоруйко, նշված աշխատությունը, նույն տեղում, ինչպես նաև՝ Օ. Ա. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 7:

րենց օգտագործման ընթացքում չեն ենթարկվում լրիվ կառավարման, որի հետևանքով էլ առաջանում է մեծ հնարավորություն՝ վնասելու շրջապատող քաղաքացիներին, նրանց գույքը, ինչպես նաև կազմակերպությունների գույքը¹⁹⁶: Մ. Շիմինովան նշում է. «Անձի կյանքի և առողջության համար առավել վտանգի աղբյուրի թվին են դասվում առարկաները, մեխանիզմները, որոնք ունեն առանձնահատուկ որակներ, որի պատճառով դրանք օգտագործման ընթացքում առաջացնում են այնպիսի էներգիա կամ դրսևորում են այնպիսի հատկություններ, որոնք տեխնիկայի տվյալ մակարդակի զարգացման պատճառով չեն ենթարկվում մարդու բացարձակ հսկողությանը և վնաս պատճառելու մեծ հնարավորություն են ստեղծում»¹⁹⁷: Ուշագրավ տեսակետ են հայտնում Լ.Ա. Մայդանիկը և Ն.Յու. Մերգելևան, որոնք գտնում են, որ «առավել վտանգի աղբյուր» ասելով պետք է հասկանալ այն իրերը, սարքավորումները, որոնք գտնվում են շահագործման մեջ և այդ շահագործման ընթացքում առաջացնում են առավել վտանգավորություն շրջապատի համար, օրինակ, շարժվող գնացքը, աշխատող դագախը և այլ մեխանիզմներ, որոնք աշխատում են մեխանիկական, էլեկտրական կամ այլ շարժիչների միջոցով¹⁹⁸: Օ.Ա. Կրասավչիկովը նշում է, որ առավել վտանգի աղբյուրները նյութական աշխարհի իրերն են, որոնք հիմնականում ստեղծված են մարդու կողմից: Ինչպես նշում է հեղինակը. «Հասկանալի է, որ այդպիսի աղբյուր են հանդիսանում ոչ բոլոր առարկաները, այլ միայն նրանք, որոնք օժտված են առանձնահատուկ հատկություններով», ապա ավելացնում է նաև, որ առավել վտանգի աղբյուրի իրեր են հանդիսանում միայն նյութական աշխարհի այն իրերը, որոնք ունեն սպեցիֆիկ՝ քիմիական, ֆիզիկական, բիոլոգիական և այլ որակներ¹⁹⁹: Է. Աբաշինը նշում է, որ «առավել վտանգի աղբյուրի տիրապետող» ասելով պետք է նկատի ունենալ այն քաղաքացուն կամ իրավաբանական անձին, որը իրականացնում է առավել վտանգի աղբյուրի օգտագործումը իրեն պատկանող սեփականության իրա-

¹⁹⁶ Տե՛ս, С.Е. Донцов, М.Я. Маринина, Имущественная ответственность за вред причиненный личности. М., 1986г., էջ 39:

¹⁹⁷ Տե՛ս, Шиминова М., Возмещение вреда причиненного здоровью. М., 1972, էջ 22:

¹⁹⁸ Տե՛ս, Л.А. Майданик, Н.Ю.Сергеева, Материальная ответственность за повреждения здоровья. Госкориздат, 1953, էջ 25:

¹⁹⁹ Տե՛ս, О. А. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 29, 30:

վունքի, տնտեսական շահագործման, օպերատիվ կառավարման, վարձակալության պայմանագրի, լիազորագրի, իրավասու մարմնի հրամանի կամ կարգադրության հիման վրա²⁰⁰:

Ձևակերպումների այս բազմազանությունը հանգեցնում է այն բանին, որ վերջին հաշվով իրավաբանական գրականության մեջ դեռևս չի տրված առավել վտանգի աղբյուրի միասնական բնորոշումը:

Սակայն, ի մի բերելով քաղաքացիաիրավական գրականության մեջ առավել վտանգի աղբյուրի վերաբերյալ արտահայտված այս տեսակետները, կարող ենք եզրակացնել, որ առավել վտանգի աղբյուր կամ այդպիսի աղբյուրի իրեր են հանդիսանում նյութական աշխարհի այն իրերը, որոնք, ստեղծված լինելով և օգտագործվելով մարդու կողմից, ունենալով մեխանիկական, քիմիական, բիոլոգիական և այլ առանձնահատկություններ, որոշ դեպքերում չեն ենթարկվում մարդու լիարժեք կառավարմանը, և նրանց շահագործման ընթացքում բարձրանում է դրանց կողմից շրջապատողներին հասցվելիք վնասի հնարավորությունը²⁰¹: Ուստի և օրենսդիրը սահմանում է, որ այս իրերը, իրենցից ներկայացնելով շրջապատի համար մեծ վտանգավորություն, պարտադրում են, որ դրանց տիրապետողը պատասխանատվություն կրի իր մեղքից անկախ: Սյս հանգամանքը բացատրվում է նրանով, որ առավել վտանգի աղբյուր հանդիսացող իրերի շահագործման գործունեությամբ զբաղվողը արդեն իսկ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ այդ իրը ամեն բույե կարող է դուրս գալ իր հսկողության տակից, ուստի և ինքը պատասխանատու է այդ աղբյուրով պատճառված վնասի համար:

Ուշագրավ դրույթներ է պարունակում Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրքը, որը այս հարցի կապակցությամբ սահմանում է հետևյալ երեք նորմերը՝ կենդանիների կողմից հասցված վնասի պատասխանատվությունը /հոդված 1385/, շինությունների կողմից պատճառված վնասի պատասխանատվությունը /հոդված 1386/ և այսպես կոչված անշունչ առարկաների կողմից պատճառված վնասի պատասխանատվությունը /հոդված 1384, առաջին մաս/: Հետաքր-

²⁰⁰ Սյս մասին տե՛ս նաև Յ. Աբաշին, նշված աշխատությունը, էջ 32:

²⁰¹ Սյս մասին տե՛ս նաև Гражданское право, обязательственное право, учебник, էջ 620:

քիր է, որ Ֆրանսիայի Քաղ. օր.-ը չի պարունակում կոնկրետ նորմ, որը կսահմաներ առավել վտանգի աղբյուրով հասցված վնասի համար պատասխանատվություն, սակայն վերոնշյալ նորմերի ուսումնասիրությունից բխում է, որ վերջիններս հենց վերաբերում են առավել վտանգի աղբյուրով, ուստի և առանց մեղքի պատճառված վնասի համար պատասխանատվությանը: Ճապոնիայի Քաղ. օր.-ով նախատեսվում է իրով հասցված վնասի երկու դեպք՝ կառույցով հասցված վնաս և կենդանիներով հասցված վնաս²⁰²: Ինչպես նշում են Սակաե Վագացուման և Տորու Արիիդզումին, առանց մեղքի պատասխանատվության տեսակների մեջ պետք է դասվի նաև մասսայական պահանջարկ վայելող արտադրանքի արտադրողի պատասխանատվությունը այն դեպքերում, երբ այդ արտադրանքի որակի հսկողությունը անհնար է²⁰³: Ընդ որում, հեղինակները նշում են, որ պատասխանատվությունը պետք է ընկնի արտադրողի և մեծածախ առևտրականների վրա: Արտադրանքի առանձին մասերը արտադրողները պատասխանատվություն են կրում միայն այդ մասերով հասցված վնասի համար: Արտադրողը պատասխանատվություն է կրում ոչ միայն գնորդի, այլև անորակ արտադրանքը օգտագործողի առջև:

Արտադրողը կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե օգտագործողը արհամարհել է արտադրանքի սխալ օգտագործման հետևանքով առաջացող վնասների մասին նախազգուշացումները²⁰⁴:

Խոսելով առավել վտանգի աղբյուրների մասին՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ վիճակում պետք է գտնվեն իրերը, սարքավորումները, որպեսզի դրանք հանդես գան որպես առավել վտանգի աղբյուրներ: Ինչպես նշվեց, որպես առավել վտանգի աղբյուր պետք է ընդունել այն իրերը, արքավորումները, որոնք գտնվում են շահագործման մեջ և այդ շահագործման ընթացքում առաջացնում են առավել վտանգավորություն շրջապատի համար: Սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր իրերն են իրենց առա-

²⁰² Տե՛ս Сакаэ Вагацума, Тору Ариидзуми, Гражданское право Японии. М., 1983г. էջ 152:

²⁰³ Տե՛ս Сакаэ Вагацума, Тору Ариидзуми, նշված աշխատությունը, էջ 158:

²⁰⁴ Տե՛ս նույն տեղում:

վել վտանգավորությունը դրսևորում շահագործման ընթացքում. օրինակ, քիմիական նյութերը վտանգավոր են նաև այն ժամանակ, երբ նրանք գտնվում են իրենց տարաներում և ակտիվորեն չեն օգտագործվում: Անշուշտ, կան իրեր և առարկաներ, որոնք առավել վտանգի աղբյուր կարող են դառնալ միայն ակտիվ օգտագործման մեջ գտնվելու ժամանակ: Օրինակ, չենք կարող պատասխանատվության ենթարկել կանգառում կամ տան բակում կանգնած ավտոմեքենայի վարորդին, եթե անչափահասը բակում խաղալու ժամանակ պատահաբար դիպել է մեքենային և վնասվել: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա.Ի. Ջագորուվկոն, վնասը կարող է պատճառվել այնպիսի գործունեության ընթացքում, որը կապված է շրջապատի համար առավել վտանգի հետ, բայց որը չի հանդիսանում առավել վտանգի աղբյուր, և հակառակը, վնասը կարող է պատճառվել օբյեկտների պահպանման, օգտագործման կամ տեղափոխման ընթացքում, որոնք հանդիսանում են առավել վտանգի աղբյուր, սակայն վնասը հասցվի դրանց՝ ոչ որպես առավել վտանգի աղբյուրի հատկություններով: Եվ որպես օրինակ հեղինակը բերում է ուղևորի ոտքը վնասելը, որը տեղի է ունեցել կանգնած գնացքից իջնելիս: Այս դեպքի համար, գտնում է Ա. Ի. Ջագորուվկոն, առավել վտանգի աղբյուրով պատասխանատվության՝ քաղաքացիական դատավարության նորմը կիրառելի չէ, քանի որ վնասը պատճառված չէ առավել վտանգի աղբյուրով, չնայած դրա շահագործման փաստը առկա է: Հեղինակը գտնում է, որ կանգնած գնացքը չի կարելի դիտել որպես առավել վտանգի աղբյուր²⁰⁵: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ առավել վտանգի աղբյուրի տիրոջ պատասխանատվությունը կարող է ծագել ոչ միայն այն ժամանակ, երբ նա օգտվում է առավել վտանգի աղբյուրից, այլև այն դեպքում, երբ նա տիրապետում է նման աղբյուրի: Որպեսզի առարկան դիտվի որպես առավել վտանգի աղբյուր, նախ և առաջ կարևոր է վերջինիս մեջ վնասաբեր հատկությունների առկայությունը: Չնայած այն հանգամանքին, որ շրջապատին կարելի է վնաս հասցնել ցանկացած մեխանիկական առարկայով, առավել վտանգի աղբյուրի դեպքում օրենսդիրը կարևորում է այն հանգամանքը, որ այդ աղբյուրը կարող է վնասել շրջապատին նաև այն

²⁰⁵ См у А. И. Загоруйко, *նշված աշխատությունը*, էջ 64:

դեպքում, երբ խստորեն պահպանվում են դրա շահագործման անվտանգության կանոնները:

§2. Առավել վտանգի աղբյուրների դասակարգումը

Եթե առավել վտանգի աղբյուր հանդիսացող գործունեությունը պետք է կապված լինի վնասաբեր օբյեկտների շահագործման հետ, ապա առավել վտանգի աղբյուրի բնորոշման համար ելքային է հանդիսանում այդ իրի կամ գործողության տեսակի հարցը: Ահա այս պատճառով էլ առավել վտանգի աղբյուրով հասցված վնասի դեպքում նախ և առաջ պետք է ոչ թե խոսել անձի մասին, ով տիրապետում և օգտագործում է այդ օբյեկտը, այլ օբյեկտի մասին, որի տիրապետողն է հանդիսանում անձը: Եվ կարծում ենք, շատ կարևոր է այն հանգամանքի հաստատումը, որ վնասն առաջացել է տվյալ օբյեկտին բնորոշ վնասակարության հետևանքով:

Խոսելով գործունեության առավել վտանգի աղբյուրի մասին՝ կարևորվում է նաև այն հարցի պարզաբանումը, թե գործունեության ո՞ր տեսակներն են մտնում առավել վտանգի աղբյուրների դասակարգման մեջ:

Ինչպես ամրագրված է ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածում. «Իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (տրանսպորտային միջոցներ, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրագործում), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառած վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով»: Այսպիսով, օրենսդիրը, չնայած տվել է օրենքում գործունեության առավել վտանգի աղբյուրների տեսակների դասակարգումը, միևնույն ժամանակ հնարավորություն է տվել նաև դատարաններին անհրաժեշտության դեպքում ընդլայնել այդ ցանկը:

Որպես օրինակ կարող ենք անդրադառնալ ՀՀ վերաքննիչ դատարանի 2001թ. N 01-1083 գործի նյութերին: Գործին ավելի մանրամասն կանդրադառնանք հետագայում, սակայն նշենք, որ դատարանը, ուսումնասիրելով գործը, եկել է այն եզրակացության, որ վերելակը առավել վտանգի աղբյուր է, և կիրառել է Քաղ. օր.-ի 1072 հոդվածի առաջին մասը, որի համաձայն իրավաբանական այն անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է առավել վտանգի աղբյուրի հետ, պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Օրենսգրքի 1076 հոդվածի համաձայն՝ քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել: Տուժողի մեղքը հաշվի չի առնվում լրացուցիչ ծախսերը (1078 հ. 1-ին մաս), կերակրողի մահվանը ծագած վնասը (1082 հ.), ինչպես նաև թաղման ծախսերը հատուցելիս (1087 հ.): Իսկ քանի որ դեպքը կատարվել է Արշակունյաց փ. 2 հասցեում գտնվող «Տիգրան ՄԵԾ» հրատարակչության մասնաշենքի վերելակից օգտվելիս, հետևաբար վերը նշված հոդվածների համաձայն «Տիգրան ՄԵԾ» հրատարակչությունը պատշաճ պատասխանող է:

Այսպիսով, դատարանը կոնկրետ գործով որպես առավել վտանգի աղբյուր է դիտել վերելակը:

Ընդհանրապես պետք է նշել, որ, կապված տեխնիկայի և գիտության զարգացման հետ, անհնար է միանշանակ տալ առավել վտանգի աղբյուրների դասակարգումը. յուրաքանչյուր ժամանակաշրջան դրանց մեջ կարող է ավելացնել նորերը՝ բացառելով հիները: Այս պատճառով, կարծում ենք, առավել վտանգի աղբյուրները դասակարգելիս դրանց տեսակների՝ օրենքով ամբողջովին չթվարկելը ունի իր տրամաբանական բացատրությունը: Որպես ասվածի վկայություն կարող է հանդիսանալ հին և նոր քաղաքացիական օրենսգրքերի համեմատական ուսումնասիրությունը: Ինչպես նշում է Ա. Մ. Բելյակովան, 1922թ. Քաղ. օր.-ը չէր նշում այնպիսի գործունեության առավել վտանգի աղբյուրի մասին, ինչպիսին է ավտոմեքենան, չնայած պրակտիկան, օրենսգրքի ուժի մեջ մտնելուն պես, անվիճելի ա-

պացուցում էր ավտոմեքենաների՝ որպես այդպիսին լինելը²⁰⁶: Եվ ընդհակառակը, 1922թ. օրենսգրքում որպես առավել վտանգի աղբյուր խոսվում էր վառվող նյութեր վաճառողների մասին, որը չկա այժմ, սակայն, կարծում ենք, առանձին դեպքերում այս նյութերը և դրանց տիրապետելը նույնպես կարող են դիտվել որպես առավել վտանգի աղբյուր:

Ինչպես նշեցինք վերը, առավել վտանգի աղբյուրների լրիվ և ամբողջական դասակարգում չկա: Միևնույն առարկան կամ իրը տարբեր իրավիճակներում կարող է դիտվել և՛ որպես առավել վտանգի աղբյուր, և՛ ոչ²⁰⁷: Այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ արտահայտվում են տարբեր կարծիքներ:

20-30-ական թվականներին հեղինակները գտնում էին, որ օրենսդիրը պետք է սահմանի գործունեության առավել վտանգի աղբյուրների ամբողջական ցանկը, սակայն վերջին ժամանակներս հեղինակների մեծ մասը արտահայտում է այն կարծիքը, որ օրենքով անհնար է սահմանել գործունեության առավել վտանգի աղբյուրների բոլոր տեսակները²⁰⁸: Իրավագիտության մեջ արտահայտված այս տեսակետը իր հիմնավորումն է գտել նաև պրակտիկ օրենսդրության մեջ: Ինչպես նկատեցինք, ՀՀ Քաղ. օր-ը չի տալիս առավել վտանգի աղբյուրների վերջնական դասակարգում, Գերմանիայի քաղ. օր-ն, իր հերթին, ընդհանրապես չի տալիս աղբյուրների դասակարգում՝ այն բողոնելով օրենսդրության վրա²⁰⁹: Կարծում ենք՝ այս մոտեցումը ունի իր տրամաբանական հիմնավորումը, քանի որ օրենքով նշելով, որ այս կամ այն թվարկումը վերջնական է, մենք փաստորեն պարտադրում ենք օրենսգրքի անընդհատ փոփոխություններ, քանի որ, ինչպես նշվեց վերը, ժամանակակից գիտության զարգացման պայմաններում առավել վտանգի աղբյուրների թիվը ենթակա է անընդհատ փոփոխման:

²⁰⁶ Տե՛ս, Белякова А.М., *Ուշված աշխատությունը*, էջ 5:

²⁰⁷ Տե՛ս Эмиль Абашин, *Ուոյն աշխատությունը*, էջ 33:

²⁰⁸ Տե՛ս М. М. Агарков, *Обязательства из причинения вреда*, էջ 68:

²⁰⁹ Գերմանական օրենսդրությամբ առավել վտանգի աղբյուրները կամ, ինչպես նշվում է գերմանական իրավաբանական գրականության մեջ, ռիսկի վրա հիմնված պարտավորության աղբյուրների տեսակները սահմանվում են օրենսդրական տարբեր ակտերով: Այս մասին տե՛ս նաև Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche “Tort Law”, Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 546:

Սակայն կարծում ենք, որ ամեն դեպքում այդ օբյեկտները ենթակա են դասակարգման եթե ոչ օրենքով, ապա իրավաբանական գրականության մեջ: Այս օբյեկտների հետաքրքիր դասակարգում է իրականացնում Օ.Ա. Կրասավչիկովը: Նախ և առաջ նա գործունեության առավել վտանգի աղբյուրները բաժանում է հետևյալ հիմնական խմբերի. ա) ֆիզիկական, բ) ֆիզիկաքիմիական, գ) քիմիական, դ) կենսաբանական²¹⁰: Այնուհետև հեղինակը նշում է, որ առավել վտանգի աղբյուրների այս խմբերը հանդիսանում են հիմնական, որը ենթադրում է, որ պետք է լինեն նաև ենթախմբեր: Այսպես՝ Ֆիզիկական խմբի մեջ պետք է մտնեն մեխանիկական, էլեկտրական և ջերմային ենթախմբերը, ֆիզիկաքիմիականի մեջ՝ ռադիոակտիվ ենթախումբը, կենսաբանականի մեջ՝ կենսաբանական և միկրոկենսաբանական ենթախմբերը, քիմիականի մեջ՝ թունավոր, պայթուցիկ և դյուրավառ նյութերի ենթախմբերը²¹¹:

Ինչպես նշում է Ա. Մ. Բելյակովան, կա նաև տեսաբանների երրորդ խումբը, որը գտնում է, թե պետք է տրվի առավել վտանգի աղբյուրների օրինակելի դասակարգում՝ առանց վախենալու պրակտիկայում սուբյեկտիվ մոտեցման դրսևորումից²¹²:

1922թ. ԽՍՀՄ Քաղ. օր.-ում առավել վտանգի աղբյուրների թվին էին դասված նաև վայրի կենդանիները: Գործող քաղաքացիական օրենսդրությունը կենդանիների կողմից պատճառված վնասի հատուցմանը նվիրել է մեկ հոդված: Քաղ. օր. 1071² հոդվածի համաձայն՝ կենդանու պատճառած վնասի հատուցման պարտականությունը կրում է այդ կենդանու սեփականատերը՝ բացառությամբ այլ անձի տիրապետմանը կամ օգտագործմանը կամ խնամքին հանձնված կենդանու կողմից պատճառված վնասի, որի դեպքում վնասի հատուցման պարտականությունը կրում է կենդանուն տիրապետողը կամ օգտագործողը կամ խնամողը, եթե այլ բան նախատեսված չէ կենդանու սեփականատիրոջ և կենդանու օգտագործման, տիրապետման իրավունք ունեցող կամ խնամք իրականացնող անձի միջև կնքված պայմանագրով: Հոդվածի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ կենդանու սեփականատերը պատասխանատվություն է կրում

²¹⁰ Տե՛ս, Օ. Ա. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 44:

²¹¹ Տե՛ս Օ.Ա. Красавчиков, նշված աշխատությունը, նույն տեղում:

²¹² Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 6:

մեղքից անկախ, ուստի կարելի է եզրակացնել, որ կենդանիները ՀՀ Քաղ. օր.-ով ևս դիտվում են որպես առավել վտանգի աղբյուրներ²¹³:

Գերմանիայի և Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքերը պարունակում են կոնկրետ նորմեր կենդանիների կողմից պատճառված վնասի հատուցման վերաբերյալ: Այսպես. Գերմանիայի Քաղ. օր. 833 պարագրաֆը պատասխանատվություն է սահմանում կենդանի պահողների համար²¹⁴, Ֆրանսիայի Քաղ. օր. 1385 հոդվածը իր հերթին կարգավորում է կենդանիների կողմից պատճառված վնասի հատուցման հիմնահարցերը: Համաձայն հիշատակված հոդվածի՝ կենդանու սեփականատերը կամ այն անձը, ով հսկողություն է իրականացնում կենդանու նկատմամբ, պատասխանատվություն է կրում կենդանու կողմից պատճառված վնասի համար ինչպես այն դեպքում, երբ կենդանին գտնվել է նրա հսկողության տակ, այնպես էլ այն դեպքերում, երբ կենդանին կորել կամ փախել է: Պատասխանատվությունը հիմնվում է կենդանու նկատմամբ վատ հսկողության կանխավարկածի վրա²¹⁵:

Ինչպես նշում է Լ. Ժյուլիո դե լա Մորանդյերը, հոդվածը տարածվում է կոնկրետ անձին սեփականության իրավունքով պատկանող ցանկացած տնային կամ այլ կենդանիների վրա: Սակայն հոդվածը չի վերաբերում ազատության մեջ ապրող վայրի կենդանիներին և թռչուններին: Այսպես, կենդանու սեփականատերը պատասխանատվություն է կրում թռչունների կողմից հարևաններին պատճառված վնասի համար ոչ թե 1385 հոդվածի հիմքերով, այլ 1382 հոդվածով, որը սահմանում է պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր իրենց մեղքով վնաս են պատճառում ուրիշներին: Այլ կերպ ասած՝ հայցվորը ստիպված է լինում ապացուցել, որ սեփականատերը, հակառակ նրան, որ պետք է ոչնչացներ նախկինում վնաս պատճառած կենդանիներին, չի արել դա²¹⁶:

Բննարկվող հոդվածի հիմքերով որպես պատասխանատվության սուբյեկտ են հանդես գալիս կենդանիների սեփականատերերը:

²¹³ Տե՛ս նաև Эмиль Абашин, նույն աշխատությունը, էջ 35:

²¹⁴ Այս մասին ավելի մանրամասն տես www.rechten.unimaas.nl/casebook:

²¹⁵ Տե՛ս Լ. Жюллио Де Ла Морандьер Гражданское право Франции. М., 1960, էջ 446:

²¹⁶ Տե՛ս Լ. Жюллио Де Ла Морандьер, նշված աշխատությունը, էջ 446:

Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ հսկողությունը կարող է դրվել այլ անձանց վրա, սեփականատերը կարող է ազատվել պատասխանատվությունից:

Ինչպես նշվեց վերը, հողվածը սահմանում է, որ պատասխանատվություն են կրում նաև այն անձինք, ովքեր օգտագործում են կենդանիներին: Ինչպես նշում է Լ. Շյուլիտ դե լա Մորանդյերը, կենդանիներ օգտագործողներ կարող են լինել այն անձինք, ովքեր կենդանիների սեփականատիրոջ համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված կարգով իրավունք ունեն օգտվել կենդանիներից կամ ստանալ օգուտ՝ կապված կենդանիների օգտագործման հետ: Այսպիսի անձինք կարող են հանդիսանալ կենդանուն վարձակալողը, անձը, ում կենդանին տրված է անհատույց օգտագործման և այլն²¹⁷: Ֆրանսիայի դատական պրակտիկան ընդունում է նաև այն անձանց պատասխանատվությունը, ովքեր վերցրել են իրենց վրա կենդանուն հսկելու պարտականությունը՝ հյուրանոցի տեր, անասնաբույժ, դարբին և այլն: Պատասխանատվություն չեն կրում ծառան կամ այն անձը, ովքեր, գտնվելով տիրոջ հսկողության տակ, կատարում են նրա հանձնարարականը: Պատասխանատվության սուբյեկտ պետք է դիտվի նաև այն անձը, ով գողացել է կենդանուն: Նույնը կարելի է ասել ՀՀ օրենսդրության մասին: Օրենսգիրքը սահմանում է, որ կենդանու պատճառած վնասի հատուցման պարտականությունը կրում է այդ կենդանու սեփականատերը, բացառությամբ այլ անձի տիրապետմանը կամ օգտագործմանը կամ խնամքին հանձնված կենդանու կողմից պատճառված վնասի: Այս դեպքում վնասի հատուցման պարտականությունը կրում է կենդանուն տիրապետողը կամ օգտագործողը կամ խնամողը, եթե այլ բան նախատեսված չէ կենդանու սեփականատիրոջ և կենդանու օգտագործման, տիրապետման իրավունք ունեցող կամ խնամք իրականացնող անձի միջև կնքված պայմանագրով: Կենդանու սեփականատերը կազատվի պատասխանատվությունից նաև այն դեպքում, եթե ապացուցի, որ կենդանին իր տիրապետության տակից դուրս է եկել ուրիշների ապօրինի գործողությունների հետևանքով:

²¹⁷ Տե՛ս նույն տեղում:

Ֆրանսիայի Քաղ. օր.-ի 1385 հոդվածով պահպանվում են բոլոր այն անձանց շահերը, որոնց կարող է վնաս հասցվել կենդանու գործողությունների հետևանքով: Այսպես, ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, կենդանու կողմից հասցված վնասի համար հայցապահանջի իրավունք ունեն ծառաները, որոնք իրականացնում են իրենց տրված, սակայն տիրոջը պատկանող կենդանիների օգտագործումը, կամ այն անձը, ով, կանգնեցնելով սանձազերծ ձիուն կամ այլ կենդանուն, ստացել է մարմնական վնասվածքներ և այլն:

Այստեղ կցանկանայինք անդրադառնալ մի շատ ուշագրավ դիտարկման: Ուսումնասիրելով կենդանիների կողմից հասցված վնասի համար պատասխանատվության ինստիտուտը՝ կարելի է առաջին հայացքից հանգել այն եզրակացության, որ շատ հաճախ կենդանու կողմից վնաս պատճառելը կարելի է նույնացնել փոքրահասակի կողմից վնաս պատճառելու դեպքում առաջացող պատասխանատվությանը: Այսինքն և՛ կենդանիները, և՛ փոքրահասակները չեն գիտակցում և չեն էլ կարող գիտակցել իրենց կողմից կատարվող գործողությունների պատասխանատվությունը, ուստի և պատասխանատվությունն ընկնում է ծնողների և կենդանիների տերերի վրա՝ որպես վատ հսկողություն իրականացնողների: Սակայն, եթե փոքրահասակների կողմից պատճառված վնասի դեպքում ծնողները կամ օրենքով նախատեսված մյուս սուբյեկտները կազատվեն պատասխանատվությունից, եթե ապացուցեն, որ վնասը առաջացել է ոչ փոքրահասակի մեղքով, ապա կենդանիների դեպքում այս հանգամանքին կարելի է վերապահությամբ մոտենալ: Ինչպես ՀՀ, այնպես էլ Ֆրանսիայի Քաղ. օր.-ից, հստակ երևում է, որ կենդանու սեփականատերը չի կարող ազատվել պատասխանատվությունից, եթե անգամ ապացուցի, որ վնասը առաջացել է ոչ իր մեղքով: Ինչպես նշված է իրավաբանական գրականության մեջ, կենդանու կողմից հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանք կարող են հանդիսանալ միայն այն դեպքերը, երբ ապացուցվում է, որ կենդանին վնաս է հասցրել դեպքերի պատահականության պատճառով, անհաղթահարելի ուժի հետևանքով, վնասը պատճառվել է տուժողի մեղավոր գործողությունների հետևանքով, կամ էլ վնասի առաջացման պատճառ են հանդիսացել հանգամանքներ, ո-

րոնք կապ չունեն կենդանու հետ²¹⁸: Եթե վերոնշյալ պատասխանատվությունից ազատող հանգամանքները համեմատենք ՀՀ Քաղ. օր.-ի 1071² հոդվածի հետ, ախա հոդվածում կենդանու կողմից պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանք է նշվում միայն կենդանու՝ այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գալը: Ինչը նշանակում է, որ տուժողի դիտավորությունը և անհաղթահարելի ուժը չեն դիտարկվում որպես պատասխանատվությունից ազատող պայման: Համաձայնվելով դիտավորության բացակայության հիմնավորվածության հետ՝ չենք կարող համաձայնվել անհաղթահարելի ուժի՝ որպես պատասխանատվությունից ազատող պայմանի բացակայության հետ: Գտնում ենք, որ անհաղթահարելի ուժը ամեն դեպքում՝ քաղաքացիական իրավահարաբերությունների ցանկացած պարագայում, հանդիսանում է պատճառված վնասի հատուցումից ազատող պայման, ուստի ընդհանուր կանոնի համաձայն կենդանու կողմից պատճառված վնասի դեպքում ևս պետք է բացառվի պատասխանատվությունը, եթե վնասը պատճառվել է անհաղթահարելի ուժի ազդեցության տակ:

§3. Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության սուբյեկտները

Համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածի՝ գործունեության առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի սուբյեկտներ են հանդիսանում իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ: Հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերությունը ամրագրում է, որ վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: Չնայած հոդ-

²¹⁸ St'u Л. Жюллио Де Ла Морандьер, նշված աշխատությունը, էջ 448:

վածը նշում է, թե ովքեր կարող են կրել պատասխանատվություն առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար, սակայն այդ թվարկումը հստակ չէ, և իրավաբանական գրականության մեջ, ինչպես նաև պրակտիկայում առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի կապակցությամբ բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե կոնկրետ ով պետք է հանդիսանա առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը: Օրենքի վերոնշյալ ձևակերպումը շատ ընդհանուր է և տարբեր հանգամանքների ճնշման տակ կարող է տեղիք տալ տարբեր մեկնաբանությունների. արդյոք պատասխանատվության սուբյեկտ պետք է հանդիսանա աղբյուրի սեփականատե՞րը, թե՞ այն տիրապետողը: Ինչպես նշում է Ա.Մ. Բեյլակովան, իրավաբանական գրականությունը այս հարցի կապակցությամբ կիրառում է ոչ թե «սեփականատեր» հասկացությունը, այլ «առավել վտանգի աղբյուրը տիրապետող» հասկացությունը²¹⁹: Իրավաբանական գրականության մեջ, հիմք ընդունելով նախկին ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի մեկնաբանությունները, նշվում է այն տեսակետը, որ «առավել վտանգի աղբյուրի տիրապետող» ասելով պետք է հասկանալ առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով, օպերատիվ կառավարման իրավունքով կամ այլ իրավական հիմքով՝ վարձակալության պայմանագիր, լիազորագիր և այլն, օգտագործող կազմակերպությունը կամ քաղաքացին, որը վնասի պատճառման պահին օգտագործում է առավել վտանգի աղբյուրը իր անունից²²⁰: Առավել վտանգի աղբյուրի տերը բնութագրվում է երկու հատկանիշներով՝ իրավաբանական և նյութական: Իրավաբանական հատկանիշը իրենից ներկայացնում է այն իրավիճակը, երբ առավել վտանգի աղբյուրը տիրապետող ճանաչվում է միայն այն անձը, ով այդ աղբյուրի նկատմամբ ունի համապատասխան իրավասություններ: Նյութական հատկանիշի դեպքում առավել վտանգի աղբյուրի տիրապետող է ճանաչվում միայն այն սեփականատերը կամ աղբյուրը տիրապետողը, ով իրականացնում է աղբյուրի նկատմամբ փաստացի

²¹⁹ Стену Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 25:

²²⁰ Стену Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 26, С.Е. Донцов, В.В. Глянецев, նշված աշխատությունը, էջ 223, Гражданское право, обязательственное право, учебник, էջ 622:

տիրապետում: Որպես կանոն այս երկու հատկանիշները պետք է ակնհայտ լինեն²²¹: Ա.Ի. Ջագորուկոն գտնում է, որ պրակտիկան ապացուցել է, որ երբեմն որպես առավել վտանգի աղբյուրի տիրապետող պետք է դիտել նաև այն անձին, ով իր անունից չի իրականացնում աղբյուրի օգտագործումը: Համաձայն հեղինակի՝ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատու անձի առավել ճիշտ բնորոշում է տրված Ուկրաինայի Գերագույն դատարանի պլենումի 1992թ. մարտի 27-ի թիվ 4 որոշման մեջ, համաձայն որի. «Որպես առավել վտանգի աղբյուրի տիրապետող պետք է հասկանալ իրավաբանական անձին կամ քաղաքացուն, որը սեփականության, օպերատիվ կառավարման, լրիվ տնտեսական շահագործման կամ այլ հիմքով (վարձակալության պայմանագիր, լիազորագիր և այլն) իրականացնում է առավել վտանգի աղբյուրի օգտագործումը»²²²: Ինչպես նշում է Օ.Ա. Կրասավչիկովը, առավել վտանգի աղբյուրի տիրապետողը կարող է լինել միայն այն անձը, ով տիրապետում է այդ աղբյուրը այս կամ այն իրավական հիմքով, և շատ կարևոր է, որ այդ անձը իրականացնի առավել վտանգի աղբյուրի օգտագործումը²²³: Այստեղից հետևում է, որ վերոնշյալ հանգամանքներից մեկի բացակայությունը ազատում է քաղաքացուն առավել վտանգի աղբյուրով հասցված վնասի համար պատասխանատվությունից:

Այստեղ կցանկանայինք անդրադառնալ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմանը: Խնդիրն այն է, որ 1997թ. հուլիսի 27-ին ժամը 18-ի սահմաններում Կոռնիժոր գյուղի բնակիչ Ա. Ջ. Հովհաննիսյանը, հավատարմագրով վարելով հոր՝ Ջ. Հովհաննիսյանին պատկանող ԳԱՋ - 53 մակնիշի մեքենան, Տեղ-Կոռնիժոր ճանապարհահատվածի չորրորդ կիլոմետրում վրաերթի է ենթարկել Հ. Բաբաջանյանին և պատճառել մահ:

Տուժողի հուղակավորության հետ կապված ծախսերը կատարել է Մ. Բաբաջանյանը, որն էլ հասցված վնասը 2.104.200 դրամի

²²¹ Տե՛ս նաև Эмиль Абашин, նշված աշխատությունը, էջ 32:

²²² Տե՛ս А. И. Загорулько, նշված աշխատությունը, էջ 66:

²²³ Տե՛ս Օ.А. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 69-70, ընդ որում հեղինակը նշում է, որ աղբյուրի օգտագործում ասելով պետք է հասկանալ առանց օգտագործելու տիրապետումը, պահպանումը, տեղափոխումը և այլն:

չափով վերականգնելու պահանջով դիմել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան, որը բավարարվել է դատարանի կողմից մասնակիորեն՝ բռնագանձելով պատասխանողներից հոգուտ հայցվորի 800.000 դրամ գումար: Դատական քննության ժամանակ պատասխանողներից Ա. Հովհաննիսյանը չի ընդունել հայցը և նշել է, որ ինքը մեղավոր չի եղել: Իսկ Ջ. Հովհաննիսյանը ընդունել է հայցը, սակայն 300 ԱՄՆ դոլարի չափով: Դատարանը իր վճռում հայցը բավարարելիս հիմք է ընդունել ՀՀ Քաղ. օր.-ի 1072 և 1087 հոդվածները:

Կարծում ենք, որ դատարանի վճռում կան մի շարք թերություններ, մասնավորապես. վճռով վնասի հատուցման պարտականությունը պետք է դրվեր Ա. Հովհաննիսյանի վրա, քանի որ վերջինս տիրապետել է Ջ. Հովհաննիսյանին պատկանող ավտոմեքենան լիազորագրի հիման վրա, այսինքն օրինական հիմքով, ուստի, համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածի 1-ին հոդվածի երկրորդ մասի, հասցված վնասի համար պատասխանատվության սուբյեկտ պետք է դիտվեր նախ և առաջ Ա. Հովհաննիսյանը:

Տեսության և պրակտիկայի մեջ հարց է ծագում մասնալի դեպքում, թե արդյոք առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում այդ աղբյուրի սեփականատիրոջ հետ աշխատանքային կամ պայմանագրի հիման վրա աշխատող և աղբյուրը օգտագործող անձը: Է. Աբաշինը, Ա.Ի. Չագորուկյուն գտնում են, որ այդպիսի պայմաններով աղբյուրը օգտագործողը պատասխանատվություն չի կրում տուժողի առջև²²⁴: Ինչպես նշում է Օ.Ա. Կրասավչիկովը, տվյալ դեպքերում վնասը հասցվում է կազմակերպության համար աշխատողների կողմից, որոնց գործողությունների համար պատասխանատու է կազմակերպությունը: Համաձայն հեղինակի՝ տվյալ դեպքում պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում կազմակերպությունը: Իսկ անմիջապես վնասի աղբյուրն օգտագործողները գտնվում են հետևյալ իրավական դրության մեջ. նրանք վնասի համար պատասխանատու կազմակերպության հետ գտնվում են աշխատանքային հարաբերությունների մեջ, նրանք իրենց տեխնիկական կառավարման համար ստանում են որոշակի միջոցներ իրենց աշխատանքա-

²²⁴ Տե՛ս Յ. Абашии, նույն աշխատությունը, էջ 35: А. И. Загоруйко, նշված աշխատությունը, նույն տեղում:

յին պարտականությունները կատարելու համար: Եվ ելնելով այն հանգամանից, որ այդ իրերը պատկանում են սեփականատեր կազմակերպությանը, իսկ այդ աղբյուրները շահագործողները աշխատում են վերջինիս համար, ուստի և բացառվում է նրանց պատասխանատվությունը հասցված վնասի համար²²⁵: Գտնում ենք, որ նման դեպքերում, համաձայն Քաղ. օր.-ի, կազմակերպությունը պետք է իրավունք ունենա վնասը հատուցելուց հետո ռեգրեսիվ հայցապահանջով վնասը պատճառողից փոխհատուցել իր ծախսերը²²⁶: Սակայն այսպիսի հայցապահանջի դեպքում հայցի հիմքերը էականորեն տարբերվում են 1072 հոդվածում նշված հիմքերից: Անմիջական վնաս պատճառողները պատասխանատվություն են կրում առավել վտանգի աղբյուրի տիրոջ առջև միայն այն դեպքում, երբ վնասը պատճառվել է իրենց մեղքով²²⁷: Ելնելով վերոնշյալից, կարծում ենք, կազմակերպությունը պետք է պատասխանատվություն կրի նաև այն դեպքում, երբ նրա աշխատողը, որը հանդիսանում է անմիջական վնաս պատճառողը, պատճառել է վնասը՝ խախտելով աշխատանքային կանոնակարգը: Այս դեպքում կազմակերպությունը ունի բոլոր իրավական հիմքերը՝ ռեգրեսիվ հայցով պահանջելու վնաս պատճառող իր աշխատակցից՝ փոխհատուցել նրա հակաօրինական գործողությունների հետևանքով պատճառված վնասի համար կազմակերպության կրած ծախսերը:

Վիճելի է նաև այն հարցը, թե ով է հանդիսանում պատասխանատվության սուբյեկտ այն դեպքում, երբ մի կազմակերպությունը տալիս է իր տրանսպորտային միջոցը ուրիշին, բայց տրանսպորտային միջոցը սպասարկում է տրանսպորտ կազմակերպության աշխատակիցը: Այս դեպքում, գտնում ենք, պետք է ուշադրություն դարձվի այն հանգամանքին, թե ինչ պայմաններով և ինչ նպատակների համար է տրվում տվյալ տրանսպորտային միջոցը: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, էքսկուրսիայի կամ էլ որոշակի այլ նպատակներով օգտագործելու համար: Ինչպես նշում է Ա.Մ. Բելյակովան, առաջին դեպքում կնքվում է ոչ թե վարձակալության, այլ փոխադրման պայմանագիր, այդ պատճառով վթարի դեպքում պատասխանատ-

²²⁵ Տե՛ս Օ. Ա. Красавчиков, նշված աշխատությունը, նույն տեղում:

²²⁶ Տե՛ս ՀՀ Քաղ. օր., հոդված 1074:

²²⁷ Տե՛ս Օ.Ա. Красавчиков, նույն տեղում:

վություն պետք է կրի տրանսպորտային միջոցի սեփականատեր կազմակերպությունը: Երկրորդ դեպքի համար հեղինակը նշում է, որ տրանսպորտային միջոցի օգտագործումը տեղի է ունենում երկուստեք՝ երկու կազմակերպությունների կողմից, ուստի երկու կազմակերպություններն էլ պետք է հսկողություն իրականացնեն առավել վտանգի աղբյուրի նկատմամբ: Ուստի նման դեպքերում, ինչպես նշում է հեղինակը, կան նախապայմաններ համապարտ պատասխանատվության համար: Մեկի մոտ առկա է իրը տիրապետելու հանգամանքը, որը հնարավորություն է տալիս փաստացի տնտեսական ներազդեցություն իրի նկատմամբ, իսկ մյուսի մոտ աղբյուրի օգտագործումը հանգում է դրանից օգտակար արդյունքների ստացմանը²²⁸:

Կարծում ենք, որ տվյալ դեպքում ուշադրություն պետք է դարձվի այն հանգամանքի վրա, թե ինչ առարկա է դրված պայմանագրի հիմքում, և ով է շահագործում տրանսպորտային միջոցը: Ամեն դեպքում գտնում ենք, որ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի փոխհատուցման պարտականությունը նախ և առաջ պետք է դրվի այդ աղբյուրը տվյալ պահին տիրապետող կազմակերպության վրա, լինի դա աղբյուրի սեփականատեր կազմակերպությունը, թե այն ժամանակավոր տիրապետող և օգտագործող կազմակերպությունը: Ինչպես նշված է ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածում, վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձկանության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: Այսպիսով, պատճառված վնասի համար պատասխանատու է այն քաղաքացին կամ իրավաբանական անձը, ով տվյալ պահին, այսինքն վնասը հասցնելու ժամանակ, տիրապետել է առավել վտանգի աղբյուրին: Եվ վերջապես, ՀՀ քաղ. օր.-ը սահմանում է, որ եթե վնասը պատճառվել է կառավարման և տեխնիկական շահագործման ծառայությունների մատուցմամբ վարձակալության տրված տրանսպորտային միջոցով, ապա պատճառված վնասի հա-

²²⁸ St'u Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 27-28:

մար պատասխանատվություն է կրում վարձատուն, մյուս դեպքում՝ վարձակալը (ՀՀ Զադ. օր., հոդվածներ 643 և 651):

Այս հարցի քննարկումն ամբողջացնելու համար կարևորվում է նաև այն հանգամանքի պարզաբանումը, թե երբ պետք է մի կազմակերպությունից մյուսին փոխանցված համարել առավել վտանգի աղբյուրը, այսինքն՝ երբևեց է աղբյուրը տրամադրող կազմակերպությունը դադարում պատասխանատվություն կրել աղբյուրի հասցրած վնասի համար, իսկ ստացողի մոտ էլ առաջանում է այդ պատասխանատվությունը:

Ինչպես հայտնի է, սեփականության իրավունքը կամ օպերատիվ կառավարման իրավունքը գույքը պայմանագրով ձեռք բերողի մոտ առաջանում է գույքի փոխանցման պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, իսկ այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այդ գույքի նկատմամբ իրավունքները ծագում են այդպիսի գրանցման պահից: Իրավացի է Ա.Ի. Չագորուկոն, որ այս կանոնը պետք է գործի առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության հարցը որոշելիս, և որ այս դրույթը պետք է կիրառվի նաև այն ժամանակ, երբ ընդունվել է ադմինիստրատիվ ակտ, որը պարտադրել է առավել վտանգի աղբյուրի հանձնումը մեկ տիրապետողից մյուսին²²⁹: Նշվածի համաձայն, ինչպես խոսվեց վերը, անհրաժեշտ է, որ առավել վտանգի աղբյուրի տրամադրումը լինի համապատասխանորեն ձևակերպված, իսկ այդպիսի ձևակերպման բացակայությունը կառաջացնի պատասխանատվություն և՛ աղբյուրը տվյալ պահին տիրապետողի, և՛ դրա սեփականատիրոջ համար:

²²⁹ Տե՛ս Ա. Ի. Загорулько, նշված աշխատությունը, էջ 68:

§4. Ընդհանուր սեփականության իրավունքով մի քանի անձանց պատկանող առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցումը

Ինչպես ամրագրված է ՀՀ Քաղ. օր.-ի 189 հոդվածում, երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով: Օրենսգրքի 12-րդ գլուխը սահմանում է, որ ընդհանուր սեփականությունը լինում է բաժնային (երբ որոշված է սեփականատերերից յուրաքանչյուրի բաժինը) և համատեղ (երբ բաժինները որոշված չեն): Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է դրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն օգտագործելուց ստացված արդյունքները, արտադրանքը և եկամուտները ներառվում են ընդհանուր գույքի կազմում և բաժնային սեփականության մասնակիցների միջև բաշխվում են նրանց բաժիններին համաչափ (ՀՀ Քաղ. օր., հոդված 193): Գույքի պահպանման ծախսերը հավասարապես բաշխվում են բաժնային սեփականության մասնակիցների միջև:

Համատեղ սեփականության դեպքում նույնպես գույքն օգտագործվում է համատեղ սեփականության գույքը տնօրինող մասնակիցների կողմից փոխհամաձայնության հիման վրա՝ անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը (ՀՀ Քաղ. օր., հոդված 198): Արդյոք սա նշանակու՞մ է, որ ընդհանուր սեփականությամբ մի քանի անձանց պատկանող առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքում պատասխանատու են այդ իրի բոլոր սեփականատերերը, թե՞ պատասխանատվությունը ընկնում է այն սեփականատիրոջ կամ տվյալ պահին այդ գույքը օրինական հիմքով տիրապետող այն անձի վրա, ով վնասի պատճառման պահին տիրապետում էր առավել վտանգի աղբյուրը:

Խոսելով ընդհանուր սեփականության իրավունքով մի քանի անձանց պատկանող առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման մասին՝ նախ և առաջ կցանկանայինք անդրադառնալ ամուսինների պատասխանատվությանը այս իրավահարաբերության ժամանակ, քանի որ գաղտնիք չէ, որ հիմնականում ավտոտրանսպորտի միջոցները, որոնց բաժին է ընկնում առավել

վտանգի աղբյուրով պատճառված վնասների մեծ մասը, պատկանում են ամուսիններին համատեղ սեփականությամբ: Ինչպես նշված է ՀՀ Քաղ. օր.-ի 201 հոդվածում, ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջև կնքված պայմանագրով: Սա նշանակում է, որ եթե ամուսինների միջև կնքված ամուսնական պայմանագրում ոչ մի խոսք չկա, թե ում սեփականությունն է ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը, ապա ցանկացած գույք, բացառությամբ նույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերում նշված գույքի, հանդիսանում է նրանց համատեղ սեփականությունը:

Մակայն դատական որոշումների և վճիռների մեջ չի կարելի հանդիպել նույնիսկ մեկ դատական դեպքի, երբ վնասի հատուցման պարտականությունը դրված է ամուսինների վրա հավասարապես: Ինչպես նշում է Օ.Ա. Կրասավչիկովը, սա կարելի է բացատրել երկու հանգամանքով: Առաջինը՝ այստեղ, ինչպես նաև առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման նմանատիպ այլ գործերում, լինում են սխալներ՝ կապված վնասի հատուցման պարտականությունը անմիջական վնաս հատուցողի վրա դնելու հետ: Հայտնի է, որ առավել վտանգի աղբյուր հանդիսացող ավտոմեքենան կարող է վարել սեփականատերերից մեկը: Վնասի պատճառման դեպքերում առաջանում է միաժամանակ գույքի սեփականատիրոջ և վնաս պատճառողի, այսպես կոչված, «անձնական ունիա»: Վերջինիս նկատմամբ էլ, անհրաժեշտ հանգամանքների առկայության դեպքում, կիրառվում են համապատասխան քրեաիրավական և քաղաքացիաիրավական ներգործության միջոցներ, իսկ սեփականատերը քաղաքացիաիրավական պատասխանատվության չի ենթարկվում:

Երկրորդ հանգամանքը, ըստ հեղինակի, այն է, որ տրանսպորտային միջոցները միշտ ձևակերպված են լինում մեկ սեփականատիրոջ անունով: Այս պատճառով էլ առավել վտանգի աղբյուրի միջոցով վնաս պատճառելու դեպքում բոլոր նախնական դատավարական փաստաթղթերը իրենց մեջ ներառում են տվյալներ անմիջական վնաս պատճառողի մասին: Այս փաստաթղթերն էլ հետագայում օգտագործվում են վնասի հատուցման քաղաքացիական գործերում: Իսկ այդ գործերի քննության ժամանակ դատարանը, ելնելով պե-

տավտոտեսչության մարմինների կողմից իրեն տրամադրված գործի նյութերից, որպես կանոն, տեսնում է միայն վնասի անմիջական մեկ պատճառողի՝ մոռանալով վտանգի աղբյուրի մյուս սեփականատերերի մասին²³⁰: Է. Աբաշինի կարծիքը այս հարցում միանշանակ է՝ պատասխանատվության է ենթակա անմիջապես վնաս պատճառողը²³¹:

Հարցի քննարկումն ավելի ամբողջացնելու համար անհրաժեշտ է կրկին անդրադառնալ ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածին, համաձայն որի՝ վնասի հատուցման պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա կամ այլ օրինական հիմքով այն տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: Ելնելով հոդվածից և դատական պրակտիկայից՝ կարող ենք եզրակացնել, որ, երբ վնասը հասցվել է առավել վտանգի աղբյուրով այն ժամանակ, երբ վերջինս գտնվել է իր սեփականատիրոջ տիրապետման տակ, ապա անկախ մեղքի առկայությունից՝ վնասի հատուցման պարտականությունը միանշանակ ընկնում է սեփականատիրոջ վրա: Եթե վնասը հասցվել է առավել վտանգի աղբյուրի կողմից այն ժամանակ, երբ այն օրինական կարգով գտնվել է մեկ այլ անձի՝ ոչ սեփականատիրոջ տիրապետման տակ, ապա վնասի հատուցման պարտականությունն ընկնում է ոչ թե սեփականատիրոջ, այլ վնասի պատճառման պահին աղբյուրը տիրապետող անձի վրա: Եվ վերջապես, որպեսզի առաջանա պատճառված վնասի համար պատասխանատվություն, անհրաժեշտ է նաև արարքի առկայությունը, ինչը կարող է լինել միայն առավել վտանգի աղբյուրը վնասի պատճառման պահին տիրապետողի մոտ: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ճիշտ են վարվում դատարանները այն դեպքերում, երբ վնասի հատուցման պարտականությունը դնում են ոչ թե ընդհանուր սեփականության բոլոր մասնակիցների վրա, այլ միայն տվյալ պահին առավել վտանգի աղբյուրը տիրապետող և վնաս պատճառող սեփականատիրոջ վրա: Սակայն այս դեպքում ևս, կարծում ենք, հարցի լուծումը ամբողջական չէ, քանի որ ամեն դեպքում հնարավոր է դատարանի կողմից պատճառված վնասի հատուցման նպատա-

²³⁰ Տե՛ս Օ. Ա. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 83:

²³¹ Տե՛ս Զ. Абашин, նույն աշխատությունը, էջ 36:

կով բռնագրավման տարածում վնասը պատճառած գույքի վրա, իսկ այս դեպքում պատասխանատվության սուբյեկտ է դառնում նաև մյուս համասեփականատերը, որպես օրինակ կարելի է նշել վնասի հատուցումը ավտոմեքենան բռնագրավելու և այնուհետև վաճառելու միջոցով: Ինչպես նշված է Քաղ. օր.-ի 200 հոդվածում. «Բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագրավում տարածելու համար: Եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է, կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի դատարանով բռնագանձում տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ այդ բաժինը հրապարակային սակարկություններով վաճառելու միջոցով»:

Իրավաբանական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տալիս նաև վնասի հատուցման համար պատասխանատու անձի որոշման հարցը այն դեպքում, երբ վնասը պատճառվել է այն ժամանակ, երբ առավել վտանգի աղբյուրը՝ ավտոտրանսպորտը, վարել է այն վարելու լիազորություն չունեցող անձը, սակայն ավտոտրանսպորտը նրան վարելու համար տրամադրել է մեքենայի սեփականատերը, կամ էլ վարելու ընթացում նրա կողքին նստած է եղել առավել վտանգի աղբյուրի սեփականատերը:

Ինչպես գտնում է Բ.Ս. Անտիմոնովը, այսպիսի դեպքերում երկուսն էլ՝ վարորդը և սեփականատերը, հավասարապես հանդես են գալիս որպես մեքենայի տիրապետողներ, ուստի և երկուսն էլ համապարտ պատասխանատվություն են կրում առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար²³²: Օ. Ա. Կրասավչիկովը, քննարկելով Անտիմոնովի արտահայտած տեսակետը, նշում է, որ վերջի-

²³² См. Б.С. Антимонов, Гражданская ответственность за вред причиненный источником повышенной опасности, Госюриздат, 1952г., էջ 258-259:

նիս արտահայտած դրույթները տեղիք են տալիս որոշ տարակուսանքների²³³: Խոսելով առաջին դեպքի մասին, երբ մեքենայի սեփականատերը առանց համապատասխան լիազորագրի մեքենան տալիս է վարելու մեկ այլ անձի՝ Կրասավչիկովը նշում է, որ համաձայն օրենսդրության, այդպիսի գործունեությունը պետք է համապատասխան գրավոր ձևակերպում ստանա, վարորդը ունենա լիազորագիր՝ տրված մեքենայի սեփականատիրոջ կողմից: Ուստի և, ինչպես նշում է հեղինակը, մեքենայի սեփականատիրոջ կողմից մեքենայի տրամադրումը մեկ այլ անձի առանց համապատասխան փաստաթղթերի ձևակերպման արդեն հանդիսանում է իրավախախտում: Այստեղից ակնհայտ է, որ նմանատիպ իրավախախտումը չի կարող անտեսվել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի փոխհատուցման գործը քննելիս: Եվ ի վերջո, ինչպես նշում է Օ. Ա. Կրասավչիկովը, համաձայնվելով Անտիմոնոփի հետ, այստեղ նյութական պատասխանատվություն են կրում և՛ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը, և՛ այն անձը, ում վերջինս տրամադրել է մեքենան²³⁴:

ՀՀ Քաղ. օր.-ը սահմանում է, որ վնասի հատուցման պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա: Այսպիսով, օրենսգիրքը նշում է, որ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի պատասխանատվության սուբյեկտ կարող են դառնալ այդ աղբյուրի սեփականատերը կամ օրինական հիմքով այն տիրապետողը: Քննարկվող հարցի տեսանկյունից գտնում ենք, որ համաձայն Քաղ. օր.-ի սույն դրույթի, պատասխանատվությունը պատճառված վնասի համար պետք է ընկնի առավել վտանգի աղբյուրի՝ տվյալ դեպքում ավտոտրանսպորտի սեփականատիրոջ վրա, եթե վերջինիս՝ սեփականության իրավունքով պատկանող ավտոմեքենան վարել է մեկ ուրիշը՝ առանց օրինական հիմքի: Ընդ որում, այստեղ շատ կարևոր է, որ մեքենայի սեփականատերը ինքը տրամադրած լինի իր մեքենան, այլ ոչ թե այն իր տիրապետությունից դուրս եկած լինի այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, քանի որ այս դեպքում արդեն մեքենայի սեփականատերը անմիջապես կազատվի պատասխանատվությու-

²³³ Տե՛ս Ա. Օ. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 85:

²³⁴ Տե՛ս Ա. Օ. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 86:

նից ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերով, որի մասին կխոսվի հետագայում: Վնասը հատուցելուց հետո, սակայն, աղբյուրի սեփականատերը կարող է հետադարձ պահանջի իրավունքով պահանջել մեքենան վարողից՝ փոխհատուցել իր կրած վնասները:

Այստեղ կարելի է անդրադառնալ խնդրի լուծման մեկ այլ մոտեցման ևս, որը իր արտահայտությունը չի գտել հարցը քննարկող հեղինակների մոտ: Ինչպես նշվեց վերը, մեքենայի տիրոջ և այն ժամանակավորապես վարողի միջև կնքվում է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր: Ուստի կողմերի միջև ծագող հարաբերությունները ենթակա են կարգավորման ՀՀ Քաղ. օր.-ի 36 գլխի դրույթներով: Համաձայն օրենսգրքի 686 հոդվածի՝ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով: 695 հոդվածը սահմանում է, որ փոխատուն պատասխանատվություն է կրում գույքի օգտագործման հետևանքով երրորդ անձին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցում, որ այդ վնասը դիտավորությամբ պատճառել է փոխառուն կամ այն անձը, որի մոտ այդ գույքը հայտնվել է փոխատուի համաձայնությամբ:

Այսպիսով, ինչպես ակնհայտ է դառնում, օրենսդիրը հստակ սահմանում է, որ անհատույց օգտագործման պայմանագրի դեպքում պատճառված վնասի համար պատասխանատու է փոխատուն, այսինքն՝ գույքի սեփականատերը: Սեփականատերը պատասխանատվություն է կրում անկախ նրանից՝ գտնվե՞լ է նա գույքի՝ տվյալ դեպքում ավտոմեքենայի, շահագործման ընթացքում վարորդի կողքին, թե՞ ոչ: Փոխատուին, այսինքն՝ գույքի սեփականատիրոջը, պատասխանատվությունից ազատող միակ հանգամանքը կարող է հանդիսանալ այն, որ նա կարողանա ապացուցել, որ փոխառուն վնաս է պատճառել դիտավորյալ: Այս դեպքում ևս պարտադիր պայման է գույքի փոխատվության պայմանագրի գրավոր ձևակերպումը:

Համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի՝ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում այդ աղբյուրը վարձակալած անձը: Պետք է նշել, որ հատկապես վերջին ժամանակներս հանրապետությունում շատացել են մեքենաների վարձակալությամբ զբաղվող կազմակերպությունները, որոնք տարբեր

քաղաքացիների կամ կազմակերպությունների վարձակալական հիմունքներով տրամադրում են մեքենաներ՝ առանց վարորդի և մեքենայի սպասարկումն իրականացնելու: Քանի որ համաձայն օրենսգրքի՝ վարձակալությունը համարվում է առավել վտանգի աղբյուրի տիրապետման օրինական հիմք, ուստի և անկասկած է, որ վարձակալած առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի փոխհատուցման պարտականությունը ընկնում է վարձակալի վրա: Սակայն կան մի շարք առանձնահատկություններ, որոնք պետք է պահպանվեն և որոնց պետք է ուշադրություն դարձվի ավտոմեքենաների կամ այլ առավել վտանգի աղբյուրների վարձակալության ժամանակ: Նախ, վարձատուն պարտավոր է, և վարձակալը իրավունք ունի պահանջելու, որ իրեն տրամադրվի սարքին վիճակում գտնվող գույք: Մյուս կողմից, կարևոր է, որ վարձատուն, իր հերթին, վտանգի աղբյուրը վարձակալության տրամադրելուց առաջ պահանջի վարձակալողից և ստուգի վերջինիս մոտ առավել վտանգի աղբյուրը շահագործելու համապատասխան թույլտվության, օրինակ՝ վարորդական իրավունքի առկայությունը: Այստեղ հարց է առաջանում. արդյոք վարձատուն կարո՞ղ է ենթարկվել պատասխանատվության այն դեպքում, երբ վարձակալության է հանձնում առավել վտանգի աղբյուրը առանց ստուգելու վարձակալի մոտ այն շահագործելու համապատասխան փաստաթղթերի առկայությունը: Կարծում ենք՝ այո, քանի որ այդպիսի ստուգում իրականացնելու դեպքում հնարավոր կլիներ խուսափել վնասի պատճառումից: Այս հանգամանքը պետք է հստակ ձևակերպվի օրենքում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է առավել վտանգի աղբյուրների վարձակալությանը: Ելնելով ավտոտրանսպորտային միջոցների կողմից անձանց կյանքին կամ առողջությանը, ինչպես նաև գույքին պատճառված վնասի դեպքում տուժողների շահերի առավել պաշտպանվածությունն ապահովելու սկզբունքից՝ գտնում ենք, որ նպատակահարմար է առանձին օրենքի ընդունումը, որը կկարգավորի ավտոտրանսպորտային միջոցների վարձակալության հարցը՝ միևնույն ժամանակ սահմանելով պարտադիր ապահովագրություն այդպիսի գործարքների ժամանակ²³⁵:

²³⁵ Գերմանական և Ֆրանսիական օրենսդրությունները, կարևորելով տրանսպորտային միջոցների կողմից պատճառված վնասի հատուցման ինստիտուտը, խնդիրը կարգավորում են առանձին օրենսդրական ակտերով: Ի

Համաձայն ենք Ա.Ի. Չագորուկոյի այն տեսակետի հետ, որ առավել վտանգի աղբյուրը վարձակալության հանձնելու ժամանակ, երբ վնասի հասցման պատճառ է դառնում այդ աղբյուրի թաքնված այնպիսի թերությունը, որը վարձակալը պարտավոր չէր և չէր էլ կարող բացահայտել աղբյուրը վարձակալության ընդունելու ժամանակ, վնասի հատուցման պարտականությունը պետք է կրի վարձատուն²³⁶:

Խոսելով տրանսպորտային միջոցների կողմից պատճառված վնասի հատուցման մասին՝ պետք է անդրադառնալ նաև այն խնդրին, թե արդյոք պե՞տք է պատասխանատվություն կրի տրանսպորտային միջոցը օգտագործողը, եթե վնաս է պատճառվել տրանսպորտի ուղևորին: Այս հարցին հետաքրքիր մոտեցում է դրսևորվում Ֆրանսիայում, որտեղ դատական համակարգը մերժում է 1384 հոդվածի 1-ին մասի կիրառումը այն դեպքերի համար, երբ տուժողը ընդունել է առաջարկ՝ անվարձահատույց օգտվել ուրիշի իրից կամ օգտվել այդ իրից՝ իր խնդրանքին համապատասխան: Այսպես կարող է լինել այն ժամանակ, երբ անձը հյուր է փոխադրամիջոցի մեջ, այսինքն՝ փոխադրողը օգուտ չի ստացել ուղևորին տեղափոխելուց, կամ էլ այն դեպքերում, երբ վնաս է հասցվել խաղի ու սպորտի համար օգտագործվող իրով: Ֆրանսիական իրավաբանական գրականության մեջ այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ տուժողը, նախապես դիմելով այդ քայլին, գիտակցել է սպասվող վտանգի հնարավորությունը, որը հավասարազոր է տուժողի՝ իրի նկատմամբ հսկողություն կատարողի կանխավարկածից հրաժարվելուն: Սակայն այս հանգամանքը չի բացառում տուժողի վնասների հատուցում պահանջելու իրավունքը 1382 հոդվածի հիմքերով²³⁷:

տարբերություն 33-ի, որտեղ տրանսպորտային միջոցներով պատճառված վնասի հատուցումը կարգավորվում է միայն Քաղ. օր.-ով, նշված երկրներում գործում են առանձին օրենքներ՝ Սոտորային փոխադրամիջոցների ակտ (Motor Vehicle Act) 3 մայիս 1909 և ճանապարհային երթևեկության ակտ (Road Traffic Act կամ StVG) 19 դեկտեմբեր 1952թ.՝ Գերմանիայում, Loi Badinter Act (Ճանապարհատրանսպորտային պատահարների տուժածների վիճակի բարելավման և փոխհատուցման գործընթացների արագացման ակտ) Act 85-677, 5 հուլիսի 1985թ.՝ Ֆրանսիայում:

²³⁶ Տե՛ս Ա. Ի. Загоруйко, նշված աշխատությունը, էջ 71:

²³⁷ Տե՛ս Լ. Жюллио Де Ла Морандьер, նույն տեղում, էջ 459:

Պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ վնասը առավել վտանգի աղբյուրով պատճառվում է այն ժամանակ, երբ առավել վտանգի աղբյուրը գտնվում է ներքին գործերի մարմինների տիրապետության տակ: Օրինակ, բռնագրավվել է հանցագործության գործիքը, որը նաև առավել վտանգի աղբյուր է, կամ տրանսպորտային միջոցը բռնագրավվում է ոստիկանության կողմից, և վտանգի աղբյուրով վնաս է հասցվում հենց այն ժամանակ, երբ վերջինս գտնվում է այդ մարմինների տիրապետության տակ: Տրանսպորտային միջոցի մասին խոսելիս անհրաժեշտ է պարզել, թե ով է վնասի պատճառման պահին վարել ավտոմեքենան: Ինչպես նշում է Ա.Ի. Չագորուկյուն. «Ընդունված է, որ առավել վտանգի աղբյուրի անցումը պետավտոտեսչության կամ նախաքննության մարմինների օպերատիվ ենթակայության տակ չի ենթադրում դրա սեփականատիրոջ փոփոխություն, ուստի և չի առաջացնում վնասի պատճառման դեպքում պատասխանատվության սուբյեկտի փոփոխություն»²³⁸: Գտնում ենք, որ այն դեպքում, երբ առավել վտանգի աղբյուրը, մասնավորապես մեքենան, անցնում է ՆԳ մարմինների ոչ միայն օպերատիվ, այլև տեխնիկական կառավարման տակ, ապա վնասի հատուցման սուբյեկտի հարցը պետք է լուծվի՝ ելնելով ընդհանուր կանոններից, այսինքն՝ առավել վտանգի աղբյուրի տիրապետողներ, ուստի և պատասխանատվության սուբյեկտներ պետք է դիտվեն ՆԳ մարմինները: Միաժամանակ գտնում ենք, որ տվյալ դեպքում վնասի հատուցման պարտականությունն ընկնում է ոչ թե ավտոմեքենան վարող ՆԳ աշխատակցի վրա, այլ համապատասխան մարմնի վրա, որտեղ աշխատում է այդ անձը: Սա բացատրվում է նրանում, որ, տիրապետելով քաղաքացուն պատկանող տրանսպորտային միջոցը, ՆԳ աշխատակիցը կատարել է իր աշխատանքային պարտականությունները, ուստի և պատճառված վնասի համար պատասխանատու է համապատասխան պետական մարմինը²³⁹: Կարծում ենք, որ քննարկվող իրադրության պարագայում բացառվում է, որ հնարավոր լինի նաև համապարտ պատասխանատվության առաջացումը, երբ վնասի հատուցման պարտականություն կունենան և՛ ՆԳ մարմինները, և՛ տրանսպորտի սեփականատեր քաղաքացին:

²³⁸ Տե՛ս Ա. Ի. Загоруйко, նշված աշխատություն, էջ 69, 70:

²³⁹ Տե՛ս նաև С.Е. Донцов, В.В. Глянец, նշված աշխատությունը, էջ 233-234:

Որպեսզի սահմանվի համապարտ պատասխանատվություն մեքենայի սեփականատիրոջ և ներքին գործերի մարմինների համար այն դեպքում, երբ մեքենան վարել է սեփականատերը ՆԳ աշխատակիցների պահանջով, անհրաժեշտ է բոլոր վնաս պատճառողների գործողությունների և վնասի միջև պատճառական կապի առկայությունը, իսկ նման դեպքերում հետիոտնին վրաերթի ենթարկելու ժամանակ վնասի և ավտոմեքենայի սեփականատիրոջ գործողությունների միջև պատճառական կապը բացակայում է, ուստի և չկա հիմք համապարտ պատասխանատվության համար²⁴⁰: Քաղաքացին չպետք է պատասխանատվություն կրի նաև այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցը վարում էր ՆԳ աշխատակիցը: Այստեղ, անշուշտ, մեքենայի սեփականատերը եղել է անգործության մեջ, չի տիրապետել իր մեքենան, ենթարկվել է ՆԳ աշխատակցի օրինական պահանջին, ուստի նրա գործողության կամ անգործության և հասցված վնասի միջև չկա պատճառական կապ, և նա չի կարող հանդես գալ որպես պատասխանատվության սուբյեկտ:

Ըննարկվող հարցի առնչությամբ հիմնականում տրանսպորտային միջոցների՝ որպես առավել վտանգի աղբյուրների տեսակների վրա ինչպես մեր, այնպես էլ ընդհանրապես իրավագիտական գրականության մեջ առանձին իրավագետների կողմից հիմնական ուշադրության սևեռումը բացատրվում է նրանով, որ պրակտիկայում հիմնական դժվարությունները առաջանում են տրանսպորտային միջոցների շահագործման հետ կապված վնասների հատուցման ժամանակ: Միևնույն ժամանակ առավել վտանգի աղբյուրներով պատճառված վնասի գերակշիռ մասը ընկնում է հենց տրանսպորտային միջոցների վրա, որի պատճառ է հանդիսանում նաև այն, որ վերջին ժամանակներս բավականին շատացել են տրանսպորտային միջոցները: Ճանապարհների ոչ բարվոք վիճակը և վարորդների անկանոն վարելը, ինչպես նաև հետիոտների հակաիրավական վարքագիծը ճանապարհները հատելիս պատճառ են դառնում ճանապարհատրանսպորտային պատահարների, որոնց արդյունքում վնասվում են քաղաքացիների սեփականությունը, կյանքն ու առողջությունը: Ավելացել է ինչպես ավտոտրանսպորտի միջոցների, այնպես էլ երկաթու-

²⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 236:

ղային տրանսպորտի միջոցների արագությունը: Այս ամենը թույլ է տալիս տրանսպորտային միջոցները դիտել որպես մշտապես գործող առավել վտանգի աղբյուրների թվում առավել վնասաբեր աղբյուրներ, որոնք պարբերաբար և կայուն կերպով դրսևորում են իրենց վնասաբերությունը: Հարցը, իհարկե, չի կարևորվում միայն մեր հանրապետությունում : Պատահական չէ, որ խնդիրը իր առանձնահատկություններով կարևորվում է նաև այլ երկրներում և սևեռուն ուշադրության է արժանանում միջազգային իրավաբանական գրականության մեջ²⁴¹:

Ինչպես նշվեց վերը, օրենսդիրը որպես հավաքական միավոր նշում է «տրանսպորտային միջոցներ» հասկացությունը, որի տակ իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում հասկացվում են ավտոմեքենաները, մոտոցիկլետները, մոպեդները, տրակտորները, կոմբայնները, տրոլեյբուսները, ավտոբուսները, գնացքները և այլն: Հաճախ առավել վտանգի աղբյուրի տրանսպորտային միջոցների թվին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնք աշխատանքի են գցվում մեխանիկական շարժիչի էներգիայով: Առաջարկվում է որպես առավել վտանգի աղբյուր դիտել մեքենաները, մոտոցիկլետները, մոպեդները և մոտոբուսները, որոնք ունեն 49.8 սմ³ ծավալով շարժիչ 2 ձիաուժ մինիմալ հզորությամբ²⁴²: Կարծում ենք՝ տրանսպորտային միջոցը որպես առավել վտանգի աղբյուր դիտելու հարցում ուշադրություն պետք է դարձվի նաև էլեկտրատրանսպորտին, քանի որ այս դեպքում վնաս հասցնելու հնարավորությունը մեծանում է՝ կապված այդ տրանսպորտը աշխատեցնող էլեկտրալարերի և դրանցով անցնող բարձր լարման հոսանքի հետ²⁴³:

²⁴¹ Տե՛ս նաև С.Е. Донцов, В.В. Глянцев, նշված աշխատությունը, էջ 226-227:

²⁴² Տե՛ս С.Е. Донцов, В.В. Глянцев, նույն տեղում:

²⁴³ «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ-ում տրանսպորտի տեսակներն են՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային, վերգետնյա էլեկտրական, մետրոպոլիտենի և խողովակաշարային:

§5. Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման մյուս սուբյեկտները

ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածի երկրորդ մասը առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության սուբյեկտ է համարում նաև այն անձանց, ովքեր ապօրինի տիրապետել են աղբյուրը: Ուկրաինայի գերագույն դատարանի 1992թ. մարտի 27-ի պլենումի որոշման երրորդ կետով այսպիսի պատասխանատվության համար որպես պայման են նշվում հետևյալ երկու նախադրյալները.

ա) առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել այն տիրապետողի կամ այն այլ օրինական կարգով տիրապետողի տրամադրության տակից՝ վերջինիս կամքին հակառակ,

բ) երրորդ անձանց կողմից այդ աղբյուրին տիրապետելը կրել է հակաօրինական բնույթ²⁴⁴:

ՀՀ Քաղ. օր.-ը որպես պայման նշում է այլ անձանց ապօրինի գործողությունները, որոնց հետևանքով առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետման տակից: Երրորդ անձանց կողմից առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման պայման է ամրագրված դեռևս ԽՍՀՄ գերագույն դատարանի պլենումի 1963թ. հոկտեմբերի 23-ի որոշման 5-րդ կետում, որտեղ ասվում է. «Առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրով պատճառված վնասի համար, եթե ապացուցի, որ վերջինս դուրս է եկել իր տիրապետությունից երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով: Այս պայմանների առկայության դեպքում պատճառված վնասի համար երրորդ անձանց պատասխանատվությունը պետք է որոշվի Հիմունքների 90 հոդվածի կանոններին համապատասխան: Երրորդ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով սեփականատիրոջ տիրապետման տակից դուրս եկած առավել վտանգի աղբյուրով վնաս պատճառելու ժամանակ, երբ առկա է նաև սեփականատիրոջ մեղքը, վնասի հատուցման պարտականությունը կարող է դրվել ինչպես այն անձի վրա, ով օգտագործել է առավել

²⁴⁴ Տե՛ս А. И. Загородько, նշված աշխատությունը, էջ 71:

վտանգի աղբյուրը, այնպես էլ հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները՝ նրա սեփականատիրոջ վրա: Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ այսպիսի պատասխանատվությունը կարող է ծագել մասնավորապես այն դեպքում, երբ նրա մեղքով չի իրականացվել առավել վտանգի աղբյուրի անհրաժեշտ պաշտպանությունը»²⁴⁵:

Խնդիրը տարակարծությունների տեղիք է տվել նաև Ֆրանսիայում: Նույնիսկ կարծիքներ են հայտնվել, որ այս դեպքում պատասխանատվություն պետք է կրի սեփականատերը, քանի որ վերջինս իրավաբանորեն շարունակում է մեքենայի նկատմամբ հսկողություն իրականացնել: Սակայն 1941թ. դեկտեմբերի 2-ի վերաքննիչ դատարանի բոլոր պալատների պլենումը որոշում է. «գրկվելով իր մեքենան օգտագործելուց, դեկավարելուց և այն վարելուց՝ սեփականատերը այլևս չի իրականացնում հսկողություն դրա նկատմամբ»: Սակայն միևնույն ժամանակ վերաքննիչ դատարանը, համաձայն քաղ. օր-ի 1382 հոդվածի, ընդունում է սեփականատիրոջ պատասխանատվությունը տուժողի նկատմամբ, որը կապացուցի, որ մեքենայի սեփականատերը համապատասխան հսկողություն չի իրականացրել մեքենայի նկատմամբ (օրինակ՝ ճանապարհի վրա թողնելը), որը պատճառ է հանդիսացել վնասի: Սեփականատերը չի ազատվում իրի կողմից հասցված վնասի համար պատասխանատվությունից, եթե իրը գտնվել է վերջինիս ծառայի տիրապետման տակ»²⁴⁶:

Պետք է նշել, որ առավել վտանգի աղբյուրի տիրոջ պատասխանատվության պայմանը այն դեպքում, երբ աղբյուրը դուրս է եկել նրա տիրապետության տակից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, սակայն կա նաև սեփականատիրոջ մեղավորությունը, ամրագրված է նաև ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածում, որտեղ ասվում է. «Աղբյուրի սեփականատիրոջ տիրապետումից այդ աղբյուրի ապօրինի վերցնելու մեջ նրա մեղքի առկայության դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի տիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա»: Իմիջիայրոց, նմանատիպ կարգ են կիրառում նաև Ուկրաինայի դատարանները²⁴⁷: Այստեղ առաջանում է մի կարևոր հարց. ո՞վ կկրի պա-

²⁴⁵ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 34:

²⁴⁶ Տե՛ս Л. Жюллио Де Ла Морандьер, նշված աշխատությունը, էջ 458:

²⁴⁷ Այդ նախին տե՛ս А. И. Загорюлько, նշված աշխատությունը, նույն տեղում:

տասխանատվություն այն դեպքում, երբ սեփականատերը առավել վտանգի աղբյուրը վարձակալության պայմանագրով կամ այլ օրինական հիմքով տվել է օգտագործման, և աղբյուրը ապօրինի դուրս է եկել վարձակալի կամ օգտագործողի տիրապետության տակից: Ակնհայտ է, որ այս դեպքում աղբյուրը սեփականատիրոջ տիրապետության տակից ապօրինի դուրս չի գալիս, քանզի սեփականատերը պայմանագրով այն հանձնել է մեկ այլ անձի: Աղբյուրը ապօրինի դուրս է գալիս այն օրինական տիրապետողի տիրապետության տակից, սակայն օրենքը խոսում է միայն սեփականատիրոջ տիրապետության տակից աղբյուրը ապօրինի դուրս գալու մասին: Գտնում ենք, որ հողվածի նմանատիպ ձևակերպումը սխալ է, քանի որ սեփականատիրոջից բացի այլ օրինական տիրապետողի տիրապետման տակից առավել վտանգի աղբյուրի ապօրինի դուրս գալու յուրաքանչյուր դեպքում կարելի է ապացուցել, որ աղբյուրը սեփականատիրոջ տիրապետության տակից ապօրինի չի դուրս եկել, և պատասխանատվության կանչել վերջինիս: Ելնելով արդարության և պատճառված վնասի համար իրական պատասխանատու անձին պատասխանատվության կանչելու սկզբունքից, կարծում ենք, որ այն դեպքում, երբ առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել սեփականատիրոջ կամ այն տիրապետողի տիրապետությունից ապօրինի, ապա վնասի հատուցման պարտականությունը պետք է կրի աղբյուրը ապօրինի տիրապետողը, իսկ այն դեպքում, երբ աղբյուրի ապօրինի տիրապետմանը նպաստել է դրա սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի անփութությունը, ապա վնասի հատուցման պարտականությունը, բացի ապօրինի տիրապետողի վրա դնելուց, կարող է դրվել նաև այն անձի վրա, ով տվյալ պահին տիրապետել է առավել վտանգի աղբյուրը:

Պետք է նշել, որ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվությունը ինչպես աղբյուրի սեփականատիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա դնելը ունի իր տրամաբանական բացատրությունը, այն է. առավել վտանգի աղբյուրի սեփականատերը գիտակցում է, որ իր տիրապետման տակ է գտնվում առարկա, որը անկանխատեսելի հատկություններ ունի և կարող է անկախ տիրապետողի կամքից վնաս պատճառել շրջապատին: Աղբյուրի սեփականատերը հասկանում է, որ աղբյուրի

արդեն գոյությունը որոշակի վտանգ է սպառնում շրջապատի համար, որի համար պատասխանատու է ինքը, ուստի պարտավոր է այնպես պահպանել այդ աղբյուրը, որ այն ապօրինի չանցնի այն տիրապետելու և օգտագործելու լիազորություն չունեցող անձանց տիրապետության տակ. օրինակ, մեքենան կանգառում կանգնեցնելուց հետո փակի դռները, բարձրացնի ապակիները և այլն: Կարծում ենք, որ այդպիսի պատշաճ վերաբերմունք չդրստորելը արդյունք է առավել վտանգի աղբյուրի տիրոջ մոտ հանցավոր անփութության, որը ի վերջո այդ աղբյուրով վնասի պատճառման հետևանք կարող է հանդիսանալ, ուստի և դրա սեփականատերը իր անփութության համար ենթակա է քաղաքացիաիրավական պատասխանատվության:

Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի փոխհատուցման մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև անչափահասների պատասխանատվության հարցին: Պրակտիկայում, կարծում ենք, նմանատիպ խնդիր կարող է առաջանալ, երբ խոսքը վերաբերում է սահմանափակ գործունակությամբ օժտված 14-18 տարեկան անչափահասներին: Կարծում ենք՝ այն դեպքերում, երբ, օրինակ, մեքենան վարում է փոքրահասակը, վնասի հատուցման հարցը միանշանակ պետք է դրվի այդ փոքրահասակի ծնողների կամ խնամակալների վրա: Հետաքրքիր է հարցի լուծումը այն ժամանակ, երբ մեքենան տրված է վարելու սեփականատիրոջ տասնյոթամյա որդուն: Ա.Մ. Բելյակովան գտնում է, որ այս դեպքում պետք է սահմանվի համապարտ պատասխանատվություն: Հեղինակը նշում է, որ այս դեպքում անչափահասը պետք է պատասխանատվության ենթարկվի առանց մեղքի պատասխանատվության սկզբունքով, քանի որ, ինչպես նշվում է և՛ նախկին ԽՍՀՄ, և՛ ներկայիս Հայաստանի քաղաքացիական օրենսդրություններում. «15-18 (ՀՀ դեպքում 14-18) տարեկան դարձած անչափահասը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով»: Հեղինակը նշում է նաև, որ անչափահասի հետ պետք է համապարտ պատասխանատվության ենթարկվի նաև ծնողը՝ մեքենայի սեփականատերը²⁴⁸: Կարծում ենք՝ այն դեպքերում, երբ անչափահասը չունի վնասի հատուցման համար բավարար միջոցներ, պատասխանատվության ողջ ծանրությունը, համա-

²⁴⁸ Стену Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 40:

ձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1068 հոդվածի, պետք է կրի ծնողը, եթե չապացուցի, որ վնասը պատճառվել է ոչ իր մեղքով: Այստեղ խոսքը անչափահասի նկատմամբ պատշաճ հսկողություն չիրականացնելու մասին է: Բելյակովան գտնում է, որ ծնողների մեղքը անչափահասի նկատմամբ ոչ պատշաճ հսկողություն իրականացնելու կապակցությամբ կարող է հաստատվել նաև այն ժամանակ, երբ վնաս պատճառողը պատասխանատվություն է կրում առանց մեղքի հասցված վնասի համար: Հեղինակը գտնում է նաև, որ այն դեպքում, երբ անչափահասը չունի եկամտի ինքնուրույն աղբյուր, վնասը ամբողջովին պետք է հատուցվի ծնողների կողմից: Սակայն չափահասության հասնելու կամ անչափահասի մոտ եկամուտ կամ ունեցվածք հայտնվելու դեպքում համապարտ պատասխանատվությունը պետք է վերականգնվի²⁴⁹: Համաձայնվելով հեղինակի հետ՝ կցանկանայինք անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ, օրինակ, կապված ավտոմեքենայի տիրապետման հետ, օրենքը պահանջում է համապատասխան տարիքին հասնելը (18 տարեկան) և վարորդական իրավունքի առկայությունը: Կարծում ենք՝ դատարաններում անչափահասների կողմից առավել վտանգի աղբյուրով՝ տվյալ դեպքում ավտոմեքենայով, պատճառված վնասի փոխհատուցման հարցը քննելիս, երբ այդ աղբյուրը անցել է անչափահասի տիրապետման տակ ծնողի թույլտվությամբ, հատկապես պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ծնողը գիտակցել է, որ տրամադրում է մեքենան մի անձի, որը ոչ միայն չունի օրինական հիմք մեքենան տիրապետելու (լիազորագիր, վարձակալություն կամ այլն), այլև չունի նաև այն վարելու իրավունք: Այս դեպքում, կարծում ենք, պատասխանատվությունը պետք է լինի ոչ թե համապարտ, այլ բաժնային, որտեղ ավելի մեծ պետք է լինի հենց ծնողի պատասխանատվության չափը:

Անշուշտ, ներկայացնել գործունեության առավել վտանգի աղբյուրները և խնդիրը համարել լուծված՝ բավարարվելով միայն տրանսպորտային միջոցների մասին խոսելով, կարծում ենք, ճիշտ չի լինի, ուստի կցանկանայինք անդրադառնալ նաև օրենքում թվարկված գործունեության մյուս՝ առավել վտանգի աղբյուրներին: ՀՀ

²⁴⁹ St'u Белякова А.М., նշված աշխատությունը, նույն տեղում:

Քաղ. օր.-ը գործունեության առավել վտանգի աղբյուրների թվին է դասում նաև շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացումը, պայթուցիկ, ուժեղ ներգործող նյութերի և այլնի օգտագործումը: Մրա հետ կապված առավել վտանգի աղբյուրներ են հանդիսանում տարբեր մեխանիզմներով իրականացվող շինարարությունները: Մեզանում շինարարական աշխատանքները որպես կանոն իրականացվում են շինարարական կազմակերպությունների կողմից, որոնք պատվիրատուի մոտ հանդես են գալիս որպես կապալառուներ: Առանձին մասնագիտացում պահանջող աշխատանքները իրականացվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից, օրինակ, սանտեխնիկայի անցկացում, էլեկտրականության անցկացում և այլն: Այստեղ կարևոր է այն հարցի պարզաբանումը, թե ովքեր են հանդիսանում պատասխանատու, երբ վնաս է պատճառվել շինարարական աշխատանքների կատարման ժամանակ: Ինչպես նշում է Ա.Մ. Բելյակովան, դատական պրակտիկան այս հարցի կապակցությամբ տարբեր ժամանակներում դրսևորել է տարբեր մոտեցումներ: 30-ական թվականներին պրակտիկան գնում էր այն ուղղությամբ, որ կապալառուի և պատվիրատուի համար հաստատվում էր համապարտ պատասխանատվություն շինարարության ժամանակ պատճառված վնասի համար: Այս պրակտիկան իր արտացոլումն էր գտել ԽՍՀՄ Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով վերաքննիչ կոլեգիայի 1930թ. «Վնասաբեր գործերի վերաբերյալ դատական պրակտիկայի մասին» ուղղորդող նամակում, որում նշված էր, որ հսկողությունը կապալով կատարվող աշխատանքների նկատմամբ ընկնում է ինչպես պատվիրատուի, այնպես էլ կապալառուի վրա, և վնասի դեպքում նրանք երկուսն էլ պատասխանատու են դրա համար²⁵⁰: Սակայն ի տարբերություն ԽՍՀՄ Գերագույն դատարանի քաղաքացիական գործերով վերաքննիչ կոլեգիայի վերոնշյալ որոշման, ներկայումս, համաձայն հեղինակի, կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ շինարարության դեպքում պատճառված վնասի համար պատասխանատվությունը պետք է կրի կապալառու կազմակերպությունը: Եվ դարձյալ համաձայն հեղինակի, պատվիրատուն կարող է պատասխանատվության սուր-

²⁵⁰ Стену Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 29:

յեկտ դարձվել միայն այն ժամանակ, երբ պայմանագրի ուժով վերջինս իրականացնում է հսկողությունը աշխատանքների ընթացքի նկատմամբ կամ էլ, երբ շինարարական աշխատանքները կատարվում են պատվիրատուի արտադրատարածքներում կամ ձեռնարկություններում²⁵¹: Սա, կարծում ենք, կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ շինարարական աշխատանքները կատարվում են պատվիրատուի արտադրատարածքում: Մասնագիտացված ձեռնարկությունները, մեր կարծիքով, կարող են պատասխանատու լինել միայն այն ժամանակ, երբ վնասը պատճառվել է նրանց աշխատանքների ժամանակ: Սակայն այս ժամանակ ևս գլխավոր կապալառուն պարտավոր է ամեն ինչ անել ապահովելու համար շինարարական աշխատանքների կատարման անվտանգությունը:

Ճապոնիայի Քադ. օր.-ի 717 հոդվածը սահմանում է պատասխանատվություն շինության սեփականատիրոջ կամ տիրապետողի համար: Այսպես, անցորդներին շինության փլուզման հետևանքով վնասելու դեպքում պատասխանատվությունը նախ և առաջ կրում է տվյալ շինությունը տիպաետողը, օրինակ, բնակարանի վարձակալը: Սակայն վերջինս ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ ինքը համապատասխան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել է վնասի կանխման համար: Նման դեպքում պատասխանատվությունը դրվում է սեփականատիրոջ վրա, ընդ որում, սեփականատիրոջ դեպքում, փաստորեն, չեն ընդունվում նրա պատասխանատվությունից ազատման հիմքերը, որի ուժով հաստատվում է առանց մեղքի պատասխանատվությունը²⁵²: Պատասխանատվության այսպիսի տեսակը ճապոնական իրավաբանական գրականության մեջ անվանվում է «պատասխանատվություն ռիսկի համար»: Ընդ որում, գրականության մեջ կարծիք է հայտնվում նաև, որ խոսելով միայն շինությունների մասին՝ Քադ. օր.-ը հետ է ընկել ժամանակից, քանի որ բացի շինություններից՝ ժամանակակից կյանքում գոյություն ունեն նաև վտանգավոր ապրանքներ և այլն, ուստի և Ճապոնիայի Քադ. օր.-ի վերոնշյալ դրույթները պետք է ավելի լայն մեկնարանվեն²⁵³:

²⁵¹ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 30:

²⁵² Տե՛ս նույն տեղում:

²⁵³ Տե՛ս Сакаэ Вагацума, Тору Ариидзуми, նշված աշխատությունը, նույն տեղում:

Վերոհիշյալ դեպքում պատասխանատվության պայմաններ են հաղիսանում հետևյալ հանգամանքները: Առաջինը վնասի առաջացումն է՝ կապված շինության հետ: Շինության տակ հասկացվում են շենքերը, կամուրջները, էլեկտրալարերի հենասյուները, այսինքն բոլոր կառույցները՝ կապված հողի հետ (Ճապոնիայի Գերագույն դատարանի 1916թ. հունիսի 1-ի որոշում): Գերագույն դատարանի 1962թ. ապրիլի 26-ի որոշմամբ այդ ցանկը լրացվել է նաև հանքահորերի, գործարանների սարքավորումների մեծ մասով և այլն:

Պատասխանատվության երկրորդ պայմանը այդպիսի շինությունների կառուցման և պահպանման թերության առկայությունն է: Թերությունը հասկացվում է ինչպես նյութական, այնպես էլ ֆունկցիոնալ իմաստով:

Երրորդ պայմանն այն է, որ անհրաժեշտ է, որպեսզի վնասը առաջանա այդպիսի թերության հետևանքով, սակայն պարտադիր չէ, որ այն լինի վնասի առաջացման միակ պատճառը: Եթե պարզվի, որ դրա պատճառ են հանդիսացել այլ անձինք, օրինակ՝ կապալառու, ապա սեփականատերը իրավունք է պահպանում ռեգրեսիվ հայցով հանդես գալու այդ անձանց դեմ²⁵⁴:

ՀՀ Քաղ. օր.-ը, անդրադառնալով անշարժ գույքով պատճառված վնասի հատուցման խնդրին, սահմանում է, որ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Այնուհետև Օրենսգիրքը նշում է, որ 1071¹ հոդվածի 1-ին մասով նախատեսված վնասը հատուցելու պարտականությունը կրում է անշարժ գույքը տիրապետման, կառուցապատման կամ օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման և այլն) իրավունք ունեցող անձը, եթե վնասը պատճառվել է այդ իրավունքով հատկացված անշարժ գույքի տիրապետման կամ օգտագործման ընթացքում, և եթե այլ բան նախատեսված չէ անշարժ գույքի սեփա-

²⁵⁴ St'u Сакаэ Вагацума, Тору Ариидзуми, նույն տեղում:

կանատիրոջ և անշարժ գույքը տիրապետող կամ օգտագործող անձի միջև կնքված պայմանագրով:

1071¹ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում անշարժ գույքի սեփականատերը անշարժ գույքը տիրապետողի կամ օգտագործողի հետ կրում է համապարտ պատասխանատվություն պատճառված վնասի համար, եթե անշարժ գույքը այն տիրապետողի կամ օգտագործողի կողմից չի օգտագործվել ձեռնարկատիրական նպատակով, և եթե վնասը չի առաջացել անշարժ գույքը ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու հետևանքով, բացառությամբ կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի, որի դեպքում անշարժ գույքի օգտագործման, տիրապետման և շահագործման ընթացքում պատճառված վնասի հատուցման պարտականությունը կրում է կառուցապատողը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձին պատճառված վնասը հատուցած անշարժ գույքի սեփականատերը հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այն անձի նկատմամբ, որի մեղքով պատճառվել է վնասը՝ իր կողմից տրված հատուցման չափով:

Ուժեղ ներգործող նյութերի թվին դատական պրակտիկան նախ և առաջ դասում է ուժեղ ներգործող թունավոր նյութերը, որոնք օժտված են ուժեղ բացասական ազդեցությամբ (բարձր թունավորման, օդում տարածվելու ունակություն և այլն) մարդու օրգանիզմի վրա նույնիսկ դրանց նորմալ պայմաններում օգտագործման ժամանակ²⁵⁵:

Պայթուցիկ և դյուրավառ նյութերում թաքնված էներգիան և դրանց ավերիչ հնարավորությունները թույլ են տալիս այդպիսի նյութերի պատրաստման հումքը, ինչպես նաև բենզինը, բենզոլը, կերոսինը, դեմատուրատը, եթերը և այլ նմանատիպ նյութերը նույնպես դիտել որպես առավել վտանգի աղբյուրներ²⁵⁶:

Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, առավել վտանգի աղբյուրների համար կարևոր են ոչ միայն որակական, այլև քանակական հատկությունները. փաստ, որը, կարծում ենք,

²⁵⁵ Տե՛ս С.Е. Донцов, В.В. Глянцев, նշված աշխատությունը, էջ 224:

²⁵⁶ Տե՛ս նույն տեղում:

հատկապես կարևորվում է, երբ խոսքը վերաբերում է ուժեղ ազդեցության և պայթուցիկ նյութերին: Այսպես, օրինակ, բենզինը, եթերը, բենզոլը և մյուս նյութերը, որոնց գոլորշիացումը վտանգավոր է մարդկանց և շրջապատի համար, իրենց մեջ պարունակելով պայթյունատանգ հատկություններ, քիչ քանակություններով չեն դրսևորում առավել վտանգի աղբյուրին բնորոշ հատկություններ: Նույնը կարելի է ասել նաև թույների որոշ տեսակների մասին, որոնք բժշկական նպատակներով կարող են օգտագործվել քիչ քանակություններով և չդրսևորել իրենց վնասակար հատկությունները: Եվ, ընդհակառակը, դրանց մեծ քանակությունները իրենցից անշուշտ ներկայացնում են առավել վտանգի աղբյուր: Համաձայն ենք հեղինակների այն տեսակետի հետ, որ այն դեպքերում, երբ վերոնշյալ նյութերով վնաս է պատճառվում շրջակա միջավայրին, պետք է ոչ միայն վարչական պատասխանատվության ենթարկել այդ նյութերը շահագործող կազմակերպությունների ղեկավարներին, այլև առաջ քաշել նյութերի հետևանքով մարդկանց կյանքին և առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը:

Գտնում ենք նաև, որ շրջապատը առավել պաշտպանված կլինի վերոնշյալ առավել վտանգի աղբյուրների վնասակար ազդեցությունից, եթե մասնագետները տան այդ նյութերի սպառիչ ցանկը, որոնց պահպանումը, օգտագործումը և տեղափոխումը հատուկ կարգավորված կլինի:

Գործունեության առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման կարևոր հարց է վնասի հատուցման իրավունք ունեցող անձանց շրջանակի որոշումը: ՀՀ քաղ. օր-ի 1058 հոդվածը սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Հոդվածից բխում է, որ շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառված վնասի դեպքում հատուցման իրավունք է ստանում այն անձը, ում գույքին, կյանքին կամ առողջությանը պատճառվել է վնասը: Իսկ այն դեպքերում, երբ պատճառված վնասի արդյունքում անձը մահացել է, վնասի հատուցման

իրավունք են ստանում կերակրողի մահվան հետևանքով վնաս կրած անձինք²⁵⁷:

Այժմ կցանկանալինք քննարկել մի շարք նրբություններ, որոնք կարող են առաջանալ ուղևորների կյանքին և առողջությանը առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքում: Գատական պրակտիկան կիրառում է այն մոտեցումը, որ պայմանագրային հարաբերությունների շրջանակից հանում է ուղևորին տրանսպորտային կազմակերպության կողմից հասցված վնասի փոխհատուցման հարցը՝ դիտելով այն արտապայմանագրային պատասխանատվության տեսակ: Քննարկվող պատասխանատվության տեսակը որպես արտապայմանագրային դիտելը դատարանին տալիս է մարդու այնպիսի իրավունքների պաշտպանության ավելի լայն հնարավորություններ, ինչպիսիք են կյանքը և առողջությունը:

Կարծում ենք, այս մոտեցումը ճիշտ է, քանի որ շատ հաճախ տրանսպորտային միջոցի մեջ է հայտնվում ուղևոր, որը կարծես թե ունենում է հյուրի կարգավիճակ: Այսինքն, շատ են հանդիպում դեպքեր, երբ մեքենայի վարորդը ճանապարհին, ուղղակի դրսևորելով բարի կամք, առանց շահի տեղափոխում է ուղևորի: Սա, ի տարբերություն մասնագիտացված ուղևորատրանսպորտային ձեռնարկության, որի հիմնական ֆունկցիան է ուղևորների տեղափոխումը մի վայրից մեկ այլ վայր փոխհատուցման կամ վճարման պայմանով, ունի փոքր ինչ այլ բնույթ: Այս դեպքում սեփական մեքենայի տերը չի զբաղվում վճարովի սկզբունքներով ուղևորների փոխադրմամբ: Եվ, եթե առաջին դեպքում կազմակերպությունը կամ վճարովի տրանսպորտային ծառայություններ մատուցող ձեռնարկատերը ի սկզբանե ստանձնում է կոնկրետ պարտավորություններ ուղևորների նկատմամբ, ապա երկրորդ դեպքում նշված պայմանավորվածությունը բացակայում է: Այստեղից էլ պրակտիկայում կարող են հարցեր առաջանալ. արդյոք կարելի՞ է մեքենայի մեջ գտնվողներին համարել ուղևորներ, թե՞ ոչ, արդյոք մեքենայի սեփականատերը պատասխանատու՞ է այդ անձանց առջև Քաղ. օր.-ի 1072 հոդվածին համապա-

²⁵⁷ Տե՛ս ԳԳ Քաղ. օր. հոդված 1081: Այս հոդվածին մենք մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլխուներում, ուստի այժմ դրան անդրադառնալը գտնում ենք աննպատակահարմար:

տասխան, եթե վերջիններս վնասվածք են ստացել մեքենան նստելիս կամ մեքենայից իջնելիս:

Անշուշտ, սրանք հարցեր են, որոնք չեն կարող ունենալ միանշանակ պատասխաններ: Պրակտիկայում հնարավոր են նաև դեպքեր, երբ սեփական մեքենայի ուղևորը մեքենայի համասեփականատերերից մեկն է և վնասվածք է ստացել ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով: Այս դեպքում արդյոք վերջինս կարո՞ղ է պահանջել վնասի հատուցում իր ամուսնուց, որը նույնպես հանդիսացել է համասեփականատեր և վթարի պահին վարել է ավտոմեքենան:

Կարծում ենք՝ ամեն դեպքում վնասի հատուցման իրավունք ունեցող անձի իրավունքը ճանաչելու համար դատարանները պետք է ելնեն կոնկրետ գործի նյութերից, ուշադրություն դարձնեն վնասի պատճառ հանդիսացող բոլոր հանգամանքներին:

ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ առավել վտանգի աղբյուրների փոխներգործության հետևանքով նրանց տերերին պաճառված վնասը հատուցվում է ընդհանուր հիմունքներով: Այսինքն, հոդվածից կարելի է հետևություն անել, որ յուրաքանչյուր կողմ պետք է հատուցի մյուս կողմին իր պատճառած վնասը: Իրավաբանական գրականության մեջ արտահայտվում է այն տեսակետը, որ քննարկվող դեպքում դատական պրակտիկան պետք է խնդիրը լուծի՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

1. Եթե տուժողի դերում հանդես են գալիս ոչ թե առավել վտանգի աղբյուրների սեփականատերերը, այլ երրորդ անձինք, ապա վնասի հատուցման պարտականությունը դրվում է իրավիճակի մեջ առկա բոլոր՝ վտանգի աղբյուրների սեփականատերերի կամ տիրապետողների վրա համապարտության կարգով՝ անկախ այն հանգամանքից, թե ում մեղքով է վնասը հասցվել,

2. Եթե վթարի հետևանքով վնաս է հասցվել վթարի մեջ եղած առավել վտանգի աղբյուրներից որևէ մեկի տիրոջը, ապա պատասխանատվությունը կրում է այն անձը, ով մեղավոր էր վթարի առաջացման մեջ,

3. Եթե երկու կողմերն էլ մեղավոր են, ապա վնասի հատուցման չափը որոշվում է նրանցից յուրաքանչյուրի մեղքին համապատասխան²⁵⁸:

Այս կապակցությամբ կցանկանալինք հղում կատարել ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի 1986թ. սեպտեմբերի 5-ի որոշմանը, որտեղ մեկնաբանված է մի քանի առավել վտանգի աղբյուրների փոխներգործությամբ պատճառված վնասի հատուցման կարգը:

Այսպես, եթե վնաս է պատճառվել առավել վտանգի մի քանի աղբյուրների փոխներգործության հետևանքով, ապա այդ աղբյուրների տերերի նյութական պատասխանատվության հարցի որոշման ժամանակ դատարանները պետք է նկատի ունենան, որ.

1. մի առավել վտանգի աղբյուրը տիրապետողին մյուս աղբյուրը տիրապետողի կողմից պատճառված վնասը ենթակա է հատուցման մեղավոր կողմի կողմից,

2. եթե առկա է միայն առավել վտանգի աղբյուրը տիրապետողի մեղքը, ում վնաս է հասցվել, ապա նրան հասցված վնասը չի հատուցվում,

3. երկու տիրապետողների մեղքի առկայության դեպքում վնասի հատուցման չափը որոշվում է՝ ելնելով նրանցից յուրաքանչյուրի մեղքի աստիճանից,

4. առավել վտանգի աղբյուրը տիրապետողների մոտ փոխադարձ վնասի պատճառման մեջ մեղքի բացակայության դեպքում (անկախ վնասի չափից) նրանցից ոչ մեկը չունի վնասի հատուցման իրավունք,

5. այլ անձանց վնաս պատճառելու դեպքում համատեղ վնաս պատճառած սեփականատերերը տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Միաժամանակ նշվում է նաև, որ առավել վտանգի աղբյուրի սեփականատերը ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից ոչ իր մեղքով, այլ ուրիշ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով²⁵⁹:

²⁵⁸ Ст 6 նաև Гражданское право, обязательственное право, учебник, էջ 623, Э.

Абашин, նույն աշխատությունը, էջ 36:

²⁵⁹ Ст 6 С.Е. Донцов, В.В. Глянцев, նշված աշխատությունը, էջ 239:

§6. Շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցումից ազատող հանգամանքները

Ինչպես նշվեց, քաղաքացիական իրավունքում շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ պատճառված վնասի հետևանքով առաջացող պարտավորություններն ունեն ուրույն դեր: Կապված այն հանգամանքի հետ, որ այս ինստիտուտը սահմանում է պատասխանատվության առանձնահատուկ կարգ՝ առանց մեղքի պատասխանատվություն, առանձնահատուկ ուսումնասիրության կարիք են զգում այն հանգամանքները, որոնք կազատեն առավել վտանգի աղբյուրի տիրոջը այդ աղբյուրով վնաս պատճառելու դեպքում առաջացող պատասխանատվությունից: Ինչպես նշում է Օ.Ա. Կրասավչիկովը, առավել վտանգի աղբյուրի տիրոջը տուժողին պատճառված վնասի հատուցումից ազատելու հիմք է համարվում իրավաբանական փաստը, որի հետ իրավունքի նորմերը կապում են կամ վերոնշյալ պարտավորության լիիրավ բացառումը, կամ էլ դրա գույքային ծավալի փոքրացումը²⁶⁰: Ելնելով վերոնշյալից՝ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող հիմքերը կարող են դասվել հետևյալ խմբերի.

1. իրավաբանական փաստեր, որոնք ամբողջովին ազատում են առավել վտանգի աղբյուրի տիրոջը պատասխանատվությունից,

2. իրավաբանական փաստեր, որոնք առավել վտանգի աղբյուրի տիրոջը մասնակիորեն են ազատում պատճառված վնասի հատուցումից:

Խոսելով Ֆրանսիայի օրենսդրության մասին՝ Լ.Ժյուլիո դե լա Մորանդյերը նշում է, որ կանխավարկածը, որի հիման վրա անձը ենթարկվում է պատասխանատվության, կարող է մերժվել միայն այն բանի ապացուցմամբ, որ վնասը պատճառվել է պատահականությամբ կամ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ, կամ կողմնակի

²⁶⁰ См. О. А. Красавчиков, Возмещения вреда, причиненного источником повышенной опасности. М. Юрид. Лит., 1966г., т.2 178:

ուժի ազդեցությամբ, որի առկայությունը չի կարող դիտվել որպես իրի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի մեղք: Միևնույն ժամանակ հեղինակը նշում է, որ անձը չի կարող ազատվել պատասխանատվությունից՝ ապացուցելով, որ ինքը մեղավոր գործողություններ չի կատարել, կամ որ վնասի առաջացման պատճառը իրեն հայտնի չէ²⁶¹:

Անձը ազատվում է պատասխանատվությունից նաև տուժողի կամ երրորդ անձանց մեղավոր գործողությունների առկայության դեպքում, եթե ապացուցում է, որ այդ գործողությունները իր համար անկանխատեսելի և անխուսափելի էին և ունեին պատահարի կամ անհատաբանարելի ուժի բնույթ: Ընդ որում, կարևոր է, որ տուժողի կամ երրորդ անձի գործողություններում մեղավորության հատկանիշները, որոնց առկայությունը կազատի վնաս պատճառած իրի տիրոջը պատասխանատվությունից, լինեն միակ և կանխորոշիչ պայման վնասի համար: Մյուս դեպքերում դատական պրակտիկան թույլ է տալիս անհատաբանարելի ուժի հաշվի առնումը (կամ էլ մեղավորի, երրորդ անձի մեղավոր գործողությունները), որը բերում է պատասխանատվության ծավալի սովորական սահմանափակման կամ դրա բաժանմանը վնասի համար մեղավոր մյուս անձանց միջև²⁶²: Եթե երրորդ անձի գործողությունները չեն հանդիսացել վնասի միակ պատճառը, ապա երրորդ անձը պատասխանատվություն է կրում *in solidum* (տալիս) այն անձի հետ, որը հսկողություն էր իրականացնում իրի նկատմամբ, և նրանցից յուրաքանչյուրը, ով կվճարի փխհատուցումը, ռեգրեսիվ հայցի իրավունք է ձեռք բերում մյուսի դեմ:

ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածը սահմանում է, որ իրավաբանական անձը և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ, պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը: Ընդ որում, այսպիսի աղբյուրներով պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունն այն է, որ պատասխանատվության համար պարտադիր չէ մեղքի առկայությունը: Քաղ. օր.-ի նույն հոդվածը սահմանում է նաև, որ առավել վտանգի աղբյուրը սեփականության

²⁶¹ Տե՛ս Ս. Жюллио Де Ла Морандьер, Гражданское право Франции, М., 1960г., т2 458.:

²⁶² Տե՛ս Ս. Жюллио Де Ла Морандьер, նշված աշխատությունը, նույն տեղում:

կամ այլ օրինական իրավունքով տիրապետող անձը կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե ապացուցի, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: Այսպիսով, օրենսգիրքը որպես առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանքներ է նշում անհաղթահարելի ուժը և տուժողի դիտավորությունը, որոնք կարող ենք դասել վերոնշյալ խմբերից առաջինում՝ այսինքն հանգամանքներ, որոնք լրիվ ազատում են պատասխանատվությունից:

Անհաղթահարելի ուժի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Հեղինակների մի մասը գտնում է, որ որպես անհաղթահարելի ուժ պետք է հասկանալ իր բնույթով առանձնահատուկ այն իրադարձությունը, որը կապված է առավել վտանգի աղբյուրի հետ արտաքինից. անկանխելի՝ տվյալ պահին հասարակության տեխնիկական և տնտեսական զարգացածության տեսակետից²⁶³: Օ.Ա. Կրասավչիկովը գտնում է, որ ավելի ստույգ են այն հեղինակները, որոնք դիտում են անհաղթահարելի ուժը օբյեկտիվ ֆակտորի տեսանկյունից, որը պատճառական կապ չունի առավել վտանգի աղբյուրի տիրոջ գործունեության հետ, և որի դրսևորումներն են տարբեր տեսակի տարերային աղետները, քանի որ չնայած դրանք հնարավոր է կանխատեսել, սակայն անհնար է կանխել: Ամփոփելով վերոնշյալը՝ հեղինակը գտնում է, որ որպես առավել վտանգի աղբյուր պետք է հասկանալ այդ աղբյուրի տիրոջ հետ պատճառական կապ չունեցող օբյեկտիվ - պատահականը, որի հետևանքով առաջացող բնության այս կամ այն երևույթը անհնար է կանխել²⁶⁴:

Հեղինակների մյուս խումբը անհաղթահարելի ուժի բացահայտման հիմք է ընդունում սուբյեկտիվ և օբյեկտիվ տեսությունները: Առաջինը, այսինքն սուբյեկտիվ տեսությունը, գտնում է, որ անհաղթահարելի ուժը իրադարձություն է, որը անկանխատեսելի և անկանխելի է վնաս պատճառողի կողմից տվյալ հասարակության մեջ, գիտության և տեխնիկայի տվյալ պայմաններում՝ չնայած վնաս

²⁶³ Ст и Л.А. Майданик, Н.Ю. Сергеева, Материальная ответственность за повреждения здоровья, М., Юрид. Лит., 1968г., тз 56:

²⁶⁴ Ст и О. А. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 179-180:

պատճառողի կողմից ձեռք առնված բոլոր միջոցներին: Օբյեկտիվ տեսությունը առաջնային է համարում իրադարձության արտակարգ և արտաքին բնույթը, որը կապ չունի վնաս պատճառողի ներքին գործունեության հետ²⁶⁵: Սակայն իրավաբանական գրականության մեջ այս տեսությունները նույնպես քննադատության են ենթարկվել: Սուբյեկտիվ տեսությունը քննադատվել է այն պատճառով, որ թույլ չի տալիս հստակ սահմանազատել արտատվող իրադրությունը, պատահարը (սա նույնպես սուբյեկտիվորեն անկանխատեսելի իրադարձություն է) անհաղթահարելի ուժից: Օբյեկտիվ տեսությունը չի կարող բացատրել անհաղթահարելի ուժի հասկացությունը, քանի որ ամբողջովին բացառում է առավել վտանգի աղբյուրի տիրոջ գործունեության և պատճառված վնասի միջև պատճառական կապի առկայությունը: Ինչպես նշում են հեղինակները, եթե վնասը ծագել է միայն բնական աղետի հետևանքով, նշանակում է այն կապ չունի առավել վտանգի աղբյուրի տիրոջ գործունեության հետ, իսկ պատճառական կապը պատասխանատվության անհրաժեշտ պայման է²⁶⁶:

Գ.Կ. Մատվենը գտնում է, որ այս երկու տեսություններն էլ ունեն մեթոդաբանական սխալ հիմքեր: Երկու տեսություններն էլ, ըստ հեղինակի, տարանջատելով պատահարի (կազուսի) հասկացությունը անհաղթահարելի ուժի հասկացությունից, փորձ են անում առանձնացնել այդ հասկացությունները նրանց պատճառական պայմանավորվածության տեսանկյունից: Սակայն այդ պայմանավորվածությունը հասկանում են կամ իդեալիստորեն (կանխատեսմամբ), կամ էլ մեխանիկորեն (արտաքին և ներքին կապերով)²⁶⁷: Ա.Մ. Բեյլակովան նշում է, որ անհաղթահարելի ուժի բացատրման համար պետք է նկատի ունենալ երկու հանգամանք՝ արտաքին (ջրհեղեղ, կայծակի հարված և այլն) և ներքին. վնասը պատճառվում է ոչ թե վերոնշյալ արտաքին իրադարձությամբ անմիջապես, այլ վնաս պատճառող գործունեությամբ, որը ընկել է այդ արտաքին արտակարգ ուժի ազդեցության տակ, որի հետևանքով և վնաս է պատ-

²⁶⁵ Ст'и Белякова А.М., Возмещения вреда, причиненного источником повышенной опасности. М., 1967г., էջ 41, А. И. Загорулько, Обязательства по возмещению вреда. Харьков «Консум», 1996 г., էջ 78:

²⁶⁶ Ст'и Белякова А.М., նշված աշխատությունը, նույն տեղում, տե'ս А. И. Загорулько, նշված աշխատությունը, նույն տեղում:

²⁶⁷ Ст'и Матвеев Г.К., Вина в Советском гражданском праве. К., 1955, էջ 88:

ճառվել: Օրինակ, կայծակը հարվածել է մեքենային, վարորդը մահացել է, և ղեկավարումը կորցրած մեքենան վնաս է պատճառել անցորդին: Այս դեպքում, ինչպես նշում է հեղինակը, վնասը անհրաժեշտ պատճառական կապի մեջ է գտնվում առավել վտանգի աղբյուրի գործունեության հետ, որը դուրս է եկել մարդու հսկողության տակից: Սակայն այս հսկողությունը դադարեցված է եղել առավել վտանգի աղբյուրի վրա արտաքին արտակարգ ուժի ազդեցությամբ²⁶⁸:

Մ. Շիմինովան նշում է, որ անհաղթահարելի ուժը տվյալ պայմաններում արտակարգ և անհաղթահարելի իրադարձություն է: Ամենից շուտ դրանք տարբեր տեսակի տարերային երևույթներ են, որոնք չեն ենթարկվում մարդու ազդեցությանը՝ երկրաշարժ, փոթորիկ և այլն²⁶⁹:

Ֆրանսիական իրավունքը իր հերթին տալիս է անհաղթահարելի ուժի հետևյալ առանձնահատկությունները.

ա/ այն եղել է վնաս պատճառողի հսկողությունից դուրս, այսինքն՝ վնաս պատճառողը չէր կարող կառավարել այդ ուժը: Օտար ուժը կարող է լինել բնական ուժ (փոթորիկ, կայծակ և այլն, որը սովորաբար ընդունված է անվանել «Աստծո արարք» “acts of God”), երրորդ անձի գործողություն, որի նկատմամբ վնաս պատճառողը չունի ոչ մի ազդեցություն (բացառությամբ աշխատողների, երեխաների և այլն) կամ նույնիսկ տուժողի գործողությունները,

բ/ այն անկանխատեսելի է եղել վնաս պատճառողի համար,

գ/ այն եղել է անխուսափելի այն իմաստով, որ վնաս պատճառողը ոչինչ չէր կարող անել խուսափելու համար այդ ուժից²⁷⁰:

Ամփոփելով վերոհիշյալ տեսակետները՝ կարող ենք եզրակացնել, որ անհաղթահարելի ուժը իրենից ներկայացնում է օբյեկտիվ բնույթի հատկանիշների ամբողջություն, որն անմիջականորեն կապ չունի առավել վտանգի աղբյուրի տիրոջ գործունեության հետ: Այդ երևույթների հիմնական ծավալն են կազմում տարբեր տեսակի տարերային աղետները, որոնք մարդկանց և գիտության կողմից կարող են կանխատեսվել, բայց անհնար է դրանց ազդեցության կանխումը

²⁶⁸ Տե՛ս Белякова А.М., նույն աշխատությունը, էջ 42-43:

²⁶⁹ Տե՛ս Шиминова М., Возмещение вреда причиненного здоровью. М., 1972г, էջ 31:

²⁷⁰ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշված աշխատությունը, էջ 331:

առավել վտանգի աղբյուրների վրա: Սակայն հարկ է նշել, որ անհաղթահարելի ուժի անկանխելիությունը չի ազատում առավել վտանգի աղբյուրի տիրոջը այն բոլոր միջոցները ձեռնարկելուց, որոնք կարող էին նվազագույնի հասցնել պատճառված վնասը կամ նույնիսկ կանխել այն: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ անհաղթահարելի ուժի՝ որպես բնության տարբեր երևույթների, դրսևորման առկայությունը կամ բացակայությունը պետք է դիտարկել՝ ելնելով կոնկրետ իրադարձության պայմաններից: Համաձայն ենք Լ. Ա. Մայրանիկի և Ն.Յու. Սերգեևայի այն տեսակետի հետ, որ հղումը անհաղթահարելի ուժին ժխտվում է, եթե տվյալ վայրի և ժամանակի պայմաններում հնարավոր է եղել և պետք է եղել կանխատեսել բնության տարերային ուժի առաջացումը և կանխել դրա վտանգավոր հետևանքները: Այս դեպքերում առաջացող վնասը կապվում է առավել վտանգի աղբյուրի տիրոջ սխալ գործողությունների և ոչ թե անհաղթահարելի ուժի հետ²⁷¹: Անհաղթահարելի ուժի ազդեցությունը կարող է տարածվել ինչպես առավել վտանգի աղբյուրի, այնպես էլ այն սպասարկող անձանց վրա: Այն կարող է նաև միաժամանակ ազդել և՛ առավել վտանգի աղբյուրի, և՛ դրա տիրոջ վրա: Ամեն դեպքում, երբ վնաս է պատճառվում առավել վտանգի աղբյուրով անհաղթահարելի ուժի ազդեցությամբ, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ վնասը պետք է պատճառված լինի ոչ թե անհաղթահարելի ուժի միջոցով անմիջապես, այլ տարերային աղետը պետք է ազդի առավել վտանգի աղբյուրի կամ այն սպասարկող անձի վրա, որի հետևանքով առավել վտանգի աղբյուրով վնաս կպատճառվի այլ անձանց: Ահա այս դեպքում, երբ կապացուցվի, որ վնասը պատճառվել է անհաղթահարելի ուժի՝ առավել վտանգի աղբյուրի վրա ազդելու պատճառով, աղբյուրի տերը կազատվի վնասը հատուցելու պարտականությունից:

Խոսելով անհաղթահարելի ուժի մասին՝ կցանկանայինք նշել նաև, որ այս կամ այն երևույթը որպես անհաղթահարելի ուժ պետք է դիտարկել՝ ելնելով կոնկրետ ժամանակաշրջանից և գիտության զարգացման աստիճանից: Եթե միևնույն երևույթը այսօրվա պայմաններում անկանխելի է, վաղը գիտության զարգացման հետևան-

²⁷¹ Ст'я Л.А. Майданик, Н.Ю. Сергеева, նշված աշխատությունը, էջ 58:

քով հնարավոր կլինի կանխել, ուստի և ամեն անգամ անհաղթահարելի ուժի հարցը քննելիս պետք է ելնել տվյալ ժամանակահատվածի գիտության և մարդկանց կողմից այդ ուժը կանխելու հնարավորություններից, և նոր միայն որոշել՝ արդյոք երևույթը կանխելի՞ է եղել, թե՞ ոչ:

Ինչպես նշվեց, առավել վտանգի աղբյուրով պատճառած վնասի համար պատասխանատվությունից ազատման մյուս հանգամանքը տուժողի դիտավորությունն է²⁷²: Որպես տուժողի դիտավորություն պետք է հասկանալ այն բոլոր գործողությունները, որոնք կատարել է տուժողը, և որոնց նպատակն է եղել վնաս ստանալը, այսինքն տուժողը դիտավորությամբ նետվել է ավտոմեքենայի տակ, որի հետևանքով մահացել է կամ վնասվածներ է ստացել: Ճիշտ է, պրակտիկայում շատ չեն այնպիսի դեպքերը, երբ առավել վտանգի աղբյուրով վնաս է հասցվում տուժողին վերջինիս դիտավորյալ գործողությունների արդյունքում: Հիմնականում անձինք միտումնավոր դիմում են այդպիսի քայլերի ինքնասպանության նպատակով: Ցավոք սրտի, վերջին ժամանակներս շատացել են այն դեպքերը, երբ մարդիկ դիտավորյալ նետվում են մեքենայի տակ՝ նպատակ ունենալով հետագայում մեքենայի տիրոջից շոթքման միջոցով դրամ պահանջել: Կարծում ենք, այս դեպքերում հատկապես, պետք է առավել վտանգի աղբյուրը տիրապետողները ազատվեն քաղաքացիաիրավական պատասխանատվությունից, և ընդհակառակը, տուժողը ենթարկվի համապատասխան պատասխանատվության: Հասկանալի է, որ վերոնշյալ դեպքերում առավել վտանգի աղբյուրի տերը պետք է ազատվի ոչ միայն տուժողի առջև պատասխանատվությունից, այլև վերջինիս մահանալու դեպքում՝ նրա իրավահաջորդների նկատմամբ նյութական պարտավորություններից:

ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածի առաջին մասը նշում է, որ առավել վտանգի աղբյուրի տիրոջը դատարանը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատել պատասխանատվությունից ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հիմքերով: Իսկ ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերն ամրագրում են, որ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը

²⁷² Տե՛ս ՀՀ Քաղ. օր., հոդված 1072:

կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից: Այնուհետև հողվածը շարունակում է, որ տուժողի կոպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ (այստեղ, անշուշտ, օրենսդիրը նկատի ունի առավել վտանգի աղբյուրով հասցված վնասը), հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել: Միևնույն ժամանակ հողվածը նշում է, որ քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել:

Այսպիսով, օրենսգիրքը պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանք է դիտում տուժողի կոպիտ անզգուշությունը, որը կարող է ազատել վնաս պատճառողին հասցված վնասի համար պատասխանատվությունից կամ նվազեցնել հատուցման չափը նույնիսկ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքում: Նախ և առաջ պետք է նշենք, որ օրենսդիրը, խոսելով տուժողի կոպիտ անզգուշության մասին, նկատի ունի ոչ թե վերջինիս հոգեբանական վիճակը, այլ այն կոնկրետ գործողությունները, որոնք բնորոշվում են մեղքով՝ արտահայտված կոպիտ անզգուշության տեսքով:

Մինչև ԽՍՀՄ քաղաքացիական օրենսդրության հիմունքների ընդունումը իրավաբանական գրականության և պրակտիկայի հիմնական տեսակետը այս դեպքերում հանգում էր նրան, որ տուժողի դիտավորությունը կամ կոպիտ անզգուշությունը հանդիսանում է այն հանգամանքներից մեկը, որոնք բացառում են առավել վտանգի աղբյուրի տիրոջ պատասխանատվությունը տուժողի առջև: Սակայն իրերի դրությունը և խնդրի լուծման մոտեցումները փոխվեցին Հիմունքների ընդունումից հետո:

Հեղինակների և պրակտիկ աշխատողների մի մասի կարծիքով Հիմունքների 93-րդ հոդվածը կարող է կիրառվել հողված 90-ի հետ լրիվ ծավալով՝ նշելով, որ վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատելու հիմքեր կարող են հանդիսանալ ինչպես անհաղթահարելի ուժը և տուժողի դիտավորությունը, այնպես էլ տուժողի կոպիտ անզգուշությունը: Հեղինակների մյուս մասը գտնում է, որ որպես վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատող

հանգամանք պետք է դիտել միայն տուժողի դիտավորությունը: Իսկ ինչ վերաբերում է տուժողի կոպիտ անզգուշությանը, ապա այն չպետք է դիտել որպես պատասխանատվությունից լիովին ազատող հանգամանք, քանի որ Հիմունքների 90 հոդվածում այն նշված չէ: Նրանք գտնում են, որ բացառվում է 93 հոդվածի ամբողջ ծավալով կիրառումը առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի դեպքերում: Հետաքրքիր է, որ այս տեսակետը հատկապես իր արտահայտությունն է գտել մի շարք պրակտիկ աշխատողների ելույթներում²⁷³: Երկրորդ տեսակետի կողմնակիցները հիմնականում պնդում են, որ տուժողի կոպիտ անզգուշությամբ պատճառված վնասի դեպքում վնասի հատուցման պարտականությունը կարող է փոփոխություն կրել միայն հատուցման ծավալի չափով:

Այս կապակցությամբ այժմ կցանկանայինք մեկ անգամ ևս անդրադառնալ ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ մասին, որտեղ նշված է, որ տուժողի կոպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել: Սակայն միևնույն ժամանակ հոդվածը նշում է նաև, որ եթե վնաս է պատճառվել քաղաքացու կյանքին կամ առողջությանը, վնասի հատուցումը չի կարող մերժվել:

Ակնհայտ է, և այդ մասին նշվեց վերը, որ օրենսդիրը «վնաս պատճառողի մեղքի բացակայություն այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ» ձևակերպման մեջ նկատի ունի առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, որը նշանակում է, որ տուժողի կոպիտ անզգուշության առկայության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հնարավոր է համարում վնասի հատուցման մերժումը: Մյուս կողմից օրենսգիրքը նշում է, որ այն դեպքերում, երբ վնասը պատճառվել է անձի կյանքին կամ առողջությանը, վնասի հատուցումը մերժվել չի կարող:

Այս դեպքում նախ պետք է նկատել, որ ձևակերպումը հստակ չէ, որը և պրակտիկայում կարող է տեղիք տալ տարբեր մեկնաբանությունների և հարցերի: Հոդվածից կարելի է եզրակացնել, թե օ-

²⁷³ Տե՛ս Օ. Ա. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 181:

րենսդիրը ցանկացել է ամրագրել, որ առավել վտանգի աղբյուրով անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում պատասխանատվության չափը կարող է նվազեցվել, սակայն վնաս պատճառողը չի կարող լիովին ազատվել պատասխանատվությունից: Միևնույն ժամանակ կցանկանալինք ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հողվածի ձևակերպումը ինքնին չի նշանակում, թե ամեն դեպքում, երբ առկա է տուժողի կոպիտ դիտավորությունը, վնասի ծավալը ենթակա է նվազեցման: Օրենսգիրքը դատարաններին հնարավորություն է տալիս կողմնորոշվելու՝ կիրառել՝ նորմը կոնկրետ իրավահարաբերության ժամանակ, թե՞ ոչ: Ամրագրելով, որ վնասի հատուցման չափը «կարող է» նվազեցվել կամ վնասի հատուցումը «կարող է» մերժվել՝ օրենսդիրը հուշում է դատարաններին, որ ցանկացած գործով վճիռ կայացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գործի բոլոր հանգամանքներին, որոնց բազմակողմանի զննության ընթացքում կարող է պարզվել, որ չնայած տուժողի կոպիտ անզգուշությանը՝ առավել վտանգի աղբյուրի տիրոջ համապատասխան գործողությունների հետևանքով վնասը հնարավոր կլիներ կանխել:

Խոսելով տուժողի կոպիտ անզգուշության մասին՝ կցանկանալինք նշել, որ դա կարելի է բնութագրել որպես անփույթ վերաբերմունք մոտալուտ վտանգի կամ վտանգի ծագման նկատմամբ: Այստեղ պետք է ավելացնել, որ անհրաժեշտ է տարբերել կոպիտ անզգուշությունը սովորական անզգուշությունից: Ինչպես ընդունված է նշել իրավաբանական գրականության մեջ, սովորական անզգուշությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ անձը չի գիտակցել վրա հասնող վտանգը, սակայն պետք է իմանար այդ մասին: Այսպիսի անզգուշությունը չի կարող հիմք հանդիսանալ վնաս պատճառողի՝ տուժողի նկատմամբ ունեցած պատասխանատվության բացառման համար: Կոպիտ անզգուշության դեպքում տուժողը գիտակցում է վերահաս վտանգը, եթե անգամ չի գիտակցում, ապա պարտավոր է և կարող է գիտակցել, սակայն անփույթ է հետևանքների նկատմամբ: Ա.Մ. Բելյակովան նշում է, որ տուժողի գործողությունները պետք է

լինեն հակաօրինական ու մեղավոր. միայն այս դեպքում դրանք կարող են ազդել պատճառված վնասի չափի վրա²⁷⁴:

Կոպիտ անզգուշության այն դեպքում, երբ տուժողը գիտի և գիտակցում է իր գործողությունների պատճառով հնարավոր վնասակար հետևանքների առաջացումը, սակայն ենթադրում է, որ այդ հետևանքները չեն առաջանա, ակնհայտ է, որ պատասխարի և դրա հետևանքով առաջացող վնասների առյուծի բաժինը ընկնում է տուժողի վրա, քանի որ նրա գործողություններն են հանգեցրել վթարի: Սակայն այս դեպքում խոսել առավել վտանգի աղբյուրի տիրոջը լրիվ պատասխանատվությունից ազատելու մասին չենք կարող: Սա բացատրվում է նրանով, որ, ինչպես նշեցինք, առավել վտանգի աղբյուրի դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ: Չնայած օրենսգրքի այս դրույթը տեսության մեջ և պրակտիկայում լայն կիրառություն ունի, կարծում ենք, այն պետք է ենթարկվի որոշակի վերանայման: Ամեն դեպքում առավել վտանգի աղբյուրի տերը պետք է ազատվի նույնիսկ անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումից, եթե այդ վնասը հետևանք է եղել տուժողի կոպիտ անփութության, իսկ առավել վտանգի աղբյուրի տերը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները վթարը կանխելու համար: Միաժամանակ ընդունում ենք նաև, որ նույնիսկ այս դեպքում դժվար է միանշանակ խոսել ձեռնարկված բոլոր անհրաժեշտ միջոցների մասին, և գործը պետք է վերջնական լուծում ստանա ապացույցների ամբողջության մեջ:

Օ.Ա. Կրասավչիկովը գտնում է, որ կոպիտ անզգուշության այն դեպքը, երբ տուժողը հասկանում և գիտակցում է իր գործողությունների հնարավոր հետևանքները, բայց և այնպես դիտավորյալ անտեսում է դրանք, չնայած չի ձգտում վնասի առաջացմանը, պետք է լիովին ազատի վնաս պատճառողին պատասխանատվությունից²⁷⁵: Մեր կարծիքով նույնպես, անզգուշության վերոնշյալ տեսակի առկայության դեպքում վնաս պատճառողը պետք է ազատվի պատասխանատվությունից: Սակայն, խոսելով քաղաքացու կյանքին կամ առող-

²⁷⁴ Белякова А.М., Возмещения вреда, причиненного источником повышенной опасности. М., 1967г., էջ 50: Կոպիտ անզգուշության ավելի բազմակողմանի ուսումնասիրությունը կիրականացվի հաջորդ գլուխներում:

²⁷⁵ Стен О. А. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 192:

ջությանը պատճառված վնասի հատուցման մասին, պետք է նշենք, որ ՀՀ Քաղ. օր.-ը այս դեպքում բացառում է վնաս պատճառողի՝ վնասը փոխհատուցելու մերժումը, նույնիսկ եթե վնասը պատճառելիս տուժողը ցուցաբերել է երրորդ աստիճանի կոպիտ անզգուշություն: Կարծում ենք՝ ՀՀ Քաղ. օր.-ն այս առումով պետք է վերանայել և կոպիտ անզգուշության վերջին աստիճանի դեպքում, ելնելով գործի հանգամանքներից, ազատել վնասը պատճառողին վնասը հատուցելու պարտականությունից:

Հաճախ առավել վտանգի աղբյուրի ազդեցության հետևանքով տուժում են փոքրահասակներն ու անչափահասները: Արդյոք այս անձանց մեղքը նույնպե՞ս պետք է հաշվի առնվի պատասխանատվության հարցը սահմանելիս: Գործող օրենսդրության համաձայն՝ մինչև տասնչորս տարեկան փոքրահասակները լրիվ անգործունակ են և պատասխանատու չեն իրենց գործողությունների համար²⁷⁶: Սրա հետևանքով Քաղ. օր.-ը այս անձանց վրա չի դնում վնասը հատուցելու պարտականություն: Ա.Մ. Բելյակովան գտնում է, որ տրամաբանության համաձայն՝ վնաս կրած փոքրահասակների գործողությունները չպետք է իրավական որակավորում ստանան²⁷⁷: Օրենքը չի նշում, թե արդյոք այս դեպքում պետք է հաշվի առնվի փոքրահասակների նկատմամբ օրենքով հսկողություն իրականացնող անձանց մեղավորությունը: Օրենքում նշված է միայն տուժողի մեղքի մասին: Իրավաբանական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Հեղինակների մի մասը գտնում է, որ նման դեպքերում ծնողների մեղքը պետք է հաշվի առնվի, քանի որ նրանք են պարտավոր հսկողություն իրականացնել և դաստիարակել փոքրահասակին, և հենց այդ հսկողության և դաստիարակության պակասի հետևանքով երեխան վնաս է ստացել առավել վտանգի աղբյուրից²⁷⁸: Հեղինակների մյուս մասը գտնում է, որ նմանատիպ դեպքերում պատասխանատվության չափը որոշելիս ծնողների մեղքը չպետք է հաշվի առնվի: Նրանք նշում են, որ քանի որ օրենքը խոսում է միայն տուժողի մեղքի մասին, ապա ծնողները

²⁷⁶ Տե՛ս ՀՀ Քաղ. օր., հոդված 29:

²⁷⁷ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 55:

²⁷⁸ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, Имущественная ответственность за вред причиненный личности, М., 1986г., էջ 78-80:

կամ որդեգրողները չեն կարող հանդես գալ որպես տուժողներ, ուստի և նրանց մեղքը չի կարող հաշվի առնվել: Բացի այդ՝ հեղինակները նշում են նաև, որ ծնողների՝ երեխային հսկելու պարտականությունը նրանց պարտականությունն է երեխայի և պետության հանդեպ, ուստի այդ պարտականության թերի կատարումը չի կարող հիմք հանդիսանալ անչափահասին վնաս պատճառած երրորդ անձանց պատասխանատվության մեղմացման կամ ժխտման համար²⁷⁹: Քննարկելով տարակարծիք հեղինակների տեսակետներն էլ՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ անհնար է ժխտել ծնողների դերը առավել վտանգի աղբյուրով փոքրահասակին պատճառված վնասի մեջ, սակայն մյուս կողմից պետք չէ այդ դերը բացարձակապես անցնել և դնել նմանատիպ բոլոր գործերի հիմքում: Կախված կոնկրետ գործի հանգամանքներից՝ պետք է ուշադրությամբ վեր հանել բոլոր այն հանգամանքները, որոնք հնարավորություն կտան պարզել, թե արդյոք փոքրահասակի նկատմամբ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների դրսևորած վատ հսկողությունն է պատճառ հանդիսացել առավել վտանգի աղբյուրով վերջինիս հասցված վնասի առաջացմանը:

Ինչ վերաբերում է տասնչորսից տասնութ տարեկան անձանց, ապա համաձայն Քաղ. օր.-ի 30 հոդվածի, այս անձինք սահմանափակ գործունակ են, և նրանց գործողությունները առաջացնում են իրավական հետևանքներ: Բացի այդ՝ Քաղ. օր.-ի 1068 հոդվածը ամրագրում է, որ այս տարիքի անչափահասները պատասխանատվություն են կրում իրենց կողմից պատճառված վնասի համար ընդհանուր հիմունքներով: Ուստի, ելնելով վերոնշյալից, կարող ենք պնդել, որ այս անչափահասների մեղավոր գործողությունները պետք է ազդեն պատճառված վնասի չափի նվազեցման վրա²⁸⁰:

Հիմնականում կոպիտ անգգուշությունն է, որ նպաստում է վնասի պատճառմանը: Ուստի հենց այս հանգամանքն է, որ պետք է նպաստի վնաս պատճառողի կողմից վնասի հատուցման չափի նվազեցմանը:

Եվ վերջապես, ՀՀ Քաղ. օր.-ի 1072 հոդվածի 2-րդ մասը ամրագրում է, որ առավել վտանգի աղբյուրի տերը պատասխանատվու-

²⁷⁹ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 56:

²⁸⁰ Տե՛ս Белякова А.М., նույն տեղում:

թյուն չի կրում այդ աղբյուրով պատճառած վնասի համար, եթե ապացուցում է, որ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետումից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով: Այսպիսով, օրենսգիրքը առավել վտանգի աղբյուրի տիրոջ համար որպես այդ աղբյուրով պատճառած վնասի համար պատասխանատվությունից ազատող հանգամանք է դիտում աղբյուրի՝ այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով տիրոջ տիրապետումից դուրս գալը: Առավել վտանգի աղբյուրը տիրոջ տիրապետումից կարող է ապօրինի կերպով դուրս գալ, եթե աղբյուրը հափշտակվել է:

Ուկրաինայի Գերագույն դատարանի 1992թ. մարտի 27-ի պլենումի որոշման երրորդ կետով այսպիսի պատասխանատվության (կամ կարելի է ասել առավել վտանգի աղբյուրի տիրոջ համար պատասխանատվությունից ազատման) համար որպես պայման են նշվում հետևյալ երկու նախադրյալները.

ա) առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել նրա տիրապետողի կամ այն այլ օրինական կարգով տիրապետողի տրամադրության տակից վերջինիս կամքին հակառակ,

բ) երրորդ անձանց կողմից այդ աղբյուրին տիրապետելը կրել է հակաօրինական բնույթ²⁸¹:

ՀՀ Քաղ. օր.-ը որպես պայման նշում է այլ անձանց ապօրինի գործողությունները, որոնց հետևանքով առավել վտանգի աղբյուրը դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից: Երրորդ անձանց կողմից առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման պայման էր ամրագրված դեռևս ԽՍՀՄ Գերագույն դատարանի 1963թ. հոկտեմբերի 23-ի պլենումի որոշման 5-րդ կետում, որտեղ ասվում էր. «Առավել վտանգի աղբյուրի սեփականատերը պատասխանատվություն չի կրում այդ աղբյուրով պատճառված վնասի համար, եթե ապացուցի, որ վերջինս դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետության տակից ոչ իր մեղքով, այլ երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով: Այս պայմանների առկայության դեպքում պատճառված վնասի համար երրորդ անձանց պատասխանատվությունը պետք է որոշվի Հիմունքների 90 հոդվածի կանոններին համապատասխան: Երրորդ անձանց ապօրինի գործո-

²⁸¹ Տե՛ս А. И. Загородько, նշված աշխատությունը, էջ 71:

դությունների հետևանքով սեփականատիրոջ տիրապետման տակից դուրս եկած առավել վտանգի աղբյուրով վնաս պատճառելու ժամանակ, սակայն երբ առկա է նաև սեփականատիրոջ մեղքը, վնասի հատուցման պարտականությունը կարող է դրվել ինչպես այն անձի վրա, ով օգտագործել է առավել վտանգի աղբյուրը, այնպես էլ, հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները, նրա սեփականատիրոջ վրա: Առավել վտանգի աղբյուրի սեփականատիրոջ այսպիսի պատասխանատվությունը կարող է ծագել մասնավորապես այն դեպքում, երբ նրա մեղքով չի իրականացվել առավել վտանգի աղբյուրի անհրաժեշտ պաշտպանությունը»²⁸²: Պետք է նշել, որ առավել վտանգի աղբյուրի տիրոջ պատասխանատվության պայմանը այն դեպքում, երբ աղբյուրը դուրս է եկել իր տիրապետման տակից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով, սակայն կա նաև սեփականատիրոջ մեղավորությունը, ամրագրված է նաև ՀՀ Քաղ. օր.-ի վերոնշյալ հոդվածում, որտեղ ասվում է. «Աղբյուրի տիրոջ տիրապետումից այդ աղբյուրի ապօրինի վերցնելու մեջ նրա մեղքի առկայության դեպքում պատասխանատվությունը կարող է դրվել ինչպես առավել վտանգի աղբյուրի տիրոջ, այնպես էլ այն ապօրինի ձեռք բերողի վրա»: Իմիջիայլոց նկատենք, որ մմանատիպ կարգ են կիրառում նաև Ուկրաինայի դատարանները²⁸³:

Այսպիսով, որպեսզի առավել վտանգի աղբյուրը տիրապետող անձը ազատվի այդ աղբյուրով հասցված վնասի պատասխանատվությունից, անհրաժեշտ է, որ այդ աղբյուրը դուրս գա նրա տիրապետման տակից այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով: Այստեղ կարևոր պայման է, որ աղբյուրի տիրապետողը պահպանած լինի աղբյուրը պահպանելու բոլոր անհրաժեշտ միջոցները, այլապես աղբյուրը նրա տիրապետման տակից ապօրինի դուրս գալը չի կարող դիտվել որպես պատասխանատվությունից ազատող հանգամանք:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ առավել վտանգի աղբյուրով անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից ազատող է պատասխանատվության չափը մեղմացնող հանգամանքներ են հանդիսանում.

²⁸² Стену Белякова А.М., Գլխած աշխատությունը, 34:

²⁸³ Стену А. И. Загоруйко, Գլխած աշխատությունը, նույն տեղում:

1. անհաղթահարելի ուժը,
2. տուժողի դիտավորությունը, որն ուղղված է վնաս ստանալուն. այս դեպքում աղբյուրի տերը միանշանակ ենթակա է պատասխանատվությունից ազատման,

3. տուժողի կոպիտ անզգուշությունը, որի առկայության դեպքում վնասի հատուցումը կարող է մերժվել բոլոր դեպքերում՝ բացառությամբ, երբ վնաս է պատճառվել անձի կյանքին կամ առողջությանը: Այս դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել, այլ միայն հնարավոր է վնասի հատուցման չափի փոքրացում: Կարելի է ավելացնել նաև, որ, համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ մասի 3-րդ մասը, տուժողի մեղքը հաշվի չի առնվում լրացուցիչ ծախսերը (1078 հոդված 1-ին մաս), կերակրողի մահվամբ ծագած վնասը (1082 հոդված), ինչպես նաև թաղման ծախսերը հատուցելիս (1087 հոդված):

Այստեղ կցանկանայինք անդրադառնալ, մեր կարծիքով, մի շատ կարևոր հարցի: Ուսումնասիրելով հոդվածի այս վերջին ձևակերպումը՝ ակնհայտ է դառնում, որ վնասի հատուցման բացառում չի կիրառվում բոլոր այն դեպքերում, երբ վնասի հատուցումը վերաբերում է անձի կյանքին և առողջությանը: Սա նշանակում է, որ կարծես թե ՀՀ Քաղ. օր.-ը չի նախատեսում նույնիսկ պատասխանատվության չափի մեղմացում այն դեպքերի համար, երբ վնաս է պատճառվել անձի կյանքին կամ առողջությանը վերջինիս կոպիտ անզգուշության հետևանքով: Հոդվածի նույն մասի նախորդ մասը սահմանում է, որ չի կարող մերժվել կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը, սակայն ոչինչ չի ասվում հատուցման չափի փոքրացման մասին, որից հետևում է, որ հոդվածի նույն մասի նախորդ նախադասությունում գործածված «հատուցման չափը կարող է նվազեցվել» արտահայտությունը տարածվում է նաև անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի վրա: Սակայն ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը ամրագրում է, որ տուժողի մեղքը չի կարող հաշվի առնվել այն բոլոր վնասները հաշվարկելիս, որոնք վերաբերում են անձի կյանքին կամ առողջությանը հասցված վնասին: Այստեղ հարց է ծագում՝ հասպոն դեպքերի համար կարող ենք հաշվի առնել տուժողի մեղքը, եթե խոսքը վերաբերում է կյանքին կամ առողջությանը հասցված վնասին,

4. այն դեպքերում, երբ առավել վտանգի աղբյուրը այլ անձանց ապօրինի գործողությունների հետևանքով դուրս է եկել իր տիրոջ տիրապետումից,

5. և վերջապես, առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվություն չեն կրում մինչև տասնչորս տարեկան անչափահասները, անգործունակ ճանաչված անձինք, այն անձինք, որոնք վնասի պատճառման պահին ի վիճակի չեն եղել գիտակցել, գնահատել իրենց գործողությունները և ղեկավարել դրան: Այս դեպքում պատասխանատվության սուբյեկտ են դիտվում վերջիններիս խնամակալները (ՀՀ Քաղ. օր. հh 1068, 1069):

ԳԼՈՒԽ IV
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ
ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ
ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆԸ ՊԱՏ-
ՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

§1. Պատճառված վնասի հատուցման ծավալների որոշումը

Քաղաքացիական օրենսդրությունը, նպատակ ունենալով պաշտպանել քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, սահմանել է դրույթներ, որոնք կոչված են ապահովելու այդ մասնակիցների հավասար մասնակցությունը քաղաքացիաիրավական շրջանառությանը, ինչպես նաև պաշտպանելու վերջիններիս այդ հարաբերությունների շրջանակներում: Այստեղ, ինչպես նշեցինք նախորդ գլխում, մեծ կարևորություն է տրվում այնպիսի արժեքների պաշտպանությանը, ինչպիսիք են սեփականությունը, կյանքը և առողջությունը: Մենք արդեն անդրադարձել ենք այն սուբյեկտների շրջանակին, ովքեր պատասխանատվություն են կրում այլ անձանց պատճառված վնասի համար: Այժմ կցանկանալիք անդրադառնալ այն սկզբունքներին և նորմերին, որոնք սահմանում են վնասի հատուցման ծավալները: Կարծում ենք՝ սրանք այն կարևորագույն դրույթներն են, որոնք ամբողջական են դարձնում և կոչված են առավել ամրապնդելու և արդյունավետ դարձնելու անձի կյանքի և առողջության, ինչպես նաև սեփականության քաղաքացիաիրավական պաշտպանությունը: Կարևորելով այս կատեգորիաները՝ Քաղ. օր.-ը պարունակում է առանձին դրույթներ, որոնք սահմանում են պատասխանատվության չափը, երբ վնաս է հասցվել այդ արժեքներին: Ինչպես նշվել է, Քաղ. օր.-ի 1058 հոդվածը սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Նախ և առաջ պետք է նշել, որ վնասի ծավալի որոշման առանձնահատկությունները տարբեր են վնասի՝ ինչպես քաղաքացու կամ իրավաբանական անձանց գույքին, այնպես էլ քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված լինելու դեպքում: Եթե վնասը հասցվել է գույքին, ապա այս դեպքում վնաս պատճառողի վրա է ընկնում վնասի հատուցումը կամ բնեղենով, կամ էլ դրամական ձևով, ընդ որում, գույքին պատճառված վնասի դեպքում բավականին հեշտ և հստակ է վնասի չափի որոշման մեխանիզմը, քանի որ գույքը ունի կոնկրետ արժեք: Համաձայն Քաղ. օր. 1075 հոդվածի, դատարանը կարող է պարտավորեցնել վնաս պատճառելու համար պատասխանատու անձին հատուցել վնասը բնեղենով կամ հատուցել պատճառված վնասները: Ընդ որում, հարկ է նշել նաև, որ վնասները ենթակա են հաշվարկման Քաղ. օր. 17-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված կարգով, համաձայն որի. «վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որը նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնասվածք/, ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիաիրավական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր»: Հոդվածը միևնույն ժամանակ սահմանում է, որ եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է եկամուտներ, ապա անձը, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին բաց թողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով: Իսկ երբ խոսքը վերաբերում է քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասին, ապա չի կարող կիրառվել վերոնշյալ քաղաքացիաիրավական պատասխանատվության ձևը, ինչպիսին է, օրինակ, նախկին վիճակի վերականգնումը կամ բնեղենով փոխհատուցումը: Այս արժեքները (կյանք, առողջություն) անվերականգնելի են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առողջությունը վերականգնվում է բժշկական միջամտության շնորհիվ: Մրա հետ մեկտեղ անձի կյանքի կամ առողջության վնասումը կարող է հանգեցնել նաև գույքային հետևանքների՝ աշխատունակության կորստի պատճառով աշխատավարձի նվազում կամ կորուստ, առողջության քայքայման

հետևանքով բժշկական ծախսեր: Քաղաքացու առողջությանը պատճառված վնասը ունի հետևյալ տեսակները.

1. վնասվածք,
2. մասնագիտական հիվանդություն,
3. առողջության քայքայման այլ ձևեր²⁸⁴:

Այս դեպքերում քաղաքացիաիրավական պատասխանատվության վերականգնողական ֆունկցիան արտահայտվում է քաղաքացու նյութական ոլորտի վնասների փոխհատուցման մեջ, որոնք առաջացել են ոչ նյութական ոլորտի նկատմամբ ոտնձգությունների հետևանքով:

ՀՀ Քաղ. օր.-ի 1078 հոդվածը սահմանում է, որ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը, եկամուտը, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի մասն տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

Այս կապակցությամբ կարելի է ՀՀ դատական պրակտիկայից ներկայացնել հետևյալ դեպքը: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 2001թ. օգոստոսի 30-ին քննել է գործն ըստ Մ. Խաչատրյանի հայցի ընդդեմ Շ. Հակոբյանի՝ պատճառված նյութական վնասի հատուցման պահանջի մասին: Հայցվորը նշել է, որ 25.05.2000թ. ժամը 23.30-ի սահմաններում Երևան քաղաքի Մարգահամերգային համալիրի խճուղու վրա պատասխանող Շ.Հ.-ի կողմից ենթարկվել է վրանբռնի, որի հետևանքով ստացել է ծանր մարմնական վնասվածքներ: Հայցվորը խնդրել է դատարանից պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել պատճառված նյութական վնասի գումարը՝ 1000 ԱՄՆ դոլար*:

²⁸⁴ Տե՛ս Զ. Абашии, նշված աշխատությունը, էջ 37:

* Ծանոթություն՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը 2001թ. հուլիսի 16-ի թիվ 2-884 գործով հայցը բավարարել էր

Պատասխանողը հայցի դեմ առարկել է մասնակիորեն՝ հայտնելով, որ Մ.Խ-ին վճարել է 100 ԱՄՆ դոլար և պարտավորվել է վճարել ևս 100-ը:

Ռատարանը պարզել է նաև, որ հայցվորին պատճառվել է 100.000 դրամ նյութական վնաս, այդ թվում 7000 դրամ հենակներ, 5000 դրամ ռենտգեն, 6000 դրամ ճանապարհաձախս, վթարից հետո հայցվորը գրկված է եղել աշխատելու հնարավորությունից, որի հետևանքով հայցվորին հասցվել է 82000 դրամ նյութական վնաս: Հետևաբար դատարանը գտնում է, որ հայցապահանջը բխում է ՀՀ Քաղ.օր-ի 1058, 1078 և 1079 հոդվածների պահանջներից, սակայն ենթակա է բավարարման մասնակիորեն, այսինքն պատասխանողից հոգուտ հայցվորի պետք է բռնագանձել հայցվորի կողմից պահանջվող 1000 ԱՄՆ դոլարից ընդամենը 100.000 դրամ, քանի որ հայցվորը դատարանին չի ներկայացրել որևէ գրավոր կամ այլ ապացույց իր կողմից պահանջվող գումարի հիմնավորման վերաբերյալ: Իսկ համաձայն քաղ. օր-ի 48 հոդվածի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները²⁸⁵: Այստեղ կցանկանայինք նշել, որ դատարանը բաց է թողել և չի քննել հայցվորի աշխատունակության հարցը, որը հայցվորի պնդմամբ վնասվել է վթարի արդյունքում:

1078 հոդվածը սահմանում է, որ կորցրած աշխատավարձը (եկամուտը) սահմանելիս՝ տուժողին՝ հաշմության կամ առողջության այլ վնասի հետ կապված նշանակված հաշմանդամության կենսաթոշակը, ինչպես նաև այլ կենսաթոշակներն ու նպաստները և այլ նմանօրինակ վճարները, որոնք նշանակվել են առողջության քայքայումից առաջ կամ հետո, հաշվի չեն առնվում և չեն հանգեցնում վնասի հատուցման չափի նվազեցման (հաշվի չեն առնվում ի հաշիվ վնասի հատուցման): Վնասը հատուցելիս հաշվի չի առնվում նաև տուժողի

մասնակիորեն վճռելով պատասխանողից հոգուտ Մ.Խ-ի բռնագանձել 100.000 դրամ: Հայցվորը վերաքննիչ բողոքի մեջ նշել էր, որ դատարանը վճիռը կայացնելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ բացի վճռի պատճառաբանական մասում նշված 7000 դրամ՝ հենակներից, 5000 դրամ՝ ռենտգենի գումարից, 6000 դրամ՝ ճանապարհաձախսից և 82000 դրամ՝ նյութական վնասից, հայցվորը աստիճանաբար կորցնում է նաև լսողությունը, մեծ գումարներ է ծախսել դեղորայք ձեռք բերելու համար:

²⁸⁵ Տե՛ս ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործ N 01-1423, 2001թ.

կողմից առողջության քայքայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը):

Մրա հետ մեկտեղ հողվածը տուժողին պատճառված վնասի հատուցման ծավալի և չափի մեծացման հնարավորություն է ընձեռում, որը կարող է տեղի ունենալ օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

Օրենսգիրքը սահմանում է տուժողին պատճառված վնասի փոխհատուցման ձևերի շրջանակը, վնասի և վնասի հատուցման ծավալների որոշման սկզբունքները: Պետք է նկատել, սակայն, որ այդ սկզբունքներն ունեն որոշակի առանձնահատկություններ: Ինչպես ամրագրված է հողվածում, տուժողը նախ և առաջ իրավունք ունի ստանալ կորցրած աշխատավարձի կամ եկամտի հատուցում: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, թե ինչ սկզբունքով է հաշվարկվում կորցրած աշխատավարձի չափը, որը և ենթակա է փոխհատուցման: Համաձայն Քաղ. օր.-ի 1079 հոդվածի՝ տուժողի կորցրած աշխատավարձի (եկամտի)՝ հատուցման ենթակա չափը որոշվում է միջին աշխատավարձից (եկամտից), որը նա ստացել է մինչև հաշնությունը կամ առողջության այլ վնասվածքը կամ աշխատունակության կորուստը: Այդ տոկոսները որոշվում են տուժողի կողմից մասնագիտական աշխատունակության կորստի, իսկ մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան: Ինչպես նշվում է հողվածում, առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամտի) չափը որոշելիս նախ և առաջ հաշվի է առնվում աշխատունակության կորուստը: Համաձայն իրավաբանական գրականության՝ աշխատունակությունը անձի հնարավորությունն է իրականացնելու աշխատանքային պարտականությունները²⁸⁶: Ինչպես ամրագրված է օրենսգրքում, աշխատունակությունը լինում է մասնագիտական և ընդհանուր: Մասնագիտական աշխատունակության տակ հասկացվում է քաղաքացու աշխատունակությունը իր մասնագիտությանը կամ որակավորմանը համապատասխան, իսկ ընդհանուր աշխատունակության տակ՝ աշխատանք կատարելու հնարավորությունը, որը որակավորում չի պա-

²⁸⁶ Տե՛ս Шиминова М., նշված աշխատությունը, էջ 61:

հանջում²⁸⁷: Առողջության քայքայման դեպքում աշխատունակության կորուստը տուժողի մոտ կարող է լինել մշտական կամ ժամանակավոր, լրիվ կամ մասնակի²⁸⁸: Աշխատունակության կորստի աստիճանի չափը որոշվում է բժշկական հիմնարկի կողմից նշանակված դատաբժշկական փորձաքննությամբ, որը և որոշում է աշխատունակության կորստի չափը: Օրենսգիրքը նշում է, որ տուժողի կորցրած աշխատավարձի հատուցման չափը որոշվում է միջին աշխատավարձից կամ եկամտից՝ տոկոսներով, իսկ այդ տոկոսները որոշվում են տուժողի կողմից մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան, իսկ եթե տուժողը չունի մասնագիտական աշխատունակություն, ապա ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան: Մ. Շիմինովան գտնում է, որ այն դեպքում, երբ տուժողը մասամբ է կորցրել մասնագիտական աշխատունակությունը, պետք է հաշվարկվի միայն մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանը և ոչ ընդհանուրինը, որը նույնպես կարող է վնասված լինել²⁸⁹:

Օրենսգիրքը տալիս է տուժողի կորցրած աշխատավարձի (եկամտի) կազմը, որի մեջ ներառվում են նրա՝ ինչպես հիմնական, այնպես էլ համատեղությամբ կատարված աշխատանքի բոլոր վճարները: Համատեղությամբ կատարված աշխատանքի տակ օրենսգիրքը հասկանում է եկամտահարկով հարկվող աշխատանքային և քաղաքացիական իրավական պայմանագրերով վարձատրությունը: Աշխատավարձի (եկամտի) կազմը հաշվելիս հաշվի չեն առնվում միանվագ բնույթի վճարները, մասնավորապես, չօգտագործված արձակուրդի փոխհատուցումը և արձակման նպաստը: Ցավոք սրտի, օրենսգիրքը չի հստակեցնում, թե ինչ է իր մեջ ներառում «հիմնական աշխատանքի վճար» հասկացությունը, որո՞նք են այդ վճարները: Կարծում ենք, դրանց թվում կարելի է նշել նաև տոկոսային հավելավճարները, պարգևավճարները, որոնք սահմանված են կազմակերպության վարձատրության համակարգում, օրինակ, ամենամսյա, երեք ամիսը մեկ տրվող և այլն, մասնագիտությունների կամ պաշ-

²⁸⁷ Տե՛ս նաև Ա. Ի. Загорюлько, նշված աշխատությունը, էջ 96, Шиминова М., նշված աշխատությունը, նույն տեղում, Э. Абашин, նշված աշխատությունը, էջ 40:

²⁸⁸ Տե՛ս Э. Абашин, նույն տեղում:

²⁸⁹ Տե՛ս Шиминова М., նշված աշխատությունը, էջ 62:

տոնների համակցման կամ բացակայող աշխատողին փոխարինելու դեպքում տրվող վճարները, այն վճարները, որոնք տրվում են աշխատանքի ծավալի մեծացման դեպքում և այլն²⁹⁰:

Ժամանակավոր անաշխատունակության կամ հղիության և ծննդաբերության համար արձակուրդի ժամանակաշրջանի համար հաշվի է առնվում վճարված նպաստը: Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, ինչպես նաև հեղինակային հոնորարը ներառվում են կորցրած աշխատավարձի կազմում, ընդ որում, ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտները ներառվում են հարկային տեսչության տվյալների հիման վրա:

Ինչ վերաբերում է աշխատավարձի (եկամտի) հաշվարկման կարգին, ապա, ինչպես սահմանում է Քաղ. օր.-ը, աշխատավարձի (եկամտի) բոլոր տեսակները հաշվի են առնվում մինչև հարկային պահումները եղած չափով:

Տուժողի ամսական միջին աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է առողջությանը վնաս պատճառելուն նախորդած տասներկու ամսվա նրա աշխատավարձը (եկամուտը) տասներկու մասի բաժանելու միջոցով: Այն դեպքում, երբ տուժողը վնաս պատճառելու ժամանակ աշխատել է տասներկու ամսից պակաս, նրա ամսական միջին աշխատավարձը (եկամուտը) հաշվարկելու համար անհրաժեշտ է փաստացի աշխատած ամիսների աշխատավարձի (եկամտի) ընդհանուր գումարը բաժանել աշխատած ամիսների թվի վրա: Կարծում ենք, այս սկզբունքը պետք է կիրառվի նաև սեզոնային աշխատանք կատարողների եկամտի հաշվարկման ժամանակ²⁹¹:

Տուժողի ցանկությամբ ոչ լրիվ աշխատած ամիսները, որոնք կարող են հետևանք լինել հիվանդության, աշխատանքից ազատման կամ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում²⁹², փոխարինվում են լրիվ աշխատած նախորդ ամիսներով, իսկ դրանց փոխարինման անհնարինության դեպքում հանվում են հաշվարկից:

Կարծում ենք, այստեղ կարևոր է նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչ հիմունքներով է որոշվում աշխատավարձի կազմը, եթե

²⁹⁰ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 99, ինչպես նաև՝ С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 96:

²⁹¹ Տե՛ս նաև Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 98:

²⁹² Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 97:

անձը աշխատել է մեկ ոչ լրիվ ամիս: Այս հանգամանքը, ցավոք, կարգավորված չէ ՀՀ Քաղ. օր.-ով: Մինչդեռ, համաձայն մի շարք հեղինակների՝ Ս.Ե. Գոնցով, Մ.Յա. Մարիինա, Ա.Մ. Բելյակովա, եթե աշխատողը աշխատել է ոչ լրիվ մեկ ամիս, ապա ողջ ժամանակաընթացքում աշխատած աշխատավարձը պետք է բաժանվի աշխատված օրերի վրա, և ստացված գումարը բազմապատկվի ամսվա աշխատանքային օրերի վրա, որոնք հաշվարկված են մեկ տարվա համար²⁹³:

Այն դեպքում, երբ վնաս պատճառելու պահին տուժողը չի աշխատել, նրա ցանկությանը հաշվարկվում է նրա՝ մինչև աշխատանքից ազատվելու պահի աշխատավարձը կամ հաշվարկի հիմքում դրվում է տվյալ վայրում նրա որակավորմամբ աշխատողի վարձատրության սովորական չափը, որը, սակայն, չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի հնգապատիկից: Կարծում ենք, որ այն դեպքում, երբ վնաս է պատճառվել անձին նոր աշխատանքի նշանակվելուց հետո, ապա վնասը պետք է հատուցվի տուժողի ցանկությանը՝ հիմնվելով նոր աշխատավարձի վրա կամ հիմք ընդունելով նախորդը²⁹⁴:

Եթե մինչև տուժողին հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը նրա աշխատավարձում (եկամտում) կատարվել են նրա գույքային դրությունը բարելավող կայուն փոփոխություններ (բարձրացել է զբաղեցրած պաշտոնի աշխատավարձը, տուժողը փոխադրվել է ավելի բարձր վարձատրվող աշխատանքի կամ ցերեկային ուսուցմամբ ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո ընդունվել է աշխատանքի և այլ դեպքերում, երբ ապացուցվել է տուժողի աշխատանքի վարձատրության կայուն փոփոխությունը կամ փոփոխության հնարավորությունը), նրա ամսական միջին աշխատավարձը (եկամուտը) որոշելիս հաշվի է առնվում միայն այն աշխատավարձը (եկամուտը), որը նա ստացել է կամ կարող էր ստանալ համապատասխան փոփոխությունից հետո:

²⁹³ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 94, ինչպես նաև՝
Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 98:

²⁹⁴ Տե՛ս նաև Белякова А.М. նշված աշխատությունը, էջ 99, Шиминова М. նշված
աշխատությունը, էջ 59:

Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, կորցրած աշխատավարձը ամբողջովին վճարվում է տուժողին՝ անկախ այն հանգամանքից՝ ունի՞ արդյոք նա այլ եկամտի աղբյուրներ, թե՞ ոչ²⁹⁵:

Կարծում ենք, որ առողջության քայքայմամբ պատճառված վնասը հատուցելու ծավալի մեջ միջին աշխատավարձի ընդգրկումը ունի մեծ գործնական նշանակություն, քանի որ, ինչպես նշում են Ս.Ե. Դոնցովը և Մ.Յա. Մարինինան. «Ելնելով այն բանից, թե որքան ճիշտ է այն որոշված, կախված է տուժողի գույքային իրավունքների և շահերի պաշտպանությունը, նրան պատճառված վնասի՝ լրիվ ծավալով փոխհատուցումը այնպես, ինչպես նախատեսված է քաղաքացիական օրենսդրությամբ»²⁹⁶: Յավոք, դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատարանները հաճախ ճիշտ չեն կիրառում հաշվարկման սկզբունքները, որը պատճառ է դառնում տուժողների շահերի ոչ լրիվ պաշտպանության: Այստեղ կցանկանայինք նշել, որ հավանաբար ավելի նպատակահարմար կլիներ Օրենսգրքի հիման վրա առավել կոնկրետ և բազմաբովանդակ ենթաօրենսդրական ակտերի ընդունումը, որոնք առավել կհեշտացնեն դատարանների կողմից վնասի ծավալի որոշման հարցը, և դրանով իսկ ավելի արդյունավետ կդառնա Քաղ. օր.-ի վերոնշյալ նորմերի կիրառումը:

Վնասի ծավալի գուտ մաթեմատիկական հաշվարկումը հաճախ շատ դժվար է, այդ պատճառով վնասի ծավալի վերջնական հաշվարկումը պետք է հիմնված լինի նաև այնպիսի հանգամանքների վրա, ինչպիսիք են սոցիալական դրությունը, տուժողի և վնաս պատճառողի զբաղմունքի տեսակը և նյութական դրությունը, վնաս պատճառողի մեղքի կամ անզգուշության աստիճանը: Դասպոնիսյում, օրինակ, ուշադրություն են դարձնում նաև վնասակար գործողության քննադատմանը՝ բարոյականության տեսանկյունից (այս դրույթը, կարծում ենք, շատ ուշագրավ է և կարելի է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսդրության մեջ):

Համաձայն Դասպոնիայի քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածի 2-րդ մասի՝ դատարանը կարող է վնասի չափի որոշման

²⁹⁵ Ст. 6 Гражданское право, обязательственное право, учебник, էջ 632:

²⁹⁶ Ст. 6 С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 97:

ժամանակ հաշվի առնել տուժողի անզգուշության առկայությունը: Այս դրույթը հայտնի է «անզգուշության հաշվառում» անվան տակ: Սակայն, ի տարբերություն պարտավորությունների չկատարման, քննարկվող խնդրի ժամանակ դատարանը կարող է ինչպես ընդունել, այնպես էլ չընդունել տուժողի անզգուշության հանգամանքը, սակայն, համաձայն իրավաբանական գրականության մեջ արտահայտված տեսակետի, նման տարանջատման հիմնավորումը տարբեր մեկնաբանություններ է առաջացնում²⁹⁷:

ՀՀ Քաղ. օր.-ի 1080 հոդվածը սահմանում է չափահաս տարիքի չհասած անձի առողջությանը պատճառված վնասի հատուցման կարգը: Համաձայն օրենսգրքի՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասին (փոքրահասակին), որը չունի աշխատավարձ կամ եկամուտ, հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում դրա համար պատասխանատու անձը պարտավոր է հատուցել առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերը: Այս ծախսերի մեջ մտնում են բժշկական ծախսերը, տուժողին խնամելու, պրոթեզավորման և այլ ծախսեր²⁹⁸: Բացի այս, ինչպես նշված է Քաղ. օր.-ում, փոքրահասակի տասնչորս տարեկան դառնալուց հետո վնաս պատճառողը պարտավոր է բացի առողջությանը վնաս պատճառելուց ծագող ծախսերից, հատուցել նաև նրա աշխատունակության կորստի կամ նվազման հետ կապված վնասը: Ընդ որում, վնասի հատուցման չափը որոշելիս, համաձայն քաղ. օր.-ի, պետք է հիմք ընդունել նվազագույն աշխատավարձի հնգապատիկը: Մ. Շիմինովան գտնում է, որ այն բանից հետո, երբ տուժողը կսկսի աշխատել, նա կարող է իրավունք ստանալ պահանջելու՝ ավելացնել իրեն տրվող վնասի փոխհատուցման չափը՝ ելնելով իր նոր ձեռք բերած որակավորումից²⁹⁹: Կարծում ենք, այս դեպքում փոխհատուցման չափը պետք է ավելանա միայն այն դեպքում, եթե տուժողը ձեռք է բերել նոր որակավորում, սակայն նրան պատճառված առողջության քայքայման հետևանքով ինքն ի վիճակի չէ աշխատել իր նոր ձեռք բերած որակավորմամբ: Այս հարցի կապակցությամբ Ս.Ե. Դոնցովը և

²⁹⁷ Տե՛ս Сакаэ Вагацума, Тору Ариидзуми, Гражданское право Японии. М., 1983г., էջ 148:

²⁹⁸ Տե՛ս նաև С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 120:

²⁹⁹ Տե՛ս նաև Шиминова М., նշված աշխատությունը, էջ 70:

Մ.Յա. Մարինինան նշում են, որ աշխատանքային գործունեությունը սկսելուց հետո, իր ստացած որակավորման համաձայն, տուժողը իրավունք ունի պահանջելու վնասի հատուցման ծավալի ավելացում, որը առողջության վնասման պատճառով աշխատունակության նվազում է առաջացրել, և վնասի հատուցման ծավալի ավելացման համար հիմք պետք է ընդունել իր որակավորմամբ աշխատողի աշխատավարձը: Հեղինակները նշում են, որ այս դրույթը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ տուժողը ստացած վնասվածքի հետևանքով լրիվ անաշխատունակ է կամ կատարում է ավելի ցածր որակավորման աշխատանք³⁰⁰:

Այն դեպքում, երբ վնաս է պատճառվել տասնչորսից տասնութ տարեկան անչափահասին, որը չունի աշխատանք կամ եկամուտ, համաձայն Քաղ. օր. -ի 1080 հոդվածի 2-րդ մասի՝ վնասի համար պատասխանատու անձը պարտավոր է բացի տուժողի առողջությանը վնաս պատճառելու հետևանքով ծագած ծախսերից հատուցել նաև նրա աշխատունակության կորստի կամ նվազեցման հետ կապված վնասը՝ ելնելով նվազագույն աշխատավարձի հնգապատիկից:

Եթե առողջությանը վնաս պատճառելու պահին անչափահասն ունեցել է աշխատավարձ, ապա վնասը ենթակա է հատուցման՝ ելնելով անչափահասի ստացած աշխատավարձի չափից, որը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի հնգապատիկից: Անչափահասը, որի առողջությանը վնաս է պատճառվել, համաձայն Քաղ. օր. -ի, իրավունք ունի պահանջել վնասի հատուցման չափի մեծացում նաև աշխատանքային գործունեությունն սկսելուց հետո՝ ելնելով իր ստացած աշխատավարձից, սակայն այդ մեծացման չափը չպետք է գերազանցի իր զբաղեցրած պաշտոնի համար սահմանված վարձատրությունը կամ իր աշխատատեղի նույն որակավորման աշխատողի աշխատավարձը:

Քաղ. օր. -ի 1083 հոդվածը հնարավորություն է տալիս փոփոխել վնասի հատուցման չափը:

Ինչպես նշված է հոդվածում, մասնակիորեն աշխատունակությունը կորցրած տուժողն իրավունք ունի ցանկացած ժամանակ պահանջել վնասի հատուցում այն անձից, ում վրա դրված է վնասի հա-

³⁰⁰ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, նույն տեղում:

տուցման պարտականությունը, դրա չափի համապատասխան մեծացում, եթե տուժողի աշխատունակությունը հետագայում նվազել է՝ պայմանավորված առողջությանը պատճառված վնասի հետ, համեմատած այն աշխատունակության հետ, որ նա ուներ վնասի հատուցման նշանակման պահին: Այսպիսով, ինչպես ակնհայտորեն երևում է հողվածի ձևակերպումից, որպեսզի նշանակված վնասի հատուցման չափը մեծացվի, անհրաժեշտ պայման է, որ առողջությանը հասցված վնասի հետևանքով նշանակված փոխհատուցումից հետո տուժողի աշխատունակությունը նվազած լինի: Այս հարցի կապակցությամբ ուշագրավ մտտեցում է դրսևորում Ֆրանսիայի օրենսդրությունը: Ֆրանսիայի օրենսդրությամբ վնասի ծավալի մեջ է ներառվում և հատուցման է ենթակա նաև ապագա վնասը, եթե դրա առաջացման հնարավորությունը հետագայում հնարավոր է, և դատարանը կարող է այն հաշվարկել: Վնասի ծավալի մեջ չեն կարող հաշվարկվել ենթադրելի վնասը, որի առաջացումը հաստատ չէ և կասկածների տեղիք է տալիս: Սակայն այդ վնասի իրական դառնալուն պես տուժողը հնարավորություն է ստանում վնասի հատուցման նոր հայցի հարուցման: Վնասի չափերի մեծանալու հանգամանքը կարող է հիմք հանդիսանալ նոր հայցի միայն այն դեպքում, եթե առողջության հետագա քայքայումը պատասխանողի մեղավոր գործողությունների հետևանք է³⁰¹: Պրակտիկայում հարց է առաջանում այն կապակցությամբ, թե արդյոք տուժողը իրավունք ունի վնաս պատճառողից պահանջել վնասի հատուցում նաև այն ժամանակ, երբ վերջինիս կյանքը կամ առողջությունը ապահովագրված են, և նա արդեն հասցված վնասի փոխհատուցում է ստացել ապահովագրական ընկերության կողմից: Արդյոք տուժողի՝ ապահովագրական ընկերության կողմից ստացված գումարները արդեն կարո՞ղ են համարվել որպես վնասի փոխհատուցում: Այս հարցը ծագում է նաև այն ժամանակ, երբ առողջությանը հասցված մարմնական վնասվածքի դեպքում տուժողը պետական կամ մասնավոր կազմակերպության կողմից, որտեղ ինքն աշխատում է, ստանում է հաշմանդամության թոշակ: Ինչպես գտնում է Լ. Ժյուլիո դե լա Մորանդերը, այս դեպքում կարելի է ասել, որ վնասը արդեն չկա, քանի որ այն արդեն հատուց-

³⁰¹ St'u Л. Жюллио Де Ла Морандьер, նշված աշխատությունը, էջ 403:

ված է պարբերական վճարումների միջոցով, որը պարտավոր է իրականացնել ապահովագրական ընկերությունը, կամ միանվագ վճարված գումարով³⁰²: Այստեղ կարելի է համաձայնվել հեղինակի հետ միայն այն դեպքում, երբ վնասի հատուցման ապահովագրական վճարումը կատարվել է վնաս պատճառողի ապահովագրական հաշիվներից: Հակառակ դեպքում, գտնում ենք, որ վնաս ստացած անձը իրավունք ունի, բացի ապահովագրական ընկերության ստացած հատուցումից, հատուցում պահանջել նաև վնաս պատճառողից:

Համաձայն Քաղ. օր. 1083 հոդվածի երրորդ մասի՝ տուժողն իրավունք ունի պահանջել սեծացնելու վնասի հատուցման չափը, եթե քաղաքացու, ում վրա դրվել է վնասը հատուցելու պարտականությունը, գույքային դրությունը բարելավվել է, իսկ հատուցման չափը նվազեցված է եղել սույն օրենսգրքի 1076 հոդվածի 3-րդ մասին համապատասխան, որտեղ նշված է, որ դատարանը կարող է նվազեցնել քաղաքացու կողմից պատճառված վնասի հատուցման չափը՝ հաշվի առնելով վերջինիս գույքային դրությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է դիտավորյալ կատարված գործողություններով: Այստեղ կցանկանալինք նշել, որ չնայած հոդվածի վերջին ձևակերպումը հնարավորություն չի տալիս դիտավորյալությամբ ուրիշին վնաս պատճառելու դեպքում նվազեցնել վնասի հատուցման չափը՝ հաշվի առնելով վնաս պատճառողի գույքային դրությունը, իրական կյանքում հանրավոր են դեպքեր, երբ հակաօրինական արարք թույլ տվածը օբյեկտիվորեն ի վիճակի չլինի ամբողջովին փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը:

Միևնույն ժամանակ օրենսգրքի նույն հոդվածը հնարավորություն է տալիս այն անձին, ում վրա դրված է տուժողի առողջությանը պատճառված վնասի հատուցման պարտականությունը, պահանջել նվազեցնելու հատուցման չափը, եթե տուժողի աշխատունակությունը վնասի հատուցում նշանակելու պահի համեմատ աճել է: Այնուհետև հոդվածը շարունակում է, որ դատարանը վնաս պատճառած քաղաքացու պահանջով կարող է նվազեցնել վնասի հատուցման չափը, եթե նրա գույքային դրությունը, կապված հաշմանդամության կամ կենսաթոշակային տարիքի հասնելու հետ, վատթարացել է

³⁰² St'u Л. Жюллио Де Ла Морандьер, նույն տեղում:

վնասի հատուցում նշանակելու պահի վիճակի համեմատ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է դիտավորյալ գործողություններով: Այս դրույթի հետ կապված նույնպես առաջանում է վերոնշյալ պրոբլեմը:

Այնուհետև քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է, որ հատուցման են ենթակա առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը, որոնց թվին են դասվում բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման և այլ ծախսերը: Կարևոր պայման է, որ դատարանները նմանատիպ խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելիս ուշադրություն դարձնեն հայցերում արտացոլվող փաստերի հիմնավորվածության վրա:

Այս առումով ՀՀ դատական պրակտիկայից ուշագրավ է հետևյալ դեպքը: 1999թ. սեպտեմբերի 8-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը քննել է գործ՝ ըստ Հ.Ղ.-ի հայցի ընդդեմ Է.Մ.-ի՝ հասցված մարմնական վնասվածքի կապակցությամբ կատարած բուժման ծախսերի պահանջի մասին:

Հայցվորը, դիմելով դատարանին, հայտնել է, որ 1998թ. հունիսի 13-ին պատասխանող Է.Մ.-ն, ծեծի ենթարկելով իրեն, պատճառել է ծանր մարմնական վնասվածք, որի համար Սպանդարյանի շրջանի ժողդատարանի կողմից 08.12.98թ. ՀՀ քր. օրի. 105 հոդվածի 1-ին մասով դատապարտվել է: Ստացած մարմնական վնասվածքի հետևանքով ինքը 14 օր բուժվել է հիվանդանոցային պայմաններում, կատարվել է տեսողական օրգանների վիրահատում: Մինչ հիվանդանոց գնալը և վիրահատվելը իր խնամակալությունը ստանձնել է «Էլիպս» ՄՊԸ-ի աշխատակիցը, որի դիմաց ինքը վճարել է 450 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: 14 օրյա հիվանդանոցային պայմաններում վիրահատության և բուժման ծախսերը կազմել են 100 ԱՄՆ դոլար. ինչպես նաև 100 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ծախսվել է դեղամիջոցների գնման վրա:

Խնդրում է պատասխանող Է. Մ.-ից հօգուտ իրեն բռնագանձել ծախսված 650 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Դատարանը, քննելով գործը, պարզել է, որ հանցագործության դեպքը տեղի է ունեցել 1998թ. հունիսի 13-ին, մինչդեռ հայցվորը ներ-

կայացրել է տեղեկանք 13.01.99թ-ից 27.01.99թ-ը բուժման մասին: Հայցապահանջ է ներկայացվել «Էլիպս» ՍՊԸ ծառայության դիմաց 450 ԱՄՆ դոլարի բռնագանձման պահանջի մասին, մինչդեռ գործին կցված է «Էլիպս» ՍՊԸ տնօրենի տված տեղեկանքն այն մասին, որ ընկերության ծառայության դիմաց Գ. Ղ.-ն /հայցվորի դուստրը/ վճարել է ընդամենը 110 ԱՄՆ դոլար:

Վերոգրյալի հիման վրա դատարանը որոշել է մերժել հայցը:

§2. Կերակրողին կորցնելու հետևանքով պատճառված վնասի հատուցումը

Պրակտիկայում հատկապես կարևորվում է և մեծ նշանակություն ունի վնասի հատուցման ծավալի որոշումը տուժողի մահվան դեպքում, ինչպես նաև այն անձանց շրջանակի պարզումը, ովքեր վնասի փոխհատուցման իրավունք են ստանում :

Անձը քաղաքացիաիրավական պատասխանատվության է ենթարկվում ինչպես այլ անձի առողջությանը վնաս պատճառելու, այնպես էլ մահ պատճառելու համար, երբ հաստատված են նրա գործողությունների հակաօրինականությունը, այդ գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապը, վնասի առկայությունը և մեղքը: Սակայն, ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, որպեսզի անձը համարվի տուժող և վնասի հատուցման իրավունք ձեռք բերի իր կերակրողի մահվան դեպքում, վերը նշված պայմաններին անհրաժեշտ է ավելացնել ևս երկուսը.

1. մահացածի խնամակալության տակ գտնվելը,
2. խնամարկյալի անաշխատունակությունը³⁰³:

Տվյալ դեպքում խնամակալությունը իրենից ենթադրում է կերակրողից նյութական օգնության ստացումը, որը անաշխատունակի կամ նյութական օգնություն ստացողի համար հանդիսանում է գոյատևման հիմնական աղբյուր: Ինչպես նշում են Ս.Ե. Դոնցովը և Մ.Յա. Մարինինան, խնամարկյալ ճանաչելու համար անհրաժեշտ չէ ամբողջովին կերակրողի խնամքի տակ գտնվելը, և միայն այն

³⁰³ Տե՛ս ԳՅ Քաղ. օր. հոդված 1081, ինչպես նաև՝ ШМИНОВА М., նշված աշխատությունը, էջ 86:

հանգամանքը, որ խնամարկյալը մահացածից ստանում էր կանոնավոր օգնություն, չնայած այլ եկամուտների, բավարար է որպես խնամարկյալ ճանաչելու համար: Հակառակ սրան Մ. Շիմինովան հայտնում է այն տեսակետը, որ անձին տուժող, ուստի և խնամարկյալ ճանաչելու համար անհրաժեշտ է, որ վերջինս ամբողջությամբ գտնված լինի մահացածի խնամակալության տակ կամ էլ մահացածից անընդհատ ստացած լինի օգնություն³⁰⁴: Միևնույն ժամանակ Շիմինովան ընդունում է, որ անպայման չէ, որ խնամարկյալի հիմնական միջոցների այդ աղբյուրը միակը լինի. «անձը կարող է ունենալ ապրուստի մի քանի աղբյուր, ստանալ թոշակ, կրթաթոշակ և միաժամանակ նյութական օգնություն այլ անձից: Նա կարող է ճանաչվել այդ անձի խնամարկյալ, եթե վերջինիս նյութական օգնությունը մյուսների հետ, որոնք ապրուստի հիմնական միջոցներ չեն, հանդիսանում է հիմնական»³⁰⁵: Ա.Մ. Բելյակովան նշում է, որ օգնության մշտական աղբյուրը բացառում է այդ օգնության պատահականությունը³⁰⁶:

Քաղ. օր.-ի 1081 հոդվածը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր, գտնվելով մահացածի խնամքի տակ, անձի մահվամբ առաջացած վնասների հատուցման իրավունք են ստանում: Համաձայն օրենսգրքի՝ տուժողի (կերակրողի) մահվան դեպքում վնասի հատուցման իրավունք ունեն.

1. մահացողի խնամքի ներքո գտնվող կամ նրա մահվան օրը նրանից խնամք ստանալու իրավունք ունեցող անաշխատունակ անձինք,

2. մահացածի մահվանից հետո ծնված նրա երեխան,

3. ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի անդամը՝ անկախ նրա աշխատունակությունից, որը չի աշխատում և զբաղված է մահացածի խնամքի ներքո գտնվող նրա տասնչորս տարեկան չդարձած կամ թեկուզև նշված տարիքին հասած, սակայն բժշկական մարմինների եզրակացությամբ իր առողջական վիճակով կողմնակի

³⁰⁴ Տե՛ս նաև Шиминова М., նշված աշխատությունը, նույն տեղում, տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, նույն տեղում:

³⁰⁵ Шиминова М., նույն տեղում:

³⁰⁶ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 108:

խնամքի կարիք ունեցող երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով,

4. մահացածի խնամքի ներքո գտնվող և նրա մահվանից հետո հինգ տարվա ընթացքում անաշխատունակ դարձած անձինք:

Այնուհետև օրենսգիրքը շարունակում է, որ մահացածի ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի այլ անդամը, որը չի աշխատում և զբաղված է մահացածի երեխաների, թոռների, քույրերի ու եղբայրների խնամքով և անաշխատունակ է դարձել խնամքի իրականացման ժամանակաշրջանում, այդ անձանց նկատմամբ խնամքի ավարտից հետո պահպանում է վնասի հատուցման իրավունքը:

Համաձայն օրենսգրքի քննարկվող հոդվածի՝ վնասը հատուցվում է.

1. անչափահասներին՝ մինչև տասնութ տարեկան դառնալը,

2. տասնութ տարեկանից բարձր տարիքի սովորողներին՝ մինչև ցերեկային ուսուցման ձևով ուսումնական հաստատություններում ուսման ավարտը, սակայն ոչ ավելի, քան մինչև քսաներեք տարեկան դառնալը,

3. հիսունհինգ տարեկանից մեծ կանանց և վաթսուն տարեկանից մեծ տղամարդկանց՝ ցմահ,

4. հաշմանդամներին՝ հաշմանդամության ժամանակ,

5. ծնողներից մեկին, ամուսնուն կամ ընտանիքի այլ անդամին, որ զբաղված է մահացածի խնամքի տակ գտնվող նրա երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով՝ մինչև վերջիններիս տասնչորս տարեկան դառնալը:

Ինչպես տեսանք, որոշ դեպքերում օրենքը խնամարկյալներին է հավասարեցնում անձանց, որոնք չնայած մահացածի կենդանության օրոք նրանից չէին ստանում ոչ մի նյութական օգնություն, բայց նրա մահվան օրվա դրությամբ ունեցել են նրա կողմից խնամքի իրավունք: Որպես ասվածի օրինակ կարելի է նշել թոշակառու մորը, որը մահացածի կենդանության օրոք, առանձին ապրելով վերջինից, չի օգտվել նրա միջոցներից (չնայած այն հանգամանքին, որ ունեցել է ալիմենտ ստանալու իրավունք), սակայն, համաձայն օրենսգրքի, իրավունք ունի ցմահ ստանալու վնասի հատուցում:

Օրենսգիրքը անձի մահվան դեպքում վնասի հատուցում ստանալու իրավունք է վերապահում միմիայն անաշխատունակ, այսինքն

իրենց աշխատանքով իրենց համար միջոցներ հայթայթելուն անընդունակ անձանց համար և այն անձանց համար, ովքեր չնայած աշխատունակ են, սակայն տվյալ պահին չեն աշխատում՝ զբաղված լինելով մահացածի խնամքի տակ գտնվող անաշխատունակ անձանց խնամքով: Անաշխատունակ են համարվում առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամները, ինչպես նաև 63 տարին լրացած կանայք և 65 տարին լրացած տղամարդիկ³⁰⁷: Այսպիսով, վերոնշյալ պայմանները պարտադիր են, որպեսզի անձը համարվի մահացածի կողմից օգնություն ստացող և իրավունք ունենա վնասի հատուցման:

Քաղ. օր.-ի վերոնշյալ դրույթները ավելի են մանրամասնվել «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքով, որի 24 հոդվածը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կերակրողին կորցնելու դեպքում իրավունք են ստանում աշխատանքային կենսաթոշակ ստանալու: Այսպես, համաձայն հոդվածի, կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեն ընտանիքի հետևյալ անդամները.

ա) 18 տարին չլրացած երեխաները, հաշմանդամ ճանաչված երեխաները, եղբայրները, քույրերը և թոռները, ընդ որում, եղբայրները, քույրերը և թոռները, եթե չունեն աշխատունակ ծնողներ և չեն աշխատում,

բ) կերակրողի մահվան պահին կենսաթոշակային տարիքը լրացած կամ անկախ տարիքից հաշմանդամ ճանաչված ծնողները, ամուսինը, եթե չեն աշխատում,

գ) ծնողներից կամ ամուսիններից մեկը, պապը, տատը, եղբայրները կամ քույրերը՝ անկախ տարիքից ու աշխատունակությունից, եթե նրանք զբաղված են մահացած կերակրողի 8 տարին չլրացած երեխաների, եղբայրների, քույրերի կամ թոռների խնամքով և չեն աշխատում,

դ) պապը և տատը, եթե չեն աշխատում և չունեն աշխատունակ զավակներ:

Օրենքը սահմանում է նաև, որ ընտանիքի՝ կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր անդամների համար նշանակվում է մեկ ընդհանուր կենսաթոշակ: Սակայն ընտանիքի անդամի պահանջով կենսա-

³⁰⁷ Ст 11 նաև Гражданское право, обязательственное право, учебник, էջ 633:

թոշակի նրա բաժինը կարող է վճարվել առանձին: Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակը սահմանվում է այն ամբողջ ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մահացածի ընտանիքի անդամը անաշխատունակ է համարվել:

Կերակրողին կորցնելու դեպքում նրա խնամքի տակ գտնվող անձանց վնասի հատուցման ծավալը որոշվում է համաձայն ՀՀ Քաղ. օր.-ի 1082 հոդվածի, որի համաձայն՝ կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցման իրավունք ունեցող անձանց վնասը հատուցվում է մահացածի աշխատավարձի կամ եկամտի այն մասի չափով, որը նրանք ստանում էին կամ ստանալու իրավունք ունեին իրենց ապրուստի համար մահացածի կենդանության օրոք:

Դատական պրակտիկայում օրենքի այս դրույթի կիրառելիությունը կարելի է փաստել հետևյալ օրինակով:

07.09.2000թ. ժամը 22.00 սահմաններում ՀՀ ՆԳՆ «02» շաբաթաթերթ ՊՓԲԸ սրբագրիչ Վ. Գրիգորյանը խմբագրության հանձնարարությամբ գտնվել է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Երբ ցանկացել է օգտվել տպարանի վերելակից, փորձելով պարզել, թե որ հարկում է կանգնած վերելակի խցիկը, կողմնակի առարկայով բացել է վերելակի հորանի չորրորդ հարկի դռները և ընկել է առաջին հարկում կանգնած խցիկի տանիքի վրա, ինչից էլ ստացել է մարմնական վնասվածքներ և հիվանդանոցում մահացել: Տուժողի կինը՝ Զ. Մարությանը, դիմել է դատարան և խնդրել՝ որպես ամուսնու խնամքի տակ գտնվող անձ՝ իր օգտին բռնագանձել 35.000 դրամ և 1000 ԱՄՆ դոլար, որպես հուղակավորության ծախսեր:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը 06.07.2001թ. վճռով հայցը բավարարել է և որոշել հօգուտ հայցվորի ՀՀ ՆԳՆ «02» շաբաթաթերթ ՊՓԲԸ-ից ցմահ բռնագանձել յուրաքանչյուր ամիս 35.000 դրամ (այստեղ դատարանը հաշվի է առել, որ մահացածի ամսական աշխատավարձը եղել է 70.000 դրամ), իսկ ՀՀ ՆԳՆ «02» շաբաթաթերթ ՊՓԲԸ-ից և «Տիգրան Մեծ» հրատարակչությունից՝ 500 ական ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որպես հուղակավորության ծախսերի փոխհատուցում³⁰⁸:

³⁰⁸ Տե՛ս ԳՅ վերաքննիչ դատարանի գործ N 01-1083, 2001թ.:

Օրենսգիրքը նշում է, որ մահացածի աշխատավարձի չափը ենթակա է որոշման ՀՀ Քաղ. օր.-ի 1079 հոդվածով սահմանված կարգով, որի համաձայն, ինչպես նշվեց վերը, տուժողի ամսական միջին աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է առողջությանը վնաս պատճառելուն նախորդած տասներկու ամսվա նրա աշխատավարձը (եկամուտը) տասներկու մասի բաժանելու միջոցով: Այն դեպքում, երբ տուժողը վնաս պատճառելու ժամանակ աշխատել է տասներկու ամսից պակաս, նրա ամսական միջին աշխատավարձը (եկամուտը) հաշվարկելու համար անհրաժեշտ է փաստացի աշխատած ամիսների աշխատավարձի (եկամտի) ընդհանուր գումարը բաժանել աշխատած ամիսների թվի վրա: Այս հաշվարկելուց հետո, ինչպես նշում են Ս.Ե. Գոնցովը, Մ.Յա. Մարինինան և մի շարք այլ հեղինակներ, անհրաժեշտ է կերակրողի որոշված աշխատավարձը կամ եկամուտը բաժանել նրա խնամակալության տակ գտնվող անձանց վրա՝ պարզելու համար, թե որքան գումար է հասնում նրանցից յուրաքանչյուրին: Այստեղ, ինչպես նշում է Ա.Մ. Բելյակովան, առանձնացվում է նաև եկամտի այն մասը, որը կերակրողը ծախսում էր ինքն իր վրա³⁰⁹: Ինչպես նշում են հեղինակները, եթե վնասի հատուցման իրավունք միաժամանակ ունեն անաշխատունակ անձինք, ովքեր գտնվել էին մահացածի խնամակալության տակ, և անաշխատունակները, ովքեր չէին գտնվել նրա խնամակալության տակ, ապա սկզբում որոշվում է այն անձանց վնասի հատուցումը, ովքեր գտնվել են մահացածի խնամակալության տակ: Այս անձանց փոխհատուցման որոշված գումարը հանվում է կերակրողի աշխատավարձից, որից հետո վերոնշյալ կարգով որոշվում է փոխհատուցման չափը այն անձանց համար, որոնք չեն գտնվել մահացածի խնամակալության ներքո³¹⁰: Իսկ այն դեպքում, երբ վնասի հատուցման իրավունք ունեցող անձը մահացածից նախկինում ալիմենտ է ստացել դատական կարգով որոշված չափով, անկախ աշխատավարձի չափից՝ իրա-

³⁰⁹ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, *Նշված աշխատությունը*, էջ 110, նաև՝ Шиминова М., *Նշված աշխատությունը*, էջ 89, Белякова А.М., *Նշված աշխատությունը*, էջ 109:

³¹⁰ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, *Նշված աշխատությունը*, էջ 111:

վունք ունի ստանալ դատարանի կողմից որոշված գումարի չափով փոխհատուցում³¹¹:

Հատուցման չափը որոշելիս մահացածի եկամուտների կազմում աշխատավարձի կամ եկամուտների հետ միասին ներառվում են կենդանության օրոք ստացած նրա կենսաթոշակը և այլ նմանօրինակ վճարներ³¹²: Ինչպես նշված է հոդվածում, վնասի հատուցման չափը որոշելիս կերակրողի մահվան հետ կապված անձանց նշանակված կենսաթոշակը և թոշակների այլ տեսակները, որոնք նշանակվել են ինչպես կերակրողի մահվանից առաջ, այնպես էլ հետո, այդ անձանց կողմից ստացվող աշխատավարձը կամ եկամուտը և կրթաթոշակը չեն հաշվարկվում նրանց վնասի հատուցման հաշվին: Օրենսգրքի նույն հոդվածը սահմանում է նաև, որ կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցման իրավունք ունեցող յուրաքանչյուր անձի համար սահմանված հատուցման չափը ենթակա չէ վերահաշվարկի, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1. երեխայի ծնունդը կերակրողի մահվանից հետո,

2. մահացած կերակրողի երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով զբաղված անձանց հատուցման վճարի նշանակումը և դադարումը:

Ինչպես վերջում նշում է հոդվածը, հատուցման չափն օրենքով կամ պայմանագրով կարող է մեծացվել:

Հատուցման են ենթակա նաև մահացածի հուղարկավորության հետ կապված ծախսերը: Համաձայն Քաղ. օր.-ի 1087 հոդվածի՝ տուժողի մահվան հետ կապված վնասի համար պատասխանատու անձինք պարտավոր են հատուցել այդ ծախսերն այն անձին, ով այդ ծախսերը կատարել է: Այս դեպքում, գտնում ենք, թաղման ծախսերը հատուցելու պահանջներ կարող են բերվել ինչպես այն անձանց կողմից, ովքեր տուժողի մահվան դեպքում ունեն փոխհատուցման իրավունք, այնպես էլ մահացածի հետ կապ չունեցող անձանց և կազմակերպությունների կողմից, ովքեր փաստացիորեն կրել են այդ ծախսերը³¹³:

³¹¹ Տե՛ս Шиминова М., նշված աշխատությունը, էջ 90:

³¹² Տե՛ս ՀՀ Քաղ. օր., հոդված 1082, կետ 1:

³¹³ Տե՛ս նաև А. И. Загорюлько, նշված աշխատությունը, էջ 98:

Օրինակ՝ 1997թ. հուլիսի 27-ին ժամը 18-ի սահմաններում Կոռնիձոր գյուղի բնակիչ Ա. Ջ. Հովհաննիսյանը, հավատարմագրով վարելով հոր՝ Ջ. Հովհաննիսյանին պատկանող ԳԱՋ - 53 մակնիշի մեքենան, Տեղ-Կոռնիձոր ճանապարհահատվածի չորրորդ կիլոմետրում վրաերթի է ենթարկել Հ. Բաբաջանյանին և պատճառել մահ:

Տուժողի հուղակավորության հետ կապված ծախսերը կատարել է Ս. Բաբաջանյանը, որն էլ հասցված վնասը 2.104.200 դրամի չափով վերականգնելու պահանջով դիմել է Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան, որը բավարարվել է դատարանի կողմից մասնակիորեն՝ բռնագանձելով պատասխանողներից հոգուտ հայցվորի 800.000 դրամ գումար³¹⁴:

Միաժամանակ օրենսգիրը նշում է, որ այս ծախսերը կատարած քաղաքացիների կողմից հուղակավորության համար ստացած նպաստները չեն հաշվարկվում վնասների հատուցման հաշվում: Անձի մահվանից հետո փոխհատուցման իրավունք ունեցող անձանց շրջանակը ավելի հստակ պատկերացնելու և այդ անձանց հասանելի փոխհատուցման չափը ավելի կոնկրետ հաշվարկելու նպատակով, ինչպես նաև խուսափելու համար առանձին վեճերից, կարծում ենք, նպատակահարմար է, որ մման գործերով վճիռ կայացնող դատարանները վճռում կոնկրետ նշեն փոխհատուցման իրավունք ունեցող անձանց շրջանակը և փոխհատուցման չափը:

2000թ. օգոստոսի 28-ին ք. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում քննվել է գործն ըստ մեղադրանքի Գավառ քաղաքի բնակիչ Հ.Ջ.-ի ՀՀ քր. օրի. 88 հոդվածի 2-րդ մասով, 99 հոդվածի 1-ին կետով: Այս քրեական գործի՝ մեզ հետաքրքրող մասը այն է, որ ամբաստանյալը, իմանալով, որ քաղաքացի Շ.Ք.-ի մոտ օրվա՝ առավոտյան և երեկոյան ժամերին գումարներ են լինում, հետևել է նրան և գումարներին տիրանալու նպատակով հարձակում է գործել Շ.Ք.-ի վրա և իր կողմից նախօրոք պատրաստած մետաղյա խողովակով շահադիտական դրոշմներով սպանելու դիտավորությամբ 3 անգամ հարվածել է նրա գլխին՝ պատճառելով նրա կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ, որի հետևանքով տուժողը հիվանդանոցում մահացել է:

³¹⁴ Տե՛ս Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 1999թ. ապրիլի 9-ի վճիռը:

Գատարանը, քննելով գործը, վճռել է, որ ամբաստանյալը մեղավոր է և բացի քրեական պատասխանատվությունից, բավարարել է նաև քաղ. հայցը, և հօգուտ Մ.Չ.-ի, որը դատարանում հանդես է եկել որպես տուժողի իրավահաջորդ, ամբաստանյալից բռնագանձվել է 3000 ԱՄՆ դոլար:

Դժվար չէ նկատել, որ դատավճռից չի երևում, թե ինչում է կայացել քաղ. հայցը, չկան տուժողի բոլոր իրավահաջորդների վերաբերյալ տվյալներ, չի ասվում, թե ինչպես պետք է բաշխվի բռնագանձված գումարը, ո՞ր մասն է հանդիսանում հանգուցյալի թաղման ծախսերի փոխհատուցում:

Տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման գումարը կյանքի թանկացման դեպքում, օրենքով սահմանված կարգով, ենթակա է ինդեքսավորման³¹⁵: Հոդվածը սահմանում է նաև, որ նվազագույն աշխատավարձի չափը բարձրացնելու դեպքում կորցրած աշխատավարձի (եկամտի) և տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված այլ վճարների գումարները մեծանում են աշխատավարձի նվազագույն չափի բարձրացմանը զուգընթաց: Այս դրույթը հնարավորություն է տալիս տուժողներին հետագայում դիմել վնասի փոխհատուցման պարտականություն ունեցող անձանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված այլ վճարների գումարները մեծացնելու պահանջով, իսկ վերջիններս պարտավոր են հարգել այդ պահանջը և մեծացնել փոխհատուցման գումարների չափը: Սակայն այս դեպքում, կարծում ենք, ևս պետք է ուշադրություն դարձվի կողմերի գույքային դրությանը և հատկապես վնաս պատճառողի իրական ֆինանսական հնարավորություններին:

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, առողջությանը վնաս հասցնելը կարող է լինել մի քանի պատճառների հետևանք, այդ թվում՝ և՛ վնաս հասցնողի, և՛ տուժողի մեղավոր գործողությունների հետևանք: Արդար չէ վնասի հատուցման ողջ պարտականությունը դնել վնաս հասցնողի վրա, եթե առաջացած վնասի մեջ իր մեղքի բաժինը ունի նաև տուժողը: Հետաքրքիր սկզբունք է գործում Ֆրանսիայի օրենդրության մեջ, համաձայն որի՝ վնասը պետք է հասցված լինի

³¹⁵ Տե՛ս Քաղ. օր., հոդված 1084:

օրինական շահի խախտումով: Երրորդ անձի սխալի պատճառով ոստիկանության կողմից հայտնաբերված հանցագործը չի կարող պահանջել այդ երրորդ անձից վնասի հատուցում: Այս կապակցությամբ Ֆրանսիայի վերաքննիչ դատարանը որոշել է, որ կինը չի կարող վնասի փոխհատուցում պահանջել այն դեպքում, եթե սպանվել է նրա հետ արտասանական կապերի մեջ գտնվող սիրեկանը: Վերաքննիչ դատարանը այս կապակցությամբ պատասխանել է, որ արտասանական կապերի հետևանքով առաջացած հարաբերությունները չեն կարող դիտվել որպես իրավաբանորեն պահպանվող կատեգորիաներ՝ հենց նկատի ունենալով նրանց հակաօրինական բնույթը³¹⁶:

§3. Տուժողի մեղքը՝ որպես վնասի հատուցման ծավալների նվազեցման պայման

Քաղաքացիական օրենսդրությունը, սահմանելով նորմեր, որոնք կոչված են պաշտպանելու քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների շահերը, հիմնական ուշադրությունը դարձնում է տուժողի շահերի պաշտպանությանը: Սա հասկանալի և ընդունելի է, քանի որ օրենսդրությունը կոչված է պաշտպանելու կյանքի, առողջության և սեփականության անվտանգությունը, քաղաքացիական հարաբերությունների սուբյեկտների իրավունքները: Սակայն պրակտիկայում հնարավոր են դեպքեր, որ վնասը պատճառվի ոչ միայն վնաս պատճառողի մեղքի և հակաօրինական գործողությունների արդյունքում, այլև տուժողի դիտավորության և անփութության հետևանքով: Այս դեպքերում գտնում ենք, որ պատճառված վնասի ամբողջական բեռը վնաս պատճառողի վրա դնելը չի կարող բխել ինչպես նորմալ հասարակության շահերից, այնպես էլ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից: Այդ պատճառով կարևորում ենք, որ պատճառված վնասի հիմքում տուժողի մեղքի առկայության դեպքում վնասի հատուցման պարտավորությունները

³¹⁶ Տե՛ս Ս. Жюллио Де Ла Морандьер, նշված աշխատությունը, էջ 405:

պետք է կրեն այլ բնույթ՝ վնասի հատուցման մի որոշակի ծավալ թողնելով տուժողի վրա:

Այստեղ կարող է հարց առաջանալ. արդյոք ներառվում է քաղաքացիական իրավունքում մեղքի հասկացության մեջ նաև տուժողի մեղքը: Ինչպես նշվել է, մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող գործողության կամ անգործության և դրանցից բխող հետևանքների նկատմամբ: Կարծում ենք, քննարկվող իրավահարաբերությունների ժամանակ, երբ վնասը պատճառվում է տուժողի այնպիսի գործողությունների կամ անգործության արդյունքում, որից ակնհայտ է, որ վերջինս գիտակցել և ցանկացել է վնասի առաջացումը, ապա վերջինիս մեղքը առկա է:

ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածը սահմանում է, որ տուժողի դիտավորության հետևանքով ծագած վնասը չի հատուցվում, և երկրորդ մասում շարունակում է, որ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, ապա հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից: Գերմանիայի քաղ.օր.-ը սահմանում է, որ եթե տուժողի մեղքը նպաստել է վնասի առաջացմանը, ապա վնասի հատուցման պարտականությունը և վնասի հատուցման ծավալները կախված են հատկապես այն հանգամանքի հետ, թե որքանով է վնասի ծավալը կախված կողմերի գործողություններից³¹⁷: Իր հերթին անգլիական օրենսդրությունը սահմանում է. «Այն դեպքում, երբ անձը վնաս է ստանում մասնակի իր մեղքով և մասնակի այլ անձի կամ անձանց մեղքով, այդ վնասի հատուցման պահանջը չպետք է մերժվի տուժողի մեղքի աստիճանի պատճառով, սակայն պահանջվող հատուցման չափը կարող է նվազեցվել դատարանի կողմից՝ նկատի ունենալով տուժողի բաժինը պատճառված վնասում...»³¹⁸: Չնայած ֆրանսիական օրենսդրությունը չունի կոնկրետ նորմեր, որոնք կնվազեցնեն հատուցվող վնասի չափերը տուժողի մեղքի կամ անզգուշության առկայության դեպքում, սակայն այդ հարցը ֆրանսիական ի-

³¹⁷ Տե՛ս Գերմանիայի Քաղ. օր. 254 պարագրաֆը:

³¹⁸ Տե՛ս Law Reform (Contributory Negligence) Act 1945թ.:

րավունքում լուծվում է դատական նախադեպերով, մասնավորապես Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի որոշումներով³¹⁹:

Այսպիսով, թե՛ ՀՀ օրենսդրությունը, թե՛ եվրոպական զարգացած երկրների օրենսդրությունները և դատական պրակտիկան նախատեսում են, որ այն դեպքերում, երբ վնասի պատճառման հիմքում ընկած է նաև տուժողի վարքագիծը, վնասի հատուցման չափերը պետք է նվազեցվեն կամ էլ մերժվեն:

ՀՀ քաղ.օր. 1076 հոդվածի առաջին մասը սահմանում է, որ տուժողի դիտավորությամբ պատճառված վնասը ենթակա չէ հատուցման: Ինչպես նշվեց, տուժողի դիտավորության առկայության դեպքում ենթակա չէ հատուցման նույնիսկ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը³²⁰: Համաձայն Օրենսգրքի՝ տուժողի գործողություններում կոպիտ անզգուշության առկայության դեպքում վնասի փոխհատուցման չափը փոքրացվում է: 1076 հոդվածից բխում է նաև, որ տուժողի կողմից թեթև անզգուշության դեպքում վնասի հատուցման չափը չի փոփոխվում՝ հօգուտ վնաս պատճառողի: Ամեն դեպքում օրենսդրություն սահմանում է, որ հատուցման չափի հարցը պետք է լուծվի՝ հիմք ընդունելով և՛ տուժողի, և՛ վնաս պատճառողի մեղքի աստիճանը: Օրենսգիրքը, ի դեմս վերոնշյալ հոդվածի 2-րդ մասի երկրորդ կետի, սահմանում է, որ տուժողի կոպիտ անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ (տվյալ դեպքում ավելորդ չէ նշել, որ հոդվածը նկատի ունի այն դեպքերը, երբ վնաս է պատճառվել շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ (Քաղ. օր. հոդված 1072), հատուցման չափը կարող է նվազեցվել կամ հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Օրենսգիրքը միաժամանակ սահմանում է, որ քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել: Անդրադառնալով հոդվածի այս վերջին ձեռնարկին՝ նկատենք, որ, մեր կարծիքով, այն հստակ շարադրված չէ, և պարզորոշ

³¹⁹ Տե՛ս Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche “Tort Law”, Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 689:

³²⁰ Տե՛ս սույն գրքի «Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասից ազատող հանգամանքները» պարագրաֆը:

չի հասկացվում, թե վնասը հատուցելու կոնկրետ ո՞ր հարաբերություններին է վերաբերում՝ առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի՞ դեպքում առաջացող իրավահարաբերություններին, թե՞ նաև այն դեպքերին, երբ վնասը առաջանում է սովորական քաղաքացիաիրավական հարաբերություններում: Եթե դրույթը վերաբերում է նաև առօրյա քաղաքացիական իրավահարաբերություններում ծագող վնասի համար պատասխանատվությանը, ապա, կարծում ենք, այն օբյեկտիվորեն ի վիճակի չէ պաշտպանել իրավահարաբերության բոլոր մասնակիցներին և սուբյեկտիվորեն պաշտպանում է միայն այն մասնակիցներին, որոնք տուժել են իրավահարաբերության արդյունքում՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ վնասը կարող է առաջացած լինել հենց տուժողի դիտավորությամբ: Մյուս կողմից, եթե հողվածի այդ դրույթը վերաբերում է միայն առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասին, ապա, ելնելով օրենսդրության ընդհանուր սկզբունքներից և այն հանգամանքից, որ առավել վտանգի գործունեությամբ պատճառված վնասը ամեն դեպքում ենթակա է փոխհատուցման այդ գործունեությունն իրականացնողի կողմից՝ անկախ նրա մեղքից, կարծում ենք, հողվածի ձևակերպումը ճիշտ է, սակայն պետք է կոնկրետ նշել, թե որ դեպքերին է այն վերաբերում³²¹:

1076 հոդվածից կարելի է եզրակացնել, թե օրենսդիրը ցանկացել է ամրագրել, որ առավել վտանգի աղբյուրով անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում պատասխանատվության չափը կարող է նվազեցվել, սակայն վնաս պատճառողը չի կարող լիովին ազատվել պատասխանատվությունից: Միևնույն ժամանակ կցանկանայինք ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հողվածի ձևակերպումը ինքնին չի նշանակում, թե ամեն դեպքում, երբ առկա է տուժողի կոպիտ դիտավորությունը, վնասի ծավալը ենթակա է նվազեցման: Օրենսգիրքը դատարաններին հնարավորություն է տալիս կողմնորոշվելու՝ կիրառե՞լ նորմը կոնկրետ իրավահա-

³²¹ Առաջարկում ենք ՀՀ Քաղ. օր.-ի 1076 հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասի վերջին նախադասությունը ձևակերպել հետևյալ կերպ. *«Շրջապատի համար առավել վտանգ ստեղծող գործունեությամբ քաղաքացու կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի հատուցումը չի կարող մերժվել»:*

րաբերության ժամանակ, թե՞ ոչ: Ամրագրելով, որ վնասի հատուցման չափը «կարող է» նվազեցվել կամ վնասի հատուցումը «կարող է» մերժվել՝ օրենսդիրը հուշել է դատարաններին, որ ցանկացած գործով վճիռ կայացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գործի բոլոր հանգամանքներին, որոնց բազմակողմանի զննության ընթացքում կարող է պարզվել, որ չնայած տուժողի կոպիտ անզգուշությանը՝ առավել վտանգի աղբյուրի տիրոջ համապատասխան գործողությունների հետևանքով վնասը հնարավոր կլիներ կանխել:

1076 հոդվածը սահմանում է նաև, որ տուժողի մեղքը հաշվի չի առնվում լրացուցիչ ծախսերը (1078 հոդվածի 1-ին մաս), կերակրողի մահվամբ ծագած վնասը (1082 հոդված), ինչպես նաև թաղման ծախսերը հատուցելիս (1087 հոդված): Կարծում ենք՝ այս դեպքում նույնպես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վնասը կարող է պատճառվել տուժողի դիտավորության հետևանքով կամ վնասը պատճառողի կողմից անհրաժեշտ պաշտպանության վիճակում, ուստի և ողջ պատասխանատվությունը դնել վնասը պատճառողի վրա ճիշտ չէ: Արդյոք պե՞տք է հուղակավորության հետ կապված կամ այլ ծախսերը դնել մեկի վրա, որը մահ է պատճառել իր վրա հարձակվողին՝ գործելով քաղ. օր-ի 1060 հոդվածի, այսինքն՝ անհրաժեշտ պաշտպանության սահմաններում³²²:

Հոդվածը սահմանում է նաև, որ դատարանը կարող է նվազեցնել քաղաքացու կողմից պատճառված վնասի հատուցման չափը՝ հաշվի առնելով վերջինիս գույքային դրությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը պատճառվել է դիտավորությամբ կատարված գործողություններով:

Իրավագիտության մեջ նշվում է, որ այն դեպքերում, երբ անհրաժեշտություն կա հաշվելու և՛ տուժողի, և՛ վնաս պատճառողի մեղքերի առկայությունը և չափը, նրանցից յուրաքանչյուրի մեղքի աստիճանը որոշվում է տոկոսներով՝ կախված կողմերից

³²² Կարծում ենք, որ սա չի բխում օրինականության և արդարության սկզբունքներից, ուստի առաջարկում ենք 1076 հոդվածի 2-րդ կետի 3-րդ մասը շարադրել հետևյալ կերպ. *«Եթե վնաս պատճառողի գործողություններում բացակայում են անհրաժեշտ պաշտպանության հատկանիշները (1060 հոդված), ապա տուժողի մեղքը հաշվի չի առնվում լրացուցիչ ծախսերը (1078 հոդվածի 1-ին կետ), կերակրողի մահվամբ ծագած վնասը (1082 հոդված), ինչպես նաև թաղման ծախսերը հատուցելիս (1087 հոդված)»:*

յուրաքանչյուրի գործողությունների գնահատականից և կոնկրետ հանգամանքներից: Օրինակ, մեղքի աստիճանը կարող է որոշվել հավասար տոկոսներով կամ այլ հարաբերակցությամբ, որին համապատասխան էլ նվազեցվում է վնասի փոխհատուցման չափը³²³:

Վերոնշյալ խառը պատասխանատվությունը կիրառելու համար գործնական մեծ նշանակություն ունի այն բոլոր հանգամանքների պարզաբանումը, որոնք հիմք կարող են հանդիսանալ պատասխանատվության համար: Իրավացի են Ս.Ե. Դոնցովը և Մ.Յա. Մարինինան, ըստ որոնց առաջին հերթին պետք է ուսումնասիրվի վնաս հասցնողի և տուժողի գործողությունների միջև պատճառական կապի առկայությունը, որը վնասի հետևանք է հանդիսացել³²⁴: Ինչպես նշում են հեղինակները, տուժողի մեղքի աստիճանի հարցը չի քննարկվում, եթե չի հաստատված նրա վարքագծի և վնասի առաջացման միջև օբյեկտիվ կապը: Այստեղ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ տուժողը ոչ թե մասնակցում է վնասի հասցմանը, այլ իր գործողություններով սուկ նպաստում է դրան կամ ստեղծում է պայմաններ, որոնք ավելացնում են վնասի ծավալը: Հենց այս պատճառով է, որ պատասխանատվությունը պետք է ոչ թե լիովին բացառի մեղավոր անձի վնասի հատուցման պարտականությունը, այլ միայն նվազեցնի այն:

Իրավազետները նշում են նաև, որ այս առումով գոյություն ունեն որոշակի բացառություններ, օր., երբ խոսքը վերաբերում է անչափահաս երեխաներին և անգործունակ անձանց: Ելնելով այն հանգամանքից, որ օրենքը ծնողների և խնամակալների վրա է դնում անչափահաս երեխաների կողմից պատճառված վնասի հատուցման պարտականությունը, չի կարող ընդունվել ծնողների մեղավոր գործունեությունը իրենց երեխաների նկատմամբ անհրաժեշտ հսկողություն չիրականացնելու համար՝ որպես խառը պատասխանատվության կիրառման հիմք, և կիրառել այն անչափահասին վնաս պատճառվելու դեպքում:

Օրենքը խառը պատասխանատվության տեսանկյունից իրավական նշանակություն չի տալիս այն անգործունակների կամ գործունակ անձանց վարքագծին, որոնք տվյալ պահին իրենց գործողու-

³²³ Տե՛ս Шиминова М., նշված աշխատությունը, էջ 77:

³²⁴ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 123:

թյուններին հաշիվ տալուն կամ դրանք գնահատելուն անընդունակ են՝ համարելով, որ այս անձանց գործողությունները հիմք չեն կարող հանդիսանալ խառը պատասխանատվության համար: Անգործունակների նկատմամբ խնամակալների կամ համապատասխան հաստատությունների անհրաժեշտ հսկողության բացակայությունը, վերոնշյալ տրամաբանությունից ելնելով, նույնպես չի կարող խառը պատասխանատվության հիմք հանդիսանալ: Բացառություն պետք է հանդիսանան այն դեպքերը, երբ անձը ինքն է իրեն հասցրել նման վիճակին ալկոհոլ կամ քմրանյութ օգտագործելու միջոցով³²⁵:

Մյուս կարևոր հարցը, որն արժարժվում է իրավաբանական գրականության մեջ, տուժողի գործողությունների հակաօրինական բնույթն է: Տուժողի գործողությունները կարող են բերել վնասի առաջացման, և այդ գործողությունները նաև կարող են լինել հակաօրինական: Տուժողը, հնարավոր է, ինքը դրդի վնաս պատճառողին կատարել այնպիսի գործողություններ, որոնք կառաջացնեն վնաս: Հնարավոր է, որ տուժողի մեղավոր գործողությունները հետևանք հանդիսանան այն բանի, որ վնաս հասցնողը գործի անհրաժեշտ պաշտպանության շրջանակներում և այդպես վնաս պատճառի տուժողին: Ուստի գտնում ենք, որ ամեն կոնկրետ դեպքում վնասի ծավալը որոշելիս պետք է բազմակողմանիորեն քննարկել նաև տուժողի մեղավորության հարցը:

Համաձայն ենք իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետի հետ, որ երրորդ և ամենակարևոր հանգամանքը, որը խառը պատասխանատվության հիմք է հանդիսանում տուժողի և վնաս պատճառողի միջև, տուժողի մեղքն է, նրա կոպիտ անզգուշությունը: Տուժողի մեղքի աստիճանի որոշման դեպքում հաշվի են առնվում նրա վարքագծի ձևավորման հոգեբանական առանձնահատկությունները՝ նկատի ունենալով նրա հոգեբանական վիճակի ներքին և արտաքին բոլոր կոնկրետ հանգամանքները: Իրոք, հնարավոր է, որ մեկ անձի մոտ որոշակի գործողությունների կատարումը կարող է դիտվել որպես կոպիտ անզգուշություն, իսկ մյուսի համար՝ ոչ³²⁶:

³²⁵ Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, նշված աշխատությունը, էջ 125:

³²⁶ Տե՛ս նշված աշխատությունը, էջ 126:

Խոսելով տուժողի կոպիտ անզգուշության մասին՝ կցանկանալիք նշել, որ դա կարելի է բնութագրել որպես անփույթ վերաբերմունք մոտալուտ վտանգի կամ վտանգի ծագման նկատմամբ: Այստեղ պետք է ավելացնել, որ անհրաժեշտ է տարբերել կոպիտ անզգուշությունը սովորական անզգուշությունից: Ինչպես ընդունված է նշել իրավաբանական գրականության մեջ, սովորական անզգուշությունը դրսևորվում է այն ժամանակ, երբ անձը չի գիտակցել վրա հասնող վտանգը, սակայն պետք է իմանար այդ մասին: Այսպիսի անզգուշությունը չի կարող հիմք հանդիսանալ վնաս պատճառողի՝ տուժողի նկատմամբ ունեցած պատասխանատվության բացառման համար: Կոպիտ անզգուշության դեպքում տուժողը գիտակցում է վերահաս վտանգը, եթե անգամ չի գիտակցում, ապա պարտավոր է և կարող է գիտակցել, սակայն անփույթ է հետևանքների նկատմամբ: Ա.Մ. Բելյակովան նշում է, որ տուժողի գործողությունները պետք է լինեն հակաօրինական ու մեղավոր. միայն այս դեպքում դրանք կարող են ազդել պատճառված վնասի չափի վրա³²⁷:

Կոպիտ անզգուշության ավելի բազմակողմանի բացահայտման համար, ինչպես նշում է Օ.Ա. Կրասավչիկովը, անհրաժեշտ է ուսումնասիրել որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների առկայությունը: Օբյեկտիվ պետք է համարել տուժողի պահվածքի օբյեկտիվ կողմը, որի բացահայտման նպատակով պետք է ուշադրություն դարձնել հետևյալ երկու հանգամանքի վրա.

1. կոպիտ անզգուշությունը միայն այն դեպքում կարող է դիտվել որպես պատասխանատվության չափը նվազեցնող կամ պատասխանատվությունից ազատող հանգամանք, երբ վերջինը պատճառական կապի մեջ է ծագած վնասի հետ: Այդպիսի պատճառական կապի բացակայության դեպքում անշուշտ անհնար կլինի խոսել տուժողի մեղքի առկայության կամ բացակայության մասին,

2. որպեսզի անձի կոպիտ անզգուշությունը դիտվի որպես պատասխանատվությունը մեղմացնող կամ պատասխանատվությունից ազատող հանգամանք, անհրաժեշտ է, որ այդ գործողությունները լինեն հակաօրինական, հակառակ դեպքում, ինչպես նշում է հեղինակը, դրանք անհնար է դիտել որպես պատասխանատվության վրա

³²⁷ Белякова А.М., Возмещения вреда, причиненного источником повышенной опасности. М., 1967г., т.9 50:

ազդող հանգամանք³²⁸: Այստեղ պետք է ավելացնենք, որ անպայման չէ տուժողի կողմից միայն քաղաքացիական իրավունքի նորմերի խախտումը, կարող են խախտվել նաև վարչական, քրեական կամ իրավունքի որևէ այլ ճյուղի նորմերը,

3. որոշելու համար՝ արդյոք տուժողի գործողությունները ենթակա են դասակարգման՝ որպես կոպիտ անզգուշություն, մեծ նշանակություն ունի տվյալ պահի կոնկրետ իրադրության, որում գտնվել է տուժողը, և այդ իրադրության դինամիկայի հաշվառումը: Խնդիրն այն է, որ միևնույն գործողությունները կամ արարքը մեկ այլ իրադրության պայմաններում կարող են ստանալ տարբեր գնահատականներ: Մի դեպքում տուժողի գործողությունները կարող են դիտվել որպես անզգուշություն, մեկ այլ դեպքում՝ կոպիտ անզգուշություն: Օրինակ, բակային փողոցներում, որտեղ շատ քիչ է ավտոմեքենաների հոսքը, բնակիչները անցուդարձ են անում առանց հետիոտների համար նախատեսված կանոնների պահպանման: Այս վայրերում պատահարի դեպքում բնակչի գործողությունները չեն կարող դիտվել որպես կոպիտ անզգուշություն՝ ի տարբերություն մայրուղու կամ սովորական ճանապարհի վրա տեղի ունեցած վթարի, երբ անցորդը չի պահպանել ճանապարհը հատելու կանոնները:

Կոպիտ անզգուշության չափի որոշման համար էական է փաստացի իրավիճակի ուսումնասիրությունը, որում պատճառվել է վնասը: Հաշվի առնելով վերոնշյալ օբյեկտիվ իրադրությունը և տուժողի սուբյեկտիվ գործողությունները՝ վերջինիս կոպիտ անզգուշ գործողությունները կարող են դասակարգվել հետևյալ երեք աստիճանների.

1. տուժողը հասկանում է, որ իրեն կարող է վնաս հասցվել, սակայն ամբողջովին չի գիտակցում իր վարքի բոլոր հնարավոր հետևանքները այս կամ այն իրադրությունում: Այս աստիճանի կոպիտ անզգուշության համար բնորոշ է, որ տուժողը, թույլ տալով որոշակի խախտում, գտնվում է վախի կամ շփոթության մեջ և, կորցնելով ճիշտ կողմնորոշումը շրջապատող իրականության մեջ, կատարում է գործողություններ, որոնք նա առաջ երբեք չէր կատարի նմանատիպ իրավիճակում,

³²⁸ См. О. А. Красавчиков, *Уголовное право*, т. 2, с. 185:

2. Երկրորդ աստիճանի էությունն այն է, որ տուժողը գիտի և գիտակցում է իր գործողությունների պատճառով հնարավոր վնասակար հետևանքների առաջացումը, սակայն ենթադրում է, որ այդ հետևանքները չեն առաջանա: Այսպիսի դեպքերում ակնհայտ է, որ պատահարի և դրա հետևանքով առաջացող վնասների առյուծի բաժինը ընկնում է տուժողի վրա, քանի որ նրա գործողություններն են հանգեցրել վթարի: Սակայն այս դեպքում խոսել առավել վտանգի աղբյուրի տիրոջը լրիվ պատասխանատվությունից ազատելու մասին չենք կարող: Սա բացատրվում է նրանով, որ, ինչպես նշեցինք, առավել վտանգի աղբյուրի դեպքում պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ: Չնայած օրենսգրքի այս դրույթը տեսության մեջ և պրակտիկայում լայն կիրառություն ունի, կարծում ենք, այն պետք է ենթարկվի որոշակի վերանայման: Ամեն դեպքում առավել վտանգի աղբյուրի տերը պետք է ազատվի նույնիսկ անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումից, եթե այդ վնասը հետևանք է եղել տուժողի կոպիտ անփութության, իսկ առավել վտանգի աղբյուրի տերը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները վթարը կանխելու համար: Միաժամանակ ընդունում ենք նաև, որ նույնիսկ այս դեպքում դժվար է միանշանակ խոսել ձեռնարկված բոլոր անհրաժեշտ միջոցների մասին, և գործը պետք է վերջնական լուծում ստանա ապացույցների ամբողջության մեջ,

3. կոպիտ անզգուշության երրորդ աստիճանը բնութագրվում է նրանով, որ տուժողը հասկանում և գիտակցում է իր գործողությունների հնարավոր հետևանքները, բայց և այնպես դիտավորյալ անտեսում է դրանք, չնայած չի ձգտում վնասի առաջացմանը: Ահա այս վերջին՝ վնասը «չցանկանալու» հանգամանքի շնորհիվ էլ տարբերում ենք կոպիտ անզգուշությունը դիտավորությունից, որի դեպքում տուժողը ցանկանում է վնասի առաջացումը:

Օ.Ա. Կրասավչիկովը գտնում է, որ կոպիտ անզգուշության այս երրորդ տեսակը պետք է լիովին ազատի վնաս պատճառողին պատասխանատվությունից³²⁹: Մեր կարծիքով նույնպես, անզգուշության երրորդ տեսակի առկայության դեպքում վնաս պատճառողը պետք է ազատվի պատասխանատվությունից: Սակայն, խոսելով

³²⁹ Տե՛ս Օ. А. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 192:

քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման մասին, պետք նշենք, որ ՀՀ Քաղ. օր.-ը այս դեպքում քացառում է վնաս պատճառողի՝ վնասը փոխհատուցելու մերժումը, նույնիսկ եթե վնասը պատճառելիս տուժողը ցուցաբերել է երրորդ աստիճանի կոպիտ անզգուշություն: Կարծում ենք՝ ՀՀ Քաղ. օր.-ն այս առումով պետք է վերանայել և կոպիտ անզգուշության վերջին աստիճանի դեպքում, ելնելով գործի հանգամանքներից, ազատել վնասը պատճառողին վնասը հատուցելու պարտականությունից:

Պրակտիկայում կարող է հարցերի տեղիք տալ այն հանգամանքը, թե արդյոք փոքրահասակների և անչափահասների մեղքը նույնպես պետք է հաշվի առնվի պատասխանատվության հարցը սահմանելիս: Գործող օրենսդրության համաձայն՝ մինչև տասնչորս տարեկան փոքրահասակները լրիվ անգործունակ են և պատասխանատու չեն իրենց գործողությունների համար³³⁰: Սրա հետևանքով Քաղ. օր.-ը այս անձանց վրա չի դնում վնասը հատուցելու պարտականություն: Ա.Մ. Բելյակովան գտնում է, որ տրամաբանության համաձայն վնաս կրած փոքրահասակների գործողությունները չպետք է իրավական որակավորում ստանան³³¹: Օրենքը չի նշում, թե արդյոք այս դեպքում պետք է հաշվի առնվի փոքրահասակների նկատմամբ օրենքով հսկողություն իրականացնող անձանց մեղավորությունը: Օրենքում նշված է միայն տուժողի մեղքի մասին: Իրավաբանական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Հեղինակների մի մասը գտնում է, որ նման դեպքերում ծնողների մեղքը պետք է հաշվի առնվի, քանի որ նրանք են պարտավոր հսկողություն իրականացնել և դաստիարակել փոքրահասակին, և հենց այդ հսկողության և դաստիարակության պակասի հետևանքով երեխան վնաս է ստացել³³²: Հեղինակների մյուս մասը գտնում է, որ նմանատիպ դեպքերում պատասխանատվության չափը որոշելիս ծնողների մեղքը չպետք է հաշվի առնվի: Նրանք նշում են, որ քանի որ օրենքը խոսում է միայն տուժողի մեղքի մասին, ապա ծնողները կամ որդեգրողները չեն կարող հանդես գալ որպես

³³⁰ Տե՛ս ԳԳ Քաղ. օր., հոդված 29:

³³¹ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 55:

³³² Տե՛ս С.Е. Донцов, М.Я. Маринина, Имущественная ответственность за вред причиненный личности, М., 1986г., էջ 78-80:

տուժողներ, ուստի և նրանց մեղքը չի կարող հաշվի առնվել: Բացի այդ՝ հեղինակները նշում են նաև, որ ծնողների՝ երեխային հսկելու պարտականությունը նրանց պարտականությունն է երեխայի և պետության հանդեպ, ուստի այդ պարտականության թերի կատարումը չի կարող հիմք հանդիսանալ անչափահասին վնաս պատճառած երրորդ անձանց պատասխանատվության մեղմացման կամ ժխտման համար³³³: Քննարկելով տարակարծիք հեղինակների տեսակետներն էլ՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ անհնար է ժխտել ծնողների դերը փոքրահասակին պատճառված վնասի մեջ, սակայն մյուս կողմից պետք չէ այդ դերը բացարձականացնել և դնել նմանատիպ բոլոր գործերի հիմքում: Կախված կոնկրետ գործի հանգամանքներից՝ պետք է ուշադրությամբ վեր հանել բոլոր այն հանգամանքները, որոնք հնարավորություն կտան պարզել, թե արդյոք փոքրահասակի նկատմամբ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների դրսևորած վատ հսկողությունն է պատճառ հանդիսացել վերջինիս հասցված վնասի առաջացմանը:

Ինչ վերաբերում է տասնչորսից տասնութ տարեկան անձանց, ապա համաձայն Քաղ. օր.-ի 30 հոդվածի, այս անձինք սահմանափակ գործունակ են, և նրանց գործողությունները առաջացնում են իրավական հետևանքներ: Բացի այդ՝ Քաղ. օր.-ի 1068 հոդվածը ամրագրում է, որ այս տարիքի անչափահասները պատասխանատվություն են կրում իրենց կողմից պատճառված վնասի համար ընդհանուր հիմունքներով: Ուստի, ելնելով վերոնշյալից, կարող ենք պնդել, որ այս անչափահասների մեղավոր գործողությունները պետք է ազդեն պատճառված վնասի չափի նվազեցման վրա³³⁴:

Կոպիտ անզգուշության դեպքում անձի մեղավոր գործունեությունը ավելի ճիշտ գնահատելու և անզգուշությունը առավել ստույգ որակելու նպատակով իրավաբանական գրականության մեջ և պրակտիկայում կոպիտ անզգուշության ձևերի բազմազանությունը, կապված տուժողի սուբյեկտիվ վիճակի հետ, ընդունված է դասակարգել հետևյալ խմբերի.

1. ալկոհոլային հարբածություն, որը թույլ չի տալիս տուժողին ժամանակին և ճիշտ կողմնորոշվել ստեղծված իրավիճակում (այս-

³³³ Տե՛ս Белякова А.М., նշված աշխատությունը, էջ 56:

³³⁴ Տե՛ս Белякова А.М., նույն տեղում:

տեղ կարելի է ավելացնել նաև թմրամիջոցների ազդեցության տակ լինելը),

2. հոգեկանի աֆեկտիվ իրավիճակ, որի հետևանքով վթարի ժամանակ առաջանում է ուժեղ վախ, անփութություն և այլ չմտածված գործողությունների կատարում,

3. ինքնավստահություն, որը արտահայտվում է անվտանգության էական, կանխամտածված արհամարհանքով՝ զուգորդված հասունացող վտանգի նկատմամբ արտաքնապես անտարբեր վերաբերմունքով,

4. ստեղծված իրավիճակում թույլ կողմնորոշում՝ կապված ոչ բավարար կյանքի փորձի և տեղանքում կենտրոնացման անկարողունակության հետ³³⁵:

Հիմնականում կոպիտ անզգուշության այս տեսակներն են, որ նպաստում են վնասի պատճառմանը: Ուստի հենց այս հանգամանքներն են, որ պետք է նպաստեն վնաս պատճառողի կողմից վնասի հատուցման չափերի նվազեցմանը: Այսպիսով, վնասի հատուցման ծավալները ճիշտ գնահատելու և օբյեկտիվորեն սահմանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն անձի մոտ գոյություն ունեցող սուբյեկտիվ, այլև արտաքին օբյեկտիվ պայմանները: Պետք է վնասի հատուցման ծավալի հարցը որոշել՝ ելնելով ինչպես վնաս պատճառողի վարքագծից, այնպես էլ տուժողի վարքագծի առանձնահատկություններից:

§4. Վնասի հատուցման կարգը

Գույքին, ինչպես նաև կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման կարգը ևս իր ամրագրումն է ստացել ՀՀ Քաղ. օր.-ում, որի 1085-րդ հոդվածը սահմանում է վնասի հատուցման վճարելու կարգը: Համաձայն օրենսգրքի՝ վնասի հատուցումը՝ կապված տուժողի աշխատունակությունը նվազելու կամ մահվան հետ, կատարվում է ամենամսյա վճարներով: Հոդվածը սահմանում է նաև, որ դատարանը հարգելի պատճառների առկայության դեպքում,

³³⁵ Տե՛ս Օ. Ա. Красавчиков, նշված աշխատությունը, էջ 193:

որի ժամանակ հաշվառվում են վնաս պատճառողի հնարավորությունները, կարող է վնասի հատուցման իրավունք ունեցող քաղաքացու պահանջով նրան տրվելիք վճարները հատկացնել միանվագ, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար:

Ինչպես սահմանվում է ՀՀ Քաղ. օր.-ի 1078 հոդվածի 1-ին կետով, տուժողի կորցրած աշխատավարձը, եկամուտը, որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանական բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, նաև այլ մասնագիտություն ձեռք բերելու համար նախատեսված ծախսերի հատուցման գումարները կարող են հատկացվել ապագա ժամանակի համար՝ բժշկական փորձաքննության հիման վրա որոշվող ժամկետների շրջանակներում, ինչպես նաև համապատասխան ծառայությունների և գույքի արժեքի նախապես վճարման անհրաժեշտության դեպքում՝ ներառյալ ուղեգրերի ձեռքբերումը, հատուկ տրանսպորտային միջոցներով ուղևորությունները:

Հարկ է նշել, որ, դժբախտաբար, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկա կոնկրետ նորմատիվ ակտ, որը կկարգավորեր կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման կարգի առավել մանրամասն դրույթներ, մասնավորապես այնպիսի հարցերի ամրագրումով, ինչպիսիք են՝ ո՞ր պահից պետք է սկսվի վնասի հատուցումը, ի՞նչ կարգով պետք է վճարվեն այդ գումարները և այլն: Սակայն ելնելով պրակտիկայից և նախկին ԽՍՀՄ-ում գործող կարգից՝ կարող ենք ընդհանուր կողմերով պատկերացում կազմել վնասի հատուցման կարգի և դրա հետևանքների մասին: Ինչպես նշում են Ս.Ե. Դոնցովը և Վ.Վ. Գլյանցը, քննարկելով 1984 թվականին ընդունված վնասի հատուցման կանոնները, վնասի փոխհատուցման գումարները վճարվում են.

1. տուժած աշխատողներին և ծառայողներին՝ այն օրվանից, երբ նրանք աշխատանքային վնասի հետևանքով զրկվել են իրենց աշխատավարձից (ՀՀ քաղաքացիական օրենսդրության տեսանկյունից կարող ենք ենթադրել, որ անձի կյանքին և առողջությանը պատ-

ճառված վնասը պետք է հատուցվի այն օրվանից, երբ հաստատվել է վնասի պատճառման պահը),

2. կերակրողի մահվան դեպքում վնասի հատուցման իրավունք ունեցող անձանց՝ նրա մահվան օրվանից սկսած, բայց ոչ շուտ այն օրվանից, երբ նրանք ստանում են մահվան հետևանքով վնասի փոխհատուցման իրավունք³³⁶:

Բացի կերակրողի մահվանից հետո նրա խնամքի տակ գտնվող անձանց նյութապես ապահովելու պարտականությունից, ինչպես նշվեց նախորդ գլխում, վնաս պատճառողը, համաձայն Քաղ. օր.-ի 1087 հոդվածի, պարտավոր է փոխհատուցել նաև մահացածի հուղարկավորության հետ կապված ծախսերը:

Ինչ վերաբերում է գույքին պատճառված վնասին, ապա վնասի հատուցման կարգը այս դեպքում իրենից առանձնակի դժվարություն չի ներկայացնում: Ինչպես նշվեց սույն գլխի սկզբում, Քաղ. օր. 1075 հոդվածի համաձայն, գույքին պատճառված վնասի հատուցումը կատարվում է դատարանի վճռով, իսկ քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140 հոդվածի՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, ուստի վնասի հատուցման ժամկետները սկսվում են վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Իսկ եթե չկա դատարանի վճիռ, այլ կա կողմերի համաձայնություն, ապա՝ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետներում և կարգով:

Սակայն, կարծում ենք, անհրաժեշտ է նաև ավելացնել, որ դատարանի վճռով կամ կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել վնասի հատուցման տարբեր պարբերականություն: Վնասը կարող է հատուցվել ամբողջությամբ միանգամյա վճարումով կամ պարբերական վճարումներով: Վնասի հատուցման այս երկու տեսակների դրական և բացասական կողմերը իրավաբանական գրականությունը ենթարկել է ուսումնասիրության: Հիմնական առավելությունը, որ ունի վնասի հատուցման միանգամյա և ամբողջական վճարման ձևը, այն է, որ առաջին հերթին այն վերջնականապես դադարեցնում է տուժողի և վնաս պատճառողի միջև վեճը, մյուս առավելությունն

³³⁶ См. С.Е. Донцов, В.В. Глянецев, Возмещение вреда по советскому законодательству, М, 1990, т2 196:

այն է , որ տուժողը կարիք չունի ամեն անգամ մտածելու վճարվող գումարների մասին, դրանք ուշացնելու դեպքում անհանգստանալու, ստանալով գումարը՝ նա կարող է վերականգնել վնասված գույքը կամ գումարը ներդնել որևէ գործում, այսինքն՝ տնօրինել այն իր հայեցողությամբ, և, վերջապես, տուժողը չի կրում վնաս պատճառողի սնանկության դեպքում վնասի հատուցման դադարեցման ռիսկը: Իր հերթին վնաս պատճառողը, միանգամից վճարելով վնասի հատուցման գումարը, կարիք չունի հետագայում մտածել և ձեռնարկել տարբեր գործողություններ գումար հայթայթելու և վնասը հատուցելու համար:

Վնասի հատուցման այս տեսակի թերությունը պարբերական վճարների համեմատությամբ այն է , որ տուժողը, ստանալով ողջ գումարը, կարող է այն սխալ ծախսել և ընկնել ծանր կացության մեջ: Բացի այդ՝ կյանքի ընթացքում վճարվող գումարների ամբողջական ծավալը կարող է գերազանցել միանգամյա վճարվող գումարին՝ կապված քաղաքացու կյանքի տևողության հետ: Սակայն պետք է ընդունել, որ կարող է պատահել նաև հակառակը. վճարված գումարը շատ ավելին լինի, քան տուժողի կյանքի տևողությունը³³⁷: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ, դիտարկելով խնդիրը վնաս պատճառողի և նրա կողմից վնասի հատուցումը արդյունավետ և ժամանակին կատարելու տեսանկյունից, կարող ենք նշել, որ վնաս պատճառողի համար գերադասելի է վնասի հատուցումը կատարել պարբերական վճարումներով: Վնասի հատուցման այս կարգը հնարավորություն կտա վերջինիս կանոնավորել իր ֆինանսական դրությունը, նախապատրաստել անհրաժեշտ գումարը տուժողին վճարելու համար:

Ամեն դեպքում գտնում ենք, որ վնասի հատուցման կարգը չպետք է որոշվի արտապայմանագրային պարտավորության կողմերի կողմից, քանի որ կողմերի շարժառիթները սուբյեկտիվ են և շատ դեպքերում անհասկանալի. այն պետք է որոշվի դատարանների կողմից, որոնց որոշման հիմքում պետք է դրվեն տուժողի և վնաս պատճառողի գույքային դրությունը, կողմերի տարիքը, պարտաճանաչու-

³³⁷ Տե՛ս նաև W.V.H. Rogers, նշված աշխատությունը, էջ 765-776, R.F.V. Heuston and R.A. Buckley, նշված աշխատությունը, էջ 531:

թյունը և այլն³³⁸: Օրինակ, գտնում ենք, չի կարելի թույլ տալ, որ վնասների հատուցումը կատարվի պարբերական վճարումների տեսքով այն դեպքում, երբ ակնհայտ է և կան ապացույցներ այն մասին, որ վնաս պատճառողը պատրաստվում է լքել երկիրը:

³³⁸ Հարկ ենք համարում նշել, որ Ֆրանսիայում դատարաններին է վերապահված վնասի հատուցման կարգի և պարբերականության որոշումը: Ընդ որում, դատարանն իրավունք ունի հաստատել վնասի հատուցման կարգ՝ անկախ կողմերի դիմումի կամ համաձայնության: Այս մասին ավելի մանրամասն տես Walter Van Gerven, նշված աշխատությունը, էջ 838-839:

Գ Լ ՈՒ Խ V
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵ-
ՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ.
ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՄ
ԱՐՏԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՄԱԿ

***§1. Ապրանքների, աշխատանքների կամ
ծառայությունների թերությունների հետևանքով
պատճառված վնասի հատուցումը***

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը հանդիսանում է քաղաքացիական իրավունքի՝ առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի առանցքային ճյուղերից մեկը:

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի խնդիրը հատկապես լայն արձագանք և կարգավորման անհրաժեշտություն գգաց 20-րդ դարի երկրորդ կեսերից, երբ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ծավալների մեծացումը վերջնական սպառողին դրեց դժվարին կացության մեջ: Խնդրի էությունն այն էր, որ ապրանքի վերջնական սպառողը ապրանքը գնում էր ոչ թե արտադրողից, այլ վաճառողից, որը շատ դեպքերում մատակարարման շղթայում մի քանի քայլ հեռու էր գտնվում արտադրողից: Ապրանքների արտադրության գործընթացը հայտնի էր միայն արտադրողին և անձանոթ՝ վաճառողի և սպառողի համար: Այն դեպքում, եթե սպառողը վնասվածք ստանար գնված ապրանքից, ապա որպես առաջին պատասխանող հանդես էր գալու վաճառողը, որից գնվել էր ապրանքը: Եվ վաճառողի պատասխանատվությունը լինելու էր պայմանագրային՝ համաձայն գնորդի և վաճառողի միջև կնքված պայմանագրի և տրված երաշխավորության, որը ամեն դեպքում չէր կարող բավարարել տուժողի բոլոր պահանջները՝ կապված պայմանագրային

պատասխանատվության որոշակի սահմանափակումների³³⁹ և վաճառողի ֆինանսական կարողությունների հետ: Իսկ այն դեպքում, եթե տուժողը որոշեր վնասի հատուցումը ստանալ արտադրողից արտապայմանագրային պատասխանատվության կանոններով, ապա դա վերածվելու էր երկարատև պայքարի, որտեղ տուժողը նախ և առաջ պետք է ապացուցեր արտադրողի մեղքի կամ անզգուշության առկայությունը³⁴⁰:

Օրենքը, նպատակ ունենալով լուծել այս խնդիրը, ավելի բարենպաստ օրենսդրական միջավայր սահմանելով վերջնական սպառողի իրավունքների պաշտպանության համար, փորձեց կարգավորման ենթարկել ապրանքների, ծառայությունների և աշխատանքների արդյունքում պատճառված վնասի ինստիտուտը՝ սահմանելով առանց մեղքի պատասխանատվություն արտադրողի և ապրանքը վաճառողի համար:

ՀՀ Քաղ. օր. 1088 հոդվածը սահմանում է. «Քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից»: Սակայն կարևոր է ամրագրել, որ նշված կանոնները կիրառվում են միայն սպառողական նպատակով ապրանքներ կամ ծառայություններ ձեռք բերելիս: Ինչ վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների արդյունքում պատճառված վնասի հատուցմանը, ապա այն կհատուցվի ընդհանուր պայմանագրային հիմունքներով:

³³⁹ Պայմանագրային և արտապայմանագրային պատասխանատվությունների տարբերության մասին տես սույն աշխատության առաջին գլխում:

³⁴⁰ St'u Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche "Tort Law", Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 598-599:

Ապրանքների կամ ծառայությունների թերություններով պատճառված վնասի ինստիտուտի զարգացման տենդենցը իր արտահայտումը ստացավ ոչ միայն ԽՍՀՄ քաղաքացիական օրենսդրության մեջ, այնուհետև նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, այլև Եվրոպայում, մասնավորապես Եվրոպական միության երկրներում: Ուստի ՀՀ Քաղ. օր. 60-րդ գլխի երրորդ պարագրաֆի ուսումնասիրությունը ավելի նպատակահարմար ենք գտնում իրականացնել Եվրոպական մի շարք երկրների օրենսդրական փորձի հետ համեմատական վերլուծությամբ:

Եվրոպական միության անդամ երկրների իրավական համակարգերում առկա տարբերությունները հիմք հանդիսացան, որ Եվրոմիությունը իր 1985թ. հուլիսի 25-ի թիվ 85/374 դիրեկտիվով փորձ անի կարգավորել ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման գործընթացները Եվրոպական երկրներում: Այս ամենի արդյունքում, չնայած որոշակի տարբերությունների, Եվրոմիության երկրներում ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը ունի նույնական կարգավորման սկզբունքներ:

Գերմանիայում ապրանքների թերությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման հարցերը կարգավորվում են միայն 24 օգոստոսի 1976թ. Գեդերի ակտով և Եվրոմիության 85/374 դիրեկտիվով: Չնայած բացի այս երկու օրենսդրական ակտերից ոչ մի այլ իրավական ակտ չի կարգավորում ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի արդյունքում ծագող հարաբերությունները, սա չի նշանակում, որ Գերմանական իրավունքին մինչև դրանց ընդունումը անհայտ է եղել ապրանքների թերությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման ինստիտուտը: Խնդիրը առաջին անգամ իր կարգավորումն է ստացել Գերմանիայի Դաշնային դատարանի 26 նոյեմբերի 1968թ. վճռով: Վճռում, բավարարելով հայցվորի հայցադիմումը դեդեր արտադրող ընկերության նկատմամբ, որի դեդերը պատճառ են հանդիսացել հայցվորի 4000 հավերի սատկելուն, դատարանը, ըստ էության, եզրակացնում է. «Եթե ինչ-որ մեկը, ըստ նպատակային նշանակության օգտագործելով արդյունաբերական արտադրանքը, դրա թերությունների պատճառով կրում է վնասներ՝ պատճառված Քաղաքացիական օրենսգր-

քի 823 պարագրաֆի առաջին կետում նշված արժեքներին, ապա արտադրողի պարտականությունն է ցույց տալ, թե որտեղից է գալիս այդ թերությունը և ապացուցել, որ բացակայում է իր մեղքը»³⁴¹:

Ինչպես ակնհայտ է վճռից, արտադրողի պատասխանատվության համար առանցքային դեր է խաղում արտադրանքի թերության առկայությունը: Այսինքն, վնասը պետք է անպայման պատճառված լինի ոչ թե արտադրանքի կողմից ընդհանրապես, այլ դրա թերության արդյունքում: Այնուհետև ակնհայտ է, որ ի տարբերություն ՀՀ օրենսդրության, որը նախատեսում է առանց մեղքի պատասխանատվություն, Գերմանիայի օրենսդրությունը և դատական պրակտիկան ընդունում են, որ արտադրողի պատասխանատվությունը կարող է ծագել նրա մեղքի արդյունքում: Ընդ որում, ընդունվում է, որ արտադրողը մեղավոր է, քանի դեռ չի ապացուցել իր անմեղությունը: Ինչպես նշվում է արևմտյան իրավաբանական գրականության մեջ, Գերմանիայում ապրանքների թերությունների արդյունքում ծագող իրավահարաբերության ժամանակ տուժողին հարկ է ապացուցել միայն, որ առկա է վնաս, որը ծագել է ապրանքի թերության արդյունքում, և այն արտադրվել է համապատասխան արտադրողի կողմից: Այնուհետև արդեն արտադրողի պարտականությունն է ապացուցել, որ արտադրանքի թերությունը իր մեղքի արդյունքը չէ³⁴²:

Օրենսգրքի 1088 հոդվածը սահմանում է, որ վնասի հատուցման պարտականություն կառաջանա վաճառողի, արտադրողի, աշխատանքներ կատարողի կամ ծառայություններ մատուցողի մոտ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով: Այսինքն, արտադրողը պատավոր է կազմակերպել արտադրությունը այնպես, որ բացառի ապրանքի թերությունները՝ ապրանքի որակի նկատմամբ հսկողություն սահմանելով թե՛ արտադրության ընթացքում, և թե՛ արտադրության վերջում, վաճառողը պարտավոր է

³⁴¹ Վճիռը ամբողջությամբ տես՝ www.rechten.unimaas.nl/casebook ինտերնետային էջում:

³⁴² Տես՝ Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche “Tort Law”, Oxford and Portland, Oregon, Hart Publishing 2000թ., էջ 606-607:

ապահովել որակյալ ապրանքի առկայությունը խանութում, ծառայություններ մատուցողն ու աշխատանքներ կատարողը պարտավոր են ձեռնարկել որակյալ գործունեություն³⁴³: Ապրանքի թերությունները իրենց մեջ ընդգրկում են նաև ապրանքի նախագծային թերությունները, որոնք, համաձայն գերմանական դատական պրակտիկայի, պետք է բավարարեն գիտության և տեխնիկայի զարգացման ներկա աստիճանը: Այս պահանջներին արտադրանքի անհամապատասխանությունը հենց ենթադրում է, որ արտադրողի կողմից չի ցուցաբերվել պատշաճ ուշադրություն և պատշաճ հսկողություն արտադրության նկատմամբ³⁴⁴: Նշվածից ակնհայտ է նաև, որ արտադրողները պարտավոր են նախագծել այնպիսի արտադրանք, որը իրենից վնաս չի ներկայացնում, եթե նախագծված է նորույթ, ապա փորձարկեն բոլոր հնարավոր միջոցներով՝ բացահայտելու համար արտադրանքի և նախագծման թերությունները:

1088 հոդվածից բխում է, որ վաճառվող ապրանքի և մատուցվող ծառայության մասին սպառողին պետք է տրվի բավարար տեղեկատվություն, որը հնարավորություն կտա անվտանգ օգտագործել այն: Գերմանական իրավունքում արտադրողի պատասխանատվությունը իր արտադրանքով պատճառված վնասի համար ծագում է նաև այն դեպքում, եթե արտադրողը արտադրանքի հետ չի տվել նաև պատշաճ ուղեցույց արտադրանքի օգտագործման և վտանգավոր հատկությունների վերաբերյալ³⁴⁵: Խնդիրը ավելի պարզ հասկանալու համար կցանկանայինք հղում կատարել Գերմանիայի դատական պրակտիկային, մասնավորապես 12 նոյեմբերի 1991թ. BGH (Գերմանիայի դաշնային դատարան) 116,60 վճռին: Սույն գործով հայցվորը դիմել է դատարան՝ պահանջելով վնասների հատուցում մանկական թեյ արտադրող ընկերությունից, քանի որ հայցվորի մանկահասակ երեխայի ատամները փտել են թեյի շարունակական խմելուց, իսկ հայցվորը պատշաճ կարգով չի զգուշացվել, որ թեյի այդպիսի օգտագործումը կարող է վնասել երեխաների ատամներին: Առաջին ատյանի դատարանը մերժել է հայցվորի դիմումը, որը, սա-

³⁴³ Տե՛ս նույն տեղում:

³⁴⁴ Տե՛ս OLG Dusseldorf, 29 November 1996թ. վճիռը www.rechten.unimaas.nl/casebook ինտերնետային էջում:

³⁴⁵ Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 613:

կայն, մասնակիորեն բավարարվել է վերաքննիչ դատարանի կողմից, BGH-ն վերաքննիչ դատարանի վճիռը թողել է ուժի մեջ՝ նշելով, որ արտադրողը պարտավոր է զգուշացնել գնորդներին արտադրանքի վտանգավոր հատկանիշների մասին: Այս պարտականությունը ծագում է հատկապես այն դեպքում, երբ արտադրանքը նախատեսված է մասսայական սպառման համար: Արտադրողը կարող է ազատվել նշված նախազգուշացման պարտականությունից միայն այն դեպքում, եթե վստահ է, որ իր արտադրանքը օգտագործվելու է միայն արտադրանքի վնասակար և վտանգավոր հատկությունները իմացող անձանց կողմից: Բացի այդ՝ վճռում նշվում է, որ համապատասխան նախազգուշացումը պետք է լինի բացահայտ, այնպիսի տեղում, որ պարզորեն տեսանելի լինի սպառողի համար: Արտադրանքի վնասակար հատկությունների մասին նախազգուշացման պարտականությունը հատկապես կարևորվում է, երբ դրանք վնասակար են անձանց առողջության համար: Ջգուշացումը իր հերթին պետք է լինի հստակ և հասկանալի սպառողի համար, այն պետք է պարունակի արտադրանքը ճիշտ օգտագործելու կանոնները³⁴⁶:

Ինչպես ցույց է տալիս գերմանական դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, արտադրողը, խուսափելու համար սպրանքների թերութայնք պատճառված վնասի պատասխանատվությունից, պատավոր է հայտնել սպառողին սպրանքի թերությունների մասին այն դեպքում, երբ սպրանքը դրված է շրջանառության մեջ, և արտադրողին հայտնի են դարձել նոր հանգամանքներ սպրանքի թերությունների վերաբերյալ: Այսինքն, արտադրողը պարտավոր է հսկողություն իրականացնել նաև արդեն շուկա հանված սպրանքի նկատմամբ: «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ որոշ սպրանքների համար, մասնավորապես՝ սննդամթերքի, օժանելիքակոսմետիկական սպրանքների, դեղորայքի, դեղամիջոցների, դեղանյութերի, կենցաղային քիմիայի սպրանքների և նման այլ սպրանքների համար արտադրողը պարտավոր է սահմանել այնպիսի պիտանիության ժամկետ, որի ավարտից հետո սպրանքն իր նշանակությամբ օգտագործման համար պիտանի չէ: Այդպիսի սպրանքների անվանացանկը հաստատում է

³⁴⁶ Տե՛ս վճիռը www.rechten.unimaas.nl/casebook ինտերնետային էջում, ինչպես նաև՝ Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 613-614:

կառավարությունը: Արգելվում է նաև ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը) սահմանված պիտանելիության ժամկետի ավարտից հետո, ինչպես նաև այն ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը), որի համար պետք է սահմանված լիներ ծառայության կամ պիտանելիության ժամկետ, բայց չի սահմանվել: ՀՀ Քաղ. օր.-ը սահմանում է, որ այն դեպքերում, երբ ապրանքի կամ մատուցվող ծառայության համար պիտանելիության ժամկետներ սահմանված չեն, ապա պատճառված վնասը պետք է հատուցվի ապրանքը թողարկելու, աշխատանքը կատարելու կամ ծառայությունը մատուցելու օրվանից տասը տարվա ընթացքում³⁴⁷: Այլապես տուժողները վնասի հատուցման իրավունք կստանան, եթե վնասը պատճառված լինի ապրանքի կամ ծառայության պիտանելիության ընթացքում: Սակայն այստեղ կարևոր է նշել, որ բացի պիտանելիության ժամկետը սահմանելուց, արտադրողը, վաճառողը կամ ծառայություն մատուցողը պարտավոր են ապրանքի կամ մատուցվող ծառայության համար նշել նաև մինչև պիտանելիության ժամկետի ավարտն անհրաժեշտ գործողություններ կատարելու և դրանք չկատարելու հնարավոր հետևանքների մասին: Եթե այս պահանջը պահպանված չլինի, ապա վնասի հատուցման պարտականությունը կառաջանա անկախ վնասի պատճառման ժամկետներից:

Ֆրանսիայում ապրանքների համար պատասխանատվությունը ընդհանուր առմամբ չի հանդիսացել անջատ խնդիր, որի համար առանձին լուծումների կարիք է զգացվել:

Չնայած ֆրանսիական օրենսդրությունը չունի հստակ նորմեր, որոնք կսահմանեն պատասխանատվություն ապրանքների թերություններով պատճառված վնասի համար, սակայն ֆրանսիական Քաղ. օր. և դատական պրակտիկայի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ օրենսգրքի մի շարք դրույթներ հնարավորություն են տալիս ապրանքի թերությամբ պատճառված վնասի հատուցում գանձել նախ և առաջ ապրանքը վաճառողից, ապա նաև արտադրողից:

Մասնավորապես Ֆրանսիայի Քաղ. օր. 1641-1646 հոդվածները հնարավորություն են տալիս ապրանքը գնողին ապրանքի թերու-

³⁴⁷ Տե՛ս «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» 2001թ. հունիսի 26-ի ՀՀ օրենք, հոդված 6:

թյան վերացման պահանջով դիմել վաճառողին: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, նշված հոդվածները, հատկապես Քաղ. օր. 1645-1646 հոդվածները, հնարավորություն են տալիս տուժողին պահանջ ներկայացնելու նաև ապրանքի թերությամբ պատճառված վնասի հատուցման համար³⁴⁸: Ընդ որում, որոշ դեպքերում դատական պրակտիկան հնարավորություն է տալիս ապրանքի թերությամբ պատճառված վնասի համար հատուցման շղթան հասցնել մինչև արտադրողին, սակայն այս դեպքում ևս արտադրողը դիտվում է որպես պայմանագրի կողմ: Ինչ վերաբերում է ապրանքի թերությամբ երրորդ անձանց պատճառված վնասի հատուցմանը, ապա հարկ ենք համարում նշել, որ չնայած երրորդ անձինք չեն հանդիսանում պայմանագրի կողմ և ըստ էության չեն կարող վնասի հատուցում պահանջել անմիջապես վաճառողից կամ արտադրողից, սակայն Ֆրանսիայի Քաղ. օր. 1384 հոդվածը հնարավորություն է տալիս տուժողին վնասի հատուցման հայցով դիմել ընդդեմ ցանկացած իրի տիրոջ: Իսկ դատական պրակտիկան իր հերթին առաջնորդվում է այն սկզբունքով, որ եթե վնասը պատճառվել է իրի թերությունների արդյունքում, ապա վնասի հատուցման պարտականություն երրորդ անձանց նկատմամբ պետք է ծագի նաև իրը վաճառողի և արտադրողի մոտ³⁴⁹: Այս կապակցությամբ, կարծում ենք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ավելի հստակ է: Օրենսգիրքը հստակ սահմանում է, որ պատճառված վնասի դեպքում տուժողը իրավունք ունի պահանջ ներկայացնել թե՛ ապրանքը վաճառողին և թե՛ արտադրողին՝ անկախ տուժողի՝ այդ անձանց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից:

Ապրանքների համար պատասխանատվության ինստիտուտը անգլիական իրավունքում չի ապրել դոկտրինալ և տեսական զարգացում: Ապրանքների օգտագործման հետևանքով առաջացած վնասի հատուցման հարցերը կարգավորվել են անգլիական ընդհանուր օրենսդրության նորմերով, մասնավորապես առուվաճառքի և դելիկտային իրավունքի կանոններով: Ինչ վերաբերում է ապրանք-

³⁴⁸ Տե՛ս Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 621:

³⁴⁹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս տե՛ս G. Viney and P. Jourdain, *Traite de droit civil-Les conditions de la responsabilite*, 2nd edn. (Paris: LGDJ, 1998) էջ 700-789, Walter van Gerven, նշված աշխատությունը, էջ 624-628:

ների առուվաճառքին, ապա համապատասխան հարաբերությունները կարգավորվում են 1979թ. Ապրանքների վաճառքի, ինչպես նաև 1982թ. Ապրանքների և ծառայությունների մատուցման ակտերով: Նշված ակտերով ըստ էության կարգավորվում են ապրանքների որակին առնչվող հարցեր: Մասնավորապես, ինչպես նշում է Գ. Հոուելսը, ակտերը յուրաքանչյուր առուծախի պայմանագրի համար սահմանում են երեք պարտադիր դրույթ, որոնցից առաջինը սահմանում է, որ ապրանքները պետք է վաճառվեն համապատասխան իրենց նկարագրի, երկրորդը՝ ապրանքները պետք է լինեն բավարարողակի, այսինքն դրանք պետք է համապատասխանեն գնորդի պահանջներին, և համաձայն երրորդ պահանջի՝ ապրանքները պետք է համապատասխանեն և օգտագործելի լինեն այն նպատակի համար, որի համար դրանք պատրաստվել են³⁵⁰: Ընդ որում, հարկ է նշել, որ այս երեք պայմանները պարտադիր են և չեն կարող հանվել առուվաճառքի պայմանագրից: Նշված ակտերը, բացի նրանից, որ հնարավորություն են տալիս գնորդին ապրանքի թերության դեպքում համապատասխան պահանջ ներկայացնել վաճառողին, նաև իրավական հիմք են ստեղծում այն բանի համար, որ գնված ապրանքով վնաս պատճառվելու դեպքում վաճառողին ներկայացվի նաև վնասի հատուցման հայց: Ընդ որում, հատուցման է ենթակա ինչպես առողջությանը, այնպես էլ այլ գույքին պատճառված վնասը³⁵¹: Ինչպես նշվում է անգլիական իրավաբանական գրականության մեջ, անգլիական իրավունքը ապրանքների թերությամբ պատճառված վնասի դեպքում, ըստ էության հնարավորություն չի տալիս ոչ միայն երրորդ անձանց վնասի հատուցում պահանջել, այլև սահմանափակում է գնորդի իրավունքը անմիջապես պատասխանատվության կանչելու արտադրողին: Գնորդը հնարավորություն ունի միայն պայմանագրի հիման վրա պահանջ ներկայացնել վաճառողի դեմ³⁵²:

Անգլիական իրավունքում արտադրողին արտադրության և ապրանքի վաճառքի շրթայի միջոցով պատասխանատվության են-

³⁵⁰ Տե՛ս G. Howells, *Comporative Product Liability* (Aldershot: Dartmouth, 1933) էջեր 53-56:

³⁵¹ Տե՛ս W.V.H. Rogers, *Winfeld and Jolowicz on Tort*, 15th edn. (London: Sweet & Maxwell, 1998) էջ 326:

³⁵² Տե՛ս G. Howells, *նշված աշխատությունը*, էջ 64, W.V.H. Rogers, *նշված աշխատությունը*, էջ 327:

թարկելու միակ հնարավորությունը դեղիկտային իրավունքն է, մասնավորապես Դոնահյուն ընդդեմ Ստիվենսոնի գործը, որը, ըստ էության, հանդիսանում է խնդրին ամենահամապատասխան գործը³⁵³, քանի որ գործի վերաբերյալ վերջնական որոշմամբ փաստորեն հայցվորը հնարավորություն ստացավ հայց հարուցել և վնասների հատուցում ստանալ անմիջապես արտադրողից:

Ընդհանրապես հարկ ենք համարում նշել, որ անգլիական իրավաբանական գրականության կողմից բազմիցս քննադատության է ենթարկվել ապրանքների և ծառայությունների մատակարարման հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի առկա համակարգը Անգլիայում, մասնավորապես այն առնչությամբ, որ այն ապացուցման հիմնական պարտականությունը դնում է հայցվորի վրա: Սակայն անգլիական դատական իրավունքը ըստ էության չի արձագանքել այս խնդրին, դեռ ավելին, Անգլիայի դատարանները անում են ամեն հնարավորը, որ հայցվորը հնարավորինս շատ ապացույցներ ներկայացնի դատարան³⁵⁴:

Զննադատության առավել ուժեղ ալիքը ուղղված է ապրանքների թերությունների համար ըստ մեղքի պատասխանատվության բացառմանը՝ սահմանելով առանց մեղքի պատասխանատվություն³⁵⁵:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար սահմանելով խստացված պատասխանատվություն, պատճառված վնասից ազատվելու համար նախատեսում է միայն անհաղթահարելի ուժի առկայությունը և սպառողի կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների օգտագործման կամ դրանց պահպանման համար սահմանված կանոնները խախտելու հետևանքը: Ընդ որում, այդ հանգամանքները պետք է ապացուցվեն վաճառողի կամ արտադրողի, աշխատանքներ կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից:

³⁵³ Այս մասին ավելի մանրամասն, ինչպես նաև գործին ծանոթանալու համար տե՛ս Walter van Gerven, նշված աշխատությունը, Գլուխ 1, հղում 1.Է.23, ինչպես նաև էջ 636:

³⁵⁴ Տե՛ս J. Stapelton, Product Liability (London: Butterworths, 1994) էջ 43-44:

³⁵⁵ P. Atiyah, Accidents, Compensation and the Law (London: Weidenfield & Nicholson 1970), P.Cane, Atiyah's Accidents, Compensation and the Law, 5th edn. (London: Butterworths, 1993):

Քննարկվող ինստիտուտի հետ սերտ կապ ունի նաև գովազդը, որի միջոցով սպառողներին հասանելի է դառնում վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվությունը: Գովազդի նպատակն է սպառողին ցույց տալ ապրանքի կամ ծառայության դրական կողմերը՝ շահագրգռելով գնել այն կամ օգտվել դրանից: Շատ հաճախ գովազդը լինում է սխալ, սուտ, ինչպես նաև մոլորեցնող, որի արդյունքում սպառողներին կարող է վնաս պատճառվել: ՀՀ քաղ.օր.-ը նախատեսում է նաև առանց մեղքի պատասխանատվության անբարեխիղճ գովազդի հետևանքով պատճառված վնասի դեպքում: Համաձայն Օրենսգրքի՝ գովազդատուն պարտավոր է հատուցել անբարեխիղճ գովազդի հետևանքով պատճառված վնասը՝ անկախ մեղքից: «Գովազդի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գովազդատուն իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, որը ներկայացնում է գովազդային տեղեկություն գովազդի արտադրության, տեղաբաշխման և տարածման նպատակով³⁵⁶: Անբարեխիղճ է այն գովազդը, որի պատվերի, արտադրության և տարածման ընթացքում շրջանցվել են գործող օրենսդրությամբ սահմանված արգելքները և սահմանափակումները: «Գովազդի մասին» օրենքի 21 հոդվածը ավելի մանրամասնել է անբարեխիղճ գովազդի հասկացությունը և տեսակները: Համաձայն հոդվածի՝ արգելվում է հրապարակել անբարեխիղճ, այդ թվում՝ կանխամտածված կեղծ գովազդ: Գովազդն անբարեխիղճ ճանաչելու համար պահանջվում է մոլորեցման կամ հասարակական վտանգի փաստի առկայությունը: «Մոլորեցում» ասելով՝ հասկացվում է գովազդի փաստացի ունակությունը ապրանքների հատկությունների, քանակի, որակի, առանձնահատկությունների, գնի և այլ տեղեկությունների, ինչպես նաև դրանց գովազդատուների մասին տեղեկատվության լրիվ կամ մասնակի անարժանահավատության, բացթողումների և աղավաղումների հետևանքով իրավաբանական և ֆիզիկական անձանց ապակողմնորոշումը:

Հասարակական վտանգ ասելով՝ հասկացվում է գովազդի փաստացի ունակությունը մրցակցին վնաս հասցնելու, բռնության դրդելու, գովազդով սպառողի նախապաշարումներն ու սնահավա-

³⁵⁶ Տե՛ս «Գովազդի մասին» ՀՀ օրենք, ընդունված 30 ապրիլի 1996թ.:

տությունը, փորձի պակասն օգտագործելու, գովազդով սպառողներին առողջության, սեփականության, ինչպես նաև շրջակա միջավայրի համար վտանգավոր գործողությունների մղելը: Եթե գովազդային գործունեության ընթացքում գովազդատուի, գովազդ արտադրողի, գովազդակրի գործողություններն օբյեկտիվ են, սակայն կարող են սպառողին մոլորեցնել կամ գովազդը դարձնել հասարակայնորեն վտանգավոր, ապա գովազդատուի, գովազդ արտադրողի կանխատեսած ված մտադրության առկայությունը կամ բացակայությունը հաշվի չի առնվում: Մասնակիորեն անբարեխիղճ գովազդն անբարեխիղճ է համարվում ամբողջությամբ: Գովազդի բառացի ճշմարտացիությունը չի պաշտպանում այն անբարեխիղճ համարվելուց, եթե գովազդի ընդհանուր բովանդակությունից հասկացվում է այլ իմաստ: Գովազդը կարող է անբարեխիղճ համարվել ոչ միայն իր բովանդակության, այլև տեղի, ժամանակի և տարածման (տեղաբաշխման) միջոցների պատճառով:

Բացի գովազդատուից՝ անբարեխիղճ գովազդի համար պատասխանատվության սուբյեկտներ են հանդիսանում նաև գովազդ արտադրողը կամ գովազդակիրը, որոնք, սակայն, հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունեն վճարված հատուցման չափով, եթե գովազդ արտադրողի կամ գովազդակրի պահանջով գովազդատուն չի ներկայացրել գովազդի արտադրության համար ներկայացվող տեղեկատվության հավաստիության փաստաթղթային վավերացում (արտոմագրեր, տեղեկանքներ): Անբարեխիղճ գովազդի համար պատճառված վնասը կրում է գովազդակիրը, եթե գովազդատուին հնարավոր չէ գտնել³⁵⁷:

Անբարեխիղճ գովազդով պատճառված վնասի դեպքում տուժողները՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ում իրավունքները խախտվել են անբարեխիղճ գովազդի հետևանքով, իրավունք ունեն դատական կարգով պահանջել վնասների հատուցում, քաղաքացու կյանքին, առողջության և գույքին պատճառված վնասի

³⁵⁷ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի համաձայն գովազդ արտադրողը այն իրավաբանական կամ ֆիզիկական անձն է, որն անմիջականորեն ծառայություններ է կատարում գովազդի արտադրության ուղղությամբ, իսկ գովազդակիրը իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, որը, տրամադրելով համապատասխան միջոցներ, տեղաբաշխում և տարածում է գովազդը:

հատուցում, բարոյական վնասի հատուցում և գովազդի հրապարակային հերքում³⁵⁸:

Համեմատելով ապրանքների և ծառայությունների մատակարարման արդյունքում պատճառված վնասի հարցերը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը քննարկվող երկրների օրենսդրությունների հետ՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ Քաղ. օր.-ը բավականին ամբողջական մոտեցում է դրսևորում հարցի վերաբերյալ, որի դրույթները ակնհայտորեն ավելի ամբողջական են դարձնում տուժողների շահերի պաշտպանությունը: Դեռ ավելին, որոշ դեպքերում ակնհայտ է, որ արևմտյան երկրների օրենսդրությունը միտված է ձևավոխման և կատարելագործման այն ուղղությամբ, որն արդեն իսկ առկա է ՀՀ օրենսդրությամբ: Անշուշտ, այս հանգամանքը դրականորեն է խոսում ՀՀ Քաղ. օր.-ի մասին և էլ ավելի կարևորում դրանում առկա թերությունների շուտափույթ վերացումը, որը, իր հերթին, առավել արդյունավետ կդարձնի ընդհանրապես ապրանքների, ծառայությունների և աշխատանքների կատարման արդյունքում պատճառված վնասի հատուցումը:

§2. Անհիմն հարստացումը որպես արտապայմանագրային պարտավորությունների տեսակ

Պրակտիկայում պատահում են դեպքեր, երբ անձը առանց իրավական հիմքի ձեռք է բերում գույք կամ խնայում է այն: Այսպիսի հարաբերությունները ՀՀ քաղ.օր.-ը դիտում է որպես անհիմն հարստացում: Համաձայն օրենսգրքի՝ անհիմն հարստացումը առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին գույք ձեռք բերելը կամ խնայելն է, որի դեպքում ձեռք բերողը պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ Օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի: Վերոգրյալը կիրառվում է անկախ այն բանից, թե անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործե-

³⁵⁸ «Գովազդի մասին» ՀՀ օրենք հոդված 23:

լակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ: Փաստորեն, Օրենսգիրքը ճանաչում է անհիմն հարստացման երկու տեսակ՝ ձեռք բերում, երբ անձը ձեռք է բերում գույք՝ չունենալով այդպիսի գույք ձեռք բերելու իրավական հիմք, օրինակ, երբ մեկի պատվիրած սարքավորումը հանձնում են նրա հարևանին, անհիմն ձեռք բերող է դառնում հարևանը, և խնայում, երբ անձը չնայած պարտավոր էր կատարել որոշակի ծախսեր, սակայն ինչ-ինչ պատճառներով դրանք կատարում է ուրիշը, որի արդյունքում խնայողը հարստանում է այդ ծախսերը կատարած անձի հաշվին: Օրինակ, երբ հարևանը սխալմամբ վճարում է հարևանի էլեկտրաէներգիայի ամսական գումարը: Այս դեպքում առաջին՝ վճարող հարևանը դառնում է տուժող, իսկ երկրորդը՝ անհիմն խնայող: Զաղ. օր.-ի՝ անհիմն հարստացման հարաբերությունների հետևանքով ծագած հարաբերությունները կարգավորող գլխի կանոնները տարածվում են նաև անվավեր գործարքով կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ, սեփականատիրոջ կողմից իր գույքն ապօրինի տիրապետողից հետ ստանալու պահանջների նկատմամբ և պարտավորության մեկ կողմի՝ մյուսից այդ պարտավորության կապակցությամբ կատարվածը վերադարձնելու պահանջների նկատմամբ: Ինչպես արտապայմանագրային հարաբերությունների մնացած դեպքերում, այնպես էլ անհիմն հարստացման ժամանակ տուժողը իրավունք ունի պահանջել, իսկ անհիմն ձեռք բերողը պարտավոր է տուժողին վերադարձնել նրա գույքը կամ հատուցել տուժողի կրած վնասները:

Նախ և առաջ Օրենսգիրքը սահմանում է, որ անհիմն հարստացման առարկա գույքը ձեռք բերողը պետք է տուժողին վերադարձնի բնեղենով: Ձեռք բերողը տուժողի առջև պատասխանատվություն է կրում անհիմն հարստացման կամ խնայման առարկա գույքի ամեն մի, այդ թվում՝ նաև պատահական կորստի և պակասորդի կամ վատթարացման համար այն բանից հետո, երբ իմացել է կամ պետք է իմանար իր հարստացման անհիմն լինելու մասին: Մինչև այդ պահը նա պատասխանատվություն է կրում միայն դիտավորության և կոպիտ անզգուշության դրսևորման դեպքերում:

Հնարավոր են դեպքեր, երբ անհիմն ձեռք բերված կամ խնայված գույքը օգտագործման ընթացքում ոչնչանա կամ վնասվի, որը

անհնարին կդարձնի այն բնեղենով վերադարձնելու հնարավորությունը: Այս դեպքերի համար սահմանվում է, որ անհիմն հարստացման կամ խնայման միջոցով ձեռք բերված գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում ձեռք բերողը պետք է տուժողին հատուցի ձեռքբերման պահին այդ գույքի իրական արժեքը, ինչպես նաև գույքի արժեքի հետագա փոփոխությունների պատճառով ծագած վնասները, եթե ձեռք բերողն անհիմն հարստացման մասին իմանալուց հետո անմիջապես չի հատուցել գույքի արժեքը:

Իսկ եթե անձը, ով ժամանակավորապես անհիմն օգտվել է ուրիշի գույքից՝ առանց այն ձեռք բերելու մտադրության, կամ ուրիշի ծառայություններից, պետք է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է:

Համաձայն Քաղ. օր. հոդված 1096-ի՝ իրավունքն այլ անձի անհիմն փոխանցելու դեպքում, մասնավորապես պահանջի զիջման միջոցով կամ այլ կերպ գոյություն չունեցող կամ անվավեր պարտավորության հիման վրա իրեն պատկանող իրավունքն այլ անձի փոխանցած անձն իրավունք ունի պահանջել վերականգնելու նախկին դրությունը՝ ներառյալ իրեն վերադարձնելու փոխանցված իրավունքը հավաստող փաստաթղթերը:

Անհիմն հարստացողի կողմից անհիմն հարստացման օբյեկտը օգտագործելու արդյունքում ստացված եկամուտները նույնպես ենթակա են տուժողին հատուցման, եթե անձը, ով անհիմն ստացել կամ խնայել է գույքը, իմացել է կամ պետք է իմանար հարստացման անհիմն լինելու մասին: Ընդ որում, նա պարտավոր է տուժողին հատուցել կամ վերադարձնել այն բոլոր եկամուտները, որոնք ինքը ստացել է կամ կարող էր ստանալ այդ գույքից՝ սկսած այն օրվանից, երբ իմացել է կամ պետք է իմանար իր հարստացման անհիմն լինելու մասին: Անհիմն դրամական հարստացման գումարի վրա ենթակա են հավելագրման ուրիշի միջոցներից օգտվելու համար տոկոսներ (հոդված 411)՝ սկսած այն օրվանից, երբ ձեռք բերողն իմացել է կամ պետք է իմանար դրամական միջոցների ստացման կամ խնայման անհիմն լինելու մասին:

Անհիմն ստացված կամ խնայված գույքը վերադարձնելիս (հոդված 1094) կամ դրա արժեքը հատուցելիս (հոդված 1095) ձեռք

բերողն իրավունք ունի տուժողից պահանջել հատուցելու գույքը պահելու և պահպանելու վրա իր կատարած անհրաժեշտ ծախսերը՝ սկսած այն օրվանից, երբ ինքը պարտավոր էր վերադարձնել եկամուտները (հոդված 1097)՝ ստացված օգուտի հաշվանցով: Ծախսերի հատուցման իրավունքը վերանում է այն դեպքում, երբ ձեռք բերողը վերադարձման ենթակա գույքը պահում է դիտավորությամբ:

Ինչպես նշեցինք, Օրենսգիրքը նախատեսում է դեպքեր, երբ անհիմն հարստացումը ենթակա չէ վերադարձման: Մասնավորապես հոդված 1099-ի համաձայն՝ որպես անհիմն հարստացում ենթակա չեն վերադարձման.

1) այն գույքը, որը տրվել է ի կատարումն պարտավորությունների մինչև դրանց կատարման ժամկետի վրա հասնելը, եթե պարտավորությամբ այլ բան նախատեսված չէ,

2) վաղեմության ժամկետի ավարտից հետո ի կատարումն պարտավորության տրված գույքը,

3) քաղաքացու մոտ անբարեխղճության բացակայության դեպքում, նրան՝ որպես գոյության միջոց տրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները, կենսաթոշակները, կրթաթոշակները, նպաստները, կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցումը, ալիմենտը և այլ դրամական գումարներ,

4) ի կատարումն գոյություն չունեցող պարտավորության տրված դրամական գումարները և այլ գույքը, եթե ձեռք բերողն ապացուցում է, որ գույքը վերադարձնելու պահանջով դիմած անձը գիտեր պարտավորության բացակայության մասին կամ գույքը տրամադրել է բարեգործական նպատակներով:

ԳԼՈՒԽ VI
ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքի տնտեսագիտական վերլուծությունը, ըստ էության հանդիսանալով իրավունքի և տնտեսագիտության համագործակցության արդյունքում ձևավորված գիտության նոր և առանձնահատուկ ճյուղ, ներկայումս ձևավորման փուլից տեղափոխվելով զարգացման փուլ, մեծ տարածում և կարևորություն է ստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների և Եվրոպայի մի շարք առաջնակարգ համալսարաններում, ինչպես օր. Հարվարդի, Ուորենթոնի, Օքսֆորդի համալսարաններում, որտեղ իրավաբանական ֆակուլտետներում դասավանդվում է նոր առարկա՝ «Օրենքի և տնտեսագիտության տեսությունն ու մեթոդները» (Theory and Methods of Law and Economics) անվանումով: Առարկան ենթարկում է օրենքը տնտեսագիտական վերլուծության. ո՞րն է օրենքի արդյունավետությունը տնտեսագիտության տեսանկյունից: Նմանատիպ ուսումնասիրության արդյունավետությունը իմաստավորվում է նրանով, որ տնտեսագիտության տեսանկյունից բացատրվում է իրավական ակտերի և ինստիտուտների ազդեցությունը իրական կյանքում տեղի ունեցող դեպքերի վրա, բացահայտվում են այդ ազդեցության դրական և բացասական կողմերը: Բացատրական տնտեսագիտական վերլուծությունը նպատակաուղղված է առկա իրավական ակտերին տնտեսագիտական բացատրություն տալուն: Հիմնական խնդիրն այն է, թե որքանով օրենքը կարող է հասկացվել որպես հասարակության զարգացման օգտակար գործողության գործակիցը բարձրացնող մեխանիզմ: Արդյո՞ք օրենսդիրներն ու դատավորները աշխատում են նպաստել տնտեսական արդյունավետության բարձրացմանը՝ առանց գիտակցելու դրանշանակությունը: Այս ամենի ֆոնի վրա նորմատիվային տնտեսագիտական վերլուծությունները ուսումնասիրում են, թե տնտեսական արդյունավետությանը նպաստելու համար ինչպես կարող է բարելավվել առկա օրենսդրական դաշտը:

Օրենքի տնտեսագիտական վերլուծության ինստիտուտը ըստ էության սկիզբ է առել դեռևս 18-րդ դարում Բեկարիայի /1767/ և Բեն-

թամի /1789/ աշխատություններում³⁵⁹, սակայն այն հիմնականում ձևավորվել և զարգացել է 20-րդ դարի 60-ական 70-ական թվականներին, երբ Ռոնալդ Հ. Քոուզը գրեց իր պրովոկատիվ հոդվածը, որին կանդորադառնանք ստորև, այնուհետև այս ինստիտուտը զարգացում ապրեց նաև Գ. Բեկերի, Գ. Կալաբրեզիի, Ռ. Պոզների աշխատություններում³⁶⁰: Ընդհանրապես պետք է նշել, որ օրենքի տնտեսագիտական վերլուծության ինստիտուտը մեծապես զարգացում ապրեց Չիկագոյի իրավագիտության դպրոցի շնորհիվ³⁶¹:

Ինչո՞վ է տարբերվում օրենքի տնտեսագիտական վերլուծությունը օրենքի այլ տիպի վերլուծություններից: Արդյոք իրավունքի յուրաքանչյուր վերլուծողի նպատակը չէ՞ բացահայտել, թե ինչպես են իրավական ակտերը ազդում սուբյեկտների վարքագծի վրա և ապա գնահատել ստացված արդյունքը սոցիալական բարիքի որոշակի պահանջների տեսանկյունից: Պետք է նշել, որ առաջին հայացքից, չնայած թվացող պարզությանը, իրականում տնտեսագիտական վերլուծությունը այլ վերլուծություններից տարբերակելը իրենից որոշակի դժվարություն է ներկայացնում: Մասնավորապես, ըստ Հարվարդի համալսարանի իրավագիտության և տնտեսագիտության պրոֆեսոր Սթիվեն Շավելի, օրենքի տնտեսագիտական վերլուծությունը ունի երեք առանձնահատկություն.

1. տնտեսագիտական վերլուծությունը, ի տարբերություն մյուսների, օգտագործում է մշակված մոտիվներ և տեսության ուսումնասիրության վերլուծական ու էմպիրիկ թեստեր,

2. վերլուծության ընթացքում, նկարագրելով սուբյեկտների վարքագիծը, տնտեսագիտությունը ավելի մեծ դեր ու նշանակություն է տալիս այն մոտեցմանը, որ սուբյեկտները գործում են ավելի ռացիոնալ՝ հետամուտ լինելով իրենց գործողությունների և ընտրության հնարավոր հետևանքներին,

³⁵⁹ Տե՛ս Steven Shavell “Economic Analysis of Accident law”, John M. Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002, էջ 3:

³⁶⁰ Տե՛ս Calabresi, G, The Costs of Accidents: A Legal and Economic Analyses. New Haven, Yale University Press (1970), Becker, G. S. (1968) Crime and Punishment: An Economic Approach. Journal of Political Economy 76:169-217, Posner, R. A. 1972, Economic Analysis of Law. Boston: Little, Brown.

³⁶¹ B.S. Markesinis and S.F. Deakin “Tort Law” Third Edition, Clarendon Press, Oxford 1994, էջ 23:

3. նորմատիվային գնահատման ժամանակ տնտեսագիտական վերլուծությունը հաշվի է առնում սոցիալական բարեկեցության չափը, մինչդեռ ուսումնասիրության մյուս մոտեցումները հաճախ սոցիալական բարիքի չափանիշները չեն հստակեցնում կամ հիմնականում թողնում են ենթադրելի:³⁶²

Օրենքի տնտեսագիտական վերլուծության եղանակը մեծապես կարող է կարևորվել և արդիական դառնալ նաև նոր իրավական համակարգ և նոր տնտեսակարգ ձևավորող երկրներում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում:

Հատկանշական ենք համարում նշել, որ մեր կողմից թվարկված երկրներում տնտեսագիտական վերլուծությունը, ուսումնասիրելով իրավունքի տարբեր ճյուղերն ու ինստիտուտները, հատկապես մեծ ուշադրություն է դարձնում արտապայմանագրային պարտավորությունների տնտեսագիտական վերլուծությանը: Ուստի մեր կողմից կարևորելով հայկական օրենսդրության ներդաշնակման անհրաժեշտությունը արևմտյան իրավական համակարգերին՝ նպատակահարմար ենք գտնում սույն աշխատության մեջ անդրադառնալ նաև օրենքի և հատկապես արտապայմանագրային պարտավորությունների տնտեսագիտական վերլուծությանը, դրա դրական և բացասական կողմերին, ինչպես նաև կփորձենք հիմնավորել դրա անհրաժեշտությունը ՀՀ իրավական համակարգի արդյունավետ ձևավորման տեսանկյունից: Ինչպես նշում է Գ. Կալաբրեզին, տնտեսագիտական վերլուծության նպատակը ոչ թե փոխհատուցման կոնկրետ համակարգի թելադրումն է, այլ կոնկրետ հարցերի ճշտումը, որոնք մենք պետք է տանք՝ որոշելու, թե հատուցման որ համակարգն է ավելի գերադասելի³⁶³:

Արդարացված է արտապայմանագրային պարտավորությունների տնտեսագիտական վերլուծությունը սկսել Ռոնալդ Հ. Քոուլի «Հասարակական արժեքի խնդիրը» (“The Problem of Social Cost”) հոդվածի քննարկմամբ, որը հիմնարար դեր ունի տնտեսագիտության տեսանկյունից օրենքի նշանակությունը ուսումնասիրող և հետազայում տպագրված աշխատությունների համար: Ըստ էության, Քոուլի վերոնշյալ հոդվածը հիմք հանդիսացավ ոչ միայն օրենքի

³⁶² Տե՛ս Steven Shavell, նշված աշխատությունը, էջ 3:

³⁶³ Տե՛ս Calabresi, G, նշված աշխատությունը, էջ 312-313:

տնտեսագիտական քննարկման խնդրի ձևավորման և դրա անհրաժեշտության հիմնավորման համար, այլև նպաստեց հետազայում Քոուզին տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակ շնորհելուն³⁶⁴:

Քոուզի հողվածի կարևորությունը քննարկման ներկայացվող նյութի տեսանկյունից այն է, որ նախ և առաջ, ըստ հեղինակի, և՛ վնաս պատճառողը, և՛ տուժողը նպաստում են վնասի ծավալի ձևավորմանը: Մինչև Քոուզի հողվածը վնաս պատճառվելու դեպքում վնասի հատուցման պարտականությունը թե՛ տեսության մեջ և թե՛ պրակտիկայում դրվում էր վնասը պատճառողի վրա, և վնասի կանխարգելման համար ձեռնարկվող գործողությունները հիմնականում նպատակաուղղված էին վնաս պատճառողի վարքագիծը կանոնակարգելուն: Ի հակադրություն սրան՝ Քոուզը իր հողվածում առաջ քաշեց տուժողի վարքագիծը կանոնակարգելու անհրաժեշտությունը: Օրինակ, միմյանց անմիջական հարևանությամբ բնակվող և ձեռնարկատիրությամբ զբաղվող երկու սուբյեկտների միջև, որոնցից մեկը զբաղվում է ցորենի աճեցմամբ, իսկ մյուսը՝ անասնաբուծությամբ, առաջանում է խնդիր. մասնավորապես՝ ֆերմերի անասունները շատանալով սկսում են արածել հողագործի ցորենի դաշտում և վնաս են պատճառում վերջինիս: Ինչպե՞ս լուծել խնդիրը: Իհարկե, գործող օրենսդրության տեսանկյունից ակնհայտ է, որ հողագործը իրավունք կունենա ֆերմերից վնասների հատուցում ստանալու և իր սեփականությունը պաշտպանելու, որը կարող է տեղի ունենալ մի քանի տարբերակով՝ ռեալ վնասը հատուցելով, արգելելով անասունների մուտքը հողագործի տարածք և այլն: Սակայն տնտեսագիտության տեսանկյունից սա արդյոք նպատակահարմար է: Այսինքն, արդյոք ֆերմերի վրա վնասի հատուցման պարտականություն դնելը տնտեսապես ավելի նպատակահարմար է, քան տվյալ դեպքում վերջինիս պատասխանատվությունից ազատելը: Ո՞րն է ավելի օգտակար և ցանկալի հասարակության համար՝ ցորենը, թե՞ կենդանիները, գետի մեջ թունավոր նյութեր թափող գործարանի արտադրամեքենան, թե՞ գետի ձուկը: Ահա այս հարցերի պատասխանը գտնելու նպատակով Ռ. Հ. Քոուզը իր հողվածում փորձ է կատարում պարզ հաշվարկների

³⁶⁴ Տե՛ս Donald A. Wittman (ed.), *Economic Analysis of the Law*, Blackwell Publishing, 2003, էջ 3:

միջոցով ապացուցել, որ հնարավոր են դեպքեր, երբ, վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատելով, հասարակությունը տնտեսապես ավելի շահի, քան հակառակ դեպքում³⁶⁵: Փորձենք ասվածը հիմնավորել վերը բերված օրինակի հիման վրա: Ենթադրենք, թե դատարանը պարտադրել է ֆերմերին ապահովել, որ վերջինիս անասունները չմտնեն հողագործի տարածք: Կատարելու համար դատարանի վճիռը՝ ֆերմերը ունի երկու հնարավորություն.

1. վարձել հովիվ, որը կհսկի անասունների տեղաշարժը,
2. պարսպապատել կամ ցանկապատել հարևանների միջև գտնվող տարածքը:

Ենթադրենք մաս, որ տարածքը ցանկապատելու համար ֆերմերը կծախսի ավելի շատ գումար (ենթադրենք 100 պայմանական միավոր), քան եթե այն ցանկապատեր հողագործը (50 պայմանական միավոր), քանի որ, ըստ էության, հողագործի տարածքը ավելի փոքր է ֆերմերի տարածքից: Ակնհայտ է, որ ֆերմերի համար իրեն ընձեռնված երկու հնարավորություններից ավելի գերադասելի է երկրորդը, քանի որ հովիվ վարձելու դեպքում ֆերմերը կվճարի ավելի շատ գումար, կախված անասունների քանակից՝ նա ստիպված կլինի վարձել մեկից ավելի հովիվ, բացի այդ չկա վստահություն, որ անասունները, այնուամենայնիվ, չեն վնասի հողագործի ցանքը: Այսպիսով, ֆերմերը ընտրում է տարածքը ցանկապատելու պարտականությունը: Ակնհայտ է, որ հողագործը ինքը չի ցանկապատի իր տարածքը, քանի որ ցանկացած դեպքում ինքը ստանում է վնասների հատուցում և վնաս չի կրում: Մյուս կողմից էլ, բնականաբար, ֆերմերը չի ցանկապատի հողագործի տարածքը, քանի որ.

1. հողագործը կարող է չհամաձայնվել, և
2. ամեն դեպքում ցանկալի չէ կատարել ծախսեր, կառուցել ցանկապատ և հանձնել այն ուրիշի սեփականությանը:

Այսպիսով, այն պատճառով, որ օրենքը քննարկվող դեպքի համար վնասի հատուցման պարտականությունը դնում է վնասը պատճառողի՝ ֆերմերի վրա, օրենքի տնտեսագիտական վերլուծության արդյունքում մենք հանգում ենք այն եզրակացության, որ տնտեսագիտության տեսանկյունից օրենքը արդյունավետ չէ

³⁶⁵ St և Ronald H. Coase “The problem of social cost”, Journal of Law and Economics, 1960:

քննարկվող դեպքում, քանի որ ֆերմերին վնասի հատուցումից ազատելու դեպքում հողագործը ինքը ստիպված կլիներ ցանկապատել իր տարածքը, որը վերջինիս համար կկազմեր 50 պայմանական միավոր, ուստի 50 տոկոսով կնվազեցներ կատարվող ծախսերը:

Ահա խնդրի լուծման այս վերջին տարբերակն է առաջ քաշում Ռ. Հ. Քոուզը՝ փորձելով ցույց տալ օրենքի տնտեսական վերլուծության անհրաժեշտությունը³⁶⁶: Քոուզի հողվածի երկրորդ նշանակությունը, ըստ Ուիտմանի, այն է, որ ցույց է տրվում, որ մասնավոր շուկան կարող է ինքնուրույն լուծել խնդիրներ, որոնք տնտեսագետների համոզմամբ ենթակա էին լուծման միայն իշխանությունների կողմից³⁶⁷: Սակայն, մեր կարծիքով, Քոուզի հողվածի երրորդ և ամենաէական արժեքը, որը և հիմք հանդիսացավ «Քոուզի տեսության» ձևավորման համար այն է, որ հողվածում հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ պայմանագրային ծախսերի (պայմանագրերի կնքում և վերահսկողություն) բացակայության դեպքում վնասի ծավալը կմնա նույնը՝ անկախ նրանից՝ հողագործը ունի վնասի հատուցման իրավունք, թե ֆերմերը՝ վնաս պատճառելու:

Քննարկենք ասվածը ֆերմերի և հողագործի վերոնշյալ օրինակի հիման վրա: Եվ այսպես, ինչպես նկատեցինք, ֆերմերը պարտավոր է բացառել իր անասունների մուտքը հողագործի տարածք ցանկապատման միջոցով: Ընդ որում, ֆերմերն ունի երկու ընտրություն՝ ցանկապատել իր տարածքը և ծախսել 100 պ.մ. կամ բանակցել հողագործի հետ և հասնել նրան, որ հողագործը ցանկապատի իր տարածքը ավելի ցածր գնով: Անշուշտ, հողագործը չի համաձայնվի 50 պ.մ.-ով կառուցել ցանկապատ, քանի որ այս դեպքում նա ոչինչ չի շահում: Սակայն ակնհայտ է, որ եթե ֆերմերը վերջինիս առաջարկի վճարել 75 պ.մ., հողագործի մոտ շահագրգռվածություն կառաջանա ցանկապատի կառուցման համար, քանի որ, ծախսելով 50 պ.մ., նա ձեռք է բերում ցանկապատ, ապահովում է իր ցորենի անվտանգությունը, ինչպես նաև ստանում է եկամուտ 25 պ.մ.–ի չափով: Անշուշտ, այս համաձայնությունը ձեռնտու է նաև ֆերմերին, քանի որ 100 պ.մ.–ի փոխարեն նա ծախսում է 75 պ.մ.՝ խնայելով 25-ը: Սակայն ակնհայտ է նաև, որ կողմերը չէին հասնի վերոնշյալ արդյունքին, եթե

³⁶⁶ Տե՛ս Ronald H. Coase նշված աշխատությունը:

³⁶⁷ Տե՛ս Donald A. Wittman (ed.), նշված աշխատությունը, էջ 3:

բանակցությունները, ապա նաև պայմանագրի կնքումն ու վերահսկողությունը ցանկապատի կառուցման շուրջ լինեին ավելի ծախսատար, քան դրա կառուցումը:

Քոուզի տեսությունը ժամանակի ընթացքում ենթարկվել է քննադատության³⁶⁸, որին մենք այժմ չենք անդրադառնա, քանզի մեր նպատակը ոչ թե Ռ. Հ. Քոուզի տեսության քննադատությունն է կամ գովաբանությունը, այլ խնդրի, այսինքն՝ օրենքի տնտեսագիտական վերլուծության անհրաժեշտության բացահայտումը:

Անշուշտ, օրենքի տնտեսագիտական վերլուծության վերաբերյալ արևմտյան գրականության մեջ հատկապես տնտեսագետ մասնագետների կողմից արտահայտված տեսակետները ուսումնասիրելիս կարող է կարծիք ստեղծվել, որ օրենքի տնտեսագիտական վերլուծությունը հիմնականում ընթանում է տնտեսական շահի ուղղությամբ՝ անուշադրության մատնելով օրենսդրության հիմնական սկզբունքները՝ արդարություն, ազնվություն, բարոյականություն, կողմերի հավասարություն և այլն: Անշուշտ, այդ կարծիքի մեջ մենք նույնպես տեսնում ենք որոշակի ճշմարտություն, ուստի մեր ուսումնասիրության նպատակը ոչ թե օրենքի տնտեսագիտական վերլուծության գովաբանությունն է, այլ դրա՝ իրավաբանության տեսանկյունից ընդունելի կողմերով արդյունավետ իրավական համակարգի ստեղծումը, որը կարելի է ցույց տալ Շավելի կողմից բերված աղյուսակի և ՀՀ քաղ. օր-ի մի շարք դրույթները այդ աղյուսակի հիման վրա բարեփոխելու մեր ստորև կատարվող առաջարկի հիման վրա:

Նպատակ ունենալով ցույց տալ ծախսերի բաշխման և սոցիալական բարեկեցության լավագույն հնարավոր աստիճանը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում՝ հեղինակը աղյուսակի միջոցով փորձ է անում ըստ կողմերի զգուշավորության աստիճանի վերլուծել պատահարների քանակի կանխման և ծախսերի հնարավոր արդյունավետ բաշխման հնարավորությունը: Մենք, մեր հերթին, նպատակ ունենալով ցույց տալ, թե ինչպես օրենքի տնտեսագիտական վերլուծությունը կարելի է արդյունավետ կիրառել նաև օրենսդրության կատարելագործման առումով, Շավելի օրինակը կօգտագործենք այդ տեսանկյունից:

³⁶⁸ Տե՛ս Robert Cooter “The Coast of Coase”, Donald A. Wittman (ed.), *Economic Analysis of the Law*, Blackwell Publishing, 2003, էջ 14:

Այսպես՝ 100 պ.մ. ծախսեր ենթադրող ճանապարհատրանսպորտային պատահարի հնարավորությունը կախված է վնաս պատճառողի և տուժողի կողմից ցուցաբերվող զգուշավորության աստիճանից, որը ցույց է տրվում ստորև բերվող աղյուսակում.

Աղյուսակ 1. Տուժողների և վնաս պատճառողների ուշադրության աստիճանը և պատահարի հնարավորությունը

Վնաս պատճառողի ուշադրություն	Տուժողի ուշադրություն	Վնաս պատճառողի ուշադրության ծախսեր	Տուժողի ուշադրության ծախսեր	Պատահարի հնարավորություն	Սպասվելիք ծախսեր	Ընդհանուր սոցիալական ծախս
բացակայում է	բացակայում է	0	0	15%	15	15
բացակայում է	կա	0	2	12%	12	14
կա	բացակայում է	3	0	10%	10	13
կա	կա	3	2	6%	6	11

Այսպիսով, ինչպես եզրակացնում է հեղինակը, աղյուսակի վերջին տողից և սյունակից ակնհայտ է, որ սոցիալապես լավագույն տարբերակին կարելի է հասնել այն դեպքում, երբ և՛ վնաս պատճառողը, և՛ տուժողը ձեռնարկում են միջոցներ վնասից խուսափելու համար³⁶⁹: Եվ իրոք, աղյուսակից ակնհայտ է, որ այն դեպքում, երբ միայն տուժողը կամ վնաս պատճառողն են միջոցներ ձեռնարկում վնասից խուսափելու համար, ապա մեծ են լինում և՛ սոցիալական ծախսերը, և՛ վնասի հավանականությունը: Այսպիսով, օրենքի տնտեսագիտական վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս հասկանալու օրենսդրությունը նաև տնտեսության տեսանկյունից և օրենսդրության բարեփոխման միջոցով հասնելու ավելի արդյունավետ սոցիալական բարեկեցության:

³⁶⁹ Տե՛ս Steven Shavell “Economic Analysis of Accident law”, Գշված աշխատությունը, էջ 5:

Այժմ փորձենք օրենքի տնտեսագիտական վերլուծության անհրաժեշտության բացահայտումը քննարկել ՀՀ Քաղ. օր.-ի մի շարք հոդվածների վերլուծության հիման վրա: Այսպես՝ համաձայն Քաղ. օր. 1076 հոդվածի երկրորդ մասի երկրորդ կետի՝ քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը ամեն դեպքում չի կարող մերժվել, եթե նույնիսկ այն պատճառվել է տուժողի կոպիտ անզգուշության արդյունքում: Չցանկանալով անդրադառնալ հոդվածի իրավական հիմնավորվածությանը, որը մեր կողմից քննարկվել է նախկինում³⁷⁰, դիտարկենք այն տնտեսագիտական տեսանկյունից, այսինքն՝ որքանով է քաղ.օր. 1076 հոդվածի երկրորդ մասի երկրորդ կետի վերջին նախադասությունը տնտեսապես նպատակահարմար: Ակնհայտ է, որ, քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը ամեն դեպքում վնաս պատճառողի վրա դնելով, տուժողը ունի վնասից խուսափելու շատ քիչ մոտիվացիա, դեռ ավելին, պրակտիկորեն հիմնավորվում է, որ շատ պատահարներ հենց տեղի են ունենում տուժողների կոպիտ անզգուշության հետևանքով: Այսինքն, քաղաքացին, գիտակցելով, որ, անցնելով փողոցը ճանապարհատրանսպորտային բոլոր կանոնների խախտմամբ, միևնույն է, ինքը չի գրկվի իրեն պատճառված վնասի հատուցումից, դիմում է այդ քայլին: Ուստի հոդվածը ինքնին տնտեսապես անհիմն է, քանի որ նախ՝ դրդում է տուժողին վնասի նկատմամբ գտնվել անտարբեր կամ նույնիսկ ձգտել վնասի, իսկ վնաս պատճառողին՝ տուժողի դիտավորության արդյունքում կրելու տնտեսական կորուստներ, որոնք հիմնավորված չեն, բացի այդ, ինչպես տեսանք աղյուսակում, սոցիալապես ստեղծվում է անհավասար և անցանկալի վիճակ, երբ ծախսերը կողմերի միջև հավասարապես չեն բաշխվում: Դեռ ավելին, շատ դեպքերում հնարավոր է, որ տուժողի, ասենք, բուժումը վնաս պատճառողի համար ավելի թանկ լինի, քան հենց իր՝ տուժողի:

Իսկ, ինչպես նշում են Մարկեզինիսն ու Դեակինը, օրենքի տնտեսագիտական վերլուծության նպատակն է ապահովել ծախսերի արդյունավետ բաշխումը արտապայմանագրային պարտավորությունների մասնակիցների միջև, այսինքն՝ ձևավորել այնպիսի օ-

³⁷⁰ Տե՛ս Գ.Բեքմեզյան «Անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը», ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2003թ.:

րենսդրական համակարգ, որի արդյունքում ծախսերի բաժինը կրնկնի այն անձի վրա, ով ավելի շատ հնարավորություն և միջոցներ ունի կրելու դրանք³⁷¹:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախորդ գլուխներում մեր կողմից կատարված առաջարկը՝ բարեփոխելու քաղ. Օր. 1076 հոդվածը, հիմնավորվում է նաև օրենքի տնտեսագիտական վերլուծության տեսանկյունից:

Քննարկվող խնդրի տեսանկյունից դրական կարող է դիտվել Քաղ. օր. 1069 հոդվածի երրորդ մասը, որը հնարավորություն է տալիս վնասի հատուցման պարտականությունը դնել անգործունակ ճանաչված անձի վրա, չնայած համաձայն նույն հոդվածի առաջին մասի՝ անգործունակի կողմից պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է վերջինիս խնամակալը: Այսպիսով, սկնհայտ է, որ քննարկվող խնդրի նպատակն է նաև ուսումնասիրել և նպաստել ծախսերի առավել արդյունավետ բաշխմանը կողմերի միջև:

Գտնում ենք, որ օրենսդրության նպատակը ոչ միայն սեփականության կամ կյանքի և առողջության պաշտպանությունն է, այլև այնպիսի համակարգի ստեղծումը, որը հնարավորություն կտա նվազեցնելու այդ արժեքների նկատմամբ ոտնձգությունները, արդյունավետ բաշխելու ծախսերը կողմերի միջև: Ասվածը կարող ենք հիմնավորել շատ պարզ օրինակի հիման վրա: Գաղտնիք չէ, որ առօրյա կյանքում ճանապարհատրանսպորտային պատահարները շատ դեպքերում տեղի են ունենում այն պատճառով, որ հետիոտները, արհամարհելով կանոնները, փողոցը հատում են ցանկացած վայրում՝ առանց նույնիսկ օգտագործելու դրա համար նախատեսված գետնանցումները: Սա արդյունք է հետիոտնի անփութության մոտալուտ վտանգի նկատմամբ, և, ինչպես նշեցինք, վստահության, որ, միևնույն է, վնաս պատճառողը կհատուցի վնասը, իսկ արդյունքում՝ վնաս և լրացուցիչ ծախսեր: Արդյոք մենք կունենա՞նք նույն վիճակը, եթե օրենսդրորեն ամրագրվի, որ փողոցն անցնելու կանոնները խախտած տուժողի կրած վնասը ենթակա չէ հատուցման:

Ընդհանրապես, հարկ ենք համարում նշել, որ արևմտյան իրավա-տնտեսագիտական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվում օրենքի տնտեսագիտական վերլուծությանը հենց վնաս պատճառե-

³⁷¹ B.S. Markesinis and S.F. Deakin, նշված աշխատությունը, էջեր 25-35:

լու հարաբերությունները կարգավորող օրենսդրության դեպքում³⁷², սակայն անուշադրության չեն մատնված մաս պայմանագրային իրավունքի, արտոնագրային և հեղինակային իրավունքների, քրեական իրավունքի ուսումնասիրումը տնտեսագիտության տեսանկյունից: Հատկապես առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում դատավարության և դատական ծախսերի բաշխման տնտեսագիտական վերլուծությունը: Ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան չ-ում, շատ դեպքերում կողմերը դիմում են դատական պաշտպանության՝ ամենևին հաշվի չառնելով դատական ծախսերը (սրա արդյունքում հնարավոր է, որ 100 պ.մ. շահելու նպատակով կողմը դատարանում ծախսի 200 պ.մ): Իսկ դատավարության և իրավական գործընթացների տնտեսագիտական վերլուծությունը հնարավորություն է տալիս իրավաբաններին ավելի ճիշտ կողմնորոշվելու և ավելի նպատակային գնահատելու, թե որ դեպքում կողմերը կդիմեն դատավարության, կամ որ դեպքում է նպատակահարմար վեճը լուծել բանակցությունների միջոցով: Սա հատկապես կարևորվում է վնաս պատճառելուց բխող պարտավորությունների դեպքում պատճառված վնասի հատուցման գործերի համար, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային և չ- պրակտիկան, այս պարտավորությունների կողմերը գերակշռող դեպքում ձգտում են վեճը լուծել բանակցությունների արդյունքում, իսկ օրենքի տնտեսագիտական վերլուծությունը հնարավորություն կտա ավելի ռեալ գնահատել կողմերի շանսերը և հնարավորությունները, ճիշտ կազմակերպել բանակցությունները:

Այսպիսով. օրենքի տնտեսագիտական վերլուծության նպատակն է բացահայտել, թե ինչպիսին է օրենքի դերը տնտեսության տեսանկյունից, արդյոք հնարավոր չէ մինչև օրենքի ընդունումը քննարկել վերջինիս տնտեսական նշանակությունը և ցանկալի տնտեսական արդյունքի հասնելու համար ավելի արդյունավետ բաշխել օրենքի կիրառման արդյունքում առաջացող ծախսերը, տնտեսության տեսանկյունից քննարկել քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների գործողությունների դրդապատճառները և դրանց հիման վրա ընդունել ավելի արդյունավետ օրենքներ:

³⁷² Տե՛ս Steven Shavell “Economic Analysis of Accident law”, John M. Olin Center for Law, Economics, and Business, Harvard, 2002:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ I

ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՎՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....3

§1. Արտապայմանագրային և պայմանագրային պարտավորություններ.....4

§2. Արտապայմանագրային պարտավորությունների առաջացման հիմքերը..... 12

§3. Վնասը՝ որպես արտապայմանագրային պարտավորության առաջացման պայման 13

§4. Հակաիրավական արարք (գործողություն կամ անգործություն).....20

§5. Ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պատճառված վնասի հատուցումը 33

§6. Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասի հատուցումը 40

§7. Պատճառական կապ և վնաս պատճառողի մեղք 45

ԳԼՈՒԽ II

ԱՐՏԱՊԱՅՄԱՆ ԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 52

§1. Իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունը իր աշխատողի պատճառած վնասի համար.....53

§2. Հայաստանի Հանրապետության և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը	73
§3. Ահաբեկչական գործողության արդյունքում քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին պատճառված վնասի հատուցումը	80
§4. Քաղաքացիների կողմից պատճառված վնասի հատուցումը	90
§4.1. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի հատուցումը	92
§4.2. Տասնչորսից տասնութ տարեկան անչափահասի կողմից պատճառված վնասի հատուցումը	115
§4.3. Անգործունակների և իրենց գործողությունների նշանակությունը գիտակցելուն անընդունակ անձանց կողմից պատճառված վնասի հատուցումը	124
§4.4. Մի քանի անձանց կողմից համատեղ պատճառված վնասի հատուցումը	130
ԳԼՈՒԽ III	
ՇՐՋԱՊԱՏԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳ ՍՏԵՂԾՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՅՈՒՄԸ	
§1. Առավել վտանգի աղբյուրի հասկացությունը	134
§2. Առավել վտանգի աղբյուրների դասակարգումը.....	140
§3. Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար պատասխանատվության սուբյեկտները	147

§4. Ընդհանուր սեփականության իրավունքով մի քանի անձանց պատկանող առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցումը 154

§5. Առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցման մյուս սուբյեկտները 165

§6. Շրջապատի համար առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի հատուցումից ազատող հանգամանքները 178

ԳԼՈՒԽ IV

ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ. ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ..... 195

§1. Պատճառված վնասի հատուցման ծավալների որոշումը . 195

§2. Կերակրողին կորցնելու հետևանքով պատճառված վնասի հատուցումը..... 209

§3. Տուժողի մեղքը՝ որպես վնասի հատուցման ծավալների նվազեցման պայման 218

§4. Վնասի հատուցման կարգը 230

ԳԼՈՒԽ V

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ. ԱՆՀԻՄՆ ՀԱՐՍԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿ 235

§1. Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված

վնասի հատուցումը235

§2. Անհիմն հարստացումը որպես արտապայմանագրային
պարտավորությունների տեսակ247

ԳԼՈՒԽ VI

**ԱՐՏԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ251**